


891. ՏԵԱՐԻ

00 AUG 2010



ՀԱՆԴԻՍ ՄՇԱԿՈՅՑԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ը

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՓԱՐԻԶ

1934

00 AUG 2010

4-17 00  
413

# "VEM,"

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE  
Directeur : S. VRATZIAN

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴՐՈ - Մի հատւած յուշերից	1
ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՊԵԱՆ - Գորպատի համալսարանը	15
ԱՐԺԱԼՈՅՑ ԱՍՏԻԱԾԱԾՐԵԱՆ - Արամը	23
ՅՈՎՀԱՆՆԻՍ ԶԱԼԻՐԵԱՆ - Թիֆլիսի քարքանի վճասարարները	36
ՍՏԵՓԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ - Լեւոն Արաքեանի իբրեւ քանաստեղծ	
եւ մտածող	
ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ՏԱԴԵՐԸ	45
ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ - Շլիսելբուրգի հայ կալանաւորը	60
ՍՈՄՍՈՆ - Հայաստանի անդր. դեսպանը Պարսկաստանում	67
Ս. ՎՐԱՅԵԱՆ - Տիկին Եղիազարէր Զօրեան	73
Հին ԹՈՒՂԹԵՐ - Փիլոսի նամակները Ռուսումին: - Յովի.	96
Թումանեանի նամակը Հայաստ. Կառավարութեան	101
ԱՆՑԵԱԼԻՔ - Նիկ. Մառ - Բահարուր Բահարեան. - Վաղ.	
Տեր-Խաչատրեան. - Եր. Օսեան	108
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ - Հայաստանի բնակավայրերի նոր ա-	
նունեները - Հերկ ու Յան, Գ. Մյուիթարեան. - Ո՞վ	
է «Խորադիմայի» հեղինակը, Յ. Իրազեկ	115
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԻ. -	125
ԳՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ - Ա. Սեւան, «Մասիս» Տարեգիրք, Ս. - Ե. Օս-	
եան, «Ծնկեր Փանջունի», Ս. Վ. - Յուսիկ արքեպ.	
ԶՈՒՐԱՐԵԱՆ, «Հայոց Եկեղեցու պատմութեան» , Յ.Զ. 128	
ՅԱԼԻԿԻԱՆ - Վ. Եպիկունի, Գէորգ Դ. իր ժամանակը 113-128	

## ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Խոտիխա՝

Ֆրանսա եւ մնացեալ երկիրները,	տարեկան 70 ֆրանֆ
Բունանան, Բուլգարիա, Յունաստան Սիւրիա, եւ	տարեկան 60 ֆրանֆ
Պարսկաստան, , ,	50 ֆրանֆ
Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամեն	
տեսակ առաքումների համար. -	

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42 Rue de la Jonquière, PARIS (17e)



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ  
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6

1934

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԴՐՈ

## ՄԻ ՀԱՏԻԱԾ ՅՈՒՇԵՐԻՑ

ԴԱՐԱՎԱԳԵԱԶԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ընթերցողը յիշում է, երեւի,\*) որ Նիկոլ-Դումանի կողմից ես ուղարկւել էի կազմակերպելու եւ վարելու Ղըրխուլաղի ըլջանի ինքնապաշտպանութեան գործը: Հետզհետէ այս գործը դրւեց կանոնաւոր հիմքերի վրա եւ իմ ներկայութիւնը այդ ըլջանում այլեւս գարձաւ համարեա աւելորդ: Ես ամէն առիթից օգտում էին յիշեցնելու Նիկոլին, որ ինձ աղաւտէ խմբի ղեկավարութիւնից եւ աւելի կենդանի ու գրաւիչ աշխատանք տայ:

Զպէտք է մոռնալ, թէ ի՞նչ օրեր էին այն օրերը: 1905 թւականը էր: Ռուսաստանի առաջին յեղափոխութիւնը արագօրէն ծաւալուում էր ամէն կողմ: Փողովրդական յուրամների ալիքը հուժկութափով զարնուում էր Կովկասեան լեռներին: Մտաւրականութիւնը, բանտորական զանգւածները, երիտասարդութիւնը անօրինակ ոգեւորութեան ու եռ ու գեռի մէջ էին: Այսպիսի մի վայրկեանին դրեթէ անդործ նստել կոտայքի գիւղերում - ի՞նչ ջիղ պէտք էր դիմանալու համար: Ես ամբողջ հոգով ձգտում էի գուրս գալ այդ բանտարկեալ վիճակից եւ միանալ յեղափոխական շարժումներին, մասնակցել քաղաքական գործունէութեան:

Արդէն բաւական մտերմացել էի Դումանի հետ: Նա արտակարգ ջերմութիւն եւ սիրալիք վերաբերում էր ցոյց տալիս դէպի ինձ, բայց բոլոր դիմումներիս կտրուկ ու վճռական մերժումով էր պատասխանում:

\*) Տե՛ս «ՎԷՄ», 1934 թ. № 3:

1870



503-2001

- Եթէ ես ամէն զինւորի ու խմբապետի քէֆով շարժւեմ եւ նըրանց անհատական ցանկութիւններին յարմարւեմ, էլ ինչացո՞ւ է իմ այստեղ նստելն ու հրամաններ տալը, առարկում էր նա իմ թախանձանքներին: Եւ ոչնչով կարելի չեղաւ փոխել նրա կամքը:

Մի օր, նման մի խօսակցութիւնից յետոյ, նա իր սեղանի գդրոցից հանեց Կովկասեան զինւորական շտարի քսան վերստանոց մի քարտէղ եւ նւիրեց ինձ: Միաժամանակ ցուցմունքներ տւեց քարտէղը կարգալու եւ դործածելու ձեւի մասին:

- Այսուհետեւ, ասաց նա, աւելի պատրաստած ձեւով պէտք է աշխատես վարել քեզ յանձնւած գործը: Քեզ պիտի տամ մի նոր, աւելի մարզւած եւ ուժեղ խումբ: Պէտք է անցնես Նախիջևան եւ մասնակցես այնտեղի ինքնապաշտպանութեան գործին: Քարտէղի վրա հայ գիւղերը նշանակւած են խաչերով. գուհեշտութեամբ կը հասկանաս, թէ ո՞ր հայ ըրջանը կամ գիւղը ինչ թրքական գիւղերով է շրջապատւած: Քարտէղը զինւորականի աչքն է, մանաւանդ այն տեղերի համար, ուր նա անձամբ չի եղել եւ ծանօթ չէ աշխարհագրական առանձնայատկութիւններին:

Իմ ուզածը չէր, ի հարկէ, այս. բայց եւ այնպէս մի փոփոխութիւն էր այլեւս ձանձրալի դարձած դրութեան մէջ:

Որքան յիշում եմ, այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ 1905 թ. օգոստոս ամսի վերջերը: Ինձ յանձնուած նոր խումբը բաղկացած էր 14 հոգուց: Ամենքն ալ ձիաւոր եւ զինւած լաւագոյն հրացաններով: Տղաներից ոմանք էլ մարզւած էին ոումբ նետելու գործում:

Հրահանդները ստանալուց յետոյ տղաներով մեկնեցի Դաւալու գիւղը՝ այստեղից Զնջըրիի ու Մալիշկայի վրայով Սուլթանրէկ գիւղը անցնելու համար:

Դարալագեազում առաջին անգամ հանդիպեցի Կոտոյի Հաճուն, Զոփուր Արսէնին եւ Առիւծ Աւադին: Հաճին Տարօնի մեր լաւագոյն հայուուկներից էր, ըրջանի ընդհանուր հրամանատարն էր եւ իր հըրամանատարութեան տակ ունէր երկու ձիաւոր խումբ Առիւծ Աւադի եւ Զոփուր Արսէնի գլխաւորութեամբ: Մինչեւ մեր Դարալագեաղ դալը Հաճին թուրքերի հետ ունեցել էր մի շարք ընդհարումներ: Մեր հասնելուց յետոյ էլ կուները շարունակեւցին: Ուղում եմ այս տեղ նկարագրել իմ մասնակցութեամբ տեղի ունեցած մի կոիւցոյց տալու համար Առիւծ Աւադի անօրինակ քաջութիւնը եւ հայդուկների մէջ տիրող հոգերանութիւնը ու միմեանց հանդէպ ունեցած վերաբերումը:

Կոտոյի Հաճին Անդրանիկի զինւորներից էր եւ պաշտում էր նրան: Առիւծ Աւադը Սերոր Աղբիւրի զինւորն էր. Սերորից քաջ

678-Ա

եւ մեծ մարդ նրա համար գոյութիւն չունէր: Հաճին խելօք, չափազանց խորամանկ, խնդիրներին լրջօրէն մօտեցող, հեռատես ու փորձլւած խմբապետ էր. Առիւծ Աւադը՝ բնութեան բիրտ ու անտաշ զաւակը. խիստ յախուռն, կրքոտ ու զուսպ եւ միաժամանակ պարզ, մանկան պէս վճիտ հոգով: Նրա աչքին Հաճին նոյն խոկ «Բաչալ Անդրանիկի»\*) զինւորներից էլ չէր, այլ «Փոլտաղով» գլուխը պահող ոչնչ մարդ: Արդ պատճառով, ուղղակի տանջւում էր, որ Հաճին իր հրամանատարն է:

- Հէյ - Հէյ, աշխարհ, քեզ հիմ գնողին ի՞նչ ըսեմ, գանգատում էր նա. Սերոր փաշի մահէն ետ Քաչալ Անդրանիկ ընոր փոխանորդ ի դառի, էնոր Փոլտաղչի զինւորն էլ հրամանատար ի դարձի իմ գլխին. վայ լըմըն բաւօ, էդ յուր հասանք... Քեզ տունն աւրի, աշխարհ... . . . :

Հաճին, ըստ իր սովորութեան, մեզ շատ սիրալիր ու քաղաքավարի ընդունելութիւն ցոյց տւեց: Իրեւ տեղական պայմաններին ծանօթ մարդ՝ նա մանրամասնօրէն պարզեց, թէ ո՞ր գիւղերով պէտք է անցնէինք եւ ի՞նչ նախազգուշական միջոցների պէտք էր դիմել՝ Նախիջևանի նորս եւ Գիւմրի գիւղերը հասնելու համար:

Իմ խմբի մէջ էին Անդրանիկի լաւագոյն զինւորներից Բերդակցի Օսկանը եւ Խլաթցի Գալօն: Հաճին, իմ ներկայութեամբ, մի կողմ կանչեց Օսկանին եւ խրատներ տալով՝ ասաց.

- Դիւ սար ու չոլի կոիւներ տեսած մարդ իս - իսկ ինձ էլ չվերաւորելու համար աւելացրեց - Դրօն լէ շատ քաջի, բայց լեռներու կուի վարժ չի. կուի վախտ Դրօն աչքաթող չընիս. չմոռնաս թէ քաջ Անդրանիկի զինւոր իս էղի... . . . :

Առիւծ Աւադը լսում էր կէս - հեղնանքով ու կէս - արհամարհանքով. Սերոր փաշի մօտ ի՞նչ էր այդ Քաչալ Անդրանիկը... . . .

Հաճիի միւս օգնական Զոփուր Արսէնն էլ հետաքրքրական դէմք էր: Նա Ղաչաղ էր եւ երկար ժամանակ Ղարաբաղի թուրք աւաղակների հետ ասպատակութիւններ էր արել ու զրադւել թալանով: Հայ - թրքական ընդհանուրները նրան պոկեցին աւաղակութիւնից եւ բերին մեր շարքերը: Քաջ, յանդուզն, լաւ զէնք բանեցնող տղամարդ էր: Նրա ասպատակութիւնների մասին ժողովուրդը երգեր էր յորինել:

Մի անդամ Արսէնը իր դաշաղ թուրք ընկերներով, Ղազախի շըրջանում կազակների խմբի է հանդիպում: Կազակները շրջապատում են նրանց: Սկսում է տաք կոիւ: Ղաչաղները ամրանում են ժայռոտ

\*) Այդպէս էին կոչում Սերոր փաշայի զինւորները Անդրանիկին:

բարձունքներից մէկի վրա եւ յամառ դիմաղրութիւն ցոյց տալիս : Կազակների բոլոր յորդորներն ու ջանքերը անցնում են ապարդիւն . Արսէնը մերժում է անձնատուր լինել : Այդ ժամանակ կազակները դիմում են հայ քահանայի միջնորդութեան . սա եւս խնդրում է , որ վերջ տան կուին եւ յանձնւին : Արսէնը կտրուկ կերպով մերժում է եւ կուով ազատում իրեն ու ընկերներին : Այս կուի մասին ժողովուրդը երգում էր .

Գեալդի ժեշից ժիշտադան ,

Զխմադի Զոփուր դաղդան :

Մեր Մալշկայում եղած ժամանակ , Զոփուրը կրնկոխ հետեւում էր ինձ եւ տեղեկութիւններ խնդրում մեր կուսակցութեան , մեր մեծերի ու մեր նպատակների մասին : Յատկապէս հետաքրքրում էր , թէ ովքե՞ր են մեր ամենամեծ և ամենախելօք ընկերները , որոնք նստած են Զւիցերիայում եւ որոնցից խորհուրդ առնելու է գնում նոյն իսկ Մանթաշովը : Ուզում էր իմանալ , թէ արդեօք Անդրանիկն էլ նրանց շարքերումն է : Հաճին , որ ժպիտը քթի տակ , հետեւում էր նրա հարցումներին , այս վերջին հարցի վրա նկատեց .

- Զէ՛ , Անդրանիկ լէ անոնց կը լսէ ու կենթարկւի :

Զոփուր Արսէնը անակնկալի եկաւ ու խորապէս յուղեց այս վերջին յայտնութիւնից :

- Հաճին Դաշնակցութեան փէչատած (կնքած) թուղթ ունի , շարունակեց նա . դու էլ ունես , անշուշտ . ես դեռ որքա՞ն պիտի կը-ուի անեմ , ինչքա՞ն զործ պիտի կատարեմ որ արժանանամ էր թղթ-թին : Դու պ . Դումանին մօտ ծանօթ ես , գրիր նրան՝ ինչ զործ ուզում է կանիմ , միայն թէ ինձ էլ փէչատած թղթից տայ :

Ու յետոյ խնդրեց , որ ցոյց տամ իմ կնքած թուղթը : Նա ու-շարքութեամբ դիմում , խորը հոգոց քաշեց ու նորից ասաց .

- Ե՞րբ պիտի արժանանամ ես էլ էդ թղթին . իմ թուղթը Հա-ճին ու Մալշկայի վարժապետն են տել :

Եւ փաթաթւելով ու համբուրելով՝ կրկին ու կրկին աղաչեց , որ միջնորդեմ ուր հարկն է՝ իրեն եւս կնքած թուղթ տալու համար :

- Ինչ որ ուզում ես կանեմ , որ տեսնես , թէ ես թասիրով հայ եմ ու լաւ դաշնակցական : Մի Հաճուն հարցրու , նա կասի քեղ , թէ ես ինչ մարդ եմ , ի՞նչ կոխւներ եմ արել թուրքերի հետ :

Եւ Հաճին էլ հաստակեց Զոփուրի քաջութիւնը .

- Խօսք չունեմ , քաջ ու համեստ մարդ է , ասաց նա :

Հաճին մեղ ճանապարհ դնելիս իրեն առաջնորդ տւեց Դումանի հին հայուկներից Մալշկացի Սարվաղ Խէջօին , որ բառի իսկա-

կան առումով իզիթ տղամարդ էր : Հաճու հրամանն ստանալուն պէս նա թուաւ իր կապոյտ նժոյգի մէջքին եւ քառամբակ սլացաւ քար-քարտաներով դէպի հանդիպակաց լեռը : Երբ հասաւ լերան կատա-րին , յետ նայեց եւ մի առնական շարժումով նշան արաւ թէ ճա-նապարհը ազատ է եւ կարող ենք շարժւել : Այնքան սազում էին իրար՝ նա եւ իր ձին ու չէրքէսկան . կարծես այդ լեռների փոթո-րիկներից միասին ծնաւած լինէին :

Մալիշկայից մենք գնացինք Սէյլան գիւղը , ուր մնացինք մի օր : Այնտեղից մեկնեցինք Սուլթանբէկ , որտեղից պիտի անցնէինք Նա-խինեւանի լեռնային մասը՝ նորս գիւղը :

Խումբը շարժում էր գանդաղ ու զգուշութեամբ , որպէսզի ոռու-սական զօրամասերի չանդիպի : Լուսանալու մօտ էր , երբ հասանք Սուլթանբէկի սահմաններին : Յանկարծ մեր ականջին հասան հրա-ցանի համազարկի ձայներ : Սարվաղ Խէջօն , որ , իրեւ տեղացի , հիանալի կերպով ծանօթ էր բոլոր գիւղերին ու լեռներին , ասաց . - Կուրու Սուլթանբէկի վրա է երեւում :

Արագացրինք ձիերը եւ երբ մօտեցանք Սուլթանբէկ գիւղին , մեր աչքերի առջեւ պարզեց հետեւեալ պատկերը . հիւսիս - ա-րևելեան կողմից բոլոր բարձունքները բռնաւած էին թարաքեամա-թուրքերով , որոնք իրենց քոչը լեռներից իջեցնելիս վճռել էին , ե-րևի , Սուլթանբէկի նախինն էլ քչել - տանել : Իրենց գրաւած բար-ձունքներից նրանք կրակի տակ էին առել Սուլթանբէկ գիւղը , իսկ մի խումբ էլ իջել էր ձորը եւ աշխատում էր քչել գիւղի նախիրը : Սուլթանբէկցիք իրենց ունեցած հատուկաոր զէնքերով յամառ դի-մազրութիւն էին ցոյց տալիս , իսկ մի քանի խմբակներ՝ փորձում էին գիւղի տաւարի առաջն առնել եւ թոյլ չտալ , որ թուրքերը քշեն :

Մեր խումբը Մարտիրոս գիւղի ծ-6 բնակիչների հետ , շապավով օգնութեան հասաւ այդ խմբակներին եւ կրակ բաց արաւ տաւարը քշել ուզող թուրքերի վրա : Բարձունքներում գտնւող թուրքերը ի-ջան գիւղի մօտ եւ սկսեցին այրել մարազները : Խէջօն , երբ նկա-տեց մարազների ծուխը գոչեց բարձրածայ :

Վա՛յ , անօրէնները մտան գիւղը :

Մենք արագութեամբ թունք ձիերը եւ սլացանք գէպի գիւղ . ա-ռանց մի բովէ հաշիւ տալու մեզ , թէ ի՞նչ ենք անում : Ես ու Խէ-ջօն արշաւում էինք այնքան տաքացած , որ խմբի միւս տղաները մեղանից շաս յետ էին մնացել : Ճիշտն ասած՝ ես մըցում էի Խէջօի հետ : Կատարեալ ձիարշաւ էր . ես աշխատում էի , որ նա ինձանից առաջ չանցնի :

Երբ , վերջապէս , խմբի միւս տղաներն էլ հասան , ես կարգադը-

րեցի, որ մօտենան ու դիրքեր բանեն դիւղի արեւելեան բարձունք-ներում : Տղաներն անմիջապէս զրաւեցին ցոյց տրւած դիրքերը եւ իմ հրամանի համաձայն՝ սկսեցին կրակ թափել դիրքերում ամրացած թուրքերի գլխին : Այդ վայրկեանին, չղիտեմ ո՞ր դիւղից, կայծակի արագութեամբ օգնութեան հասաւ Առիւծ Աւադը՝ հեծած իր գեղեցիկ սպիտակ նժոյգը : Նրան հետեւում էր իր խումբը . Մեր հրացաններուն ձայնը լսելուն պէս՝ նա շտապել էր մեզ օգնութեան : Մեր դիրքերը դիտելով եւ իմ զինորական հրամանները լսելով՝ նա բղաւեց ամբողջ կոկորդով :

— Տօ՛, ք... մոլի տղէք, էղա պրիցել ի՞նչ ի : Ես տասնեակ տարիներ զինորութին իմ էրի, չըմ խասկցի պրիցել ինչ ի, վա՛ռէք : Հա վառէք :

Ու դառնալով Քիւրդ Խէչօխին, որ նրա խմբի մէջ էր եւ իմ մտերիմ ընկերն էր, հրամայեց :

— Տղա՛յ, Քրդօ՛, քչէ՛ վըր թշնամուն վրէն :

Եւ իր ամենի ձին՝ քառասմբակ ուղղեց դէսի թուրքերի դիրքերը : Նրան հետեւեցին խմբի միւս զինորները : Փոթորկի էր, կարծես, որ տարերային թափով առաջ սլացաւ, ճանապարհին իր ամենի ուժի տակ խորտակելով ամէն բան :

Ես ինձ չափազանց նւաստացած զգացի . ամօթից գետինն էի ուղում մտնել : Իսկոյն կարգադրեցի, որ ձիերը ըերեն : Հեծանք ու շտապով հետեւեցինք Առիւծ Աւադին : Մեր խմբից չորս հոգի առաջ էինք ընկել . միւսներն էլ ճիգ էին անում հասնելու : Երբ մենք չորսով հասանք Առիւծ Աւադին, նրա խումբը արդէն դիրքերից հանել եւ հալածում էր թարաքամեաներին : Առիւծ Աւադը հալածում էր, շարունակ կրակում ու բարձրագոչ հայհոյանքներով սպառնում փախչող թշնամուն :

Կուի ամենատաք վայրկեանին, Առիւծ Աւադը նկատեց, որ մի քանի թիւրքեր ձորի միջոցով քշում էին նախիրը : Կանդ առաւ ու գոռաց մեղ .

— Տղէ՛ք, Մերոր փաշի զինորի գլխին փափախ չկա՞յ, որ թուրքեր էղա նախիր տանին . Խլէ՛ք էղ տաւար :

Մենք անմիջապէս յարձակւեցինք տաւարը քշող թուրքերի վրա, փախցրինք եւ աւարը խլեցինք նրանց ձեռքից :

Թարաքեամաներին հետապնդելիս, Առիւծ Աւադը նկատել է, որ մի թուրք վախից պահւել է փոքրիկ քարի տակ : Սկսել է կրակել վրան, բայց գնդակները վրիպել են : Եւ կատաղած ու բորբուած սկսել է գոռաւ .

— Եա՞ս, էղա քոփակ օղուր լաճ թալամուկ ի :

Ու ձիուց իջնելով՝ վախից ահաբեկւած թուրքի գլուխը ջախջանել է իր հրացանի կոթով : Հարւածը այնքան սաստիկ է եղել, որ հրացանի կոթը կոտրւել է :

Երբ թարաքեամաներին քշեցինք ու հաւաքւեցինք մի տեղ, Առիւծ Աւադն էլ եկաւ՝ հետը բերելով սպանւած թուրքերից առնաւած մի քանի այնալու հրացաններ, ինչպէս եւ իր ջարդած կոթով հըրացանը :

Բոլոր տղաների հաւաքւելուց յետոյ, Առիւծ Աւադը նստաւ իր սիրուն ձին եւ խմբի գլուխն անցնելով՝ մեծ հանդիսաւորութեամբ շարժւեց դէպի գիւղ : Ես էլ խմբի հետ, ամօթիսածութեամբ հետեւեցի նրա խմբին՝ միշտ մնալով պատկառելի տարածութեան վրա :

Առիւծ Աւադի խումբը գիւղ մտաւ Մերոր փաշայի երգերը երգելով : Աւադը տղաներին արգելել էր Անդրանիկի երգերը երգել :

Գիւղում, ձիերը տեղաւորելուց յետոյ, Ես շտապեցի Առիւծ Աւադի մօտ : Ներս որ մտայ՝ առջեւս բացւեց հետեւեալ տեսարանը . Առիւծ Աւադը նստած էր գիւղական օդայի մէջ տեղը փոււած գորգի վրա . նա պատկառազու ձեւով խմում էր օղին եւ դիտում շրջապատի մարդկանց, որոնք ոտքի վրա կեցած էին՝ պատրաստ նրան ծառայելու : Ինձ տեսնելուն պէս, սկսեց բարձրաձայն խօսել .

— Մըր ամակ ջուր կիյնի . մըր քաջութիւն կը կորսւի : Ճէհէյ, Մերոր փաշա, քեռ գերեզմանին մըոնիմ . քեռ զինորներ քաջութիւն կէնին, իղա ֆուլտաղ կոտոյի Հաճին կը շահւի :

Ու գառնալով ինձ՝

— Դրօ՛, էղա կոտրած թվանք կը տեսնա՞ս, էղա թվանք առնիմ՝ կոտոյի Հաճի չուր կրէվան կը փախի : Էղա կոիւ գիւղ տեսար, քեօ կեաթին ու քեօ նամուսին կը թորկիմ : Քեօ տեսած գրէ պ . Դումանին . թէ չէ մենք կը կուինք, քաջութիւն կէնինք, էղա քեօփակ օղի Փոլտաղ կոտոյի Հաճի թուղթ կը գրէ ու մըր քաջութիւն իրեն կը վերագրէ : Վա՛յ – լըմըն աշխարհ, քեօ հիմ դնողին ի՞նչ ըսիմ :

Ես խոստացայ գրել եւ գրեցի Դումանին, ինչ որ տեսել էի : Բայց Առիւծ Աւադը ուղեց, որ ցոյց տամ զրածս եւ կարգադրեց որ կարդամ : Ստիպւած եղայ կարգալու . ընդհանուր գծերով նկարգըրել էի կուի գլխաւոր տեղերը, Առիւծ Աւադի գործած հերոսութիւնը եւ այլն : Առիւծ Աւադ դժգոհ մնա՞ց :

— Տօ՛, աղայ, յո՞րի չիս գրէ, թէ չուր ո՞ր սար քշեցի թուրքեր, յո՞րի չիս գրէ, իմալ թվանքիս զնդղով թուրքի գլուխ ջարգեցի :

Այդ մասերն էլ աւելացրի նամակին, եւ Առիւծ Աւագը բաւարարւած՝ հանգստացաւ:

Հետեւեալ օրը երբ պատրաստում էինք մեկնելու Նախիջեւանի լեռնային շրջանը, Առիւծ Աւագը ջերմ բարեմաղթութիւններով ճանապարհ դրեց մեզ:

— Տղա՛յ, ասաց նա բաժանւելիս, էս լեռներուն մէջ տեղ մը չկայ, որ վտանգ ըլի եւ Առիւծ Աւագ թվանքի ձէն լսէ ու օդութեան չխասնի: Գնա՛, կոիւ լէ ունենաս, քշի՛ր վըր թշնամուն, վառէ զըմէն. դոր լէ կոիւ ընես՝ զուշի թեւով քեզի կը հասնիմ. քեօ կոնակն իմ, քե օդութեան կիւգամ. լա՛ւ դիտցիր:

### ԼԵՌՆԱՅԻՆ ՆԱԽԻԶԵՒԱՆՈՒՄ

Մեր ճամբորգութիւնը Դարալագեալից Նախիջեւանի լեռնային շրջանը անցաւ առանց դէպքի: Երբ տեղ հասանք, իբրեւ կենտրոնավայրի ընտրեցինք Նորս դիւզը:

Մեր եկած շրջանի վիճակը բաւական տխուր էր. բացառութեամբ Գիւմանը եւ Գիւմը կիւղերի, միւս բոլոր հայկական գիւղերը թալանւած էին թուրքերի ձեռքով: Դոներն ու պատուհաններն անդամ տարւած էին: Բախտաւորութիւն էր գոնէ, որ թուրքերի յարձակման ժամանակ արտերը դեռ հասած չէին: Թալանից յետոյ, հայ գիւղացիները վերադարձել էին իրենց կիսաւեր ու բոլորովին ամայացած տները եւ հաւաքել արտերի բերքը: Այդ պատճառով, հացի կողմից ապահովւած էին, բայց տաւար կամ ուրիշ բան՝ ոչ չունէին:

Նորսի մեծ տներից մէկը — անդուռ եւ անպատուհան — դարձաւ մեր բանակատեղին եւ շտաբը: Իրավէս տուն էլ չէր, այլ մի ընդարձակ չարդախ, ուր անց էինք կացնում մեր ժամանակը: Սեղանի տեղ գործ էինք ածում մի կոտրած փէշխուն. անկողնի փոխարէն՝ խոտ ու մեր եափնջիները: Գիւղացիք իրենք էլ անկողին չունէին եւ մեղ պէս, խոտի կամ յարդի վրա էին պառկում: Մեր ամենօրեայ կերակուրը հացն էր: Մեր համար էր ասւած՝ «զհաց մեր հանապազօր, տուր մեղ այսօր»: Ամէն օր հաց: Երբեմն էլ ունենում էինք դաւուրմա եւ ուրիշ ոչինչ: Այդ պատճառով չափաղանց մեծ էր լինում զինուրների ուրախութիւնը, երբ որեւէ դործով ուղարկը լուսում էին Գիւմանը կամ Գիւմը, ուր կամ ամէն բան:

—Պ. Դրօ՛, երէկ այսինչները գնացին, այսօր էլ մեր հերթն է, մենք գնանք:

Եւ ուղղակի երեխաների պէս ուրախանում էին, երբ իրենց էին նշանակում գնալու:

Պէտք է ասեմ այստեղ, որ տղաները, ընդհանուր առմամբ, անկեղծ յարդանքով էին վերաբերում ինձ: Խլաթցի Գալօն միայն արհամարհանքով էր ընդունել իմ խմբապետ նշանակւելլ եւ իր վերաբերումը արտայայտել էր հետեւեալ պատմութեամբ Մոկաց իշխանների կեանքից:

— Տղա՛ք, մըր մոկաց իշխաններ կը ժողվին ու էրկար Փիքր կը-նեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով լրկեն վանայ վալիին, որ քըր-դեր չթալին ճամբին: Շատ Փիքր կընեն, քիչ Փիքր կընեն ու կո-րոշեն փողեր ժամկոչի աղուէսի<sup>\*)</sup> վիզէն կապել որ տանէ, սաղ-սալամաթ տեղ հասցնէ: Հիմա մեր պարոն Դուման՝ մեղ կապեր է իդա աղուէսի վիզ...

Աղուէսը ես էի:

Նորսում սկսեցինք զբաղւել շրջանի ինքնապաշտպանութեան գործով: Նախ՝ կապ հաստատեցինք հայկական բոլոր գիւղերի միջեւ. ապա՝ վտանգւած վայրերում խմբապետներ նշանակւեցին, կազմը լուսում տեղական ինքնապաշտպանութեան խմբեր: Կազմակերպւեց հետախուզութեան գործը, որպէսզի օրը օրին տեղեակ լինէինք թշնամու շարժումների մասին: Գիւղացիութիւնը մեծ վստահութեամբ ընդ առաջ էր զնում մեր բոլոր առաջարկներին եւ սիրով կատարում էր կարգադրութիւնները:

Մեր վրա էր ընկած եւ շրջանի վարչական – դատաստանական գործը, որովհետեւ ոռւս պաշտօնէութիւնը վախից ամբողջապէս հեռացել էր: Թէ եւ կուսակցութեան կենտրոնի կարգադրութեամբ երկըրի դատական – վարչական ինդիբների լուծումը վերապահւած էր տեղական կոմիտէներին, բայց նրանց վճիռներից դժգոհները յաճախ մեղ էին դիմում, եւ մենք ստիպւած էինք միջամտել:

Այս աշխատանքների ժամանակ մէկից աւելի անգամներ լուրեր հասան մեղ, թէ թուրքերը պատրաստում են յարձակւելու կոռու Մազրայի վրա, ուր խմբապետ էի նշանակել կնեաղին: Մի օր էլ խակապէս տեղեկութիւն եկաւ, թէ Մազրան պաշարւած է թուրքերի կողմից: Մենք անմիջապէս ձի հեծանք ու շտապեցինք օդնութեան:

Գիւղից հաղիւ հաղար քայլի չափ հեռացել էինք, երբ չնչասպառ մեր ետեւից հասաւ Նորսի վալադը եւ լեղապատառ մկնեց աղաչել, որ վերադառնանք, որովհետեւ թուրքերն արդէն Նորս էին մտել:

Նորսը մեղ համար խիստ կարեւոր ուազմաղիտական վայր էր. նա միակ հանգուցային կենտրոնն էր, որով կապւում էինք Գիւ-

<sup>\*)</sup> Աղուէսը ժամկոչն էր:

ձորի ու Գիւմրիի եւ վերջիններիս միջոցով՝ Զանդեղուրի հետ ։ Նորուը ձեռքից տալ՝ նշանակում էր կտրւել Զանդեղուրից, այդ պատճառով շատապեցինք ձիերի գլուխները դարձնել յետ։

Նորսի գիւղացինները բաւական զէնք էին ստացել Հ. Յ. Դաշնակցութիւնից, դիրքերը գրաւած դիմադրում էին թշնամուն և թոյլ չէին տալիս, որ գիւղ մտնէ. Թուրքերի քանակը շատ մեծ էր, բայց զինւած էին անկանոն զէնքերով, մեծ մասամբ՝ այնալու, զափաղու եւ չախմախլու հրացաններով։ Այն էլ, ինչպէս յետոյ պարզուեց, փոքր մասն էր զինւած. մեծ մասը անզէն էր եւ եկել էր թալան տանելու։

Մենք, ընդհակառակը, զինւած էինք շատ լաւ եւ անհամբեր կուի առիթ էինք փնտրում, որպէսզի ցոյց սանք ժողովրդին, թէ եկել ենք նրա կեանքն ու գոյքը պաշտպանելու։ Առիւծ Աւագի ցոյց տած քաջութիւնն ու հերոսական օրինակն էլ մեծ ազգեցութիւն էր թողել ամենքիս վրա։ Վերջապէս, մենք ուղարկած էինք Հ. Յ. Դաշնակցութեան կողմից, որ, մանաւանդ այդ օրերին, հայ ժողովուրդի գոյութեան միակ յենարանն էր հանդիսանում. մենք պէտք է արդարացնէինք մեր վրա դրւած յոյսերը։ Մեղանից իւրաքանչիւրը համակաւծ էր վայրկեանի գրջութեան ։ Եւ պատասխանատութեան գիտակցութեամբ։

Հէնց որ հասանք պաշտպանւող գիւղացիններին, մենք էլ մտանք դիրքերը եւ սկսեցինք եռանդով կուել։ Մեր մոռինների որոտից ահարեկւած՝ թրքական ահադին բազմութիւնը խուճապի մատնաւծ՝ դիմեց փախուստի։ Մեղ էլ այդ էր պէտք. շտապեցինք օգտւել առիթից եւ բուռն թափով ընկանք նահանջող թշնամու յետեւից։ Թուրքերն առանց կանգ առնելու փախչում էին. մենք հալածեցինք նրանց Նորսից մօտ երեք կիլոմետր հեռու եւ համարեա մտանք թրքական գիւղը։

Քանի մօտենում էինք գիւղին, այնքան Թուրքերի դիմադրութիւնը սաստկանում էր եւ կուեր աւելի տաքանում։ Թուրքերը յանդուզն դարձան մանաւանդ այն ժամանակ, երբ նրանց օգնութեան հասաւ Ղաչաղ Թոփալ Մորթուզի խումբը։ Մենք զդուշութեան համար սկսեցինք յետ - յետ գնալ՝ դէպի նորս։ Թուրքերը, երեւի, կարծեցին, թէ փախչում ենք եւ Մորթուզի գլխաւորութեամբ դիմեցին աւելի յախուռն յարձակման։ Բերդակցի Օսկօն երկու ընկերներով թռան ձիերից եւ մտան քարերի տակ։ Ես տղաներով աւելի առաջ էի. մենք էլ դարձանք ու դիրք բռնելով նրանց մօտ՝ մեր մոսինները ուղղեցինք թուրքերին։ Միաժամանակ լուր ուղարկեցինք գիւղ, որ կուողները օգնութեան հասնին մեղ եւ շտապով գրաւեն

Նորսից Գիւմրի տանող ճանապարհի բարձումքը։

Դիրքային կարծ կոփւից յետոյ, ես հետո առի 4-5 զինուր, որոնց թւում էր եւ Խլաթցի Գալօն, եւ մօտ երկու հարիւր քայլ առաջ անցնելով՝ նոր դիրք բռնեցի թշնամու ճիշտ դիմացը։ Կողքիս պառկած էր Գալօն եւ, հակառակ հրամանիս, անկանոն հրացանաձգութեամբ փամփուշտ էր վիշացնում աննպատակ։ Երկու փամփուշտաշար արդէն վերջացրել էր եւ անխնայ կրակում էր, այն ժամանակ, երբ ամէն մէկ փամփուշտ մեղ համար մեծ գին ունէր։ Ես զայրացած՝ տեղից ցատկեցի - եւ մի երկու լաւ հարւած իջեցը Գալօնի գլուխն՝ բոռալով վրան։

- Տօ, յիմար, փամփուշտ փչացնելու ժամանակ ես գտել. վերջ տուր...։

Գալօն իմ հարւածներից սաստիկ կտրել էր շրթունքը։ Այդ գէպքը յետոյ պատմութիւն դարձաւ։ Տղաները տեղի - անտեղի յիշում էին՝ Գալօնին ձեռք առնելու համար։

Օգնական ուժերի հասնելուց յետոյ, մենք ընդհանուր գրոհի դիմեցինք, թուրքերին դուրս հանեցինք իրենց դիրքերից եւ քշեցինք մինչեւ իրենց գիւղը։

Երբ յաղթական վերադարձանք նորս, պարզեց, որ կուի թունդ վայրկեանին նորսեցիք զրաւել էին թուրքերի ամբողջ տաւարը եւ քշել - բերել էին իրենց գիւղը։ Գիւղացիններից ամէն մէկը ջոկել - տարել էր իրեն պատկանող անասունները, որ առաջ թալանել էին թուրքերը։ Մնացածը բաժանել էր չքաւոր գիւղացիններին։ Մի քանի հատ էլ յատկացւել էր մեղ իրեւե մսացու եւ կթելու համար։ Այնուհետեւ մեր տղաների կաթն ու մածունը ապահովւած էր։

\*  
\*\*

Յաջորդ առաւտեան կանուխ մի նամակ եկաւ Առինջ գիւղից։ Գրում էին Խէչօն եւ Սարգս Օղաբաշեանը. յայտնում էին, թէ թեու հետ հասել են Առինջ, յոգնած են եւ խնդրում էին գալ իրենց մօտ եւ տեղեկութիւններ տալ շրջանի ինքնապաշտպանութան մասին։

Ես շատ ուրախացայ։ Կարօտել էի Խէչօն եւ շատ էի ուղում տեսնել նրան։ Իմ բացակայութիւնը նորսից վտանգաւոր չէր, որովհետեւ թուրքերը կերած ծեծից յետոյ մի առ ժամանակ չէին համարձակւի յարձակւելու։ Անհրաժեշտ կարգադրութիւններն արի եւ երեք ընկերներով շտապեցի գէպի Առինջ։ Գիւղացինների մի ստար բազմութիւն հաւաքւել էր ինձ բարի ճանապարհ մաղթելու եւ շատ ուրախ էր երեւում։ Շատերը մեղ օրհնում ու կատակում էին։

- Աստւած Դաշնակցութեան ոյժ եւ ձեղ էլ կեանք ու արեւ տայ,

մի քիչ շունչ առանք ու ապահովեցինք: Տօ՛, գիւղից կովերի բառ-  
ցըն էլ էր կտրւել: Նորից մեր գիւղը չէնացաւ:

Իմ վարկը շատ բարձրացել էր նաեւ զինորների աչքին: Խլաթցի  
Գալօն այլեւս հեղնական առակներ չէր սպառում: Ընդհակառակը,  
նրա համար էլ ես արդէն կարգին խմբապետ էի: Ինչ խօսք, որ իմ  
արամաղլութիւնն էլ շատ բարձր էր:

Առինջին մօտենալիս, ես հեռւից նկատեցի, որ Խէջօն դուրս էր  
եկել, կանգնած կտուրի վրա՝ ինձ էր սպառում: Երբ հասանք, նա  
ժպատակվ մօտեցաւ ինձ ու համբուրելով՝ ասաց.

— Հը՞ , խաթաքեար քափուրօղի, դուման ես հանել շրջանում:

Ու գրկած՝ տարաւ ներկայացրեց Քեռուն եւ Սարգիս Օդաբաշ-  
եանին, որոնք կանգնած էին մի երկյարկանի տան վերի պատշպամ-  
բում:

Սարգսին ես տեսել էի, իսկ Քեռուն հանդիպում էի առաջին  
անդամ:

Սարգիսը մտերմօրէն բոնեց ձեռքս եւ ասաց.

— Հը՞ , մեր աղայ, առաջին մկրտութիւնդ յաջող է անցել, բեր  
մի համբուրեմ ճակատդ: Ու ցոյց տալով Քեռուն՝ շարունակեց:—  
Սա էլ մեր քեռին է՝ Անդրանիկի օգնականներէն:

Առջեւս կանգնած էր մի մարմնեղ, միջակից բարձր, ամուր կազ-  
մըւածքով, շիկագէմ, արծաքիթ ու սրաչեայ մի մարդ: Ձեռք տւի  
ու սկսեցի հետաքրքրութեամբ զննել նրան: Նա հարց ու փորձ ա-  
րաւ: Ապա սկսեց ընդհանուր խօսակցութիւն, որի գլխաւոր նիւթը  
ինքնապաշտպանութեան գործն էր:

Մեր խօսակցութեան յաջորդեց ճաշը: Գիւղացիք ոչխար էին  
մորթել եւ առաւ հաց ու գինի մէջտեղ հանել:

Ճաշից յետոյ, երբ ձիերը նստած՝ պատրաստում էինք մեկնել  
Նորս, գիւղացիք մօտեցան մեղ մի բարձած ջորով եւ մէկը ասաց.

— Պարոն Խաչատուր, էս էլ գինի է. նոք ենք տալիս Նորսի  
մեր զինորներին:

Խէջօն զարմացած գիւղացիների այս առատաձեռնութիւնից՝  
քմծիծաղով ասաց Սարգսին.

— Սարգիս, սրա տակը անպատճառ մի բան կայ. տեսնենք թէ  
ի՞նչ փորացաւ ունին:

Ու դեռ Խէջօն խօսքը չվերջացրած՝ գիւղացին աւելացրեց.

— Պ. Խաչատուր, քեզ էլ մի խնդիր ունենք. լսել ենք՝ մեր Փէ-  
ղայիները տաւար են բերել Նորս. հիւանդի կաթ էլա չունենք մեր  
գիւղում. խնդրում ենք՝ մեզ էլ բաժին հանէք:

Ես կանգնած էի Սարգսի կողքին: Նա իրեն յատուկ բարձր քըր-

քիչով սկսեց քա՛հ՝ քահ ծիծաղել, իսկ Քեռին ժպտում էր մեղմօ-  
րէն:

Խէջօն էլ չիմացաւ եւ աղմուկով հրհուաց.

— Վա՞յ, ձեզ ինչ ասեմ. կովերի համար Խէջօն պ. Խաչատո՞ւն  
էլ դարձրէք: Էւա, կը տեսնենք, մի բան կանենք:

Աւ շարժւեցինք Նորսի ուղղութեամբ՝ Ֆեղ հետ աանելով նւիր-  
ած գինին եւ Խէջօն, Քեռուն եւ Սարգսի հետ եկած երկու զինոր-  
ներին:

Նորսում Խէջօն ու Սարգիսը մեղ յանձնեցին իրենց լեցուն խուր-  
ջինները: Նրանք բմրել էին ծխախոտ, շաքար, դեղորայք և որիշ ան-  
հրաժեշտ իրեր: Մեզ առանձնապէս սրբացրեն չաքարը, որի պա-  
կասից շառ էինք նեղւամ: Փուսաստանի ներսները սկսւել էին գոր-  
ծադուլներ. Երկաթուղին կանգ էր տուն, մթերքների փոխադրու-  
թիւնն թէ համարեա դադարել էր: Մեզ մօտ, առաջն հերթին, հը-  
րապարակից վերցցծ էր շաքարը. Թէյլ ստիպւած էինք խուն չա-  
միչով: Մենք դեռ Դարալագեաղի եւ Զանդեղուրի հետ թէ կանոնա-  
ւոր կապ չէինք ստեղծել, որ մեր կարիքները այնտեղից հոգայինք. այնպէս որ Խէջօն եւ Սարգսի խուրջինները ճիշտ ժամանակին էին  
հասնում:

Նորսում առաջին երեկոն նւիրեցինք աւելի ընկերական զրոյցի  
ու կատակների: Յաջորդ օր առաւօտեան սկսեցինք լրջօրէն- քննու-  
թեան առնել մեղ վերապահւած բոլոր խնդիրները: Նախ բան խոր-  
հըրդակցութիւնը Խէջօն ինձ մտերմօրէն առաջարկեց.

— Երթանք՝ մի քիչ ման գանք:

Եւ երբ դուրս էինք եկել, շատ զգուշութեամբ, սկսեց խօսել  
Լեռնային Նախիջւեանի կարեւորութեան մասին ինքնապահանու-  
թեան տեսակէտից. պէտք է միանանք Դարալագեաղի և Զանդեղուրի  
հետ եւ այդ նպատակով հարկադրւած ենք մաքրել մի քանի թշնա-  
մի գիւղեր. այս լուրջ գործը գլուխ բերելու համար անհրաժեշտ է  
այս շրջանը յանձնել մի աւելի փորձւած ու եփւած խմբապետի: Խէ-  
ջօն յոյս էր յայտնում, որ ես ուրիշների նման խմբապետ մնալու  
ցաւով բունած չեմ եւ իրեւ կրթւած խմբապետ՝ կը հասկանամ իր  
ասածի կարեւորութիւնը:

Ճիշտն ասած, Խէջօն խօսելու ձեւը մի քիչ տարօրինակ թւաց  
ինձ. ի՞նչ դայլի շարական էր կարդում գլխիս. որ պէտք է՝ պէտք  
է. էլ ի՞նչ կարիք կայ երկար բարակ խօսելու: Ես անմիջապէս  
կտրեցի նրա խօսքը.

— Էլ ի՞նչ ես երկար ճառում. Ես շատ ուրախ եմ եւ մեծ հաճոյ-  
քով շրջանը կը յանձնեմ Քեռուն: Խէջօն անուշ աչքերով նայեց ե-  
րեսիս, գրկեց ինձ եւ ասաց.

- ԱՇ, իմ բոլոր բալիկներն այսպէս են. կեցցե՛ս: Դումանին էլ այս մասին գրել են. նա էլ համաձայն է: Քեռին շատ վործւած, խիզախ, աղնիւ խմբապետ է. ինչպէս ինձ ես սիրում ու յարգում, այնպէս էլ նրան վերաբերւիր:

Ես կրկին ու կրկին հաւաստիացրի, թէ ուրախութեամբ կը յանձնեմ Քեռուն շրջանի հրամանատարութիւնը: Երբ տուն վերադանք, Խէջօն հանդիսաւոր կերպով յայտարարեց Սարդսին.

- Ամէն ինչ կարգադրւած է:

- Արդէն ուրիշ կերպ էլ չէր կարող լինել. ես Դրօին ճանաչում եմ, պատասխանեց Սարդիսը:

Մեր այս խօսակցութեան ժամանակ գոմից դուրս էին բերել իմ ձին: Քեռին հիացած գիտում էր նրան, ժպիտը գէմքին: Խէջօն հարցը:

- Քեռի ջան, ո՞նց ձի է:

- Լա՛ւ մալ է, պատասխանեց Քեռին:

- Քեռի', քեզ փէշքէշ, վրա բերի ես:

- Տիրոջը բունբարէք ըլլայ:

Քիչ յետոյ, ես անցայ տղաների մօտ եւ յայտարարեցի, թէ այսուհետեւ մեր ընդհանուր խմբապետը Քեռին է: Տղաները անտրունջ լսեցին յայտարարութիւնս, բացի Խլաթցի Գալօից եւ Կոփեցի Սարօից:

- Մենք մըր խմբապետէն գոհ ենք, յորի՞ ուրիշ խմբապետ կուտան մըզի, - գանդատւում էին նրանք:

Ես բարկացայ նրանց վրա, պահանջեցի որ լսեն եւ ենթարկվին եղած կարգադրութեան: Ապա զնացի Քեռու մօտ եւ անձամբ յայտնեցի ուրախութիւնս նրա ընդհանուր հրամանատար նշանակւելու առթիւ:

Քեռին ժպտերես լսեց ինձ եւ ասաց.

- Միասին կը վարենք գործը. դուն ալ կը մնաս քո խումբը կը վարես:

Ես, սակայն, առարկեցի եւ պնդեցի, թէ սէտք է լինեմ նրա հրամանատարութեան տակ:

Ու այսուհետեւ մի ամբողջ տարի մենք մնացինք միասին Լեռնային նախիջեւանում ու Զանդեղուբում եւ վարեցինք բազմաթիւ կոխւեր, որոնցից երեքի վրա պիտի կանդ առնեմ՝ ցոյց տալու համար, գէթ մասամբ, Քեռիի խոշոր անհատականութիւնը, զարմանալի յանդկնութիւնը, անսահման քաջութիւնը եւ մանաւանդ դեկալարի հմտութիւնը:

Այդ մասին, սակայն, ուրիշ անդամ:

### ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ

## ԴՈՐՊԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

1932 թ. յունիս 30-ին լրացաւ Դորպատի Համալսարանի երեխարիւրամեալը:

Ճայ մամուլի ուշադրութիւնից, դժբախտաբար, վրիպեց այդ յորեկեանական տարին: Եւ, սակայն, եթէ առհասարակ կայ մի փոքրիկ ազգ, որի մշակոյթի պատմութեան մէջ Դորպատի համալսարանը կատարել է բացառիկ գեր, այդ էլ հայերս ենք: Մեր աղդային վերածնութիւնը եւ մանաւանդ մեր գրական-կրթական զարթօնքը ամենասերտ կերպով կապւած է Դորպատ անւան հետ: Բաւական է յիշել թէկուզ Խաչատուր Աբովյանի, Ստեփանոս Նազարեանցի, Ռափայէլ Պատկանեանի, Գէորգ Դոգոյնեանի, Քերովբէ Պատկանեանի անունները - մի հոյլ են դրանք - համոզւելու համար դըրան: Այդ բոլոր լուսաճաճանչ գէմքելը, այլեւ ուրիշ շատեր մեր աղդի երախտաւորներից, իրենց ուսմամբ եւ պատրաստութեամբ, իրենց հասարակական իդէալներով ծնունդ են Դորպատի համալսարանի:

Դորպատ քաղաքը գտնւում է Էստոնիայում, որ այժմ անկախ հանրապետութիւն է՝ հաղիւ ներկայ Հայաստանի մեծութեամբ: Ռուսական տիրապետութեան շրջանին Էստոնիան կազմում էր ցարական նահանդապետութիւններից մէկը՝ Լիֆլանդիան: Ինչպէս վերջինիս, այնպէս եւ նրա զարդը կազմող Դորպատ քաղաքի հեռաւոր անցեալը մթութեան մէջ է թաղւած: Այսչափը յայտնի է, որ Լիֆլանդիան չուրջ երեք եւ կէս դար իր անկախ գոյութիւնը պահպանուց յետոյ, 1582 թ. ընկնում է Լեհերի տիրապետութեան տակ: Շատ չանցած, 1629-ին, նւաճւում է Շվեդիայից: Աւելի առաջ, մինչեւ 13-րդ դար, Էնթագրուում է որ Լիֆլանդիան գտնւել է ոռւս տիրապետութեան տակ: Իսկ 1030 թ. էլ (ոռւս տարեզիրների պատմելով) Ս. Վլադիմիրի որդի Եարոսաւը հիմնել է այնտեղ մի բերդ որ իր անունով իւրեւ (Ժիւրժէվ) կոչել: Աւելի ուշ, 1224-ին, այդ բերդի մօտերը հիմնել է մի չէն տեղ, որ տեղացի ժողովուրդի՝ էստերի՝ (Էստոնների) լեզով կոչւել է Տարտո-լին (Tarto-liin).

Այդ անւան համապատասխանող գերման անւանակոչումն է եղած հետագային՝ Դորպատ:

Լիֆլանդիայում – ինչպէս նաեւ մերձբալտեան միւս երկիրներում – դեռ զարեր առաջ՝ հաստատւած է եղել գերման ընակչութիւն: Երկրի ազնւականութիւնը եւ, աւելի ուշ, քաղքենի դասակարգը գերման տարրից է բաղկացած եղել: Բնիկները, չստոն ժողովուրդը, կազմել են գրեթէ բացառապէս գիւղացի, երկրագործ տարրը, ասլրելով ոռւսական պայմաններին յատուկ ճորտատիրական կարգելի տակ: Դրանով պէտք է բացատրել եւ այն, որ աղդային գիտակցութիւնը դարեր շարունակ մեռած է եղել էստերի մէջ: Զարմանալի չէ այդ այն պատճառով, որ երկրի մշակոյթը եղած է բացառապէս գերմանական: Ապացոյց՝ հէնց Դորպատի համալսարանը:

Երբ Շվեդիայի անւանի թագաւոր Գուստավ Ադոլֆը, բողոքականութեան այդ նշանաւոր ախոյեանը, իր տիրապետութեան տակ է առնում Լիֆլանդիան եւ Էստլանդիան, իր մասնաւոր ուշադրութեան առարկայ է դարձնում այդ երկիրները, որոնք բողոքականութեան յարած էին արդէն 1558 թւականից: Իր նախկին դաստիարակ եւ յետոյ Լիֆլանդիայի եւ Էստլանդիայի ընդհանուր նահանգապէտ Ioann Skytte-ի խորհրդով Գուստավ Ադոլֆ 1630-ին Դորպատում բաց է անում մի գիմնազիա, որ երկու տարի յետոյ, 1632-ին, համալսարանի է վերածնում: Հիմնարկի հրամանագիրը Գուստավ Ադոլֆ ստորագրում է նոյն թւականի յունիս 30-ին, երբ տակաւին պատերազմի դաշտում էր գտնուում, Նիւրնբերգի տակ: Հիմնադրի անունով բարձրագոյն դպրոցը կոչում է Academia կամ Universitas Gustaviana.

Գուստավ Ադոլֆ յատուկ կանոնագրութիւն մշակել չի տալիս նորահաստատ հիմնարկութեան համար, այլ պարզապէս ընդունում է Շվեդիայի հին եւ նշանաւոր համալսարանի՝ Ուպսալյի կանոնադրութիւնը: Բուն հիմնարկէքը տեղի է ունենում նոյն թւականի հոկտեմբեր 15-ին: Դասաւանդման լեզուն «Գուստավականյում» լատիներէնն էր, ինչպէս առհասարակ ժամանակի եւրոպական բոլոր համալսարաններում: Պրոֆեսորները եւ ուսանողները կէս առ կէս շվեդներ եւ գերմանացիներ էին: Այնպէս որ շվեդ – գերմանական համարելու է Գուստավականան:

Հազիւ 24 տարի խաղաղ կեանք ունենալուց յետոյ, 1656-ին, երբ Դորպատը նւաճում են ոռւսները, փակուում են այդ հիմնարկութեան դռները: Համալսարանը վերաբացւում է 1690-ին, Կարլոս Ժ. Ճեռքով, երբ Լիֆլանդիան նորէն Շվեդիայի տիրապետու-

թեան տակ է մտնում: Բայց այս անգամ եւս երկար կեանք չի ունենում, հազիւ քսան տարի (1690-1710): Սկսում են (աւելի շուտ՝ շարունակում են) ոռւս – շվեդական երկարատեւ ու արիւնալի պատերազմները, մինչեւ ոք Պետրոս Մեծը վերջնականապէս տէր է դառնում Լիֆլանդիային եւ Դորպատին: Համալսարանը կրկին փակւում է, այս անգամ արգէն շատ երկար ժամանակով, զրեթէ մէկ դար: Եւ վերաբացւում է 1802 թ. ասլրի 22-ին, մայիս 1-ին սկսում են կանոնաւոր դասախոսութիւնները, թէեւ ոռւսական հողի վրա եւ ոռ'ւս տիրապետութեան տակ, բայց իրեւ զուտ գերմանական հիմնարկութիւն՝ դառնալով գերման մշակոյթի եւ գիտութեան հոչակաւոր կեդրոններից մէկը:

Դորպատեան համալսարանի ոսկեդարի առաջին տասնամեակներին հիմնարկութեան կեանքին մէջ շատ նշանաւոր գեր են խաղած մի քանի ուսուցչապետներ, գրանց թւում նաեւ Ֆրիդրիխ Պարրոտ, որ կարելի է ասել կնքահայրի գեր է կատարել հայ վերածնիչների մկրտութեան գործում գերման մշակութային աւազանի մէջ: Միջնորդապէս եւ անմիջապէս՝ երախտիք ունի այդ բանում նաեւ Ֆրիդրիխ Պարրոտի հայրը՝ նոյնչափ եւ աւելի նշանաւոր գիտնական Գէորգ Ֆրիդրիխ Պարրոտ, որ վճռական ու զեկավար գեր է խաղացած համալսարանի հիմնարկութեան գործում եւ նրա ներքին կեանքում, մի քառորդ դար շարունակ:

Մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում Դորպատի համալսարանի առաջին յիսնամեայ շրջանի պատմութիւնը, որի համար կարեւոր աղբիւրներ են հիմնարկութեան 25-ամեակի եւ 50-ամեակի առթիւ հրատարակւած (գերման լեզուով, ի հարկէ) մանրամասն տեղեկագիրները, որոնցից իմանում ենք, ի միջի այլոց, որ հիմնարկէքին վերաբերեալ հրովարտակը Ալքսանդր Ա. Ճեռքից (նոյն թւականի դեկտ. 12-ին) ստացել է Փիդիքայի ուսուցչապետ եւ փոխտեսուչ Գէորգ Ֆրիդրիխի Պարրոտ: Այդ նշանաւոր գիտնականի Պարրոտ – հօր (1767-1852), մասին այսչափը միայն ասենք այստեղ որ նա կէս – Փրանսական եւ կէս – գերմանական ծագում է ունեցել: Ծնւել է Մէօմպելգարդում, որ այն ժամանակ գտնուում էր Վիերտեմբերգութիւն (այժմ Փրանսական): Իր բարձրագոյն ուսումնեալ էր Շտուտգարտ քաղաքում: Դեռ Երիտասարդ՝ նա մասնաւոր ուսուցչի պաշտօնով տեղափոխւել էր Լիֆլանդիա եւ շուտով աչքի ընկել գիտական աշխատանքներով: Երբ բացւում է Դորպատի համալսարանը, Գ. Ֆ. Պարրոտ դասւում է նրա պրոֆեսորների շարքը:

Համալսարանի հիմնարկութեան թւականին հէնց՝ մի դիպւած

առիթ է դառնում որ շատ մօտ յարաբերութիւն մշակվի Պարրոտ-Հօր եւ Ալեքսանդր Ա.-ի միջեւ։ 1802-ի մայիս 22-ին կայսրը Մեմէլ անցնելիս (ուր պիտի հանդիպէր Պրուսիայի թագաւոր Ֆրիդրիխ Վիլհելմ Գ.-ին) կանգ է առնում Դորպատում։ Քաղաքը նրան հանդիսաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս։ Օրւան բանախօսը լինում է Պարրոտ, որի ճառը իր բովանդակութեամբ եւ ձեւով այնչափ ազդում է թագաւորի վրա, որ վերջինս որոշում է անձնական ամենամտերիմ յարաբերութիւններ ստեղծել պրոֆեսորի հետ։ Այդ օրւանից էլ սկսում է նրանց սերտ բարեկամութիւնը, որ տեսում է երկար ժամանակ։ Վերջը, երբ Ալեքսանդր Ա. միստիցիզմի գիրկն է նետում, զգալիօրէն պաղում են երկուսի յարաբերութիւնները, բայց երբեք չեն ընդհատում։ Պարրոտ շարունակում է որոշ կապ պահել նաեւ Նիկոլայ Ա.-ի հետ։

Ահա այս մարդն է, Պարրոտ-Հայրը, որ ժամանակի մի ուրիշ նշանաւոր անձնաւորութեան՝ կոմս (վերջէն իշխան) Կարլ Լիվէնի հետ միասին՝ ահազին գեր է խաղում Դորպատի համալսարանի կեանքի սկզբնական շրջանում։ Պարրոտը՝ իրեւ գիտնական, այլեւ երկար ժամանակ իրեւ տեսուչ ու փոխ-տեսուչ, իսկ Կարլ Լիվէնը՝ իրեւ նոյն հիմնարկութեան երկարամեայ խնամակալ և հոգաբարձու։ Վերջը իշխան Լիվէն դառնում է Ռուսաստանի լուսաւորութեան նախարար, միեւնոյն ժամանակ շարունակելով իր սերտ կապը Դորպատի համալսարանի հետ։ Նախարարի հանդամանքով էր, որ նա Պարրոտ-որդու միջնորդութեամբ ու յանձնարարութեամբ թոշակ կապեց մեր Խաչատուր Արովեանին ու հնարաւոր դարձեց նրա ուսումը Դորպատում։

Քանի որ Պարրոտ-Հօր եւ Լիվէնի մասին խօսք արինք, մի քանի կարճ տեղեկութիւններ էլ տանք Պարրոտ-որդու մասին, որի դերը Խ. Արովեանի կեանքում եղած է ուղղակի բախտորոշ։

Եօհան Եակոր Ֆրիդրիխ Պարրոտ ծնւել է 1791 թ. հոկտ. 14-ին, Կարլսուհէ քաղաքում։ Միջնակարդ ուսումն առել է Ռիգայում եւ Դորպատի դիմնադիայում։ 1807-ին մտել է Դորպատի համալսարանի բժշկական բաժինը եւ աւարտել 1814-ին։ 1821-ին հրաւիրւել է նոյն բաժանմունքի իսկական պրոֆեսոր։ Իր կոչումը առելի բնագիտութեան մէջ տեսնելով՝ նա 1826-ին ստանձնում է Փիդիքայի ամբիոնը, իրեւ յաջորդը իր հօր, որ այդ թւականին հանդստեան էր կոչւած։ 1829-ին Ֆրիդրիխ Պարրոտ ճամբորդում է Հայաստան եւ Արովեանի ուղեկցութեամբ Մասիս սարր բարձրանում։ Այդտեղից էլ սկսում է այդ երկուսի բարեկամութիւնը, որ եւ Արովեանին Դորպատ է առաջնորդում։ Պարրոտ-որդին եւս իր գիտական աշխա-

տութիւններով եւ ուսուցչական գործունէութեամբ մեծ ծառայութիւն է մատուցել Դորպատի համալսարանին։ Երեմնապէս նա վարել է նաեւ տեսչի պաշտօն (օրինակ՝ 1831-1833 թ., Արովեանի Դորպատեան առաջին տարիներին)։ Ինչ որ սակայն Ֆրիդրիխ Պարրոտին անհունապէս բարձրանում է մեր աչքում այդ՝ նրա նախանամական դերն է Արովեանի կեանքում։ Նրա հետքերով էլ, յայտնի է, հետագային մի շարք ընտիր հայորդիներ դիմում են դէպի նոյն Դորպատ։ Խւրաքանչիւրը առանձին եւ բոլորը միասին՝ դրանք հըզորապէս նպաստում են հայ մշակոյթի վերակենդանացման գործին։

Իր գոյութեան առաջին կիսամեակին Դորպատի համալսարանը ունենում է ընդամենը 47 ուսանող։ 1810-ին այդ թիւը բարձրանում է 147-ի, 1830-ին՝ 619, 1859-ին՝ 598, 1878-ին՝ 902, 1882-ին՝ 1252ի։ Դասախոսների թիւը եղած է՝ առաջին տարին՝ 29, 1820-ին՝ 31, իսկ 1881-ին՝ 56։ Համալսարանը սկզբնական ըրջանում ունեցել է հետեւեալ չորս բաժնները – աստւածաբանական, փիլիսոփայական, իրաւագիտական եւ բժշկական։ Յար եւ նման՝ գերմանական համալսարաններին, որոնք այսօր եւս պահպանում են այդ գրութիւնը։ Աւելի յիտոյ, Դորպատի համալսարանի փիլիսոփայական բաժինը ճիւղաւորում է երկուքի և պատմա – բանասիրական եւ Փիզիքո – մաթեմաթիքական։ Այդպէս եւ շարունակում է մինչեւ վերջը։

Համալսարանի առաջին հոգաբարձու – խնամակալը եղած է (1803-1817) Քիմնդեր, Գէօթէի երիտասարդութեան բարեկամը եւ ընկերը։ Իշխան Լիվէն շարունակել եւ զարգացրել է նրա սկսծ գործը։ Լիվէնի խնամակալութեան ըրջանին՝ երկար ժամանակ համալսարանի տեսչութիւնը վարել է էվկրո, որ իրաւամբ նմանապէս դասում է Դորպատի համալսարանի երախտաւորների շարքը։

Իշխան Լիվէնին իրեւ լուսաւորութեան նախարար յաջորդում է կոմս Ուվարովը։ Այդ ժամանակից էլ սկսում են չարաղէտ փորձեր՝ Դորպատի համալսարանը եթէ ոչ բոլորովին ուռւսացնելու, գէթ մեծ չափով ուռւս կառավարութեան աղղեցութեանը ենթարկելու։

Դարձեալ, մոռնալու չէ ժամանակը։ ցարերի գահի վրա նստած էր Նիկոլայ Ա.-ը։ Իսկ սրա թագաւորութիւնը (1825-1855) յայտնի է արդէն իբրեւ ամենապայլ, ամենադամութեան ըրջանը Ռուսաստանի 19-րդ դարու պատմութեան մէջ։ Նիկոլայ Ա.-ի անունը հոմանիշ էր բնապետութեան եւ յետաշրջութեան։ Ժամանակի յեղափոխական շարժումները պատրւակ էին բռնւել՝ արեան մէջ խեղդելու ազատագրական ամէն մի երեւոյթ։ Դեկարտիստների ալլստամբութիւնը շատոնց խեղդել էր արեան մէջ։ 1830-ի և 1848-ի

յեղափոխութիւններին հետեւել էր յետաշրջութեան մռայլ շրջանը։ Բնական էր ուրեմն, որ Նիկոլայ Ա.-ի բէժիմը անտես չանձը օտարացեղ ժողովուրդների մշակութային հիմնարկութիւնները ու դրանց շարքն՝ Դորպատի համալսարանը։ Ուվարովի կրկնակի փորձերի հետեւանքով՝ սեղմումների է ենթարկում այդ հիմնարկութիւնը։ Եւ սակայն, շարունակում է պահպանն իր գերման դիմագիծը։ Մերձբալտեան բարոնները տակաւին ամուր դիրքեր ունեին Պետերբուրգում, որպէսզի դիրաւ կարելի լինէր կապտել Դորպատի աւանդական իրաւունքները։ Գերման տարրը իրբեւ ամբողջութիւն եւս՝ աչքի էր զարնում իւր հաւատարմութեամբ եւ օրինապահութեամբ, այլ եւ իր պահպանողական ոգով։ Ռուս աղնւականութիւնը այդ տարբերի գործօն օժանդակութեան կարիքն ունէր դեռ։ Վերջապէս, ուսւ բուրդուազիան նոր-նոր էր ոտքի կանգնում ու շատ թոյլ էր դեռ, յարձակողականի անցնելու համար օտարացեղ աղդերի եւ նորանց մշակութային ինքնավարական հիմնարկների դէմ։

Ալեքսանդր Բ.-ի օրով եւս (1855-1881) Դորպատը շարունակեց աւելի կամ պակաս չափերով պահպանել իր դիմագիծը։ Ալեքսանդր Գ.-ի գուհակալութեան առաջին տարիններն իսկ՝ ծայր տւաւ մի նոր յետաշրջութիւն ամբողջ Ռուսաստանում, որ ուղղւած էր մանաւանդ օտարացեղ ազգութեանց դէմ։ Յայտնի են արդէն Անդրկոլկասի հայոց դէմ հանւած հարածանքները այդ շրջանին, մասնաւորապէս հայ դպրոցների առաջին փակումը։ Դորպատի գերմանական համալսարանն եւս ուղացման է ենթարկում աստիճանաբար։

1889 թւականը վճռական եղաւ այդ տեսակէտից։ Դորպատ գերմանական անունը նախապէս ըստ ուսուականի՝ Դերպտ ձեւափոխեցաւ, իսկ յետոյ՝ այդ անունն էլ մէջ տեղից վերացաւ ու փոխարինեցաւ զուտ ուսուական իւրիւ անունով։ Կերպարանակոխւեցաւ համալսարանի ներքին կանոնադրութիւնը, դարձաւ զուտ ուսուական։ Աստիճանաբար գերմաններէնին փոխարինեց ուսուերէնր, իրեւ դասաւանդման լեզու։ Գերման պրոֆեսորների տեղը բոնեցին ուուսներ։ Բացառութիւն կաղմեց բողոքական աստւածաբանութեան բաժինը միայն, որ կոչւած էր հոգեւոր պաշտօնեան պատրաստելու ամբողջ Ռուսիոյ աւետարանական համանքների համար։

Այսպէս շարունակեց իր խղճուկ գոյութիւնը Դորպատի երբեմնի փառապանծ համալսարանը մինչեւ 1918 թ. երբ գերման բանակուները իրենց գրաւման տակ առին Մերձբալտեան երկիրները, և Դորպատի համալսարանը կարճ ժամանակով վերստացաւ իր նախկին բնոյթը։ Իսկ երբ երկրի բնիկ տէրը, էստոն գիւղացի ժողովուրդը, ինքը դարձաւ հայրենի երկրին, վերականգնեց իր քաղաքական

ինքնուրոյնութիւնը, ոչ միայն Դորպատ ու իւրեւ անունները ազգային հին անունով փոխարինեց, - Տարսու - այլ եւ այդ քաղաքի պատմական համալսարանը զուտ ազգային - էստոնականի վերածեց (1919 թ.)։ Այդպէս էլ շարունակում է նա իր գոյութիւնը մինչեւ օրս։ Այդ պատճառ չէ, հարկաւ, որ նորազատ էստոն ժողովուրդը զանայ յարգանքի արժանի տուրքը տալ երեմնի գերման մեծ համալսարանին եւ առհասարակ գերման մշակոյթին։ Էստոն ժողովուրդի ազգային զարթօնքը քիչ բան չէ պարտական մէկին թէ միւսին։

Թէեւ Դորպատի՝ հետազային ուսուացւած՝ համալսարանն եւս իր ուսանողների թւում հայ ուսանողներ է հաշւել միշտ, բայց այդ վերջնները, քիչ բացառութեամբ, առանձին գեր չեն խաղացել մեր կեանքում։ Բոլորովին տարբեր է եղած Դորպատի գերման համալսարանի պարագան մեզ համար, մասնաւանդ 30-ական թւականներից սկսած մինչեւ 60-ական թւականների սկիզբը։

Այնուհետեւ արդէն Դորպատի փոխարէն՝ հայ ուսանողները գունդ առ գունդ սկսեցին զիմել դէպի բերլին, կայսցիք եւ Գերմանիայի միւս համալսարանները, այլ եւ դէպի Մոսկա, Պետերբուրգ եւ Ռուսաստանի ու արտասահմանի ուրիշ բարձրագոյն դըպրոցներ։

Դորպատի համալսարանի առաջին յիսնամեայ շրջանը եւ մանաւանդ մինչեւ երեսնական թւականների վերջերը ամենէն ծաղկածը համարելու է՝ այդ հիմնարկութեան պատմութեան մէջ։ Այդ ժամանակներում է, որ համալսարանը ձեռք է բերում ոչ միայն սեփական շէնք, այլ եւ կլինիքներ, աստղադիտարան, համալսարական օժանդակ հիմնարկներ, բուսաբանական այդի եւ որ կարեւորն է, ուսուցչական - բանասիրական յատուկ ինստիտուտ, որ աւելի ուշ սեմինար կոչւեցաւ։ Նոյն այդ շրջանին է դարձեալ, որ Դորպատի համալսարանի մէջ դասախոսել են մի շարք անւանի գիտնականներ։ Դրանցից մի քանիսը մեծ հոչակ են վայելել Դորպատից ու Ռուսաստանից դուրս եւս, ամբողջ Եւրոպայում։

Մոռնալու չէ նաեւ այն պարագան, որ Դորպատի համալսարանը առաջին շրջանում իր զեկավարութեան եւ հսկողութեան տակ ունէր Մերձբալտեան երկրամասի գլորոցական ամբողջ գործը։ Նրա պղեցութեան էին ենթակայ շրջանի տարրական եւ միջնակարգ պղեցութեան էր կարճ, հսկայական էր Դորպատի համալսարանի պղեցութիւնը ոչ միայն իրեւ գիտութեան տաճար, այլ և որպէս զպրոցական գործի կազմակերպիչ Աւելին Դորպատի բարոյական և գիտական ազգեցութիւնը տարածւում էր ամբողջ Ռուսաստանի վրա։ Ոչ մէ-

այն նրանով, որ վերազանց էր կայսրութեան միւս համալսարանների բաղդատութեամբ, այլ եւ նրանով, որ գիտական ուժեր էր պատրաստում այդ վերջինների համար։ Յատուկ այդ նախակին էր ծառայում Դորպատի համալսարանի հիմնարկներից մէկը, այսպէս կոչւած «ալբոֆեսորական ինստիտուտը», ուր ընդունուած էին բուն Ռուսիոյ համալսարաններն աւարտած եւ իրենց ընդունակութիւններով աչքի զարնող երիտասարդներ, շարունակելու համար իրենց բարձագոյն ուսուածը Դորպատի համալսարանում եւ նախապատրաստելու համար պրոֆեսորական պաշտօնի՝ ուսուական համալսարաններում։ Այնուհետեւ, այդ երիտասարդները մէկական տարի լսում էին Բերլինի եւ Փարիզի համալսարաններում։

Դորպատի «ոսկէդարը» այդպէ՞ս եղած է նաեւ հայ ուսանողութեան համար, 1830-1860 թ. երեսնամեայ շրջանում, եւ մանաւանդ 50-ական թւականներին։ Գաղափարականութեամբ տարւած, ազգի վրկութեան իդէալով ոգեւորւած մի բուռն հայ ուսանողների համար Alma mater-Dorpatensis -ը լսկապէս որ վերածնութեան աւազան հանդիսացաւ։ Ոչ միայն համալսարանը իրեն այդպիսին, այլ եւ՝ հեռաւոր հիւսիսի այդ փոքրիկ քաղաքը իրեն եւրոպական մի կեդրոն։ Այլ եւ պրոֆեսորների բարեկամական կապերը ուսանողութեան հետ՝ լսարաններից դուրս, մասնաւոր կեանքում։ Բայց մանաւանդ գերման ուսանողութեան ընկերակցական կեանքը յեղափոխիչ նշանակութիւն ունեցաւ հայ ուսանողութեան համար։ Վերջապէս, գերման մտքի sturm und drang-ի (Գրոհի եւ ոգործան) շրջանը հայ ուսանողութեան մէջ եւս - ու նրա միջոցով՝ ողջ հայութեան մէջ - առաջ բերաւ թարմացուցիչ հոսանք, սկիզբ դընելով արեւելեան հայութեան նորագոյն կանքին։ Զարմանալիօրէն, նոյն այդ ժամանակները արեւմտեան հայութեան մէջ եւս, համանըման ազդեցութիւնների հետեւանքով, առաջ եկաւ այդպիսի մի շարժում, եւ ծնունդ տւաւ Ազգային Սահմանադրութեան ու հայ - մշակութային մի նոր կեանքի։

Դորպատի համալսարանի գերը չայ մշակոյթի պատմութեան համար արժանի է առանձին քննութեան, որին կը վերադառնանք «Վէմ»-ի էջերում։

Այս տողերը, գրւած 1932-ին, նպատակ ունէին միայն՝ անարձագանդ չմթողնելու 300-ամեայ յորելեանը գիտութեան այն մեծ տաճարի, որին այնչա՞փ բան է պարտական հայ մշակոյթը։

Բերլին։

### ԱՐԱԿՈՅՑ ԱՍՏԻԱԾԱՏՐԵԱՆ

## Ա Ր Ա Մ Ը

(ՅՈՒՇԵՐ ՈՒ ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Առաջին անգամ ես Արամին պատահել եմ Երեւանում, որքան մէջում եմ, 1901-ին։ Այն ժամանակ Երեւանի միջնակարգ գլուցների աշակերտութիւնը գրեթէ ամբողջովին կազմակերպւած էր։ Կային չորս դպրոցներ - Երեքը պետական (տղայոց եւ օրիորդաց գեմնագիւնները եւ ուսուցչական սեմինարեան) եւ հայոց թեմականը։ Իւրաքանչիւր դպրոց ունէր իր առանձին կազմակերպութիւնը, որոնք սերտ կապ էին պահուած միմեանց հետ։ Այդ կապը պահուած էր «Մայր խմբի» միջոցով, որի մէջ մտնում էին երկուական ներկայացուցիչներ ամէն դպրոցից։ «Մայր խմբում» ծեծւում էին աշակերտական շարժման վերաբերող ընդհանուր հարցեր։ Շարժման նպատակը մշակութային էր - աշակերտութիւնը ձգտում էր ընդլայնել իր մտաւոր հորիզոնը։ Բնժերցանական ժողովներ, դասախորութիւններ, գրական - երաժշտական հանդէսներ - ահա գլխաւորապէս այն միջոցները, որոնցով աշակերտութիւնը լրացնուած էր իր ներաշխարհի պակասը դպրոցից դուրս։ Սակայն նրա հետաքրքրութիւնը չէր սահմանափակւում լոկ մշակութային խնդիրներով։ Շըրջապատի կեանքը, բնականաբար, աղջում էր նրա վրա։ իսկ այդ կեանքում տեղի էին ունենուած մատաղ սերնդի հետաքրքրութիւնը բորբոքող երեւոյթներ։ Հ.Յ.Դաշնակցութիւնը արժանար էր ձգել հասարակութեան այլ եւ այլ խաւերում։ շատերն էին զբաղւում ազգային - հասարակական հարցերով։ Դաշնակցական գործիչները ձգտում էին իրենց ազգեցութեան տակ առնել եւ աչքի ընկնող ուսանողներին ու նրանց միջոցով ազգային ողի գարթեցնել աշակերտութեան մէջ։ Եւ յաջողում էին։ Աշակերտական խմբերում ու շըրջաններում, իրեւ հետեւանք դրսի ազգեցութեան, ծայր էր տւել մի այսպիսի հարց՝ աշակերտութիւնը պէտք է լինի կուսակցակա՞ն թէ անկուսակցակա՞ն։ այլ խուզով նա պէ՞տք է զբաղւի ազգայինքաղաքական հարցերով, թէ պէտք է սահմանափակւի միայն իր ուսումը - կրթութիւնը լրացնելով։ Եւ թէեւ մէծամասնութեան գի-

տակցութիւնը կողմնակից էր վերջինին, բայց հէնց այդ մեծամասնութեան մէջ էլ կային շատերը, որոնք իրենց զգացմունքներով ընդառաջում էին դրսում՝ կեանքում տիրող տրամադրութիւններին ու ոգեւորում – ապրում նրանցով:

Ահա այդ ժամանակ մի օր լուր տարածւեց աշակերտներին մէջ, թէ Ղարաբաղի թեմական դպրոցից մի քանի հոգի եկել են Երեւանի թեմականը մտնելու համար: Պատմում էին, որ նրանց դուրս են արել իր ըմբուստների, անկարգների: Մի քանի օր անց աշակերտական մի հաւաքոյթում տեսայ այդ ղարաբաղցիներին: Ծանօթացանք եւ այնուհետեւ մի քանի անդամ առիթ ունեցանք իրար հանդիպելու: Մեր աշակերտական ժողովներին մասնակցողները երեք հոգի էին. մէկը պնդակազմ ու խոշոր, Սարդիս անունով, միւսը նուրբ դիմագրծերով ու մշտաժպիտ – Տոշեան, երրորդը՝ շիկահեր, փոքրիկ սրածայր միրուքով, կարճահասակ, սրամիտ – անունը մոռացել եմ: Այդ երեքի արտաքինն էլ շատ լաւ պատկերացնում եմ մինչեւ օրս էլ: Մինչեւ 1918 թ. ես չգիտէի, որ Ղարաբաղի թեմականից Երեւան տեղափոխած Սարդիսը եւ Արամը միեւնոյն անձնաւորութիւնըն է: 1918 թւին մի օր Արամի հետ կառքով ինչ որ մի տեղ էինք գնում: Նա խօսում էր, ես լսում էի ու միաժամանակ թեք հայեացքով դիտում նրան: Երեւի նմանութեան կապակցութեամբ Արամի դիմագիծը շատ պարզ յիշեցրեց ինձ 17 տարի առաջ նոյն Երեւանում տեսած Սարդիսին:

– Խօսքդ կտրում եմ, Արամ, դու Երեւանի թեմականում սովորել ես, հարցըրի:

- Հա, ի՞նչ կայ որ, ժամաց նա:
- Եղբայր, դու Սարդիսն ես, զարմացայ ես:

Զարմանքու նրան զլարճացրեց: Նկարագրեցի իր այն ժամանակւայ արտաքինը – բաց մոխրագոյն մահուղից բլուզ, սեւ կաշուց լայն գոտի, սեւ մահուղից տապատ, խիտ, ըմբուստ մազեր, վատառողջ աչքեր, իր տարիքին չսազող լուրջ դէմք:

1901 թւին Սարդիսին պատահել եմ մի քանի անդամ. միշտ էլ նոյն տպաւորութիւնն եմ ունեցել – լուրջ ու լուակեաց էր, ինքն իր մէջ ամփոփւած, մինչեւ իր ընկերները – ղարաբաղցիները – շատ ուրախ բնաւորութեան տէր էին: Իր ներքին կարողութիւններով աչքի չէր ընկնում, գոնէ ես մեր հաւաքոյթներում նրա մէջ արտակարդ ոչինչ չեմ նկատել:

\*\*\*

1917 թւին, դարնան ու ամառան ամիսներին, ոսւսական բանակին արհեստական ներարկումներ էին անում՝ նրա ուազմական

ողին բարձրացնելու ու յարձակման ընդունակ դարձնելու համար: Ա. Կերենսկին անդադար պառյաներ էր գործում արեւմտեան ճակատում ու ճիգ թափում – խօսքի միջոցով համոզել զօրքին՝ պատերազմը շարունակելու անհրաժեշտութեան մէջ ու դէպի յաղթութիւն մղելու նրան: Նրա օրինակին հետեւում էին եւ Անդրկովկասի բանակում աշխատող քաղաքական գործիչները: Նոյնը կատարում էր եւ մեղ մօտ՝ Երեւանում, ուր այդ ժամանակ կանգնած էր տասնեօթ հազարանոց մի զօրամաս: Թիֆլիսից Երեւան էր ուղարկւած Երկրային Կենտրոնի անդամ, այժմ հանդուցեալ բժիշկ Յովսէփի Բէդդայտեանը, յայտնի ուղեմոկրատ, Երեւանի շրջանի դասավելքներին հաւաքելու, արդէն իսկ քայլքայման շեմքին հասած զօրամասերի ողին բարձրացնելու, նրանց կազմակերպելու ու ուազմաճակատ ճամբելու նպատակով: Արամն էլ Երեւանումն էր: Բէդդայտեանը, կամենալով օգտագործել Արամի անունն ու հեղինակութիւնը իր նպատակների համար, հրաւիրեց նրան ներկայ լինել իր նշանակած միտինգին եւ խրախուսանքի խօսք ասել զինուորներին: Ինձ, իբր Երեւանի Զինուորական Խորհրդի Գործադիր Կոմիտէի անդամի, յանձնարարած էր աշակցել Բէդդայտեանին:

Նշանակւած օրը, ճաշից յետոյ, երբ զօրամասերը հաւաքւել էին Երեւանի զօրանոցներից մէկի ընդարձակ բակում, Բէդդայտեանը բերեց Արամին: Առաջին անդամն էի լսում նրա ճառը: Հուեսոր չէր արտասահնութիւնն ունէր ինչ որ թերութիւն, որ վնասում էր խօսքի արտաքին տպաւորութեան, մանաւանդ անսովոր ականջի համար: Չունէր նաեւ յստակ, սահուն ոճ, որի ազատ կարկաչիւնը այնքան անհրաժեշտ է միտինգային հոետորի համար: Այնուհետեւ լսել եմ Արամին բազմաթիւ անդամներ եւ բազմաթիւ տեղերում զանազան առիթներով ճառ ասելիս: Առաջին տպաւորութիւնս մնացել է նոյնը – հոետոր չէր: Չուրկ հոետորական չնորհքից՝ Արամը, սակայն, ունէր զարմանալի բովանդակալից ու հարուստ միտք և երբ ականջդու ովորում էր նրա լեզւին ու խօսքին, միշտ հաճոյքով էիր ունկընդուրում նրան: Ճկուն ու հնարագէտ էր նրա միտքը. չեմ, յիշում մի գէպում (Սարդարապատի շրջանի հարուստ ու շէն գիւղերից մէկը), ուր գնում էի արձակուրդով ընտանիքիս մօտ: Արամը գալիս էր Ղուրդուղուլի հիւր Մոսկվայի Կոմիտէի աւագ բժշկուհի օր. Զալեանի մօտ, որի հետ մի երկու ամիս յետոյ ամուսնացաւ: Մի քանի

1917 թ. ամառը ես յաճախ պատահում էի Արամին Ղուրդուղուլի գիւղում (Սարդարապատի շրջանի հարուստ ու շէն գիւղերից մէկը), ուր գնում էի արձակուրդով ընտանիքիս մօտ: Արամը գալիս էր Ղուրդուղուլի հիւր Մոսկվայի Կոմիտէի աւագ բժշկուհի օր. Զալեանի մօտ, որի հետ մի երկու ամիս յետոյ ամուսնացաւ: Մի քանի

սովորական ու պատահական հանդիպումներից յետոյ նա իր պահածքով սկսեց շարժել իմ հետաքրքրութիւնը։ Ես, թէեւ հեռակց հեռու, բայց լաւ գիտէի թէ ո՞վ է Արամը։ Հ.Յ.Դաշնակցութեան նշանաւոր դէմքերից մէկը եւ Վանի հերոսը, բայց եթէ այդ բանը չխմանայի ու չլինէր շրջապատի ակնածանքով ու յարգանքով լի վերաբերմունքը դէպի նա, բնաւ չէի մտածի, որ Արամը մեր իրականութեան ամենամեծ ու ամենաազդեցիկ քաղաքական կուսակցութեան ղեկավարներից է ու ժողովրդական հերոս։ Արտաքին կեցւածքով ու ձեւերով մի սովորականից սովորական մահկանացու, պարզ ու մտերիմ զրուցակից։ Եւ մի՛շտ այդ միեւնոյն տպաւորութիւնը առօրեայ կեանքում։ Իմ այդ տպաւորութիւնը մնաց մինչեւ վերջ։ Հանդամանքների բերմամբ հետազային Արամի հետ ես բաւական մօտեցայ - մտերմացայ։ ամիսներ շարունակ գրեթէ օրն ի բուն մենք միասին էինք լինում։ Այդ այն ժամանակն էր, երբ դէպքերն ու հանդամանքները փոխում էին գահավէժ, գլխապտոյտ արագութեամբ և ճակատագրական արժէք ստանում հայ ժողովրդի համար։ Երեւանում գտնուղների մտքերն ու զգացումները լարւած էին անշափ։ Նրանց ապրումները խորունկ էին, ջղայնոտ ու մի՛շտ յուսահատական։ Օրերը շա՛տ երկար էին, ամիսները անվերջ...։ Այդ օրերին Արամը մի հսկայ էր, որ իշխում էր շրջապատի վրա եւ ընթացք ու ուղղութիւն տալիս նրա կեանքին։ Այդ զդում ու գիտակցում էին ամենքը՝ առանց գաւանանքի խտրութեան։ Եւ ահա այդ հսկան նոյն սովորական մարդն էր, որին հանդիպում էի Հուրդուղուկում առօրեայ պայմաններում - մատչելի ամենքին, գրեթէ ճգնաւոր իր կեանքի եղանակով, ո՞չ մի քայլ իր գիրքը ընդգծելու, ուշադրութիւն գրաւելու, իրեն ցուցագրելու։ Իր անձը գոյութիւն չունէր. անձնական կեանքը զրկանքների անվերջ շարան կը լինէր, եթէ շրջապատողները հոգ չտանէին նրա մասին։ Արամին մօտ ճանաչելուց յետոյ մարդ տարակուում էր, թէ ո՞վ է նրան փաշատիղուս տեւել։ Մի կատարեալ թիւրիմացութիւն, գոնէ ուստահայերիս հասկացողութեամբ. նրա բնաւորութեան մէջ փաշայական ոչինչ չկար։ Եւ ինքը ինչպէ՞ս էր խորշում այդ տիտղոսից։

Ցիշում եմ երկու այսպիսի դէպք։ Մի օր, տուն վերադառնալով - իրեն դիկտատոր ընտրելու յաջորդ օրը - տան մուտքի երկու կողմը պահակ - զինուրներ է տեսնում, իսկ բնակարանի մուտքին փակցրած՝ «Արամ Փաշա»։ Անմիջապէս գրապանից հանում է գրչահատը ու քերում փաշա բառը, իսկ մի երկու օր յետոյ վերցան եւ զինուրները։ Մի այլ դէպք։ Մակւայ խանութիւնից ներկայացուցիչներ էին եկեւ Արամի մօտ։ Բարեւներ էին բերել խանից ու յացուցիչներ էին եկեւ Արամի մօտ։ Բարեւներ էին բերել խանից ու

դիմում - նրանից ու տեղական հայերից օգնելու իրենց պարենով։ Երբ ներկայացուցիչները (հայերը) վերադառնում էին, Արամի անունից ուսւակելիքն մի նամակ գրւեց խանին։ Ո՞չ մի կերպ չէր համաձայնում նամակի տակ ստորագրել Արամ փաշա, այլ ստորագրեց միայն Արամ։ Մեծ դժւարութեամբ համոզեցինք, որ այդ ստորագրւած անւանը կցւի նաև «փաշա» բառը։

1917-ի, կարծեմ, ամառաւայ սկիզբներին Արամը յանձն է առնում ինչ որ մի պաշտօն։ Այդ ժամանակ նա ապրում էր Հուրդուղուկում, որտեղից եւ անում էր իր պաշտօնին վերաբերող կարգադրութիւններ։ Նրա միջոցով լծկաններ, գլխաւորապէս գոմէշներ եւ երկրագործական գործիքներ էին ուղարկուում Տաճկահայաստանի գրաւած վայրերը։ Իր պաշտօնի վրա նա նայում էր կէս հեգնանքով եւ իրեն «գոմէշների վերակացու» էր անւանում։ Հուրդուղուլիում Արամը հանդստանում էր։ Այդ գիւղում եղած ժամանակս գրեթէ ամէն օր, յաճախ օրական երկու երեք անգամ հանդիպում էի նրան։ Խօսակցութիւնները պատում էին սովորական ու առօրեայ խնդիրների շուրջ։ Արամը գիտէր մարդկանց հետ յարաբերութիւններ մշակել ու պահել ամէն պարագայում։ Միանդամայն աննկատելի կերպով ես ընտելացայ նրան եւ թէեւ մեր մէջ մտերմական ոչինչ չկար, մը հանդիպումները մեծ բաւականութիւն էին պատճառում ինձ։

Հուրդուղուլիում երկար մնալ չէի կարող. վերադարձայ Երեւան։ Կարճ ժամանակից յետոյ իմացայ, որ Արամին կանչել են Թէֆլուս։ Այնուհետեւ նրան չտեսայ մինչեւ 1917 թ. գեկտեմբեր, երբ նա, իր Հայոց Ազգային Խորհրդի լիազօր, եկաւ Երեւան։

1917 թւին Երեւանի հայութիւնը ծանր ու անստոյդ վիճակ էր ապրում։ Ուսւական գորամասերը մեծ մասամբ հեռացել էին։ Մեռնող կարգերից ժառանգութիւն մնացած հիմնարկութիւնները գրեթէ իսպառ կորցրել էին իրենց նշանակութիւնը ժողովրդի աչքում։ Եւ այդ՝ նոյնիսկ այն դէպքում, երբ հիմնարկութեան գլուխ կանգնած էր նոր, յեղափոխական մարդ։ Ժողովուրդը մնալով ինքն իրեն՝ առողջ բնազդով թեքում էր դէպի հարազատ հաստատութիւնները - դէպի Ազգային Խորհրդները եւ Յեղափոխական Կոմիտէները։ Վերջինները աշխատում էին ոյժ տալ Ազգ։ Խորհրդներին, - իրեւ ժողովրդի հաւաքական կեանքի արտայայտութեան ու նըրանց միջոցով էին գործ կատարում։ Երկրի տէրերը դառնում էին Ազգ։ Խորհրդները թէ կենտրոնում եւ թէ գաւառներում։ Երեւանի Ազգային Խորհրդը իրեն համարում էր շրջանի գերադոյն մարմինը, բայց իր անելիքների մասին որոշ, յստակ գաղափար չունէր։

կար այն գիտակցութիւնը, որ ժամանակը բախտորոշ է, հայ ժողովրդի քաղաքակալ կեանքը ճակատագլուական շրջան է անցնում, որ ապագան յղի է ամէն տեսակ անակնկալներով, որ ոռուը, լքելով ճակատը՝ զարհուրելի վտանգի դուռ է բաց արել սահմանի այս կողմը նստած հայութեան համար: Ունենալով հանդերձ այդ գիտակցութիւնը, Երեւանի Ազգային Խորհուրդը համապատասխան գործունէութիւն ցոյց չէր տալիս: Կային մարդիկ, կար գործ կատարելու տրամադրութիւն, բայց չկար մի կամք, որ օղակէր այդ մարդկանց ու մզում տար նրանց ձգտումներին: Մեծ դեր էր կատարում եւ այն, որ Երեւանը նայում էր Թիֆլիսին, իրեւ կենարոնի, եւ այստեղից սպասում ցուցմունքներ, հարհանդներ: Երեւանը գրեթէ կտրւած էր աշխարհից եւ չդիմէր թէ ինչ է կատարում դուրսը: Երեւանը անորոշութեան մէջ ջղայնանում էր: Ծա՛նը, վաս օրեր էին....:

Երբեմն - Երբեմն Թիֆլիսից գալիս էին պատահական մարդիկ և զեկուցումներ տալիս Ազգ.Խորհուրդում-տեղեկութիւններ Թիֆլիսից: Սակայն այդ տեղեկութիւնները չափազանց անբաւարար էին եւ չէին կարող գծել Երեւանի Ազգ. Խորհրդի անելիքների ուղին:

Վերջապէս, մի օր եկաւ Դրօն, որից իմացանք, որ յատուկ վեազօրութիւններով Թիֆլիսից Երեւան է գալիս Արամը: Անհամբեր սպասում էինք նրան: Եւ գեկտեմբերի վերջերին (24-26) եկաւ: Նոյն օրը հէնց գնացի մօտը: Ես արդէն զինուրական հագուստս փոխել էի: Արամի առաջին խօսքը գրան էր վերաբերում: Ուշացել ես, ասաց, ձեռքս սեղմելով, ժպիտը դէմքին՝ ցոյց տալով զգեստս: Ինդըն վաղւանից նորից հագնես զինուրական հալաւդ: Ակնարկում էր, որ գործ կայ անելու: Մի երկու ժամ անցած միասին զնացինք Ազգային Խորհուրդը, որ այդ օրը հաւաքւել էր Գայիսիանեան դպրոցի շէնքում, յատկապէս Արամին լսելու համար: Արամը տւեց մեզ հետաքրքրող ու գրեթէ բոլոր հարցերը սպառող մի ընդարձակ գեկուցում - Ռուսաստանի վիճակը, քաղաքական կացութիւնը Անդրկովկաստում, հայ-վրացական-աղքարէջանեան յարաբերութիւնները, տաճիկների տրամադրութիւնները եւ այլն եւ, ի վերջոյ՝ մեր անելիքը: Խօսքը ամփոփեց մօտաւորապէս այսպէս - Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ՝ նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ուուներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ լինում է - դա լոկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրում, չօշափելի օդութիւն հասցնելու մաքով: Դրա հակա-

ուակը, կայ դաւագրական վերաբերմունք: Մինակ ենք եւ պէտք է ապաւինենք միա՛յն մեր՝ ուժերին՝ թէ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարդ հաստատելու համար:

Առաջին անգամն էի լսում Արամին զեկուցում տալիս: Շա՛տ չնորհալի զեկուցանող էր: Նրա զեկուցումների մէջ չկար ոչինչ աւելորդ: Խնդիրները զնում էր իրենց մերկութեամբ, լուսաբանում էր կարճ ու պարզ, երբեմն, կարիք եղած դէպում, զեկուցումը ամփոփում էր երկու խօսքով եւ ապա տալիս եղանակացութիւնները: Ախտաճահացչութեան զարմանալի ընդունակութիւն ունէր. դէպերը արժէքաւորում էր ճշտութեամբ եւ այնուհետեւ զալիքը նախառեսնում յատուկ կերպով: Հէնց նրա վերաբերմունքը դէպի բոլշէտիզմը. Դեռ 1918-ի սկզբներում նա գուշակում էր բոլշևիկների կատարելիք կործանարար զերը եւ երկաթէ բազուկով սեղմում - խեղդում էր բոլշեվիկեան ամէն մի արտայայտութիւն, մանաւանդ գօրամաներում: Եւ այդ անում էր յենւած միայն իր հեղինակութեան եւ կամքի վրա, սոսկ իր պատասխանառութեամբ: Ծանօթ է թէ ինչ բնաւորութիւն էին կրում բոլշևիկեան ելութները զօրամասերում - դասայիշների, տիմարների ու սրիկանների միջոցով լքում ու քայքայում առաջ բերել: Այդպիսիների նկատմամբ Արամը անողոք էր: Պօղոս Մակինցեանի ներկայութիւնը Երեւանում անցանկալի հստարելով՝ դրամ տւեց նրան եւ պատւառուոր «քաղաքական առաջելութեամբ» համբեց Ռուսաստան: Զաղիւ թէ կասկածելի է, որ եթէ Արամի վերաբերմունքը, նրա քաղաքականութիւնը շարունակելէր եւ նրա մահից յետոյ, Զայսատանի Հանրապետութիւնը մայիսեան պատամբութիւնը չէր տեսնի:

Ազգային Խորհուրդը յարւած ուշադրութեամբ լսեց Արամին ու միաձայնութեամբ հաւանութիւն տւեց նրա առաջարկներին՝ Ազգ. Խորհրդի անելիքների մասին: Ամենքը զդում ու կասկածում էին, որ այէտք է պատրաստել օրհասական պայքարի, որ այդ պայքարի ժամանք մօտ է, որ խօսքի ու վէճի ժամանակը չէ: Ժամանակի է գործելու - արագ եւ վճռական, հէնց վաղւանից: Ամենքն ունէին այդ գիտակցութիւնը: Բայց տարօրինակ բան: Արամի առաջարկութիւնը պիտի բնարէքը մի փոքրակազմ ու արագաշարժ մարմին - Յատուկ կոմիտէ - որին Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս պիտի փոխանակէր իր բոլոր իրաւունքները: Եւ ահա, երբ հերթը

\* ) Յայտնի է քէ ինչ սկզբութներով էին կազմւած Ազգային Խորհուրդները. բոլոր կուսակցութիւնները ներկայացւած էին այնուեղ: Երեւանի Ազգային Խորհրդում կար նաև մէկ բոլշևիկի՝ Պօղոս Մակինցեանը:

եկաւ այդ մարմնի կազմութեան, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները հրաժարեցին նրա մէջ մտնելու: Ամենայն սիրով համաձայնում, անդամ պնդում էին, որ Յատուկ Կոմիտէն կազմւի դաշնակցականներից, բայց իրենք խուսափում էին՝ խոստանալով միայն ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ դրսից: Անհնար եղաւ համոզել, որ այդ մարմնը լինի նոյն Ազգային Խորհուրդը, միայն փոքր կազմով, այսինքն՝ բոլոր հոսանքների մասնակցութեամբ: Նըրանց այդ վերաբերմունքը թերեւս հասկանալի լինէր, եթէ մէջ տեղը գոյութիւն ունենային սկզբունքային կամ այլ կարգի տարակարծութիւններ, բայց ոեւէ անհամաձայնութիւն չկար. ամենքը համամիտ էին, Արամի պարզած գործելակերպին, բայց գործնական պատասխանատւութիւն վախենում էին ստանձնել: Եւ գործը, ինչպէս ամէն տեղ, Երեւանում էլ մնաց դաշնակցականների ձեռքը: Դաշնակցութիւնն էր, որ գիտակից վայրկեանի լրջութեան՝ չտատանեց պատասխանատւութեան տակ մտնելուց եւ իր բովանդակ ուժերով նետւեց ասպարէզ: Եւ Յատուկ Կոմիտէն կազմւեց գրեթէ բացառաբար դաշնակցականներից: Ասում եմ «գրեթէ», որովհետեւ կազմի մէջ մտաւ մի չէզոք անձնաւորութիւն, որ իր աշխարհահայեցողութեամբ այնքան մօտ էր մեղ, որ հետագային պաշտօնապէս մտաւ Դաշնակցութեան մէջ:

Յատուկ Կոմիտէի կորիզը կազմում էին երեք հոգի՝ Արամը, իրեւ Թիֆլիսի Ազգային Խորհուրդի անդամ – լիազօր եւ երկու հոգի՝ ընտրած Երեւանի Ազգ. Խորհրդի կողմից: Բացի այդ, Ազգ. Խորհրդը ցանկութիւն յայտնեց, որ Յատուկ Կոմիտէի աշխատանտանքներին մասնակցի նահանգական կոմիսարը (այն ժամանակ Սահակ Թորոսեանն էր) եւ Հայ Զինորական Միութիւնը իր ներկայացուցիչներով:

Յատուկ Կոմիտէն գործի անցաւ Արամի Երեւան գալու հետեւեալ օրը: Զկար այլեւս անորոշութիւն, տարտամամտութիւն, սպասողական վիճակ: Պարզ էր թէ ինչ պիտի արւի: – Օքնութիւն ուաղմաճակտին նոր զորակոչի միջոցով, Երեւանի շրջանի հայութեան ինքնապաշտպանութեան կազմակերպում, կարգ ու օրինականութեան վերականգնում գաւառներում, ուր անշխանութիւնը գնալով ծաւալում էր, եւ դրանցից բխող պարենաւորման, դրամական, հաղողակցական եւ այլ խնդիրներ, որոնք բոլորն էլ պահանջում էին լարւած աշխատանք: Ամէն ինչ պիտի կատարէր արագ. ժամանակը քիչ էր, անելիք՝ շատ:

Այստեղ իմ նպատակից դուրս է խօսել Արամի կատարած աշխատանքների ու դերի մասին այդ շրջանում: Նկատեմ միայն, որ թէ՝

Յատուկ Կոմիտէի եւ թէ՝ այնուհետեւ նրան փոխարինող մարմինների գործումէութիւնը ընթացել է Արամի տիրական՝ ղեկավարութեան տակ: Բացի իր անմիջական պարտականութիւններից, նահանում էր ամէն տեղ՝ թէ խորհրդով, թէ ցուցմունքներով եւ թէ՝ հրահանգով ու հրամանով: Եւ ամենքը ենթարկում էին նրան՝ առանց դժգոհութեան, քրթմնացնքի ու բողոքի: Ենթարկում էին կատարելապէս յօժար կամքով ու մնալով ազատ. ո՛չ մի գործիչ, ճնշման ամենահեռաւոր զգացումն անդամ չունէր Արամի թեւերի տակ:

Զարմանալի ու բացառիկ էր Արամի բնաւորութիւնը նաեւ այդ տեսակետից. նրա Խորհրդի դիմելը, նրան լսելը եւ ենթարկելը բընական էր համարում ճիշտ այնպէս, ինչպէս բնական է համարում երբ մարդ շարժւում է համաձայն իր բանականութեան ու զգացմունքների թելադրութեան: Հարկադրանքի հեռաւոր ակնարկ իսկ չկար: Անշուշտ, ժամանակն էլ իր դերն ունէր. ահաւոր օրեր էին, մինել – չինելու հարց էր դրաւծ ամենքի առջեւ՝ մերկ, առանց քողի: Այդպիսի ժամանակ կրքերը մարում են, և որորութիւնները թուլանում: Այսուհանդերձ Արամի անձնաւորութիւնը փրկարար դեր էր կատարում: Եւ այս ասելով, ես ի նկատի չունեմ Արամի հասարակական – քաղաքական արժէքն ու դերը, որ շատ բարձր էին, այլ նրա բնաւորութեան այն գծերը, որոնք ընդհանրապէս կապ չունեն բարձր չնորհքի, տաղանդի հետ, բայց կազմում են զարդը ամէն մի տաղանդի, արտակարգ դիրք ու հմայք են տալիս, մահաւանդ, հասարակական ջղող ունեցողին՝ գերազանցապէս համակրելի ու սիրելի դարձնելով նրան: Խօսք վերաբերում է Արամի վարւեցողութեանը: Արամը գիտէր մարդկանց մօտենալ: Մի դադանիք, որ ամէն մի հասարակական դորձչի առաջին ու ամենամեծ դրաւականն է կազմում: Այդ դադանիքին իր բոյոր ձեւերով ու արտայայտութիւններով տիրապետում էր Արամը: Նրան յարգանքով ու սիրով լսում ու ենթարկում էր եւ գանհակցականը, եւ ժողովրդականը, եւ էսէրը եւ իր իսկ ձեռքով անվտանգ դարձած ու գործի լծւած բոլեւիկը: Բացառութիւններ, հարկաւ, միշտ ու ամէն տեղ լինում են, բայց Երեւանում այդ օրերին բացառութիւններն էլ բացառութիւն էին եւ չէին խանգարում ընդհանուր դորձին:

Արամը արտակարգ չնորհք ունէր մարդկանց դնել արագիսի վիճակի մէջ, որ նրանք դրսեւորում էին իրենց հասարակական արժէքի առաւելագոյնը: Թէեւ Յատուկ Կոմիտէի կազմը դաշնակցական էր, բայց նրա աշխատանքներին ամենաեռանդուն կերպով մասնակցում էին ամենքը: Եթէ մի կողմ թողնենք Արամին, պէտք է ասել, որ

դաշնակցականների հաւասար, յաճախ աւելի եւ ոչ պակաս, գործ էին կատարում ժողովրդականները։ Պարենաւորման, ու ելեւմտական խնդիրները գրեթէ ամբողջովին ծանրացած էին վերջիններիս վրա, ու մարդիկ աշխատում էին մինչեւ վերջին հնարաւորութիւն։ Յատուկ կոմիտէի շուրջը ստեղծւել էր մի մթնոլորտ, ուր տեղուագործ էր կատարում օրն ի բուն աշխատում էին սիրով, արտակարգ համերաշխութեամբ՝ առանց նիւթական վարձատրութեան (խօսքս սովորական պաշտօնեանների մասին չէ)։ Եւ առանց վերապահութեան պէտք է ասեմ, որ այդ մթնոլորտը ստեղծել էր Արամի ներկայութիւնը։ Բոլոր աշխատողները – պատասխանատու թէ երկրորդական – մի տարօրինակ, չտեսնած վերաբերմունք ունէին նրա հանդիպական։

Մի քանի խօսք էլ Արամի ապրուստի մասին։ Յիշեցի արդէն, որ նրա անձնական կեանքը շատ ողորմելի էր լինէր, եթէ նրա մասին հոգ տանող չլինէր։ Եւ իրօք, այդ մարդը իր մասին մտածել չգետէր։ Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել – հարցեր էին, որոնք քիչ էին սրադեցնում նրան։ «Մի կերպ կապրենք, չենք մեռնի» – այս էր նրա սովորական խօսքը։

Յատուկ կոմիտէի անդամներս միաժամանակ պաշտօնով կապւած էինք որեւէ հիմնարկութեան հետ, այնպէս որ թէեւ Յատուկ կոմիտէից ոռմիկ չէինք ստանում, բայց ստանում էինք տեղից, որով եւ պահում էինք մեր գոյութիւնը։ Արամը որեւէ տեղից դրամ չէր ստանում եւ ապրում էր զրկանքներով ու կիսաքաղց։ Այդ մասին խօսեցի հետր։ – «Թիֆիխում, կարծեմ, մի բան նշանակել են, կուղարկեն։ Պատարկ բաներով մի մտահոգւիր» եղաւ պատասխանը։ Ես խօսեցի Յատուկ կոմիտէի նախագահ Մ. Մուսիննեանի հետ, որը վերին աստիճանի գործունեալ, եռանդուն, բնդունակ ու շիտակ բընաւորութեան տէր մարդ էր՝ յարդւած ու սիրւած երեւանի հասարակութիւնից։ Նա իր ամբողջ ժամանակը նւիրել էր Աղդալին Խորհրդին։ Անկուսակցական էր եւ շատ էր յարդում ու գնահատում Արամին, բայց նրա ներքին կեանքին, նիստ ու կացին տեղեակ չէր։ Խիստ զարմացաւ։ Թիֆիխի հետ մեր յարաբերութիւնները հաղորդակցութեան տեսակէտից այնպէս էին, որ այնտեղից «ամսական» ստանայու մասին մտածելր միամտութիւն էր։ Ես առաջարկեցի, որ Յատուկ կոմիտէն մի որոշ դումար տրամադրի Արամին՝ նրա աղբուստի համար։ Մուսիննեանը այդ առաջարկիս պատասխանեց, որ Յատուկ կոմիտէի դրամարկեր բաց պիտի համարել Արամի առաջ։ Նա կարող է առնել որքան հարկաւոր է։ Այդ միտքը կարդասէր ու խիստ հաշւապահ, դրամական խնդիրներում այնքան բծախնդիր։

Մուսիննեանի բերնում ինձ տարօրինակ չթւաց – Արամի հանդէպ նա անյարմար էր համարում այլ վերաբերմունք։ Արամը նրա աչքին էլ սովորական աշխատող չէր։

Սակայն մեր ցանկութիւնները լոկ ցանկութիւններ էլ մնացին։ Արամը կտրուկ կերպով համարեց որեւէ ձեւով որեւէ դրամ առնելու։ Մինչեւ ընտանիքի երեւան տեղափոխւելը նա ապրում էր Արովեան եւ Դոկտորսկայա փողոցների անկիւնում, մի հասարակ տան մէջ։ Սենեակը իր երկու լուսամուտներով նայում էր Գոկտորսկայա փողոցի վրա։ Յարմարութիւնների տեսակէտից այդ սենեակը ողորմելի էր։ Մի անշուր մահակալ, երկու հասարակ սեղան եւ մի երեք չորս նոյնական հասարակ աթոռ – ահա սենեակի կահաւորութիւնը։ Մի անկիւնում հին արկղի վրա յարմարեցւած էր թիթեղեայ վառարանը, որ վառարան լինելուց աւելի մի պատիժ էր Արամի համար։ Վառելիս խողովակները յաճախ դուրս էին ընկնում իրար միջից եւ սենեակը լցւում էր անտանելի ծխով։ Եւ որովհետեւ Արամի աչքերը վատառողջ էին, ծուխը նրա համար կրկնակի տանջանք էր։ Լուսամուտներն ու դուռը բաց էր անում ու նստում ցրտում։

Նոյն Դոկտորսկայա փողոցում ապրում էի եւ ես։ Շատ յաճախ Արամի հետ աշխատանքներից միասին էինք վերապանում տուն։ Եւ զրեթէ ամէն անդամ նա ինձ հրաւիրում էր ճաշի – «Գիտեմ, եթիմ ես (ընտանիքս երեւանում չէր), զնանք միաւին ճաշենք»։ Երբեմն գնում էի։ Ո՛չ ճաշի համար, այլ որպէսզի միասին լինենք։ Նրա ճաշը հո ճաշ չէր։ Նոյն տանն ապրում էր մի վանեցի ընտանիք, որ եւ պատրաստում էր Արամի ուտելիքը։ Ժամանակին չեմ հետաքրքրւել, բայց կարծում եմ, որ Արամի Վանի բարեկամներն էին հոգում նրա ապրուստը։ Եւ որովհետեւ իրենք էլ՝ գաղթական ու տնաւեր՝ զրկանքներով էին ապրում, Արամին էլ լաւ պահել չին կարող։ Պատահել են դէպքեր, երբ եկել ենք ճաշի եւ տանը հաց չի գտնւել – միայն ապուր։ Ուղարկել ենք դէս ու դէն հացի։ Երբ վանցից քոյրիկը ճնշւելով ու ամաչելով յարտնում էր, թէ տանը հաց չկայ, Արամը, բարի ժամանակ գէմքին՝ հանդստացնում էր Արշալոյսը օտար մարդ չէ, վնաս չունի։

Միայն ընտանիքը երեւան տեղափոխւելուց յետոյ Արամը սկըսեց քիչ շատ մարդավայել ապրել։ ունէր լաւ բնակարան ու բաւարար սնունդ։ Այդ բարեփոխութեան համար նա պարտական էր իր բժշկուհի կնող։

Եւ այդ մարդը, որ այնքան անուշադիր էր դէպի ինքը, որքան բծախնդիր էր ուրիշների նկատմամբ։ Արամը հաստատութեան

դրամարկղը չէր խնայում՝ աշխատողներին վարձատրելու եւ օգնելու համար։ Քանիսներին օդնել է այս կամ այն ձեւով, մէկի կամ միւսի միջոցով, եւ յաճախ, այնպէս, որ օգտառղը չի իմացել, թէ Արամի ուշադրութեանն է պարտական։ Երբ Ազգային Խորհրդի գործունէութիւնը վերջացաւ, ընտրեց մի հաշւեյարդար մարմին, որը պիտի քննէր, կարգի բերէր ու փակէր Ազգային Խորհրդի եւ նրա գործադիր մարմինների բոլոր հաշիւները։ Այդ մարմինը իր տրամադրութեան տակ ունէր խոչոր գումար։ Անդամներն էին՝ Յ. Մելիքեան, Մ. Մուսինեան եւ Ա. Աստւածատրեան։ Յաճախ Արամից գրութիւններ էինք ստանում, որոնցից իմանում էինք, թէ այս կամ այն անձը ստանալիք ունի։ Այդ մի ձեւ էր, որով Արամը օդնութեան էր հասնում նիւթական զրկանքներից տառապով ու տանջըւող մարդկանց, որոնք ամէն ինչ կորցնելով՝ պահել էին իրենց պարտաճանաչութեան զգացմունքները հանդէպ Հայրենիքն։ Մենք հասկանում էինք Արամին ու հոգով նրա հետ էինք, գիտակցելով հանդերձ որ նրա արածը մեր կարողութիւններից վեր է։ Երբ նա անհրաժեշտ էր համարում, արհամարում էր սովորական կարգն ու ձեւը եւ անում, ինչ որ նպատակայարմար էր համարում։ «Տարբերային ոյժ էր, որ ունահարում ու անցնում էր ամէն մի օրէնք՝ միշտ աչքի առաջ ունենալով մարդկային շահերը», ասել էր նրա մասին հետադային Գ. Պետրոսեանը, կադէտ, արդարադատութեան նախարարը Քաջաղնունու դահլիճում։

\*\*

Յատուկ Կոմիտէի առաջին քայլերից մէկը եղաւ զինակոչ յայտարարել։ Այդ յայտարարութեան համաձայն զէնքի տակ էին կանչըւում մինչեւ 27-28 տարեկան հասակ ունեցողները։

1918 թ. յունի 5-ին, ճաշից յետոյ, Արամի հետ Երեւանից ինքնաշարժով դուրս եկանք դէպի Ղուրդուղուլի՝ ծննդեան երեկոն այնտեղ անցկացնելու համար։ Ճանապարհին պատահում էին խումբ՝ խումբ երիտասարդ գիւղացիներ, որոնք երեք օրւայ պաշարը մէջքներին շտապում էին Վաղարշապատ՝ զինուրական շրջանի կենտրոնը՝ արձանադրելու։ Յատուկ Կոմիտէի կոչը նոր էր հասել տեղ, եւ ահա մարդիկ շտապում են իրենց պարտքը կատարելով՝ Ծննդեան օրը բաժնւելով հարազատներից։ Արամը աղջւեց։


— «Այլ պայմաններում, ասում էր նա, մեր ժողովուրդը հրաշեներ կարող է գործել։ շատ անդամ առիթներ եմ ունեցել նկատելու, որ մեր գիւղացուն պարտաճանաչութեան զգացումը հարազատ է։ գիտակցութեան նշան է այդ։ Ազգային Խորհրդի մի կոչ լոկ բաւա-

կան է, որ նա իր համար այս աղիղ օրին թողնի տուն ու տեղ եւ շտապի զէնքի տակ։ ստիպողական, հարկադրական ոչինչ չկայ։ Մինչդեռ ոսւս կառավարութեան գօրակոչը գլուխ էր գալիս ահ ու սարսափի աղղեցութեան տակ։ Այսօր Օշականից ինձ մի այսպիսի դէպի պատմեցին։ Երբ Ազգը Խորհրդի կոչը հասնում է գիւղ, զինակոչի ենթակայ երիտասարդները պատրաստութիւններ են տեսանում Վաղարշապատ գալու՝ արձանադրւելու համար։ Գիւղի ունեւորներից մէկը, որ ամբողջ պատերազմի ընթացքում իր որդուն զանազան ապօրինի միջոցներով ազատել էր զինակոչից, Ազգը Խորհրդի կոչը կարդալով՝ կանչըւմ է որդուն եւ ասում։ «Բալաս, էլ Աստւած էլ զարուլ չի անի, որ պահւես պատրաստւիր եւ Աստւած հետդ – բարի ճանապարհ։ Ո՛չ մէկից յետ չմնաս»։ Ես մի բանից եմ վախենում, շարունակեց Արամը, վախենում եմ՝ սեւերես զուրս գանք մեր ժողովրդի առաջ, չկարողանանք կազմակերպել գործը եւ կորցնենք նրա հաւատն ու վստահութիւնը . . .»։

Հետազայ մեր պատմութիւնը վկայ, որ Արամի վախը անտեղի չէր . . .

Վրշաց.

(Վերջը յաջորդ անգամ



ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԲԱՐԻ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԸ

Մեր տեղն ատոր կըսէն գայլու շաբական. ....  
«Առակf», Գ. Եպ. Այլազովսկիի.

Հայաստանի Պետհրատը վերջին տարիներս գովելի գործ է կատարում՝ հրատարակելով մեռած կամ իրենց գրական գործունէութիւնը աւարտած հեղինակների լիակատար երկերը։ Մյուսքս, արդէն լոյս են տեսել Սայեաթ Նովայի, Գ. Սունդուկեանցի, Յ. Պարոնեանի, Շիրվանզապէի, Նար Դոսի, Դուրեանի, Մեծարենցի, Զարենցի Հայոցնակութիւնները. պատրատում են եւ որիշները։ Մի գործ, որ չի կարտի չողջունել։

Մինչեւ այժմ լոյս տեսած հատորների շարքում, ինչպէս տեսանք կան եւ Սայեաթ Նովայի ու Գաբրիէլ Սունդուկեանցի երկերը - Արդու մեծ տաղանդի տէք հեղինակների, որոնք ստեղծագործել են բազառական թիֆլիսի բարբառով :

Ներկայ յօդւածի նպատակն է՝ ցայտ տալ, թէ այդ երկու հեղինակների երկերի խմբագիրները՝ Գ. Լեռնեան ու Ս. Յարութիւնեան՝ ֆնչքէ՞ս են կատարել իրենց վրա դրւած պարտականութիւնը։ Նախ քան այդ, սակայն, մի քանի խօսք իւրաքանչիւր հատորի մասին առանձին – առանձին։

Ա. - 1931 թւին, Գ. Լեռնեանի խմբագրութեամբ լոյս տեսած Սայեաթ Նովայի երկերի հաւաքածուն չի կարող նկատել լիակատար, որովհետեւ նրա մէջ մտել են միայն հայերէն երգերը, իսկ վրացերէններն ու թուրքերէնները դուրս են մնացել: Յառաջաբանում Գ. Լեռնեանը տեղի է Սայեաթ Նովայի կենսագրութիւնը համաձայն իր ունեցած տեալների եւ գրքին կցել է Սայեաթ Նովայի մասին գոյութիւն ունեցող գրականութեան ցանկը, ինչպէս եւ դրժւար հասկանալի բառերի բառարան, որին իրեւ հիմք ընդունւած է Սայեաթ Նովայի երգերի առաջին հրատարակիչ Գ. Ախվերդեանի տւած բառերի բացատրութիւնը: Գ. Լեռնեանը լուրջ աշխատանք է կատարել եւ Ախվերդեանի բառարանի մէջ մտցրել մի շարք ուղղ դումներ ու լրացումներ:

Սայեաթ Նովայի երգերի բնագիրների վրա, բացի Գ. Ակմլերդ-եանից, Տէր-Աղեքսանդեանից եւ Գ. Ասատուրից, որոնք մեծ ջանապահութիւն եւ սրատեսութիւն են ցոյց տւել, աշխատել են եւ շատ ուրիշներ, որոնց շարքին առանձնապէս աչքի է լոկել Յ. Թուման-եանը, բայց մանաւանդ Ն. Աղբալեանը («Հորիզոն»—ում եւ «Հանդէս Ամսօրեայ»—ում)։ սրա առաջարկած բոլոր ուղղումները Ա.Խ-վերդեանի բնագրում՝ ընդունելի են։

Սայեաթ Նովայի երգերի բնագրի հրատարակութեան խնդիրը  
Գ. Լեռնեանը մի քիչ տարօրինակ կերպով է հասկացել. փոխա-  
նակ տալու նախորդների եւ իր կողմից սրբագրած բնագիրները՝  
նա բոլորին անփոփոխ, առանց որեւէ ուղղումի արտատպել է  
առաջին տպագրութեան բնագիրը, իսկ քննադատութեան կատարած  
սրբագրութիւններն ու լրացումները դրել է ծանօթութիւնների մէջ,  
դրքի վերջը, առանց կապելու բուն բնագրի հետ: Արդիւնքը ստաց-  
ւել է կատարեալ շփոթ ու քառ:

Բ. Գաբրիէլ Սունդուկեանցի երկերը հրատարակւած են 1934 թ. ոմն Ս. Յարութիւնեանի\*) խմբագրութեամբ։ Վերջինս շատ աշխատանք չունէր կատարելիք բնագիրները պատրաստելու համար, քանի որ Սունդուկեանցը ինքը նախապատրաստել էր իր երկերի լիակատար ժողովածութիւնը եւ նոյն իսկ, մահւանից առաջ, լոյս ընծայել համարեա բոլոր աշխատութիւնները՝ կատարելով բնագրի սրբագրութիւնները։

Սունդուկեանցի երկերի Պետհրատի հրատարակութիւնը ընդհանուր առմամբ գոհացուցիչ է, կատարւած է որոշ սիստեմով եւ օժտւած է Սունդուկեանցի ստեղծագործութեան զարդացումն ըմբռնելու համար անհրաժեշտ եղող պատմա - գրական նիւթով։ Սակայն, կարելի չէ ճիշտ համարել այն պարագան, որ Սունդուկեանցի եւ նրա հոգեկան ապրումների բնորոշման տեսակէտից իւրաքանչիւր զրւածքին կցւած խիստ կարեւոր յառաջաբանները խմբագիրը զետեղել է ոչ թէ հեղինակի երկերի բնագրում, այլ ծանօթութիւնների

\*) Ս. Յարութիւնեանի անունը ես չեմ հանդիպել հայոց գրականութեան մէջ, բայց Հայաստանում նա, ըստ Երեւոյքին, «Սունդուկեանցի մասնագէտ» է համարում: Այսպէս, «Հայ Գրականութեան Պատմութեան», 1933 թ. Բ. հատոր, էջ 289 - 320-ում նա ունի Սունդուկեանցի մասին մի յօդւած: Նրա խմբագրութեամբ լոյս է տեսել «Պէպօ»-ն առանձին գրեսվ: Նա գրել է Սունդուկեանցի մասին մի յօդւած «Խորիրդ». Հայաստանում եւ վերջերս էլ լոյս է ընծայել նրա մի քանի բատերակմերը ժաղովրդական հրատակութեամբ:

մէջ, մանրատառ ու ոչնչով չնշմարւող, որով նրանք խառնուում են պ. Յարութիւննեանի դատողութիւնների հետ:

Հատորին կցւած է Սունդուկեանցի մասին գոյութիւն ունեցող գրականութեան ցանկը, այլեւ դժւար հասկանալի բառերի բառարան: Այս վերջինի գլխին ինչ որ տարօրինակ բան է եղել: Խմբագիրը բառերի բացարութիւն կազմելը յանձնել է Թիֆլիսահայ բարբառի այժմւայ լաւագոյն մասնագէտ Գ. Ասատուրին, որ անթերի կերպով կատարել է իրեն վստահւած գործը: Բառարանի մէջ դրւելիք բառերի ցանկը, սակայն, կազմել է ինքը Յարութիւննեանը, որ հարիւրից ոչ պակաս բացարութեան կարօտ բառեր գուրս է ձգել: Նմանապէս բաց են թողնւած, ըստ երեւոյթին խմբագրի անդիտութեան հետեւանքով, եւ բացարութեան կարօտ խօսքերն ու արտայատութիւնները:

Հատորի յառաջարանն ու, մասամբ, մեկնաբանութիւնները գրւած են մարքս-լենինեան ոճով: Մի բան, որ բնաւ չի բխում գործի հանգամանքից եւ արգիւնք է աւելի հեղինակի ոչնչով չարդարացող գեր - ջանասիրութեան: Հետեւանքը եղել է յառաջարանի, այսպէս ասած փէտացում. փաստեր կան, բայց կեանք ու հոգի չկայ: Թէեւ կարող է պատահել, որ այդ փէտացումը բխում է առհասարակ խմբագրի բնաւորութիւնից. նա կարծես սիրում էլ է Սունդուկեանցի ստեղծագործութիւնը, բայց ներկայացնում է առանց ողեւորութեան, բոլորովին անկեանք:

Այս նախնական դիտողութիւններից յետոյ, անցնենք մեղ զբաղեցնող բուն հարցին: Երկու խմբագրերների առջեւ էլ դրւած է եղել մի կարեւոր խնդիր՝ տալ Սայեաթ նովայի եւ Սունդուկեանցի բընագիրները երեւանեան նոր ուղղագրութեամբ: Այդ ուղղագրութիւնը, հակառակ իր խիստ հիմնական թերութիւնների, ի վիճակի է անսխալ, յամենայն դէպս հետեւղական, ասել է եւ հասկանալի ձեւով արտայայտելու Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանական առանձնայատկութիւնները: Դժբախտաբար, երկու խմբագրերն էլ յանցաւոր անփութութիւն կամ տգէտի ապերասանութիւն են ցոյց տըւել իրենց վստահւած գործի վերաբերմամբ:

Թիֆլիսի հայ բարբառը ունի հետեւեալ ձայնաբանական առանձնայատկութիւնները ...

1). Բառի սկզբի ե տառը միավանկ բառերի մէջ արտասանւում է ինչպէս յի (մայիս բառի մէջ), օրինակ՝ ես - յիս, երը - յիպ, եղ - յիղ: Երկու եւ աւելի վանկ ունեցող բառերի մէջ ե հաւասար է է-ի. օրինակ, երկինք - էրկինք, երկաթ - էրկաթ, երեխայ - էրէխայ եւայլն:

2). Ու տառը բառի սկզբին հաւասար է վու-ի. օրինակ, որդիւ-վութի, որբ-վուրփ, ոտք-վուտ: Բառի մէջ շեշտով ո՞ն հնչւում է ինչպէս ու օրինակ, գործ-գուրծ, չորս-չուրս: Բառի մէջը անշեշտ ո՞ն պահում է օ հնչիւնը:

3). Ոյ հաւասար է ու-ի. լոյս - լուս, քոյր - քուր անոյշ-անուշ:

4). Իւ հաւասար է ու-ի. արիւն - արուն, ալիւր - ալուր, հարիւր - հարուր, հիւր - հուր:

5). ւ եւ դ հնչւում են միեւնոյն ձեւով: Ախվերդեանը եւ Տէր-Աղեքսանդրեանը պարզաբանութեան համար զրում են՝ տեսաւ, արաւ, բայց բոլորովին ուղիղ է նոր ուղագրութեամբ եւ պարտադիր՝ տեսավ, արավ:

6). Ու (վանկային), բառի մէջտեղը, գրական լեզուում ըվ (աստուած - աստարված) արտասանող հնչիւնը Թիֆլիսի բարբառում զանում է ոչ-վանկային եւ հնչւում է որպէս պարզ վ. օրինակ, աստուած - աստված, աղուէս - աղլէս, օրուայ - օրլայ, լեզուի լեզվի, բոնուեցաւ - բոնվեցաւ:

7). Թիֆլիսի բարբառում կայ արաբական այբուբենի 21րդ եւ վրացական 27րդ տառին համապատասխանող կարճ կոկորդային մի հնչիւն, որ գործ է ածւում փոխ առնւած բառերի մէջ: Սովորաբար այդ հնչիւնը նշանակում են Ղ նշանով:

8). Շեշտը ընկնում է միշտ նախավերջին վանկի վրա:

Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանութեան այս առանձնայատկութիւնները ի նկատի են առնւած ամենից առաջ բնագիրների հրատարակիչների կողմից: Սայեաթ նովայի համար՝ Ախվերդեանը, Տէր-Աղեքսանդրեանը եւ Գ. Ասատուրը, իսկ Գ. Սունդուկեանցի համար՝ հեղինակը ինքը, որ 1863 թ. սկսած իր ամէն մէկ թատերախաղը լոյս ընծայելիս՝ նշանակում էր եւ դ հնչիւնների առանձնայատկութիւնները, իսկ մնացածները մտցնում էր բնագրի մէջ: Բայց այդ, կան եւ մի շարք ուրիշ բանասէրներ, որոնք զրադել են Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանութեան հարցով:

Այստեղ յիշենք հետեւեալները.

Peterman, Ueber den Dialekt der Armenier von Tiflis, Berlin 1867, page 64-65

9). Թոմսոն, «Թիֆլիս» քաղաքի արդի հայերէն լեզւի պատմական քերականութիւնը», Պետերբուրգ, 1890 (ոռուերէն): (հնչիւնների ուսմունքն):

Adjarian, "Classifications des dialects arméniens", Paris, 1909, p. 22.

դ) . Անառեան, «Հայ բարբառագիտութիւն», Մոսկով, 1911, էջ. 53-54:

Բոլոր այս ասւածից պարզ է, որ նոր խմբագիրների առջեւ դրւած էին հնչիւնաբանական խիստ ծանրակիւր հարցեր, եւ նրանք կատարեալ հնարաւորութիւն ունէին ծանօթանալու, կամ գոնէ պարտաւոր էին նկատողութեան առնել այդ հարցերը, մանաւանդ որ նախորդ բոլոր հրատարակիչները ամէն կերպ հրատիրել են նրանց ուշադրութիւնը հնչիւնաբանական այդ ինդիների վրա:

Արդ՝ ինչպէս են վարւել մեր խմբագիրները:

Ա.- Գ. Լեռնեանը իր հրատարակութիւնը պատրաստելիս ձեռքի տակ է ունեցել Սայեաթ Նովայի եւ նրա որդի Օհանի երկու «Դաւթար»-ների լուսանկարները եւ երեք խումբ տպագրւած բնագիրներ. 1) Ախվերդեանի՝ առաջին 46 երդերը, 2) Տէր-Աղեքսանդրուեանի՝ № 55 եւ 56 երդերը եւ 3) Գ. Ասատուրի՝ № 47-54 երդերը: Մնացած չորս երդերի մասին ես կարծիք յայտնել չեմ կարող, քանի որ չեմ տեսնել նրանց բնագիրը:

Ա.- Պէտք է ասել, որ թէեւ Գ. Լեռնեանի բոլոր երեք նախորդներն էլ կարմ կոկորդային հնչիւնը կ դնում են դ նշանով եւ որ ինքը Սայեաթ Նովան էլ այդ հնչիւնը արտայայտելու համար գործ է ածել վրաց այբուբենի 27րդ տառը. հակառակ այդ բանի Լեռնեանը զեկ եւ դարուել գրում է միեւնոյն տառով: Որով հնչիւնին անծանօթ ընթերցողը դատապարտւած է հնչելու անհեթեթ կերպով:

Բ.- Զայնաւորի առջեւ վ արտասանւող ու տառը Սայեաթ Նովան նշանակում է վրացերէն վ տառով: Ախվերդեանը սովորաբար զրում է վ տառով (էրված իմ): Միայն Աստված բառի մէջ, երեւի ի յարդանս բառի, գործ է ածում գրական ձեւը՝ Աստուած: Որ այստեղ ու տառը վանկային չէ, այլ սովորական վ, Լեռնեանը կարող էր տեսնել թէկուզ Աստուած բառը ունեցող ու տանաւորների վանկերի քանակից:

Գ. Ասատուրը նոյն հնչիւնը նշանակում է շեղաղիր ու-ով եւ բացատրում, թէ ու-ն այստեղ վանկային տառ չէ եւ չպէտք է ըլլիոթւի գրական արտասանութեան հետ (ըլլ): Ոչ հրատարակիչների նանախագրուցացումները, ոչ էլ հեղինակի ուղղագրութիւնը չեն օդնել Գ. Լեռնեանին: Նա Ախվերդեանի հրատարակած երգերում գրում է «Էրվում իմ» եւ «Աստուած», իսկ Գ.Ասատուրի երգերում՝ «Էրուած», «Աստուած» եւ ոչնչով չի նշում այս ոչ-վանկային ու-ն:

Գ.- Աւելի վաստ է խնդիրը գրական ե տառի նկատմամբ, որ միավանկ բառերի սկզբին դառնում է յի (մայիս): Սայեաթ Նովան այս հնչիւնը արտայայտում է վրացերէն ի տառով (200 տարի առաջ կարելի չէր ուղղագրութեան մէջ հնչիւնական աւելի նմանութիւն երեւակայել): Ախվերդեանը իր հրատարակութեան մէջ գըրում է ե, բայց ինդրում է կարգալ յի: Սունդուկեանը գրում է ե, նշանով եւ ինդրում է կարգալ յի (մայիս): Տէր-Աղեքսանդրեանն էլ գրում է ի՝ նշանով, որ կարգացում է յի: Գ. Լեռնեանը այստեղ էլ մոլորւել է: Ախվերդեանի երգերը նոր ուղղագրութեամբ նա գրում է յե արտասանութեամբ. «Ոռ մի լաց լի, յիս իմ լալու»-ի փոխարէն նա գրում է՝ «յես իմ լալու»: Տէր-Աղեքսանդրեանի «Սայեաթ Նովին ասաւ՝ յիս կարմիր կով իմ» Լեռնեանի մօտ զարձել է՝ «իս կարմիր կով իմ»: Գ. Լեռնեանը չի սխալւել միայն Գ. Ասատուրի երգերի մէջ, ուր գործ է ածում յի՝ «յիս վարթըն իմ», մին խար չունիմ» (№ 49):

Դուրս է գալիս, ուրեմն, որ Գ. Լեռնեանը սխալներ չի արել ու մոլորութեան մէջ չի ընկել միայն այնտեղ, ուր սխալւելու ոչ մի հնար չէր թողնւած: Սխալւելու միւս բոլոր կարելիութիւնները նա օդտագործել է «հարիւր տոկոսով»: Քանի որ խօսքը Թիֆլիսի բարբառի մասին է, թոյլ եմ տալիս ինձ օդուելու նոյն բարբառի մի պատկերաւոր խօսքից բնորոշելու համար Գ. Լեռնեանի արածը: Դա բարիս բուն նշանակութեամբ բաղնըսի թօխչա է:\*)

Մի բան որ անկեղծօրէն ցաւալի է: Մարդը այնքան ջանք ու սէր է դրել իր գործի մէջ: Ինքը՝ զաւակը առաջնակարգ աշուղի (Զիվանի), աշուղների ստեղծագործութեան սիրահար եւ նոյն իսկ մասնադէս՝ նա ջերմ երկրպագու է Սայեաթ Նովայի: Դնել մի գործի մէջ այսքան սէր ու աշխատանք եւ վերջը փչացնել - իրօք որ ծանըր ողբերգութիւն է:

Ա.- Աւելի լաւ գրութեան մէջ չէ եւ Գ. Սունդուկեանցի ամբողջական երկերի հրատարակութեան գործը, թէեւ այդ հրատարակութեան խմբագիր Սեղը. Յարութիւնեանի վիճակը անհամեմատ աւելի նպաստաւոր էր: Նա իր արածագրութեան տակ ունէր հնչիւնականութեան տեսակէտից հեղինակի մշակած բնագիրները: Մընում էր միայն այդ բնագիրները վերածել նոր ուղղագրութեան, մի աշխատանք, որ ոչ մի դժւարութիւն չի ներկայացնում: Իր վերաբերումը դէպի Թիֆլիսի բարբառի հնչիւնաբառնութեան

\*) Բայ Սունդուկեանցի (Երկեր, էջ 251) «բաղնըսի թօխչա» Թիֆլիսի ոնուկ փոխարինաբար նշանակում է՝ «խայտառակ գործերի ժողովածու»:

արտայայտութիւնը Յարութիւնեանը ցոյց է տւել «Խմբագրողի կողմից» յառաջաբանում, ուր մատնանշելով Սունդուկեանցի ընդունած դ' նշանով եւ ե' նշանով հնչիւնները, ասում է հետեւեալը. «Մենք պահպանել ենք Թիֆլիսի եւ յատկապէս Սունդուկեանի լեզուական ուղղագրութեան տարբեր ձեւերը եւ կէտաղրական մի քանի առանձնայատկութիւններ»:

Հեղինակի ուղղագրութեան պահպանման միտքը գեղեցիկ է եւ միանդամայն գովելի, որովհետեւ Սունդուկեանցը բարբառի օգտագործման հնարաւորութիւնը հասցրել է այնպիսի բարձրութեան, որին ուրիշ ոչ մի հեղինակ հայկական որեւէ բարբառում չի հասած:\*) Կարճ կոկորդային հնչիւնի համար նա պահել է Սունդուկեանցի որդեգրած դ' նշանով տառը, որ միանդամայն տեղին է: Ենդուղութեանցի գործածած ե' նշանով հնչիւնի մասին յայտնում է, թէ ինքը պահել է Սունդուկեանցի ձեւը, մինչդեռ եթէ լաւ մտածէր, այդպէս պիտի չվարւէր:

Երբ Սունդուկեանցը մշակում էր Թիֆլիսի բարբառի հնչիւնների գրութեան ձեւը, աւելի քան 70 տարի առաջ (1863 թ.), խընդիրը բաւական բարդ էր: Նա նշանով ե'ն (յի մայիս բառի մէջ) չէր կարող նշանակել յի, որովհետեւ յ տառը բառի սկզբում հնչում էր որպէս հ: Շփոթութիւնից խուսափելու համար նա դտել է նոր ձեւ՝ ընդունելով ե' նշանով տառը՝ նախագուշացնելով միշտ, թէ պէտք է արտասանել այնպէս, ինչպէս յի մայիս բառի մէջ:

Յարութիւնեանը Սունդուկեանցի ե' նշանով տառի տեղը գործ է ածում յե' նշանով, որ բոլորովին սխալ է, որովհետեւ յե տառ չէ, այլ արտասանութեան նշան՝ երկբարբառ (դիֆտոնդ), որ արտայայտում է Սունդուկեանցի ուղղագրութեամբ արտայայտած հնչիւնից շատ հեռու գտնող հնչիւնների մի խումբ: Այս երկբարբառի վրա գրւած նշանը անտեղի է, որովհետեւ գրանով Յարութիւնեանը երկբարբառը հնչիւնների մի խմբից հանում է եւ դնում մի ուրիշ խմբի մէջ, որի համար պէտք է զտնէր առանձին նշան:

Այն ինչ խնդիրը նոր ուղղագրութեամբ լուծում է շատ պարզ:

\*) Բաւական է աչքէ անցկացնել Մոլիքի Ժորժ Դանդենի քարգմանութիւնը, ուր Սանդուկեանցը ցոյց է տվել, որ ինքը ոչ միայն լաւ է բմբոնում քարգմանիցի դերը եւ նմանը չունեցող վարպետ է բարբառի ձեւերը գործածելում, այլ եւ կարողացել է ընդարձակել բարբառի բառամբերք, լայնօրէն օգտւելով գրաբառի անսպառ աղբիւրից եւ վերջինից առած բառերին տալով Թիֆլիսի բարբառի անսպառ աղբիւրից շատ հեռու է նոյնիսկ Գամառ Քարիպայի պէս մեծապէս օժտած մի տաղանդ նոր - նախիջեւանի բարբառով գրած իր պատմբաժների մէջ:

Նոր ուղղագրութեան յ տառը բառերի սկզբին ձայնաւորների առաջ այլեւս չի գործածւում եւ տեղը ընդունւած է հ (յիշել - հիշել): Յ տառը մնացել է մէկ արտասանութեամբ, որ համապատասխանում է լատիներէն յ-ին: Ա-ից առաջ յ-ն հնչում է ինչպէս լատիներէն յա (յա) եւ փոխարինում է առաջւայ եա-ն. ու-ից առաջ առլիս է յս (յու) եւ փոխարինում է առաջւայ իւ-ն, իսկ ի-ից առաջ՝ յի (յի) (մայիս բառում), այսինքն՝ ճիշտ այն հնչւմը, որ Սանդուկեանց նշանակել է ե'նշանով: Եւ Յարութիւնեանը այդպէս էլ պէտք է գրէր, որովհետեւ նոր ուղղագրութեամբ այդ է միակ ձեւը լինդրի առարկայ հնչիւնը արտայայտելու համար: Իսկ Յարութիւնեանի տւած բացարութիւնները ցոյց են տալիս, որ նա պահանջւած լըրջութեամբ չի մտածել հարցի մասին, կամ ի վիճակի էլ չէր մտածելու: Վերջինը թուում է աւելի հաւանական եւ ահա թէ ինչու:

483-488 էջերի վրա Յարութիւնեանը տպել է Սունդուկեանցի առաջին բանակուային յօդւածը, որ գրւած է Թիֆլիսի բարբառով իրեւ մասլահաք եւ տպւած է «Մեղու Հայաստանի»-ի 1863 թ. № 43-ում:\*) Այս մասլահաքը գրւած է ի պատասխան մի քննադատութեան, որ Գ. Տ. Ա. \*) նոյն թերթում տպել էր Սունդուկեանցի «Գիշերլիվան Սարրը ինէր է» անդրանիկ թատերգութեան առթիւ: Այդ մասլահաքում Սունդուկեանցը տալիս է երկար կտորներ «Գիշերլիվան Սարրը ինէր է»-ից: Յարութիւնեանը այդ մասլահաքը, կըտորներ էլ մէջը, տպում է վերոյիշեալ Տէր - Աղեքսանդրեանի «Մեղու Հայաստանի» ում գործածած ուղղագրութեամբ: Եթէ նա լուրջ մտածած լինէր, այդպիսի բան, ի հարկէ, չէր անի: Իսկ եթէ գիտակցօրէն է արել, ի յարգանս «Մեղու - Հայաստանի»-ի, ապա խիստ տարօրինակ է նման մի յարգանք մարք-սիստի կողմից գէպի պահպանողական «Մեղու»-ն:

Այսպէս թէ այնպէս, Թիֆլիսի բարբառի յի հնչիւնը արտայայտելու համար երկու հրատարակութիւնների խմբագիրների մօտ մենք գտնում ենք իննից գրութեան ձեւ՝ յե, ի, ի' նշանով, յե' նշա-

\*) Անըմբունելի նկատումներով Յարութիւնեանը այս հետաքրքրական պատմական տեսակէտ արտայայտող մասլահաթը զետեղել է ոչ քե Սանդուկեանցի երկերի բնագրում, այլ իր սիմվական ծանօթութիւնների մէջ, առանց գեր որ եւ ձեւով ընդգծելու, որ չկորչի ծանօթութիւնների մէջ:

\*\*) Ըստ երեւոյքին Գէորգ Տէր-Աղեքսանդրեան, Թիֆլիսի բարբառին լաւագոյն հեղինակութիւններից մզկը, որ հետագային լայս ընծայեց իր «Թիֆլիզեցոց մտաւոր կեանքը»-ը գիրքը:


Նով եւ պատահաբար յի ուղիղ ձեւը: Սրան ասում են՝ Embarras des Richesses.

Գ. Լեռնեանի «բաղնըսի բօխչայի» մէջ իր կողմից Յարութիւն-եանն էլ բաւական բան է դրել: «Խայտառակ գործերը» առասու-թեամբ թափում են այդ բօխչայից:

Ինչպէս երեւում է Գ. Սունդուկեանցի երկերի կողքի վրայի մակագրութիւնից, Ս. Յարութիւնեանի գլուխին, մի տեսակ խնամա-կակի գերում, կանգնած է եղել պատասխանատու խմբագիր Եղիշէ Զաքենցը, որ, սակայն, ոչ մի լաւ բառով չի արտայայտել իր գո-յութիւնը: Ո'վ է եղել Սայեաթ Նովայի երկերի հրատարակութեան խնամակալը, մեզ յայտնի չէ, բայց նա էլ պակաս ծոյլ ու գատար-կապորտ չի եղել, քան Զաքենցը:

Իրեւ հետեւանք խմբագիրների ու խնամակալների թափած մի-ացեալ ջանքերի բոլորովին փչացած են հրատարակութիւնները մեր երկու առաջնակարգ հեղինակների, որոնք դրել են Թիֆլիսի հիա-նալիօրէն մշակւած բարբառով: Նրանց այդ վարմունքից նիւթապէս ու բարոյապէս տուժել է Հայպետհրատը, բայց աւելի՝ հայ մշա-կոյթն ու հասարակութիւնը:

Փարիզ.



### ՍՏԵՓԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ

## ԼԵՒՈՆ ԱԹԱԲԵԿԵԱՆ

### ԻԲՐԵԻ ԲԱՆԱՏԵՂ ՈՒ ՄՏԱՁՈՂ

Ա.

1918 թւի ապրիլ 2-ին թաթար ամբոխի գնդակի գոհ գնաց հայ Սոցիալիստ - Յեղափոխականների անւանի առաջնորդը՝ Լեռն Աթաբէկեան, երբ խաղաղութեան ձիթենին ձեռքին, մէկ ոուս եւ մէկ թաթար պատւիրակների ընկերակցութեամբ դիմում էր թըր-քական թաղն իրեւ բանագնաց՝ վերջ տալու հայ - թաթարական արիւնհեղութեան: Պատգամաւորութիւնն ինքնին խորհրդանշում էր միջազգային համերաշխութեան իդէալը - հայ, ոուս, թաթար-իսկ այդ գաղափարի ժամանակի ամենացայտուն արտայայտիչն էր թերեւս կովկասում օրւայ խոշոր զոհը՝ Աթաբէկեան:

Աթաբէկեան ծնւել է Շուշիում, 1875 թւին: Միջնակարգ կըր-թութիւնն ստացել է տեղի բէալափան զպրոցում, իսկ բարձրագոյ-նը՝ Շվեյցարիայում, ուր վերջացրել է Ցիւրիխի համալսարանն իրեւ բժիշկ: Դրանից յետոյ պետական քննութիւններ տալով կա-զանի համալսարանում՝ իրաւունք է ստացել զբաղւել իւր մասնագի-տութեամբ Ռուսաստանում:

Ունենալով ուժեղ հասարակական ջիղ եւ մտաւոր բարձր կա-րողութիւններ, զեռ ուսանողական շրջանից մասնակցել է ժամա-նակի հայ հասարակական շարժման՝ սկզբնապէս աշխատակցելով «Դրօշակ»ին:

1903-ից Շուշիում սկսւում է նրա կովկասեան գործունէութիւ-նը: Անդամակցում է Դաշնակցութեան եւ գաղափարական պայքար մղում այդ կուսակցութիւնից անջատւող տարրերի դէմ:

1906-ին իրեւ պատգամաւոր մասնակցում է Խրիմեան կաթու-ղիկոսի կանոնադնում Հրատիրած «Հայոց Կենտրոնական Ազգային Ժո-ղով»ին:

Նոյն թւականի վերջերում սակայն հեռացաւ Դաշնակցութիւնից եւ մի խումբ երիտասարդ մտաւորականների հետ գլխաւորեց Անջա-տականների հոսանքը, որ սկզբնապէս «Երիտասարդ Դաշնակց-

կանների Ամբակ» էր կոչւում : \* ) Անջատելու առիթները բազմաթիւ էին : Ամենից առաջ Աթաբէկեանին զբաղեցնում էր Սոցիալիզմի հարցը : Դաշնակցութեան մէջ այս ուղղութեամբ բուռն պայքար կար այն ժամանակ . կային սոցիալիզմի պաշտպաններ եւ հակառակորդներ : Աթաբէկեան պաշտպանում էր սոցիալիստական տեսակէտներ ոչ ըստ Մարքսի տեսութեան : Դէմ լինելով պատմական մատերիալիզմին , նա յենում էր ոռու Սոցիալիստ - Յեղափոխականների ականաւոր տեսաբաններին՝ Լաւրով , Միխայլովսկի , Զերնով :

1907-ին նա Թիվարդ ծածկանունով հրատարակում է «Ազգութիւն եւ Դասակարգ» բրոցիւրը, որի մէջ բնորոշում է ազգութեան գաղափարը և աւրովի հետեւողութեամբ:

Միւս կողմից Աթարէկեան կարծում էր, որ հայ ազգային շահերը թելաղբում են հայ մտաւրականութեան ձգտել առաջնակարգ դերքեր գրաւել ուսւ առաջաւոր հասարակայնութեան շրջանում, ինչպէս անում էին վրացիները եւ այդ պատճառով էլ նա դէմ էր յեղափոխական կուսակցութեան կազմակերպական ազգային ձեւին:

Ա.թարէկեանի համար մեր երկիրը նման էր դուռ ու պատռւ-  
հան ամուր փակած մի խրճիթի, որի ներսի օդն այդ պատճառով  
նեխւած էր: Անհրաժեշտ էր լայն բանալ գոներն ու պատռհաննե-  
րը, ներս թողնել դրսի թարմ հովերը եւ այդպիսով մաքրել խըր-  
ճիթի անմաքուր օդը: Հստ այսմ՝ լինելով խոշոր մտաւորական նաև  
համառուսական չափով եւ ջատագով միջազգային համերաշխու-  
թեան, նա մինչեւ վերջն էլ կառչած մնաց հայ իրականութեան եւ  
իւր բովանդակ կարողութիւններն ի սպաս գրեց մեր երկրի քաղա-  
քական - մշակութային բարդաւաճման:

Կար նաեւ Արքւմտահայ խնդիրը, որ պակաս դեր չկատարեց Աթարէկեանի Դաշնակցութիւնից հեռանալու խնդրում։ Լինելով կողմնակից մեր երկու գատերի անջատման, Աթարէկեան ընդունում կովկասահայերն իրենց խնդիրը պիտի կարգադրեն համաձը, որ կովկասահայերն իրենց խնդիրը պիտի կարգադրեն համառուսական միջոցներով, ինչպէս եւ արեւմտահայերը պիտի դորձէին համատաճկական եղանակներով։ Այս տեսակէտից ուշադրաւ է նրա «Ինչո՞ւ ենք անջատում Դաշնակցութիւնից» գրքոյկը՝ գրւած Բագուռում 1907թ.։

1908 - ին Աթարքեան ձերբակալւելով բանտարկեց  
իրեւ դաշնակցական ուրիշ շատերի հետ՝ լըփինի յայտնի մեղա-  
դրական գործով։ Եւ Դաշնակցութիւնից արդէն անջատւած ու այդ

շրջանում նոյնիսկ Դաշնակցութեան դէմ բուռն պայքար մղող Լեւոն Աթարէկեան ոչ մի տեղ չաշխատելով հերքել իր, իբրեւ դաշնակցականի, դէմ բարդւած մեղադրանքները, դատապարտւեց բանտարկութեան նովոչերկասկ քաղաքում :

Բանտից նա պղատեց 1912-ին եւ իր ամբողջ ուշադրութիւնը յստկացրեց «Սոցիալիստ - Յեղափոխականների կուսակցութեան Հայ կազմակերպութեան» ձեւաւորման՝ աշխատակցելով միաժամանակ եւ «Ազգագրական Հանրէս», «Առողջ կեննեց» եւ այլ թերթերի:

1906-ի Ռուսական Ա. Յեղափոխութեան հետեւող յետաշըջումն իր անդրադարձումն ունեցաւ եւ կովկասեան հասարակական կեանքի վրա: Ակսւեցին հալածանքներ . փակւեցին բացւած բերանները եւ սահմանափակւեցին հասարակական հարցերի շրջանակները: Աղատ քաղաքական գործունէութիւնը նորէն կալանքի տակ առնեց ողջ Ռուսիայում: Այս պայմաններում կուսակց., այն էլ սոցիալիստական լեգալ մամուլը դարձաւ բացարձակապէս անհնարին եւ, ինչպէս բոլորը, նոյնպէս եւ Աթարէկեան զրկւեց իւր ասելիքը լրիւ եւ աղատ արտայատելու հնարաւորութիւնից: Եւ հակառակ դըրան, նա դարձաւ կովկասահայ կեանքի մի շարք նոր գաղափարների հրձիգ: Նա իւր սուր մտքով կարողանում էր զարմանալիօրէն ճիշտ գտնել ու հրապարակ նետել հարցեր, որոնք հրատապ էին, կենսական եւ յուզում էին հասարակական լայն շրջանակները: 1912ի շրջանում նա կարդում էր դասախոսութիւններ թիֆլիսի ժողովը դական համալսարանում: Դրւած ինդիրներն ընդհանրանում էին եւ մաքերի երկար փոխանակութեան նիւթ մատակարարում մամուլում կամ հրապարակային դասախոսութեանց մէջ, որոնք տեղի էին ունենում թիֆլիսում, Բագուտում եւ Երեւանում: Այդպիսի հարցերից էին - 1. Հայ մշակոյքի ապագան. ի՞նչ է սպասում նրան - ձուլում ուսականի հետ, թէ ազգային ուրոյն զարգացում: 2. Հայ մտաւորականութիւնը, նոյնպէս նման առաջադրութեամբ: 3. Պատմահայեցողական խնդիրներ. պատմական մատերալիզմ, ադրար սոցիալիզմ, ազգութիւն եւ միջազգայնութիւն եւ այլն:

1912-ի չրջանում հայ բոլվանդակ հասարակական միտքն զրադաց էր արեւմտահայ զաւառների բարենորոգմանց խնդրով։ Ինչպէս ուրիշ վայրերում, նոյնպէս և Թիֆլիսում գործում էր փոխարք. գետութեամբ, բայց անպաշտօն Ազգային Բիւրօն, որի գլխաւոր դերակատարներն էին Մեսրոպ Եպիսկոպոս, Սամսոն Յարութիւնեան, որ այն ժամանակ Դաշնակցութեան տեսակէտներն էր պաշտպանում, եւ դաշնակց պարագայութիւններ։ Այս այն մարմինն էր, որ պատերազմի

<sup>\*)</sup> Տե՛ս Վ. Մինախորեանի յօդւածը՝ Անշատականները, «Վեմ», թիւ Ա.ԿԲ., 1933:

**սկզբում** Ազգային դեկավար մարմնի հանգամանք ստացաւ եւ կազմակերպեց կամաւորական շարժումը:

Աժարէկեան դէմ էր այդ շարժման . նրա տեսակէտով կամ աւորական խմբերի ստեղծումն առելի պիտի գրգռէր տաճիկներին եւ աղջտաբեր լինէր մեզ համար : Հետագայ դէպէերն ապացուցեցին , որ նա չիմք ունէր այդպիսի կասկածներ ունենալու :

1917-ին պայմեց ոռուսական Ցեղափոխութիւնը : Աթարքէ կեանը գործօն մասնակցութիւն ունեցաւ նրա մէջ Բազուռում եւ Թիֆլիսում : Վրա հասան Ռուսիոյ Սահմանադիր ժողովի ընտրութիւնները : Աթարքէ կեան մեծ հռչակ ունէր հայ շրջանակում և ճանաչւած դեկալարն էր սոց-յեղափոխ . տրամադրութիւններ ունեցող եւ ընտրող ոռուս բանակի, որ այդ ժամանակ դեռ կանգուն էր եւ կովկասը չէր լըքել : Նրա հմայքը տարածում էր եւ վրացական շրջանակներում, որով զարմանալի չէ, որ Սահմանադիր ժողովի ընտրելինների մէջ առաջնակարգ տեղ գրաւեց նա սոց-յեղափոխականների ցանկում :

Լեւոն Աթարէկեանի հանրային գործունէութեան ու հայ հասարակական կեանքում կատարած դերին արժէ յատուկ ուսումնասիրութիւն նվիրել։ Մեր այսօրւայ նպատակը այդ չէ, սակայն։ Որպէս ճոխ բնաւորութիւն ու բազմակողմանի հետաքրքրութիւն ունեցող անհատ, նա թեւակոխել է նաև արւեստի մի այնպիսի բնագաւառ, որ թւում է, թէ ամենից քիչ պիտի զբաղեցնէր նրան։ Նա գրել է մի շատ բանաստեղծութիւններ, որոնք իրենց զբական շահեկանութեան հետ միասին, արտացոլում են միաժամանակ այդ հետաքրքրական գործչի բարձր անհատականութիւնն ու բարդ հոգին։ Մեր այս յօրւածի նպատակն է վեր հանել Աթարէկեանի նշանակութիւնը, իբրեւ բանաստեղծի ու մտածողի։

9

Եթէ մէկն ինձ հարց տայ-բանաստե՞ղծ է արդեօք Աթարէկեան  
թէ ոչ, թերեւս բացասական պատասխան ստանայ: Զի նա բանաս-  
տեղծ չէ սովորական առումով. պրատող է եւ հետախորդ, անհան-  
գիստ միտք ունի, որ ի վերջոյ ոչնչով չի բաւարարուում: Շօշափած  
նիւթերն իր համար ժամանցի առարկաներ են, որոնք զբաղեցնուում  
են իրեն մի պահ միայն: Սահում է պահը, երեւոյթը դառնում է  
ձանձրալի, որի հետեւանքով ստեղծուում է մի նոր հերթական պատ-  
րանք՝ որոշ ժամանակից յետոյ իւր տեղը մի ուրիշին զիջելու հա-  
րանք: Ստեղծուում է յախտենական սկեպտիկ, որ մերթ ընդ մերթ,  
մար:

տարբեր աշխարհներում, իր կենսական նուրբ տպաւորութիւնները բանաստեղծական չրջանակի մէջ է առնում - լաւագոյն ձեւը թերեւս, չբաւարարող լայն հողու համար՝ մարդու էութեան փոքրութեան ու անճարակութեան գիտակցութեան առաջ կանգնելիս: Վերջին հաշւով այն տպաւորութիւնն է ստացւում, որ այս մարդը հաւատ չունի եւ իր սուր մտքի ու բարձր իմացականութեան չնորդիւ՝ քայլում է կեանքում մենակ ու...անմիխթար, անապատում գեղերող վիրաւոր առիւծի նման, որ վազում է իր Տապանագիրը շալակած:

Անծայլ անապատ : Աւազի վերայ , սկզբում , հաստատ  
ու վեհ քայլերի  
խատ շրջագծւած խոր ու նուրբ հետքեր եւ կարիներով  
սառած մուգ արին ,  
Ապա մըրկլոտ , մողեգնած վազքի տձեւ փորուածքներ  
եւ արեան քծեր . . .

Այս անապատով մարդուց վիրաւոր մի արքայական  
առիւծ է անգել\*)

**Մատածումը** նրան պարապի առաջ է կանգնեցնում։ Կեանքի երեւոյթների շատ կողմեր նրան ոչինչ չեն ասում։ Այն, ինչով երջանիկ է մարդ, փոքրիկ երեւոյթների համադրումն ու շաղկապումը, որոնցով խարուսիկօրէն շրջապատում է իրեն սովորական անհատը՝ ճշմարտի ահաւորութիւնը տեսնելուց խուսափելու համար, ուժեղ կամքից հայածական Աթարէկեանին կանգնեցնում է միայն ունայնութեան առաջ։ Երբ կեանքը իւր էութեամբ նեղ է դալիս իրեն եւ զրա ընթացիկ արտարայտութիւնը ձանձրափի դառնում, քը մահաճ երեխայի պէս, նա մի խաղալիկից միւսին է անցնում։ շուտով ձանձրանալով մէկից եւ միւսից։

Դիտեցէք, մտքիւ աշխարհագրական տարածութեան ո՞րպիսի յայն շրջադիմ ունի մեր Հեղինակը։ Մի ոտքը ժընեւ, Լայպցիդ, միւսը՝ Մոսկվայի վրայով Ղարաբաղ։ Առաջիններում ստրուկ է մտքիւ, այլ Հաւասարի կեցւածք ունի։ Բարձրորակ մուալրական է՝ անկախ դատողութեամբ եւ չեցտած անհատականութեամբ։ անձ-

<sup>\*)</sup> Արարէկեան - Բամաստեղծութիւններ, Բագու, 1913:

Նական մեծութեան եւ արժէքների հպարտանքն ունի: Մաքի քառա-  
սմբակ վաղքին յաճախ զգացմունքն անդօր է հետեւել, տեղի է տա-  
լիս, որով մաքուր ֆնարերգուն դառնում է «սոցիալական մոտիվ-  
ներ»ի երգիչ - քաղաքացի: Այսուեղ էլ կամ ամբոխ է տեսնում կամ  
Եհովայի կամքով շարժող, անկամ էակներ:

## Ասաց Եհովան .

«Առաջին ճիշդի եւ վերջին ճիշդ՝  
պիտի լինի լաց .

«Մի անգամ միայն ժպտալու համար պիտի արտասեւ  
դու հազար անգամ:

«Կատարելուք եան անյագ կարօտը պիտի լափի ֆեզ  
մինչեւ քո վալսնան .

«Յաւիտեան գալուած գորշ հողագնդին պիտի զառանցես աստղերի մասին».

«Աւելի դաժան ժան իմ դեւերը, ինիդի կը լինես  
դեւդ սեփական»...

Եւ այսպէս՝ իւր աղատութեան հետ չհամակերպող Աթաբէկան տքնում է ստեղծել իւր համար որոշ կենցաղակերպ՝ ժամանակաւորապէս սփոփող հերթական պատրանքներ, որոնք շուտով յօդս են ցնդում, որով քերակաւատն ամփոփում է ինքն իր մէջ եւ իւր, տիեզերականօրէն չափազանց նեղ ու սահմանափակ, խեցիից ճգնում կեանքի ու մահւան առեղծւածը լուծել.

Ահ, երէ մահը տանջանիք չըլիներ,  
ել ով կրկպչէր այլանդակ կեանքին  
Եւ երէ կեանքը մի վայելք լիներ,  
ել ով կերպագէր մեռնելու մասին.

Մահի սուլումից փարում ենք կեանին,  
կեանի սարսափից մահ ենք երազում...  
Ինչ էլ ոք անենք, ծիծաղենք թէ լանք,  
կեանից ու մահից չունենք փրկուրի՛ն.

Սիրտը խօսում է քարքարոս Ղարաբաղում, ճաշակը զարդանում  
Բեօկլինի ստեղծագործութեամբ: Կեանքի կոկիծ մերւում է խոր-  
հըրդին, որով խորիրդապաշտ նկարիչը իւր հոգու մրրիկներն է  
յաղթահարում.

Բեօվլին, որ տւիր մըրկու հոգուս  
լոյս խաղապութիւն,  
Որ ծաւալեցիր հորիզոններս  
մինչ անհունութիւն,  
Որ էութեանս խորին խորհուրդը  
յայտնագործեցիր  
Եւ ինձ սրբազն ներկայեցութեան  
բախտն ընծայեցիր,  
Քեզ, մըրիկներիս յաղթահարողիդ,  
Հոգուս խորքերը լուսաւորողիդ  
Յախտնական փառք եւ օրինութիւն :

Շատերն են եղել մեր գրողներից Եւրոպայում. շատերը պարզ ընդունողներ են միայն Եւրոպական, յաճախ վիճելի արժէքների: Աթարբէկեան, երեւոյթների առարկայական վերլուծմամբ, կեցած է սրանց դիմաց իրեւ իրենց նման հաւասար քաղաքացի, որ ընտրում է այն, ինչ իրեն պէտք է: Արժէքաւորում է ֆառաւուր, որ դաշն է իր կուլտուրական մարդու ճաշակին, բայց զգացմունքների աշխարհում փրկութիւն է որոնում հայրենի չորանի ու կարարաշի մօտ: «Գրչի խաղ է» «Զորանն ու Կարաբաշը» ստանաւորը իւր համար, բայց այդ զրչի խաղն արւած է Մայրենի քարբառավ, ուր գտնւում է մեր բանաստեղծը իւր բովանդակ յոյզերով: Յաւում ենք, որ այս գեղեցիկ, բայց երկար կտորը չենք կարող մէջ բերել այստեղ:

Գեօթէն հմայում է Աթարբէկեանին. նրա մեծութիւնն ստիպում է խոնրահւել իր առաջ: Եւ երբ նրա պէս Աթարբէկեան «զրյաց է անում ինքն իր հետ, օրօրում ցան ու կարօտը», այդ պահին յիշում է մօրը, մայր երկիրը, որի ցաւերով ապրում է եւ ացիալական վշտի երգիչը, զղթայակապ ու անզօր՝ իր առաջ, հեծեծող մօր, իբրեւ արտպիսիի, չոդին է տեսնում «Մօր նամակի» մէջ:

Աթաբէկեան մաքրակրօն բանաստեղծ չէ : Բանաստեղծը չի ուսուցանում . խորհրդածում է կամ ապրում . ապրումներն էլ ամփոփուում են սիրոյ, երգի, բնութեան կամ հայրենիքի շուրջ ընդհանրապէս : Բանաստեղծը դրում է այն ժամանակ, երբ տպաւորւած՝ քաշւում է իւր առանձնութեան մէջ եւ սրտի հառաջներ արձակում :

Այստեղ եւս՝ մեր բանաստեղծի հոգուն անհարազատ են աշխարհի ցաւերը. խորթ են՝ սուտը, դաւը, բամբասանքը: Նա կեանքի վրա նայում է աստածային կատարելութեան հայեացքով եւ ներողամիտ է մարդկանց վաստակաւերի հանդէպ: Զտարիւն բանաս-

տեղծը հեռու է աշխարհից չարից ու բարուց եւ ընդհանրապէս անհապորդ սրա սոցիալական տարութերումներին, որոնք դառնում են արդէն, մաքուր քնարեկուուից մերժող, քաղաքականութիւն։ Հըալարտութեան գիտակցութիւնն է ունեցել արևեստաւորն ամեն անպամ, երբ չեշտուել է իր երկրի քաղաքական միտումից ղերձ լինելը։

Այդպէս էր առաջ:

Մեծ պատերազմին յաջորդող բոլշևիկեան յեղաշրջումը սակայն ձեւափոխել է շատ դէպքերում եւ արևեստի ըմբռնումը՝ դնելով արևեստառորի առաջ ուրուն խնդիրներ։ Բանաստեղծն արդէն պարզ սէր ու բնութիւն երգող չէ։ Նա շատ յաճախ քաղաքական պրոպագանդ է անում։ Ա՛րդ, եթէ այսօր բանաստեղծին թոյլատրում է լքել մաքուր արևեստի բնագաւառը եւ երգել նաեւ համայնքի ընթացիկ կեանքը՝ պահանջւած բովանդակութեամբ, ապա այս տեսակէտից Աթարէկեան թերեւո շատ աւելի խոշոր է, քան խորհրդային բանաստեղծներից շատերը։ Զի սա առ հարկի չի գրում եւ ոչ էլ քաղաքադիտական ընթացիկ պատէր կատարում։ գրում է հարազատ իր մտքին եւ դդացմունքի երկրորդ շարք մղելով է արդէն, որ նրանից ստեղծումը է նախ մտածող, ապա բանաստեղծ։

Ուրեմն, Աթարէկեան մեր դրականութեան մէջ ոչ Թուլմանեան է, ոչ Խսահակեան, ոչ Տէրեան, ոչ էլ Դուրեան կամ Մեծարենդ: Իրականութիւնից կտրւած, իր յուղուած հոգուն ուրուն աշխարհի կերպ տւած՝ Թուլմանեանի նման փիլիսոփայի սաւճներ չի ուղղում որոշելու համար, թէ աշխարհներից «Ո՞րն է յալու - Է՞ս, թէ Էն», ոչ էլ Թողած մարդ ու համայնք, անապատի ճամբան է բռնում եւ դէսի ցնորականո ոխմում: Մատածողութեան կենտրոնը Հրահք-աղջիկը չէ եւ ոչ էլ սիրոյ ինքնամոռապութեան մէջ պիշերային մշուշ ու սուեր է տեսնում: Մեծարենդի դիշերական աղի յուշերով չի ապրում եւ ոչ Դուրեանի պէս յուսալրւած՝ պարտած սիրոյ վշտի սփոփումը լինելի հայելու անոռադարձման մէջ է որոշում: Խարէկութիւնն ու պատրանքը իւր իդէալու չեն. կեանքը դիտում է այսպէս, ինչպէս կալ եւ սրա դաժանութիւնը իւր մէջ յուպարում չի առաջացնում: Նա դիտէ, որ

Մարդը մարդուն երաժիշտ է, մարդը մարդուն՝  
մի ցուք-ակ.

Մարդ-ջութակը մարդու ձեռքին կամ երգում է,  
կամ ոռնում:

Մարդը մարդուն հանելուկ է, մարդը մարդուն  
նպատակ.

Մարդկը մարդ է միշտ որսում եւ իրեն է  
առաջ գտնում...

իբրեւ զգացող, տառապող հոգի ունի եւ թախծոտ է իւր քը-  
նարերգութիւնը.

Աշխարհը իմն օք ունի,  
Հինգն էլ սեւ...  
Կուզես լաց, կուզես լինդա՛...\*)

իբրև մտածող սուլդուռմ է երկոյթների խորքը ու ճգնում կեանքի առեղծւածը լուծել: Եւ եթէ այստեղ սաղմնային է մաքուր քնարերդուն, ուժեղ է սակայն պրալտողն ու բժիշկը, որ սպեղանի է որոնում աշխարհի հրամցրած ցաւերին: Մարդն է կանգնած հանրութեան մէջ. դասավիք չէ, որ միայնութեան մէջ մորմոքի եւ ընդհանուր գառնութիւնը իւր հոգու քամիչից անցնի: Ընդհակառակն, Աթարէկեան հանրային վիշտը ճշմարտի որոնման յաւիտենական պըրպատումների մէջ է ուզում թաղել: Սրտի ողբը նրան տարել է դէպի անապատ, ուր ոչ թէ հառաչի, այլ բացի առաջ է կանգնել, որով եւ տարբերուռմ է մեր միւս բանաստեղծներից:

Յովհաննիսեանը երգում էր .

Լուս կաց, սիրու իմ, այս աշխարհում  
Դարդ իմացող չես գտնի.  
Մեզպէսներին ջուրն է բերել,  
Ջուրն էլ մի օր կրտսնի:

Հանդստի հրաւէր էր ուղղում իւր վերաւոր սրտին եւ իսահա-  
կեանը :

Ի՞նչ ես գազագում, այս վիրաւոք սիրտ.  
Որ գազագում ես, ի՞նչ պիտի անես.  
Աշխարհը իրա ճամբով կընթանայ,  
Գու և եղին. ոռու անօր, ի՞նչ պիտի անես

Աթաբէկեան պարտածի կամ խեղճութեան հոգի չունի: Նա  
մեղկօրէն չի հաշտում զրութեան հետ, որովհետեւ աշխարհն իր  
ճամբով պիտի ընթանայ, ոչ էլ ընդունում է, թէ ինքը նրանից է, ո-  
րոնց ջուրն է բերում եւ ջուրն էլ տանելու է: Համակերպութիւնը  
չէ, որ դեկախարում է իրեն, այլ հասուն մտքի մոռմոքը, որ երե-

<sup>\*)</sup> Բնագիրը բարարերէն է գրւած:

ւոյթների պատճառն է որոնում եւ չգտնելու դէպքում՝ այրում ներքնապէս։ Նա դիտէ, որ սիրոը մարդկային իմացականութեան համար յաճախ աւելորդ բեռ է եւ զուտ յուղումների աղբիւր, ինչ-պէս եւ յոգնութեան պատճառ։

Այսօր ասի իմ գիծ սրտին։

«Երկա՞ր պիտի այդպէս մնաս։

«Քունքերս տե՞ս, ներմակեցին,

«Ժամանակ չէ՞ որ ծերանաս։

«Ինձ պէս յոգնած հիւանդ մարդուն

«Զահել սիրոը ի՞նչ կը սազի։

«Քեզ պէս սիրոը միտքս հասուն

«Կարօներով զուր կը յուզի…»

Նա ապրել է երբեմն սրտի յոյզեր, բայց անցել է այն շրջանը, երբ կեանքը վառ շողերի մէջ էր դեռ եւս իր համար։ Դիւրին չէ եղել այդ անցումը, մրմուռներ ունի տակաւին։ Բայց չէ որ սրտի հետ եղած շրջանում նա անապատներ է տեսել միայն։

«- Ա՛խ, ես ու դու շատ ման եկանք

«Եւ ի՞նչ տեսանք - անապատներ։

«Սիրո իմ, սիրո իմ, եկ դառնանք տուն,

«Քանի բաց են մեր տան դռներ։»

Ու սրտի գծով անապատներ տեսնելուց յետոյ եւ իր վերջին հրաժեշտը տալով դրան «կայարանի կամարների տակ», Աթարէկեան դառնում է մտի գծին։ Խուլ հեկեկանք եւ մի պարապ է բաժանում նրան առաջինից։ Բայց նա որոշակիորէն անապատներ չի սիրում։ ուստի սրտին տան դարձնելով՝ Աթարէկեան մտնում է մարդկային ժխորի մէջ։

Եթէ դեղեցկութեան տենչացող բանաստեղծի հոգին յոյզերի բնագաւառում միմիայն անապատներ տեսաւ ու հեռացաւ, ապա իրական աշխարհում տրամաբանութիւն որոնող միտքը տեսնում է իրական աշխարհում տրամաբանութիւն որոնող էին խարկութիւն եւ ոյժ։ Նա տեսիլներ ունէր, որոնք օրօրում էին իրեն դեռ այն ժամանակ, երբ շատ բանի անհաղորդ էր իր երիտարի հոգին։ Երբեմնի իդէալի ու արդի իրականի համադրումից սարդ հոգին։ Երբեմնի իդէալի ու արդի իրականի համադրումից բանաստեղծի համար ստեղծւում է քառու - ապրածն իրական կե՞անք է եղել, թէ՛ երազ։

Ես մոլորւել եմ մունջ սեսիլների

այս ժառանի մէջ…

Իմ գոյութիւնը դարձել է կարծես

երազ ու տեսիլ…

Եւ չըգիտեմ ես, մունջ տեսիլների  
այս ժառանի մէջ  
Ապլե՞լ եմ իրօֆ, քէ կեանքի մասին  
երազ եմ սեսել…

Մի՞թէ մարդ իրօք իսպալիք է ինչ որ վերին անիմանալի ոյժի  
ձեռքին, որ տալիս է նրան ուզած ուղղութիւնը՝ նախորոշելով ասես  
մարդու գոյութիւնն ու անելիքները։ Ղարաբաղի բարբառով գրւած  
«Բայարի» փիլսոփայական բանաստեղծութեան մէջ, Աթարէկեան  
կանգնած է այս մտորման առաջ։

Գո՞հ է սակայն Աթարէկեան իր գիտողութեան արդիւնքից եւ  
հպա՞րտ՝ երեւոյթները ճշգրտօրէն գնահատելու գիտակցութիւնից։  
Եթէ երբեմն կեանքը մի հանելուկ էր, այժմ այն իւր գիտակցու-  
թեան առաջ դաժան է, մերթ գաղանային։ Այստեղ զուր է արդա-  
րութիւն տեսնել, զի արարչագործութիւնից ի վեր մարդը իւր վրա  
կըում է եհովայի դրած նզովքը - տառապել բովանդակ կեանքի  
ընթացքում, անազատ կամքի հետեւանքով կատարել իրեն ի վե-  
րուստ պարտադրւած հրահանգներ, ոչինչ իմանալ կեանքի ամբողջ  
ընթացքում եւ իմացութեան սահմանին հասնելիս՝ մեռնել։ Կարօտի  
ցաւով յիշում է Աթարէկեան այն շրջանը, երբ իւր շուրջը «Վառ  
շողերի եւ գոյուների հեղեղ էր»։ Անցել է նա այդ շրջանը կոյր աչքե-  
րով։ Տարիների ընթացքում եւ կեանքի հասունութեան համընթաց՝  
նա տեսնում է, որ իր պրատումներն ի զուր են անցել։ լաւի տես-  
չանքը մնացել է միշտ տեսնչանք, զի այլի որոնումներում անհատը  
միշտ իրեն է գտնել ուրիշների մէջ։ Եւ ուրիշների մէջ իրենց եւ ոչ  
իրեն գտնելու տենչը նրա մտքին մի գիտողութիւն - ուսումնասի-  
րութիւնից գէպի մի այլն է վարում։ Երբ Աթարէկեանին թւում է,  
թէ դրութիւնը պարզ է արդէն իր համար, քախիծն է գալիս եւ յա-  
լիտենական սկեպտիկին յատուկ, հարցը ցցւում իր առաջ - յետո՞յ  
ինչ... Հստ այսմ՝ պրատումները միջոցներ են միայն իր համար,  
մոռացութեան պահեր, զի՝

Մայր բնուրիւնը իբրեւ ափոփանք

Եւ իբրեւ լսքան յարատեւ կեանքի,

Տուել է մարդուն պատրանքն օգտակար

պատասխանատու եւ ազատ կամքի։

Մարդիկ «Ֆիշ ֆիշ ապրում են եւ ֆիշ ֆիշ մեռնում»։ դրանց  
կեանքը կաղմւած է «մի փշուր մահից եւ մի կտոր կեանքից»։

Եւ իր հերթական շրջագայութեան

ժողովողն ազա

Անմիտ, անլեզու, պատրաստ ու յօժար

մի դի է գտնում։

Այս՝ ինքն իր մէջ եւ իր հետ :

Բայց Աթաբէկեան նաեւ զանգւածների դեկավար է եւ տեսնում է, թէ ի՞նչպէս նրանք «սողում են դեպի լեռները՝ խեղիքլու համար երշանիկներին՝ իրենց մարմաքեղէն պալատների մէջ»։ Թւում է, այս էլ «Ձեւի անշող վանդակում քայլացող» մի հերթական հրապուրանք է։ զի Աթաբէկեան մտածողի համար ցեխի մէջ սողացողն ու պալատներում սխզաճեմողը կոյր դիպւածի տարբեր արտայայտութիւններն են միայն, եւ երկուսն էլ կրում են իրենց ուսերին պատահականութեան ու Եհովայի անէծքը։ Սոցիալական կուլտուրաբերը երեւոյթապէս տեսնում է հասարակական ցաւը, այն ժամանակ դեռ եւս աւելի քիչ սրբագրւած մարքսեան չափանիշով՝ դասերի պայքար, բայց երբեւ Միխայլովսկու եւ Լաւրովի աշակերտ, ցաւի բուժման ձեւը որոնելիս՝ մի կողմում տեսնում է «գորշ հոգագործի կեդեւը հեզօրէն վորդիրող անգիտակից զանգւած», իսկ միւս կողմում գիտակից առաքեալների սակաւաթիւ խմբակ, որ չատ յանախ անզօր է վրկել դրութիւնը, քանի գեռ ընդհանուր գիտակցական ներդաշնակութեամբ՝ դասերի պայքարը չի փոխարինել եւ ընդհանուր համագործակցութեան։ Այս էլ կարծես ցնորք է, եթէ ի նկատի ունենանք ընթացիկ հանրակարգն ու մարդու բնածին նըկաբագիրը, որ հակասանք է յաճախ իրերի աւելի նպատակայարմար կարգաւորման։

Իրեւ զանգւածների դեկավար, որ գիտում է որանց թշւառութիւնը եւ անզօր է բուժել ցաւը՝ անազատ կամքի եւ մարդկային հնարաւորութեանց սահմանափակութեան գիտակցութեան չնորհիւ, Աթաբէկեան իւր աղերսալից հայեացքն ուղղում է դէպի, կեանքում ամեն ինչ նախորոշող, գերազոյն ոյժը։

Մեր աղերսալից չոր բազուկները, տե՛ս, տարածել ենք Ազօր-քով առ քեզ։

Դու, որ պիտի գաս,

Դու, որ չես կարող չգալ փրկութեան։

Արի՛, արձակիր մեր ծանր շղթան։

Խարկանք է միայն։ Աթաբէկեան գիտէ, որ համայնական աղերսանքով դրութիւնը չի վրկում։ Որոնող միաքը իւր հոգում կառուցած չատ այլ դրութիւնների վրայով վրկութեան մի նոր ճամփարում։ Եա դիմէ, որ ամբոխի գործը չէ, թէ դրութիւնները բայց է փնտրում։ Եա դիմէ, որ ամբոխի գործը չէ, թէ դրութիւնները կան, երբ մարդաբէն անզօր է որեւէ վճիռ կայացնել։ պահանջը փըրկան, իր մարդաբէն անզօր է որեւէ վճիռ կայացնել։ պահանջը փըրկան է։ Եւ մարդաբէլ գիտակցութեամբ տողորուն Աթաբէկեան

նի միտքն ամեն տեղ վերջին հաշւով ունայնութիւն տեսնելով՝ նահանջի է դիմում կարծես այստեղ էլ։ Կաշկանդումներից խուսափող, ազատութիւն որոնող հոգին ի՞նչ կարող է տեսնել գրաւիչ կեանքում, երբ ինքը մի վերին անյայտ կամքի հլու կամակատարն է միայն։ Եւ ի՞նչը պիտի գոհացում տայ նրան կեանքում։ յիշեալ զանգւածների իրեն չնորհած փա՞ռքը։ Բայց՝

Ի՞նչ է փառքը։ Մի ծիածան

Մի հրաշէջ

Արեւի շող, որ քեկւել է

Արցունիքի մէջ։

Փառքով հրապուրւելուն արգելք է միտքը, որի ձեռքից ազատում չունի ինքը։

Այդ միտքը իրեն ամենազօրութեան առաջ չկանգնեցրեց։ Ընդհակառակը մարդուն ստիպեց ծունկի գալ մի անյայտ զօրութեան առաջ, որի հրահանդերով պայմանաւորւում է իր ընթացիկ կեանքը։ Իդէալի ու փաստի համագրութիւնը նրան տանջանքից տանջանք է առաջնորդում։ Երանութեան յոյզով է յիշում վերելքի այն շըրջանը, երբ զգացմունքներին էին գերիշխում, եւ պատանու դեռ եւս զարգացող ու անկազմակերպ միտքն անկարող էր դրանց գրաւիչ շղարշի յետեւից կեանքի ժանտ դիմագիծը տեսնել։ Եւ ո՞րն է այդ զգացմունքներից ամենաուժեղն ու անդաւադիրը, որ, իրեւ այդպիսին, մնում է սրբութիւն սրբոց անգամ շեշտած թերահաւատի համար, եթէ ոչ մայրական սէրը։ Սրան է նւիրւած եւ Աթաբէկեանի յուղական աշխարհի՝ բանաստեղծութեանց ժողովածուն։

Մայր չէ արդեօք միշտովը, երբ գլխակորոյ մարդը վրկութեան խարիսխ է որոնում։ Մօր բացը չէ արդեօք ամենամեծ հոգը օտարութեան մէջ հիւծուղ պանդիստի։ Մայրը յիշում է բանտի զընդաններում եւ իրականութեան ցաւից իր վրկութիւնը թմրութեան ու քնի մէջ որոնողի ականջին մեղմ օրօր է ասում։

Թիմբին անոյշ պարուրում է դանդաղօրէն

իմ հոգին...

… Եւ իմ հոգին դարձել է մի միօրինակ

մեղեդի...

… Մայրս է այդ օրորում է, օրօրում է ու երգում

իր լայ - լայը … ես չըգիտեմ՝ երազում եմ, քէ մեռնում...

Մօր անոնը հոլովուում է եւ մահամերձի բերանում, երբ երկրայինը դառնում է մշուշ եւ գիտակցութիւնից հրաժարւող մահակութիւնն է։

նացուն անըմբոնելի թոթովներ է արձակում՝ իբրեւ կեանքից հրաժարելու վերջին հառաջ: Այստեղ խաղաղութիւն է իջնում մարդու վրա, ըստ որում Աթարէկեանի անհանդիսա հոգին դառնում է հեզեւ դժառատ - դժառատ մի մօր պէս: Եւ ոգոկոչում է մայրականը բանտի կամարների տակ որդու «Շողքին կարօտ, ճայնին կարօտ իր վշտու մօր»:

Մայր ու հայրենական տուն այստեղ էին՝ Ղարաբաղում: Մայր ու հայրենաբաղձութիւն միաձուլւում են: Մոռացւում է կեանքի տանջանքը, մեղմանում անհանական ոչնչութեան դիտակցութիւնը: Աթարէկեանի սիրտը սուրում է դէպի հայրենի լեռները, ուր ջրերը յորդում էին եւ արծիւները բոյն հիւսում: Յորդում են եւ բանաստեղծ - Աթարէկեանի զգացմունքները. մանկութեան որբանի յուշերը քաղցր մեղեդի են շշնջում իր ականջին եւ կանչում են նրան.

ՀԵՅ, սարսարոտ

Իմ վարքան!

Թուխապի ծով...

ԱՅ, քարքարոտ

Ասկերան!

Մարմանդ հով...

Մըռաւասար

Զիլզիլան!

Արծուի բուն...

Խելառ քարքառ

Փրփրան!

Դղրդիւն...

Մանկացած Աթարէկեան մի պահ մոռացման է մատնուում: Մանկութիւնն անհոգ էր ու երջանիկ, իսկ այսօ՞րը, իսկ վե՞րջը...

Մոռայլ մտքի մի կամար է ձգուում անցեալի ու վերջի միջեւ.

Ամեն ինչ երազ է

Լաց մի՛ լինիր:

Ահա վերջը: Թոչում է գրաւիչ անուրջը՝ իր հետ տանելով ե՛ւ մօր յիշատակ, ե՛ւ հայրենի ծննդավայր: Ու նորէն բանաստեղծը իւր տեղը գիջում է մտածողին: Աթարէկեան վերյիշում է, որ իր սրտին զաղուց տուն է ուղարկել եւ մտքի ցաւը կրկին ցցուում է իր առաջ: Նա անձարակութեան դիտակցութեան հետ չհաշտող, բայց իրապէս անձարակ ի՛ր իսկ մտքի շնորհիւ, ակամայ, թերեւս անձնական վի-

Մտամոլոր

Արահետ!

Խրխնջոց...

Ոլոր և մոլոր

Չորագետ!

Քչչչոց...

ՀԵՅ սարսարոտ

Ղարաբաղ!

Մայր ու տուն...

ԱՅ, քարքարոտ

Մուրով - դաղ!

Մանկութիւն...

րաւորանքի նւաստացնող դիտակցութեամբ այլեւս «Յոգնութեան երգեր»ով, կուչ է գալիս աղօթքի աղերսանքների մէջ, փրկութիւն հայցում այս անդամ արդէն իրենից - «փրկիր ինձ ինձնից...»

Դո՛ւ, որ կաս անշուշտ!

Դու, որ չես կարող չըլիմել հիմա!

Գրատատ աշբըդ դարձաւր իմ ցաւին!

Վերյիշումներիս օձերը զագիր

Սոզում են ահա

Յոգնատանց մտքիս խորունկ ծալքերից.

Հոգիս դարձել է սեւ նողկանիների մի խաւար մնին...

Դո՛ւ, որ չես կարող չըլիմել հիմա,  
Տո՛ւր մոռացութիւն ցաւագար մտքիս.

Փրկիր ինձ ինձնից:

Տե՛ս, Էլ անգօր եմ ինքս իմ դիմաց  
Եւ կընկնեմ շուտով ինձնից ինձ տուած հազար  
վերքերից...

Ողորմած շունչով հանգցուր հոգուս մէջ  
Անսանձ կրքերիս հրդեհն արիւնու  
Եւ ազատիր ինձ

Իմ վայրագ սիրուց եւ իմ կատաղի ատելութիւնից!

Դո՛ւ, որ չես կարող չըլիմել հիմա,  
Տուր խաղաղութիւն ալեծուփ սրտիս.

Փրկիր ինձ ինձնից:

\*\*

Զփորձե՞լ արդեօք բանալ կեանքի ամենամեծ առեղծւածի - մահան գաղտնիքը. առ առաւելն, երբ դիտակցւած կեանքը տանջանք է, մինչդեռ մահը՝ անյայտութիւն, ապա ուրեմն եւ մի նոր որոնման դուռ: Աթարէկեանի միտքն իր համար անյայտ գծեր չենդուրժում: Ո՞վ դիմէ, թերեւս եւ այդ անյայտը յայտնագործելու միգն էր պատճառը, որ նա դիմեց դէպի մահ, դուցէ եւ փըրկելու համար իրեն իրենից: Յաւիտենական սկեպտիկը զնաց թերեւս տիեզերքի ծալքերում որոնելու կամքի իրական այն ազատութիւնը, որը չգտնելու հետեւանքով, կեանքն իր համար դարձել էր ամենօրեայ մահերի փոքրիկ կտորների շարան:

Պարփակ.

## ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ՏԱՂԵՐԸ

Գ.

### ՏԵՐ ՍԻՄԵԶՈՆ ԵՐԵՑՈՒՆ Է

Պանդոսական ծովեղերեայ  
Վանայ անուն քաղաք մի կայ,  
անդ քահանայ գոմըն տեսայ,  
Տէր Սիմէօն անուանի նայ :

Կերպիւ պարկեցտ նա ձեւանայ,  
որպէս թէ չունի մահանայ,  
խմատնաձեւ բայց անիմայ,  
գորափառութիւնն ասեմ հիմայ :  
Ով որ նըմա հիւր լինենայ  
թէ վարդապետ կամ քահանայ,  
կարգ մեռեց զնա իմանայ,  
զի քան զմեռեալ է անզգայ :

Ընդ արշալոյսն երբ լուսանայ,  
ելնէ ժամուն քաղնու զնայ,  
զնաշն եւ զընք-բիսըն մոռանայ,  
մինչ յիրիկուն յայլ տնդ շուրջ  
գայ :

Յեկեղեցին ոչ երեւայ,  
եւ զեկեալ հիւրսն ոչ խղնայ,  
թէ ի՞նչ կերան այսօր նոքա  
կամ անօր-ի, եւ զուր չիկայ :

Երբ յիրիկուն ժամէն ելայ,  
ի սեղանում չի հեռանայ,  
կարծես առեալ ակն ունի նա  
թէ կու գտնեմ հազըր լոյնմա:

Հարցանողին նուղապ չի տար,  
թէ ո՞ւր էր նա, կամ ուստի՞  
գայ,  
ի չորեք դին աչվին ժուռ գայ,  
թէ մեծ գաւաքն առ իս :

Անմեղադիր քող մեզ լինայ,  
Տէր Սիմէօն որ ի Վանայ,  
կէսըն էր յըղորդ, կէսըն շախայ  
Աստուած իրեանն նիսաֆ տայ :

Զինչ որ գտնու սիրով կուլ տայ,  
եւ մը-ընծեծ առնէ ըզ նա,  
յիւր քասկէն փող մի չելլայ,  
Այլոց հացի մուշքալս է նա:

Զականին ի կախ ճրգէ շուռ գայ  
թէ զի՞նչ պատիւ մարդոց լինայ,  
զօրն ի բուն անօրի մընայ  
որ լաւ ուտէ եւ կըշտանայ :

Երբ ըգփորից գառըն տեսնայ  
հոգուվ մարմնով ուրախանայ,  
առանց ծամել զինքն կուլ տայ  
երկու երեք, չորս հինգ օլսայ :

Փարզ մ'ալ զինի կէս սուլումայ  
Գառան մշին վրայ շուռ տայ,  
Հապս երեսըն ծաղր գայ,  
Հանգչի հոգին եւ դուրանայ :

Ով որ կամի պատուել ըզնա,  
երկու երեք գառ ունենայ,  
դապլու փիլաւ եւ հերխայ,  
չորս հինգ խալխան պալըն  
չօրպայ :

Բև մի սապգի կանանչ մէզայ,  
բառկուն մասուլ, կծու բառայ,  
ուռու տերեւ խառն լինայ,  
Որ զկերակուրն մարսել տայ :

Մի՛ մեղադրէ՛ Մարտիրոսին  
թէ կարճառու ասիր գդայ,  
Զո՞րըն գրեցի, զո՞րըն մոռցայ  
եւ զմնացեալքն տեսցուք յապայ :

Անմեղադիր քող մեզ լինայ,  
Տէր Սիմէօն որ ի Վանայ,  
կէսըն էր յըղորդ, կէսըն շախայ  
Աստուած իրեանն նիսաֆ տայ :

### ՍԻՎԻՍԹՐԻՑԻ ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒՆ ՊԱՐՍԱԿԱՆԱՆՔՆ Է

Ե.

Եղբարք եկէ՛ ձեզ բան ասեմ,  
ականչ դրէ՛ ամենենքին,  
թէ զի՞նչ բաներ եղայ պէյան  
Սիլիսրբէցի Տէր Յակոբին :

Հազար հարիւր բան ւ նրկու  
ազգիս հայոց թուականին,  
մեծի աւուր նրագալուցին,  
Սուրբ Յարութեան յերեկոյին :

Իրեանց մէջըն սահման մի կայր  
յաւուր իրիկուան նաւակատկին  
կերակրեղէն եւ ըլմակլիք,  
յեկեղեցին պատրաստէին :

Մեղրով շինած փախլավաներ,  
զրախուն լաւըն բերէին,  
յեր պատարագն որ արձակէր,  
մեծի փոքրի բաժանէին :

Այնպէս արին եւ այս տարիս,  
զոր ինչ սահմանի որ ունէին,  
վարդապետ մի հանդիպեցաւ,  
իսկի խարար չէր այն բանին :

Վերակացութն որ անդ կային,  
վարդապետին հանին բաժին,  
ըգհոնելքի լաւ դումդումէն,  
փախլավայի մեծկալ սինին :

Երբ մեծ երեցըն զայն լսեց,  
Գնաց զինչ լինէ որ կայր գլխին  
ասէ բերէ՛ որ ես սպահեմ,  
տանիմ սեղան վարդապետին :

Այն միամիտ վերակացութն  
հաւատացին նորս սըտին,  
թէ տէրտէրըն սուտ չի խօսիր,  
աւագերէց տէր մըղտէսին :

Բերին զարուխն եւ զիախլավան,  
մեծ երիցուն թէսլիմ արին,  
եւ նա առեալ եղիր տօլապն,  
մինչեւ հանցէ զզգեստ անձինն :

Քանզի նախ ինքն է ժամարար,  
ձեռըն թարախ սուրբ խորհըր-  
դին,  
շուտով ձգեց զըզգեստն ի վար,  
ուող էր ելեր սուվին ձեռվին :

Թէ ե՛րբ կարեմ տանել ի տուն,  
մարդ չի տեսնէ մուրն ի մըրին  
մէկ օր չի կայր որ զայն գող-  
նայր .

հրեշտակ ի վեր զարմանային:  
Գայ ի սեղան բազմի յընթրիս,  
որպէս Յուղա նենցին ի սրտին,  
ասէ իսկի մարդ չիմացաւ,  
ուրախանայր ի յիւր մըտին :

Թէ զիախլավան հետ արախուն,  
որ թագուցի տեղուց մըրին,  
այս զիշերլան բանըն բուսաւ,  
վաղէն հերիկ է ինձ բաժին :

Յերբ առաւատըն լուսացաւ,  
աւարտ եղաւ պատարագին,  
եկին բերողին կերակրոց,  
հարցին գողայն ու մեծ սինին :

Այս բաներուս մարդ չէ խապար,  
ոչ փոքրաւորք վարդապետին,  
ասին թէ մեծ ոչ եմ տեսեալ,  
ոչ փախլաւան, ոչ արախին :

Յուքա լուեալ աղմըկեցին,  
տրէկ ի տուն հարցմունէ արին,  
ելաւ տունէն մեծ տէրտէրին,  
այն մըղտէսին տէր Յակոբին :

Քաղաք ամեն զայս իմացաւ,  
եւս առաւել ծեր պառլըտին,  
այն մահադեղ լինին նորա,  
ամենէն բան զայն ասացին :

Միարերան տուին անէծ,  
մեծ երիցուն եւ իւր վեսին,  
նա ի՞նչ արժան էր այնպիսուն,  
քող չու խըմէր ևաչկին :

Չայնըն հնչեալ տարածեցաւ,  
ամենենքեան զայն լսեցին,  
թէ տեղացի կամ մուռփիրք,  
վահառական որք ի խանին:

Ով որ լըսեց ասաց նալար.  
գեխած նեխած այն մառեօլին,  
զիսխլուրիւն ի միտ բերեալ,  
յոյժ զարմացեալ հեռանային:

Ով սիրելին ի միտ ածէք,  
զեղեալ բաներս որ ձեզ պատմեն  
ազակըն չէ ասուածապաշտ,  
այլ է ծառայ պիդ որկորին:

Թը բանիս վրայ խնդրես,  
կարդայ' զգիրսըն Պօղոսին,,  
վա՛յ եւ եղուկ տայ այնպիսուն,  
թէ թշնամի է սուրբ Խաչին:

Եօրըն մահու գրեալ մեղացն,  
զերեքն ունի իւրըն բաժին,  
զի որկրամոլն է եւ ազակ,  
որք են ծնող բղջալսոհին:

Իսկ մեք զբանս աւարտեցուք,  
այս բաւական է զիտցողին,  
ո՞վ որ ազակ է եւ Մառեօլ,  
հազար նալար իւր երեսին:

Ինչ քահանայ որ ազակ է  
խորէ զբաժին վարդապետին,  
նա բորոտի զինչ Գէեզի,  
զինին անիծէ Աստուած Հոգին:

Աստուած օրինէ զժողովուրդն,  
եւ զտանտիկնայքն ի միասին,  
զԱստուածասէր եւ զողորմած  
բարեբարոյ ծեր պառվընին:

Թէ շատ թէ ֆիչ զինչ որ եփին,  
բաժին հանեն վարդապետին,  
իւղով մեղրով շինած գարայք  
եւ չոր մսիկ պաշար նամբին:

Ինչն փրկի յամին չարէ,  
Աստուած պահէ զդուստրն եւ  
գորդին,  
եւ յետ աստիացս ելանելոյ,  
յարքայուրեան հանգչի հոգին:

\*\*

Զ.

## ԲԱՆՔ ԾԱՂՐԱԾՈՒՔ ԳՐԵԱԼ Ի ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԵ

### ԱՌ ԲԱՐԵԿԱՄՄՍ ԻՒՐ

Ով սիրելին պարոն խոնայք,  
մեր նարըն ձեզ մնաց եղարք,  
էանց գարնան լաւ ժամանակ,  
ահա՛ յամուն կետըն հասանք:

Պաղչին ծառերըն ծաղկեցան,  
Ծաղիկն ելեալ պտուղ հասան,  
վարդ ու շուշան բառամեցան,  
վայելչուրիւն ծաղկանց անցան:

Կանաչ պարտէզ, խիար, պատան  
սեխ եւ դդում եւ բարլինան,  
տուեալ պտող եկին ի համ,  
զբուշին կերաք երեք անգամ:

Մառոց մրգերն եկին ի հաս,  
տաճա ու սալոր, ծիրան իննաս,  
ընկուզն ու նուշն են կիսահաս,  
մեր սրտիկն է բորբոս ու փաս:

Գորտերուն ձայնըն կտրեցաւ,  
երգ պըլապուղաց խափանեցաւ,  
ծէր մոծակաց խայթըն սըլաւ,  
ձայն գոռեխից յոյժ զօրացաւ:

Վանքաց զինչ կայր քըսակ,  
մանր խնջոր թէ մին ըստակ,  
արտ մի բակլայ կանանչ կերաք,  
քող զբաղուկն ու կարմիր տակ:

Այժմ քաղեմք խելար խոսեր,  
կուտայ յիւրմէն գէշ գէշ հոսեր,  
Արգրումցին սիրով ուտէր,  
հիւանդացաւ կասէր, ա՛խ մէր:

Զմեզ գաեցիք տեղ մը եապուն,  
ոչխար չունին լինանի չօպան,  
զայլերն եղին մեզ պահապան,  
դէմ փէննիրին կանգնին ունան:

Ճար մի տեսէք մեզ ելելու,  
զնանիք բուրին մենիք զնալու,  
այլ նար չունին աստ կենալու,  
փող չի մնաց հացի տալու:

Պարտօք հաց չի տար էքմէքնին,  
դրամ կուզէ մէյխանին,  
խիար ծախող մեր պաստանին,  
մեզնի կառնու գին խիարին:

Ամոան շողերըն զօրացաւ,  
զօրն ի բուն նեղին բազմապաւ,  
հորերուն զուրն ալ կէս եղաւ,  
վախին կտրի մնան ծարաւ:

Աղաչեցէք առ Տէր Քրիստոս,  
մի ողորմի հանէ նոտոս,  
վարդավառըն ձեզ բարեխոս,  
մեզ Խոնացէք մի՛ քողուի հոս:

Մեզ մէկ ամիս վատայ դըրիք,  
զերկուսն անցաւ՝ չասիք հերիք,  
վասն Աստուծոյ ով սիրելիք,  
մեր գանգատին արէք մըտիկ:

Նախնի մըրգերն ամէն հատաւ,  
կարգն ի խաղողն եւ բուզն եկաւ,  
մեծ հաւուզի զուրն ալ հատաւ,  
չու ու խարար զինչ կայր փըտաւ

Զայն նեղուրիւն որ կրեցաք,  
զամենըն առ ձեզ գըրեցաք,  
յուլիս ամիսն այլ կիսեցաք,  
հացէ զրէ ալ կըտրեցաք:

Այս բաներուս մի՛ տրտնչէք,  
տէրտուս սէօյեր, լաւ կու գիտէք  
երբ այդչափ մեզ մոռացեր Իք,  
զաղ ու հացըն եկալ արէք:

\*\*

Է.

## Ի ՎԵՐԱՅ ՑԱԿՈԲ ԵՐԻՑՈՒԽ ԷՏԻՐՆԵՑՈՒԽ

Նախնի հարանց մեր ընտրելոց,  
պատէր ունիմք հաստատական  
վատաբախտին գրել պարսաւ,  
եւ գիղեցկաց տալ գովասան:

Են ոչ ասէ չարին բարի,  
զիսաւարըն լոյս որ չէ արժան,  
այլ գրարտոյն լաւ վկայել,  
վատքարն չար ասել գրեցաւ:

Որպէս եւ ույս բան շարադրի,  
յաղազ ումիւն Յակոբ անուան  
որ այժմ երէց վերաճայնի,  
յԱնտրիանու կոչեալ պօլսեան:

Ոչ ի յազգէ ընտիր արանց,  
այլ ի յետնոցն որ անմըշան,  
վասն այն որիկ ի յէտիրնու,  
զնաց Հատամալ վտարական:

Եւ անդ երէց նա ձեռնադրի,  
ոչ ըստ իւրոյն արժանուրեան,  
այլ ըստ բերման ժամանակին,  
ոխիլ երբեմն որ չէ արժան:

Որպէս յարուըն Մովսիսեան,  
դպրաց նատի Փրկչին է բան,  
կամ չէ առակըն խոտելի,  
բու յաւերակըն արծուանան:

Անդ ժամանակ մի շըշմըշչկի,  
մինչ ի եանդունն Յատամպօլայն  
պատրիարքին գիր մի առնու,  
որ Մարտիրոսն էր Պըրիմայն:

Այնու գրով գայ յէտիրնէ,  
առ պարօն տէրըն Տէր Յօհան,  
նա ընդունի զնա սիրով,  
պատրիարքին զըրուն փոխան:

Յետ այնորիկ նա գիրանայ,  
ըստուարանայ զոր գրեալ կան,  
ըզվարդապետն այլ ոչ յիշէ,  
եւ ոչ զիկին Տէր Յօհան:

Ապա զրնայ յերուսաղէմ,  
մահտեսութեան ցանկայ անն-  
ուան,  
ուր որ նըստի փառամոլի,  
թէ այս պատույս խիստ եմ ար-  
ժան:

Հպարտութեամբ է ուռուցեալ,  
վայրենամիտ ւ'ամբարտաւան,  
ի յարծաքոյ հարեալ ի սէր,  
մոլեալ ի յախտն անյագութեան

Մէջ երիցանց դիվան կառնէ,  
շաբարն երկու երեք անգամ,  
ասէ եկայք տըլվէք համար,  
թէ ո՞րչափ էր շաքքուս դուր-  
պան:

Եօթն ուր երի ինձ է հասեր,  
ո՞ւր է չեայ մորքն ու փաչան,  
ժամկոչներուն երդումքն տայ,  
թէ ձեր կերածն եղնայ հարան:

Մեռելապի գլուխ չունի,  
գերէ հեռու է գերեզման,  
թէ խիստ նեղեն իր հայինյէ,  
զպատճառ եղօղըն նախնական:

Ժամբարութիւնըն կը սիրէ,  
թէ զբանունիցն ամեն իւր տան,  
եւս առաւել զիուտոյ մատան,  
զծածուկ յիշըքն պաշտաման:

Թէ աղքատաց մահ համդիափի,  
կամ թէ ձայնին Հաղորդու-  
թեան,  
ուտ վիզ կոտրի ոստքն բեկի,  
շուտով յենու ի գաւագան:

Շաբարն ի բուն ժամ չի գնար,  
թէ այս օրերս չեն ինձ արժան,  
կիրակմըտին շենդապարդ,  
գնայ կանգնի բեկայ նըման:

Որ ըզծըլներն հաւընցընէ,  
թէ՝ լոյս գուարք ասաց տէրան,  
եւս առաւել առաւօսուն  
որ ընթենու զԱւետարան:

Թէրկրեալ սրտիւ գուարնանայ,  
երք որ լսէ հարսանեաց ձայն,  
յառաջազան բազմի յընքքիս,  
որպէս պատմէ Աւետարան:

Ասէ զի՞նչ տայք Հալաւ օրինէք,  
յետոյ տեսնանք պսակադրամ,  
ըզուասանորդըն սազուին,  
թէմին կառնում կամ սաղ դրամ

Եւ թէ ասեն կէս մի օժտէ,  
ձեռվին սօրտէ կանգնի մէյտան  
Ասուած փրկէ տէրն ազատէ,  
նէնիլ ու կոխի մէտէք աման:

Պակաս չառնու երկու պըլիկ,  
ըզզակ ծախսոյ չարչու նըման,  
կանչէ նընչէ գիշերն ի բուն,  
մինչեւ իւր կամքըն լինինան:

Երք տըլիօրհնէքն մօտենայ,  
տօնի զատկի սուրբ Յարութեան  
զերիցանին նա խոշտանիէ,  
սաստէ բանիւ ըսպառնական:

Ո՞վ նորընծայ փոքր իրիցունիք,  
զգոյշ լերուք ամենեմեան,  
տըլիօրհնէքի հետ բան չունիք,  
չասէք թէ մեր՝ կամ ազգական:

Գումզի ամենն ինձ է տուեալ,  
թէ տեղացիք թէ պազիրկեան,  
ես ո՞ւմ կամիմ կուտամ ըզնա,  
որպէս սասց պիղծ սատանան:

Խիստ անզգամ չար եւ ըռիշտ,  
իսկի չունի բարտոյ նըշան,  
յամենեցունց է ատելի,  
մէկ մի չըկայ իւրեան հաւան:

Աղքատէ եւ կոյրք եւ մուրացկան,  
թէ պատահին սորա դրան,  
անիծելով դառնան ի յետ,  
անողորմի դըրան նըման:

Յերք որ աղքատ մի դէմն ելնէ,  
դժուարանայ զուսըն միայն,  
զդէմքն իրեւ պնդէ զերկաք,  
առնէ տրութեզ դիւական:

Թէ զօրն ի բուն աղաղակէ,  
նա չի տանի զձեռքն ի ֆէսան,  
զերկու փողըն լաւ կու սիրէ,  
քան զդրախտն եղեմական:

Զո՞րն ասացից զո՞րըն քողից,  
որ չունի մաս մը բարութիւն,  
յամաք ջրիոր եւ չոր աղբիւր,  
կամ աղտաղտուկ ջուր դառ-  
նահամ:

Զնայխանձն անչափ ունի հոգին,  
լի է ախտիւք սրտմըտական,  
եւ ծոյլ բնաւ առ ի բարին,  
զագահութիւն անբուտական:

Զմասըն վերջին անյիշելի,  
եւ նա ծնունդ իսկ է սոցայն,  
սա եօթնեմին մասամբ վատքար  
աստ եւ ի կեանս թշուառական:

Առ նա խօսէ ըսպառնական,  
Տեառըն մերոյ օրինեալ հրա-  
ման,  
թէ ե՞րք ի հուրն յակիտենական  
որ է ի դիւաց պատրաստական,

Զի ոչ եսուր հաց բաղցելոց,  
չեղեր հիւրոց ասպլնչական,  
զծարաւին ոչ արբուցեր,  
ոչ հիւանդաց եղեր պաշտպան:

Բանդարգելոց ոչ մերձեցար,  
որ անիրաժեշտ իմ էր հրաման,  
որպէս որ դու իմաց չեսուր,  
եցես յիմոյս արքայութեան:

Այս է նորա մասն ու բաժին,  
վերջին բաժակըն դառնութեան  
արբցէ զմբուրքն դժոխաց,  
որպէս Դաւիթ գրէ զայս բան:

Գրիչածնունդ բանս աստանօր,  
արտայայտեալ ի շար եդան,  
Մարտիրոս Ղրիմեցոյ,  
առ որ գրեցա խիստ էր ար-  
ժան:

\*\*

Ը.

## Ի ՎԵՐԱՅ ՊՈՒՐՊԱԶՈՒԻ

(Ո Ճ Ի Գ - (1674), յունվարի մէկ)

- Պուրդա'զ դու հիմանց բանիս, քու շինուածքդ ամեն կործանի,  
աւեր ու անտիրունչ մնաս, դու նման Սողոմ բաղաժի:
- Զուրդ դառնահամ եւ զորշ համենատ ծովու է լեղի,  
չունիս բարութեան նշան, յամենայն իրաց ամայի:
- Բնակիչ քո չար եւ դժնեայ, նմանին որդույն Քամի,  
հիւրընկալութիւն չունին, զինչ Սողոմն՝ որ նոր ասացի:
- Կէս մի սովաման լինին, կէսն այլ զայ գրողն ու տանի,  
եւ այլքն ելերուն մնան, դողդոջեալ նման կայէնին:
- Ցաւօֆ տագնապին յաւէտ, տենդոտին վշտօֆ շերմանի,  
չիք ու չքաւր դառնան, որ չունին սէր ընդ օտարի:
- Այգին ի խոպան դառնան, փուշ բուսցի վախան խապողի,  
ողկոյզ դառնութեան ծնցեն, զինչ գրեաց Մովսէս ի գրի:

7. Քանզի անողորմ են խիստ, նոաբաղ առնեն զայգի,  
ոչ քոչնոց բաժին քողուն, ոչ ողկոյզ մի տան օտարի:  
8. Ի մէջ Ադամայ որդոց, չէ տեսեալ սոցա նմանի,  
անգութ եւ օտարասեաց, դժիկադէմ եւ խիստ գարշելի:  
9. Զջուրն ի հորոյ ըմպեն, օտարին չտան կաքիլ մի,  
միքէ ակն արեան բղխէ, Եգիպտեայ գետոյն նմանի:  
10. Մարտիրոս հերիմ արա՛, մի՛ չափեր չար փոխան չարի,  
օրհնեայ զանիծիչն բոյ, աշակերտեայ դու Յիսուսի:

\*\*

Թ.

## Ի ՎԵՐԱՅ ԱՀԵՈԼՈՒ ՏԻՐԱՑՈՒԻՒՆ


Բայց դու զայս ծանի՛ր Տիրացու նիկօլ,  
անուն քաղաքիոլ որ կոչի Ահեօլ,  
հաց ու կեր չունի, միայն զուրմ է պօլ,  
վերջըն տի մնայ խարապայ եւ չէօլ:


Քաղաք անուանիմ զգեղդ աւերակ,  
յամենայն բարեաց է ինքն ցամաք,  
որոյ են բնակիչն չարք ու դժրմակի,  
ատեցողք միմեանց, իրերաց ներհակ:

Իւրեանց զառօրեայ կեանին երեսնի,  
ժամ աղօք-ք չունին շարարն ոչ օր մի,  
կից կից ափ ալիւր՝ փոխարկեն աշի,  
կիսախառն զջուրն ծախն քէ՛ զինի:

Ընտէ՞ր զօրն ի բուն ձրի խօսիմ սուտ,  
յերք չունիմ այտի ձեզ շահ եւ օգուտ,  
բարձէ՞մ ի տեղոյդ զյոյս եւ ումուտ,  
արարէ՞մ այտի գիախուստ ձեր շուտ:

(Վերջ)





Յ. Ա. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆՑ

Նկարը առնեած է Սոց. - Յեղափոխական կուսակցութեան Կենտր. Գիւտնից

### ՎԱՀԱՆ ՄԻՒԱՆՈՐԵԱՆ

## ՇԼԻՍԵԼԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԿԱԼԱՆԱՌՈՐԸ

Հոչակաւոր «Նարողնայեա Վոլեա» կուսակցութիւնը, որ հզօր կնիք է դրել նաեւ հայ յեղափոխական շարժման վրա, իր շարքերում ունեցել է եւ մի քանի հայեր, որոնցից Պ. Մանուչարեանցը հանդիսանում է իր շրջանի յեղափոխական փայլուն դէմքերից մէկը:

Յովհաննէս Արտամեան Մանուչարեանցը<sup>\*)</sup> ծնւել է Թիֆլիզում, հաւանաբար 1862-1863 թւերին. միջնակարգ կրթութիւնը աւարտել է Թիֆլիսի դիմնազիայում եւ 1882 թւին մտել է Պետերբուրգի համալսարանը: Սակայն նոյն թւին Մանուչարեանցը վոնտւել է համալսարանից՝ այդ օրերում Պետերբուրգում լեհ սոցիալիստ - յեղափոխականների ջանքերով ծայր տւած յեղափոխական շարժման մասնակցած լինելու կասկածով: <sup>\*\*)</sup>

Քիչ յետոյ, Մանուչարեանցը փոխադրուում է Խարկովի համալսարանը, ուր անդամագրուում է «Նարողնայեա Վոլեա»-յին: Եղած տեղեկութիւնների համաձայն, Մանուչարեանցը պատկանում էր նարողնիկների «Զորնի Պերեղել»-ի խմբակցութեան. այսպէս, օրինակ, Վ. Ի. Նեւսկին, խօսելով Ակսելրողի կողմից «Զորնի Պերեղել»-ի սկզբնաւրութեան մասին բերւած յիշատակութիւնների առթիւ՝ ասում է. «Մենք ունենք ստոյդ տեղեկութիւններ «Զորնի Պերեղել» կազմակրպութեան գոյութեան աշխատանքների մասին: Ա. Մակարեւսկին յիշատակում է 1882 թւին եւ յետոյ Խարկովում աշխատող նարողնիկների մասին, որոնք են՝ Ն. Վ. Իորդան, Ետվորակյայեա, Շաղբեն, Ա. Ա. Մակարենկօ, Ի. Լ. Մանուչարով» եւ այլն: <sup>\*\*\*)</sup>

\*) Ուստի յեղափոխական գրականութեան մէջ յայտնի է իրեւ Խվան Լվովիչ Մանուչարով:

\*\*) 80-ական թավականների տասին մասում լիի ուսանողների մէջ ծնունդ առաւ սոց.-յեղ. «Պոլետարիա» կուսակցութիւնը, որ մեծ համականք էր վայելում Ռուսաստանի արդիւնաբերական վայրերում եղած բանութերի կողմից: Քիչ չանցած այդ կուսակցութիւնը զինուրական դաշն կուեց «Նարողնայեա Վոլեայ»-ի հետ:

\*\*\*) «Հող եւ Ազատութիւնից դէպի Աշխատանքի Ազատութեան խմբակը», Մուկուս, 1930 թ., էջ 178:

Պէտք է սակայն նկատենք, որ Նեւսկին տարբերութիւն չի դը-  
նում այդ շրջանի «Զերնոպերեղելովցիների» եւ մնացած «նարողո-  
վուցիների» միջեւ\*):

Մանուչարեանցի կուսակցական գործունէութիւնը երկար չի  
տեւում. 1883 թւի յունաւրին Խարկովում ձերբակալում է «Նարող-  
նայեա Վոլեայ»-ի դաշտնի տպարանը, որի մէջ աշխատում էր Մա-  
նուչարեանցը: Նրա հետ միասին ձերբակալում է նաև ընկերը՝  
Իրզանը: Այդ շրջանում ոռու կառավարութեան մէջ տիրող «ազա-  
տական» տրամադրութիւնների չնորհիւ, Մանուչարեանցը ենթա-  
կըսում է համեմատաբար թեթեւ պատժի. Նա դատապարտում է  
հինգ տարով աքսորի Արեւելեան Սիրիք: Այդ օրերի աքսորի պայ-  
մանները խիստ ծանր էին. աքսորում էին անմարդաբնակ եւ հեռա-  
ւորագոյն վայրերը. ոչ միայն երկաթուղու, այլ եւ առհասարակ  
ճանապարհների բացակայութեան պատճառով, գրեթէ ոչ ոք չէր  
կարողանում վերադառնալ աքսորից, եթէ կարողանար դոյութիւն  
պահպանել, աքսորի ժամանակը լրացնել:

Երեւի բոլոր այս դժւարութիւնները հաշւի առնելով՝ Մանու-  
չարեանցը ընկերով հետ միասին 1884-ի սեպտեմբեր 12-ին փախչում  
է «Խալողնայեա Գորա»-ի (Խարկովի արւարձանում) ուղղիչ բան-  
տից՝ սղոցելով բանտի պատուհանի երկաթեայ ձողերը: Բայց ա-  
զատութեան մէջ երկար չի մնում եւ նոյն թւի վերջերին նորից  
ձերբակալում է Ռուստովում՝ Բողդան Մարկովիչի բնակարանում,  
զինած դիմադրութիւնից յետոյ: Վ. Ի. Նեւսկին այս ձերբակալու-  
թիւնը կապում է լրտես Ֆ. Շկրեարի սպանութեան հետ: Իսկ Ա.  
Տունը նոյն այս լրտես - պղովոկատոր Շկրեարի մատնութեան է  
վերադրում Խարկովի «սոցիալիստ - նարողների» դաշտնի տալա-  
րանի եւ Մանուչարեանցի ձերբակալութիւնը:\*\*)\*)

Մանուչարեանցի այս շրջանի բանտարկութիւնից կայ մի էջ,  
որ շատ բնորոշ է հայ ըմբոստ յեղափոխականի բնութագրութեան  
համար: 1885-ի մարտին Ռուսովի բանտը այցելում է Եկատերինո-

\*) «Զորնի Պերեդել» կոչւեց այն երկու հոսանքներից մէկը, որոնց բաժնւեց «Զեմլեա ի Վոլեա» կազմակերպութիւնը: Քաղաքական կուի անհրաժեշտութեան  
բացառում եւ ընկերվարական ֆարոզչութեան կարեւորաւթիւնը՝ յատկապէս գիւ-  
ղացիական եւ մասամբ միայն բանութական շրջաններում - այսպէս էին «Զորնի  
Պերեդել» ծրագրի հիմքերը: Հոսանքի առաջնորդներն էին Պեյսանովը, Ակսենո-  
դը, Զասուլիչը, Դէյչը, որոնք յետոյ ընդունեցին մարքսիզմը եւ կազմեցին «Աշ-  
խտանիքի ազատութիւն» խմբակը:

\*\*) Ա. Տուն «Թուսաստանի յեղափ. շարժման պատմութիւնը», 1904, էջ 342:

սլաւի նահանգապետ Բատիշչկովը: Մանուչարեանցի խուցում պա-  
տահում է հետեւեալ միջադէպը: Ինչպէս բոլոր, նոյնպէս Մանու-  
չարեանցի խուցը նահանգապետը այցելում է գլխարկը գլխին, ա-  
ռանց տարբական քաղաքավարութեան ու բարեւի: Նահանգապետի  
այն հարցման, թէ «ինչո՞ւ կրակեցիր», Մանուչարեանցը պատաս-  
խանում է արհամարհական լուսութեամբ: Բայց երբ նահանգապետը՝  
իրեն անյարմար գրութեան մէջ զդալով՝ ուզում է հեռանալ եւ ուղ-  
ղուում է գէպի գուռը, Մանուչարեանցը ասում է ...

- Զերդ վսեմութիւն, իմ խուցում սուրբի պատկեր (իկոնա)  
չկայ:

- Ուշ է, սիրելիս, աղօթելու համար շա'տ ուշ է, պատասխա-  
նում է Մանուչարեանցը:

- Ես աղօթելու համար չէ որ ասում եմ, այլ որպէսզի անկիրթ  
մարդիկ, գէթ ի տես սուրբի պատկերի, գլխարկ վերցնեն, -վրա է  
բերում Մանուչարեանցը:

Նահանգապետը խիստ բարկացած սկսում է գոռգոռուալ: Իսկ  
հաճոյակատար բանտարկետը՝ իր մեծաւորին անյարմար գրութիւնից  
աղատելու համար՝ ասում է.

- Զերդ վսեմութիւն, սրան կարելի է շղթայել, սա իրեն ան-  
ւանում էր «անյայա»:

Այսուհետեւ նահանգապետը մնացած բոլոր խուցերը այցելում  
է շատ քաղաքավարի ձեւով, ամէն տեղ վար է առնում գլխարկը,  
իսկ բանտարկեալների հետ խօսում է «գուլք»-իով: Իսկ Մանուչար-  
եանցին, ի հարկէ, շղթայում են եւ նետում պատժարան:\*)

1885-ի վերջերին Մանուչարեանցին փոխադրում են Օդեսա,  
որտեղ նոյն թւի դեկտ. 19-ին զինուրական դատարանը նրան զա-  
տալարտում է կախաղանի՝ «յատկապէս իր յանդուզն ու անկախ  
վարքի եւ զատի ժամանակ ցուցմունքներ տալուց հրաժարելու  
պատճառուի»:\*\*)

Դատավլճուց յետոյ մի ամբողջ տարի Մանուչարեանցը ապ-  
րում է կեանքի ու մահւան արանքում, ամէն օր սպասելով դատա-  
վճուի գործադրութեան: Վերջապէս, 1886 յուն. 8-ին նրան յայտ-  
նում են, որ մահւան վճիռը փոխած է 101 տարւայ տաժանակիր  
աշխատանքներով:

Մանուչարեանցին տեղափոխում են հոչակաւոր Շլիւելբուրգի  
ամրոցը: Բայց այստեղ էլ նա «հանդիստ» չի մնում եւ ամրոցի նոր

\*) «Նարոդնայեա Վոլեայի գրականութիւնը», 1905 թ. էջ 823:

\*\*) «Զեմլեա Տրուդա», թ. 19, 1990 թ., էջ 20:

շէնքից փոխադրում են Շլիսելբուրգի հին ամրոցը, որը, նոր բերդի կառուցումից յետոյ, դարձել էր բանտային պատժարան, քանի որ թէ՛ առողջապահական պայմանների, թէ՛ բանտային ոչժիմի տեսակէտով անհամեմատ աւելի վատ էր։ Այս հին շէնքի շուրջն են հիւսել առասպելների հաւասար բանտային սարսափների պատմութիւնները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ նրա մէջ արգելափակւած բանտարկեալների խամրման, խելագարութիւնների, հիւծման ու մահւան պատմութիւններ։ Այս շէնքի մէջ են մեռել ոռու նարողնիկներից կլիմենկոն, Տիխոնովիչը, Բուցեւիչը, Դոլգուշինը, Զլոտոպոլսկին, Գրաչեւսկին, Բոգդանովիչը, Կորիլեանսկին, Խվանովը, Խսայեւը եւ ուրիշներ։ Այս շէնքի բակում են կախել ոռու հին յեղափոխականներից լաւագոյնները՝ Շտրոմբերգը, Ռոգաչեւը, Միշկինը. նորերից՝ Բալմաշեւը, Կալեայեւը, Կոնոպլեաննիկովը եւ այլն։

Մանուչարեանցը գարձաւ Շլիսելբուրգի բանտային վարչութեան «աչքի փուշերից» մէկը։ Մի պաշտօնական տեղեկադրում, որով Շլիսելբուրգի բանտային վարչութիւնը տեղեկութիւններ է տալիս բանտարկեալների «վարքի եւ բանտային քահանայի կրօնական զըրոյցները յաճախելու մասին», Մանուչարեանցը պատկանում է «բաւարարների» շարքին, մինչդեռ ուրիշները ունեն «յոյժ լաւ» կամ առնւազն «լաւ» նիշեր\*）

Գալով Մանուչարեանցին Շլիսելբուրգի նոր շէնքից հինը փոխադրելու պարագային՝ այս մասին մենք ունենք յայտնի Վերաֆիքների բացատրութիւնը, որը իր բանտի ընկերուհի Վոլկենշտէյնի մասին գրած յիշողութիւններում, ի միջի այլոց ասում է — «Այլ առիթներով նոյն հին շէնքի մէջ էին գտնուում նաև Գրաչեւսկին եւ Մանուչարովը։ Վերջինը պատժւած էր երգելու համար։ Ճանապարհին մէկ շէնքից գէպի միւսը փոխադրելիս, Մանուչարեանցին սաստիկ ծեծել են՝ կոմենդանտ Պոկրոչինսկու ներկայութեամբ, որը յետոյ այս գէպը ուրացաւ» :\*\*）

Այս կարգի տաժանելի պայմանների մէջ Մանուչարեանցը այնուամենայիւ լրացնում է իր տասը տարւայ բանտարկութիւնը։ Հետ է ասել «տասը տարի», բայց իրավէս նրանց մէջ են պարփակւած Մանուչարեանցի կեանքի սկիզբն ու վախճանը։ Հետաքրքիր է,

\*) Ե. Կոլոսով, «Թագաւորական բանտ Շլիսելբուրգը», Պետրոգրատ, 1924թ. էջ 157։

\*\*) Վ. Ֆիգներ, «Շլիսելբուրգի կալանաւորուի և Ա. Վոլկենշտէյն», Մոսկուա, 1905 թ., էջ 23։

որ հակառակ այդ տասը տարիների ընթացքում ապրած զարհութելի կեանքին, նրան այլեւս չի հրապուրում դրսի աշխարհը։ Շլիսելբուրգի վշտով ու ցաւով լի կեանքը նրան այնպէս է կապում բախտակից ընկերներին, որ երբ գալիս է ազատութեան ժամը դժւարանում է բաժանւել այդ ընկերներից։ Կարծես խղճի խայթ էր զգում, որ ինքը պէտք է լոյս աշխարհ տեսնի, իսկ ընկերները շարունակելու են ապրել բանտ - գերեզմանի մէջ։ Ահա թէ այս առթիւ ինչ ենք կարդում մի հին յեղափոխականի յիշողութիւնների մէջ։

1895-ի նոյեմբերին Լագովսկուն բանտից աքսորի հանելու առթիւ, Մանուչարեանցի ընկերների մէջ տեղի է ունենում հետեւեալ զբոյցը։

— «Նշանակում է շուտով Մանուչարեանցին նոյնպէս կտանեն։ Ե՞րբ է լրանում ժամանակդ, Մանուչարով, հարցըրեց Բ։

— Ես չեմ ցանկանում դուրս գալ, ես կը մնամ։ Այդ մասին պէտք է ծանուցում անեմ բանտային վարչութեան - պատասխանում է Մանուչարովը։

— «Յիմարութիւններ մ'ի խօսիր։

— Ի՞նչ յիմարութիւն։ Կը տեսնէք, որ յիմարութիւն չէ այդ - բորբոքում է Մանուչարովը։

Նա անյողդողդ է։ Նա ամբողջութեամբ կլանւած է իր այդ որոշումով։ Եւ որքան ընկերները աշխատում են յետ պահել նրան այդ մտքից, այնքան աւելի է յամառում։ Նա գրում, կազմում է ականական գիրաւորում ևս իշխանութիւնը։ Քանի որ չես ուզում ընկերներիդ լսել ես մնում ես քո որոշման վրա, գոնէ արա՛ այնպէս, ինչպէս որ պէտք է։

— Ոչ ոք ինձ չի հասկանում, կամ չի ուզում հասկանալ բորբոքում է Մանուչարովը։

— Իսկ դու ինչո՞ւ ես տալիս մեղ կարգալու, երբ որոշել ես ընկերներիդ խորհուրդը չլսել։

Այս ոգով էին արտայայտուում բոլորը։ Բայց Մանուչարովը բառ անգամ չփոխեց իր ծանուցման մէջ։ Եւ այնպէս էլ յանձնեց։ Ծանուցումը, ի հարկէ, ընթացք չստացաւ։ Ճիշտ ժամանակին ժանդարմները եկան եւ Մանուչարովին տարան։ Իր խուցից նա կարողացաւ միայն աղաղակել ընկերներին՝ «Ժանում են Սախալին։ Նը-

րան դուրս տարան մի տեսակ անսպասելի ձեւով։ Եւ այդ հանդամանքը մեղ խիստ տանջում էր։ Բոլորս էլ ցանկանում էինք հրաժեշտ տալ ընկերոջ, որի հետ ապրել էինք տասը տարի եւ որին գուցէ այլեւս չէինք տեսնելու երբեք։ Կարծես նրան գողացան մեզանից, այդպիսի տպաւորութեան տակ մնացինք ամենքու։ Երբեմն մենք խիստ մտահոգում էինք Մանուչարովի մասին։ Նրան կարող էին նետել մի որեւէ այլ ներքնայարկ՝ իր տւած անհանդուրժելի ծանուցման պատճառով։ Բայց իմանալ, թէ ի՞նչ եղաւ նա, մեզ, ի հարկէ, չխաջողւեց։\*)

Մանուչարեանցի մտայլացումը իր ծանուցման «անհունդուրժելի» բովանդակութեամբ նոր յանցանք բարդել իր վրա եւ մնալ Շլիմելրուրդի մէջ, իր ընկերների դառնութիւնը մինչեւ վերջ բաժանելու համար, ինչպէս տեսնում ենք, չի իրագործւում։ Եւ 1896 թւին նրան աքսորում են Սախալին։

Աքսորավայրում անցուցած օրերի մասին, գիրախտաբար, տեղեկութիւններ չկան։ Յայոնի է միայն, որ Մանուչարեանցին 1900 թւին արտօնում են հաստատել Բլագովեշենսկում (Զէի եւ Ամուր գետերի վրա, Մանջուրիայի սահմանում), ուր նա ապրում է մինչեւ մահ։

Իր կեանքին վերջին ուժ – իննը տարին Մանուչարեանցը պաշտօնավարել է «Ամուրսկի Կրայ» օրաթերթի խմբագործեան մէջ՝ քարտուղարի պաշտօնով։

Բոլոր եղած տեղեկութիւններից երեւում է, որ հանդուցեալը ոչ միայն քաջ եւ հաստատակամ յեղափոխական էր, այլ եւ հմայիչ մարդ եւ ընկեր։

«Ամէն տեղ – բանտերում, աքսորում, Բլագովեշենսկում – նա վայելում էր անկաշառ սէրն ու համակրանքը բոլոր նրանց ովքեր առիթ են ունեցել հանդիպելու նրան», գրում է Շլիմելրուրդի նրա ընկերներից նովորուսկին։ «Իրեն ճանաչողների սրտերում Մանուչարեանցը թողել է բացառիկ հողեկան մաքրութեան եւ անկեղծութեան տէր մարդու անջնջելի յիշատակ»։

Մանուչարեանցը մեռել է Բլագովեշենսկում 1909 թւի մայիս 29-ին։

\*) «Կեանքը Շլիմելրուրդի ամրոցում», էջ 50։

## ՍԱՄՍՈՆ

# ՅԱՅԱՍԱՆԻ

## ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

ԲՈՂՋԵԻՆԻԿԵԱՆ ԴԱՒԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

1920 թւի սկիզբը Պարսկաստանում լնդհանուր համոզում էր տիրում, որ թիւրք – աղբրէջանեան գաւերը Նախիջեւանի շրջանում կը ճնշւին եւ չուտով կը վերականգնաւի երկաթուղային հաղորդակցութիւնը, հետեւարար եւ փոստ – հեռագրական ու առեւտրական յարաբերութիւնները Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ։ Արդութեանը զբաղւած էր առեւտրական համաձայնութեան նախապատրաստութեամբ։ Այդ նպատակով նա 1920 թ. մարտ 24-ին, դեսպանատանը առեւտրական գործին լաւատեղեակ անձնաւորութիւններից մի խորհրդակցութիւն հրաւիրեց, որին մասնակցեցին մի շաքը յայտնի վաճառականներ, ինչպէս Զիբրայէլ Բուղազեանը, Ալեքսան խան Թունեանը։ Այդտեղ մշակւեցին այն հիմունքները, որոնցով կլիտի սկսէին հայ և պարսկական առեւտրական յարաբերութիւնները։

Մինչ հայկական գեսպանը այսպէս խաղաղ աշխատանքի էր նըւիրում, անդին տեղի էին ունենում գէպքեր, որոնք հիմնովին պիտի յեղաշրջէին գրութիւնը։ Ապրիլ 28-ին բոլշեվիկները գրաւեցին Բագուն, եւ Աղբրէջանը յայտարարւեց խորհրդային։ Քիչ յետոյ, բոլշեվիկեան նաւերը երեւացին ինզելիի առջեւ եւ սկսեցին ոմբակոծել Ղաղեան թաղամասը։ Ֆողովուրդը սարսափահար դիմեց փախուստի գէպի մնչու։ Անդիւկական հրամանաւարութիւնն ու պարսիկ կառավարութիւնը, յանկարծակի եկած, գիմադրութիւն ցոյց չտրւին։ Կենտրոնից ստացւած հրահանգի համաձայն Ռէշտի նահանգապետը, ինզելիի անգլիական հրամանաւարի ներկայացուցիչի հետ միասին, սպիտակ գրօշակ պարզած, նաւակով գնում են բոլշեվիկեան ուժերի հրամանաւարը Ռէկաւչինի մօտ, որ յայտնում է, թէ իրենք ոչինչ չունեն անգլիացիների ու պարսիկների դէմ եւ միայն պահանջում են Դէնիկինեան նաւերը, ուսղմամթերքը, զինուրական

ուժերն ու փախստականներին։ Յայտնում է նոյնպէս, որ մի հեծելազօրի ջոկատ ափի է իշլ պարսից Աստարայում եւ մի հետեւակ զօրամաս էլ շարժում է դեպի Արտարիլ։ այս վերջին զօրամասը, սակայն, յետ պիտի կանչելի։

Բանակցութեան հետեւանքով անգլիական զօրքերը քաշում են  
Ռէշտ, իսկ բոլցեւիկները համաձայնում են կնքել զինադադար,  
բայց, հակառակ դրան, ասի են իջնում ինզելիից հինգ կիլոմետր դէ-  
պի արեւելք: Անգլիական հրամանատար Շամպան շտապում է ուժեր  
ուղարկել նրանց դէմ. Ղազեանի եւ Ռէշտի ճանապարհին մի թեթև  
ընդհարում է տեղի ունենում, եւ անգլիացիները նորից քաշում են  
Ռէշտ. բոլցեւիկները գրաւում են ինզելին, ձեռք են դնում Դէնիկին-  
եան նաւերի, ուազմամթերքի ու փախստականների վրա եւ թռու-  
ցիկներ ցըելով՝ սկսում են բոլցեւիկեան գաղափարներ տարածել ժո-  
ղովրդի մէջ: Անգլիացիք ամբանալով Ռէշտում՝ բաւականում են  
միայն օդային հետախուզութիւններ կատարելով եւ գործօն քայլե-  
րի չեն դիմում:

Բոլեւիկների այս յարձակողական դիրքը ահագին յուզում եւ  
իրարանցում առաջ բերեց ժողովրդի մէջ, նոյն իսկ մայրաքաղա-  
քում, այնպէս որ վարչապետ Վլսուլ - Դովլէն ստիպւած եղաւ մի  
պաշտօնական հաղորդագրութեամբ հանդարտացնել հանրային խոռո-  
ված մտքերը եւ յայտնել, թէ կառավարութիւնը բանակցութեան  
մէջ է, որ, յոյս ունի, կը պսակւի յաջողութեամբ։ Եւ, յիրաւի,  
շուտով բոլշևիկների եւ պարսիկների միջեւ կնքեց համաձայնու-  
թիւն, եւ բոլշևիկները հեռացան՝ տանելով իրենց հետ գրաւած  
աւարրօն։\*)

Այս դէպքերը, բնականաբար, չէին կարող չյուզել հայկական շրջանները: Յ. Արզութեանը օրը օրին տեղեկութիւններ էր ստանում դէպքերի վայրից, Հ. Յ. Դ. մարմինների միջոցով եւ աշխատում էր հասցնել Երեւան: Հայկական շրջաններում մեծ իրարանցում եւ վիշտ պատճառեց, մանաւանդ, մայիսեան ապստամբութեան լուրը Հայաստանում, բայց շուտով Երեւանից ստացւեց պաշ-

\*) Աւելորդ չենք համարում յիշել, որ գեռ Բագրի գրաւումից առաջ Թեհրան եկաւ բոլշևիկնեան մի առաքելուրիւմ Յովսէփ Ղարախանեանի գլխաւորութեամբ: Քիչ յետոյ, Ղարախանեանը ճերքակալւեց եւ ախորւեց Բաղրադ: Ապա Մոսկվայի կողմից եկաւ Ղագիթի ցարական հիւպատոս Բրաւմը, քայլ ցարական դեսպանը մերժեց նրան նանաշել եւ տեղ տալ դեսպանատանը: Պարսիկ կառավագանքը մերժեց նրան նանաշել եւ տեղ տալ դեսպանատանը:

տօնական հաւասարիացում, որ բոլեւի կեան ապստամքութիւնը ճըն-  
շրւած է եւ հանրապետական կառավարութեան դիրքը ամուր է: Այս  
լուրը ընդունւեց արտակարգ յնծութեամբ: Այդ առթիւ, Մայիս  
28-ին, Հայաստանի անկախութեան տարելարձի օրը, տեղի ունե-  
ցան եկեղեցական մազթանք, համաժողովրդական հանդէսներ եւ  
պաշտօնական ընդունելութիւն դեսպանատանը: Վարչապետ Վըսուլ  
- Դովլէն անձամբ եկաւ հայոց գեսպանատուն չնորհաւորելու Հա-  
յաստանի ազատութիւնը: Այցելեցին նաեւ արտաքին գործոց նախա-  
րարը իր օդնականի հետ, ներքին գործոց եւ այլ նախարարներ,  
բարձրաստիճան պաշտօնեաններ եւ օտար դիւնապիտական ներկա-  
յացուցիչները իրենց գործակիցներով: Սա մի բացառիկ ուշադրու-  
թեան ցոյց էր գէպի իր անկախութեան համար պայքարող Հայաս-  
տանը, որոշ չափով նաեւ յարգանքի արտայայտութիւն իշխանի ան-  
ձի վերաբերմամբ: Իր վայելուչ արտաքինով, քաղցր բնաւորու-  
թեամբ եւ իմաստուն վարւելակերպով իշխանը վաստակել էր ամեն-  
քի համակրանքը: Եթէ Հայաստանը մնար անկախ, նա պիտի դառ-  
նար Թէհրանի գեսպանական կազմի աւագը (doyen):

Նոյն օրը ժողովրդական մեծ խրախճանքներ, կեր ու խոռմ եւ ուրախութիւն տեղի ունեցան եւ Հայկական Ակումբում, որ շքեղուէն զարդարւած էր ծաղիկներով, գորգերով եւ ազգային դրօշակներով։ Եռագոյն դրօշակներով պահած էին եւ բոլոր հանդիսականները, մեծ ու փոքր, որոնք մինչեւ լոյս ուրախացան։ Քաղաքացի ու գիւղացի խառնւած էին իրար։ Զինորական նւազախումբը, թառըն ու քեամանչան, դաւուլ - զուտնան մըցում էին միմեանց հետ։ Երգերն ու ճառերը վերջ չունէին։ Խշանն ու իր շքախումբը անըսպառ աղբիւր էին ողեւորութեան եւ բուռն ցոյցերի։ Անկարելի է առանց յուղումի վերյիշել այդ օրւայ ժողովրդական ցնծութիւնը։

Նման հանդէսներ եւ ուրախութիւններ տեղի ունեցան եւ հայտընակ բոլոր վայրերում :

Պարսիկ կառավարութեան Հայաստանի եւ նրա ներկայացուցիչին հանդէպ տածած բարեկամական զգացմունքի մէկ արտայայտութիւն էլ եղաւ Իշխանի համակրական ընդունելութիւնը Իրանի արքունական պալատում, ուր Շահի Եւրոպայից վերադառնալուն եւ թագադրութեան տարեդարձի առթիւ հանդէս էր նշանակւած։ Ներկայէին նախարարները, բարձրաստիճան պաշտօնեաներն ու դիւնագիտական ներկայացուցիչները։ Պալատի դրան առաջ Հայաստանի դեսպանը ընդունւեց բացառիկ պատիւներով. զինուրական նւագախումբը նւագեց «Մեր Հայրենիք»-ը։ Դիւնագիտական խնջոյքի միջոցին, երբ բաժակ էր բարձրացուում Հայաստանի Հանրապետու-

թեան ի պատիւ, նւագախումբը նորից նւագեց հայկական ազգային երգը։ Շահինշահի պալատի կամարների տակ, ողարսիկ արքունական նւագախմբի կողմից հայոց ազգային երգի նւագ, առաջին անգամը տասնեակ դարերից ի վեր՝ կարելի՞ էր չյուղւել ու չփառաւորւել։

## XII

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒԽՆ ԵՒ ՈՍԿՈՒ ՖՈՆԴ

1920 թ. ամառայ ամիսները իշխանը անցկացրեց ամառանոցում։ Մայրաքաղաք իջնելուց յետոյ նրա առաջին հոգալ եղաւ կաղմակերպել «փոխառութեան» եւ «Ոսկու ֆոնդ»-ի գործը։ Մի շարք խորհրդակցութիւնների մէջ ստեղծւեց կենտրոնական մարմին, որ պիտի զեկավարէր ընդհանուր պարսկահայութեան փոխառութեան գործը։ Կազմւեց նաեւ տիկիններից եւ օրիորդներից «Ոսկու ֆոնդ» յանձնախումբ, Տիկ. Սաթ. Արդութեանի նախագահութեամբ, որ փոխառութիւնից անկախ ոսկի պիտի հաւաքէր Հայաստանի ոսկու պետական ֆոնդին նպաստելու համար։ Նշանակւեց նաեւ պրոպագանդի յանձնախումբ, (գր. Յ. Ստեփանեան, Հ. Սագինեան, Ռ. Մոլսէսեան, Գ. Իփէկեան, Յ. Թովմասեան, Ս. Յովհաննիսեան, Հ. Գարագաշ), որ դասախոսութիւններով, թուոցիկներով եւ ուրիշ համապատասխան միջոցներով պիտի ժողովրդականացնէր փոխառութեան եւ «Ոսկու ֆոնդ»-ի գաղափարը։ «Անկախութեան փոխառութեան կենտրոնական Մարմնի» Դիւանը կազմւեց հետեւեալ անձերից։ նախագահ՝ Ալ. Խան Թունեան, փոխ-նախագահներ՝ Ռուբ. Թումանեան, Ալ. Տէր-Գրիգորեան, Գանձապահ՝ Գառն Էնչերեան, քարտուղարներ՝ Արա. Մարգարեան, Արամ Մովլէլ։

«Ոսկու ֆոնդ»-ի հանդանակութիւնը թէհրանում սկսւեց նոյ. 21-ին, հրապարակային մի հանդէսով։ Խուռն բազմութիւն էր լեցւած Հայ Ակումբի սրահը։ Հանդէսի գրական - երաժշտական բաժնից յետոյ, բացւեց հանդանակութիւնը, որ վարում էր կանանց յանձնախումբը։ Յանձնախումբի անդամուհիները շրջապատել էին մէծ սեղանը, որի վրա զբանական մի արկղ եւ մի քանի ժապաւին-եալ եւ կնքւած մատեաններ։ Նւիրատուները երկիւղածութեամբ մօտենում էին սեղանին ու նշանակում էին իրենց անունն ու նիւրաբերած ոսկէ իրը եղած բոլոր ծանօթութիւններով։

Պէտք էր տեսնել, թէ ինչ ոգեւորութիւն էր համակել բոլոր ներկաներին, ինչպիսի բարձր գիտակցութիւն եւ զոհողութեան անընման ոգի երեւան բերեց հայ կինը։ Հինգերորդ դարն էր, կարծես,

վերակենդանացած։ Հայ կինը պոկում էր իր վրայից թանգարին երերը եւ զնում հայրենիքի սուրբ սեղանի վրա։ Երկու ժամանակակից մէջ սեղանի վրա կազմւեց ամէն սեսակ ոսկեղէն զարդերի մի շքեղ բլուր։ Այդ ամէնը ամփոփւեց արկղի մէջ եւ կնքւեց։ Հանդանակութիւնը շարունակւեց զուրսն էլ երեք օր։ Հանդանակութեան մասնակցեցին 400 հոգի։

Մի քանի օր յետոյ, նոյեմբեր 28-ին, աւելի մեծ հանդիսաւորութեամբ բացւեց Անկախութեան փոխառութիւնը, որ հասարակութեան կողմից ընդունւեց աննկարագրելի խանդավառութեամբ։

Հանդէսից առաջ եկեղեցում տեղի ունեցաւ Հանդապետական մաղթանք, որից յետոյ ճառեր խօսեցին Սէրհատեան քահանան, Հ. Մ. Արգար կաթողիկ երէցը եւ զր. Յ. Ստեփանեանը, որոնք երեքն էլ ծանրացան Հայաստանի տնտեսական վերածնութեան վրա եւ սրտառուչ հրաւէր կարգացին, մասնակցելու հանդանակութեան։ Բուն հանդէսը տեղի ունեցաւ Հայ Ակումբում, որի գարգարւած պատերի վրա կախւած էին մակագրութիւններ՝ «Մասնակցեցէք ներքին փոխառութեան», «Ոսկու ֆոնդին», «Պահպանենք մեր անկախութիւնը», «Ամօթ գասալիքներին»։ Իշխանի ոգեւորւած ճառից յետոյ բացւեց փոխառութիւնը որ անցաւ փայլուն յաջողութեամբ։

Թէ փոխառութեան ու «Ոսկու ֆոնդ»-ի գործը կազմակերպելու եւ թէ, առհասարակ, գաղութին այցելութիւն տալու նպատակով, 1920 թ. դեկտ. 4-ին, Իշխանը պ. Աւ. Տէր-Գրիգորեանի հետ գուրս եկաւ շրջնու հայարնակ քաղաքները եւ նոյն օրը երեկոյեան հասաւ Ղազիին, ուր յաջորդ օրը նշանական էր փոխառութեան եւ «Ոսկու ֆոնդ»-ի հանդանակութեան բացման հանդէսը։ Հայաստանում կատարւած փոփոխութիւնների մասին արդէն լուր ունէր եւ խիստ տխուր էր, բայց հաւատում էր, թէ այդ ժամանակաւոր վիճակ է եւ շուտով անկախութիւնը կը վերականգնի։

Փոխառութեան եւ «Ոսկու ֆոնդ»-ի գործը Ղազիինում էլ անցաւ մէծ յաջողութեամբ։ Տեղի ունեցան սրտաշարժ տեսարաններ։ Անմուանալի է, մանաւանդ, Սալմաստի գաղթական պատաւ Դիւրարի պատկերը։ Մօտենալով Իշխանին՝ նա ասաց. «Պարուն երւանդ զատ չի մնացիր, թախւանք. կօ. մնացիր է էս նշանիս մատնիքը. պախիր էմ էր մինուճար տղիս խարսի խըմար. էն էլ Աստւած շատ տըսաւ. փա՛ռք ուրը, գաղթի ճամբախին սպանւաւ. զինուր էր. մկա էս հանդէսը իմ լածի խարնիսն է, ես էլ կօ էս մատնիքը տասէմ։ Աստւած դուշմանի ումըր քակի, տունը աւրի, հայի սուրը կտրուկ անի»։ Ու դողոջուն ձեռքով մատից հանելով մատանին՝ դըրեց սեղանի վրա։ Բոլորի աչքերը լեցւած էին արցունքներով. . .

Հաղուինից Իշխանը անցաւ Համագան։ Նոյն սպեսորութիւնը եւ այստեղ։ Իշխանին մեծ աջակցութիւն ցոյց տւեց յայտնի վաճառական Հայկակ Գուլյումձեանը, որ իր ընտանիքի իւրաքանչիւր անդամի անունով ստորագրեց 10,000 թուման փոխառութեան եւ 1000 թուման էլ դրեց Իշխանի անձնական տրամադրութեան տակ։

Համագանից Իշխանը ստիպւած եղաւ վերապառնալ Թեհրան։<sup>\*)</sup> Հայաստանի մասին աւելի եւ աւելի մտահոգիչ լուրեր էին համում։ Հաղորդում էին մեծ մասամբ Ատրպատականի առաջնորդ Ներսէս սրբազնը եւ Մուշեղ Տէր Զաքարեանը։ Այս վերջինը պարսից արտաքին գործոց նախարարութեան 20 հոկտեմբեր պաշտօնագրով ճանաչւած էր Հայաստանի Հանրապետութեան Թաւրիդի հիւպատոսական գործակալ։ Սեւրի գաշնազը ստորագրութեան լուրը առնելուց յետոյ, Իշխանը յաջորդաբար առաջարկեց ինձ, ապա Կենտրոնական դպրոցի տեսուչ կար. Պիօնեանին՝ ստանձնել Թաւրիդի հիւպատոսի պաշտօնը։ Մեր մերժումի վրա, պ. Զիրը. Բուղազեանի հետ համախորհուրդ նոյն առաջարկութիւնը արաւ պ. Մ. Տէր Զաքարեանին, որ Թաւրիդում ծանօթ անձնաւորութիւն էր, դիտէր եւրոպական լեզուներ եւ յարաբերութեան մէջ էր հիւպատոսական շրջանների հետ։ Պ. Զ. Բուղազեանի պնդումով նա ընդունեց իրեն յանձնւած պաշտօնը, բայց տեղեկութիւններ հաղորդելուց դատ ուրիշ որեւէ գործ չկատարեց։

Թեհրանում Իշխանը կացութիւնը գտաւ բոլորովին փոխւած։ Մի կողմից նրան սպասում էր խորհրդային կոմիսար Ա.սք. Մուաւեանի հեռագիրը իրեն եւ պարսիկ արտ. գործոց նախարարութեան, որով յայտնում էր Իշխանի պաշտօնանկութիւնը եւ կարգադրում էր դեսպանատան թղթերն ու գոյքերը յանձնել ուստական ներկայացուցութեան. այս հրահանդը Իշխանը թողեց անհետեւանք։ Միւս կողմից, Թաւրիդի գործակալի միջոցով, եկել էր հետեւեալ ծածկագիրը հեռագիրը. «Թեհրան, Հայաստանի դիւնագիտական ներկայացուցիչ Իշխան Արդութեանին. Պետական ծախսերը կրծատելու նըսպատակով նախարարների խորհուրդը որոշեց վերացնել մի շարք արտասահմանեան միսիաներ, որոնց շարքում նոյնպէս Թեհրանինը. ինդրում եմ միսիան Հաշւեյարդարի ենթարկել եւ ամբողջ կազմով վերադառնալ Երեւան, յանձնելով գործերը համապատասխան անձնաւորութեան տեղացիներից իրեւ պատւաւոր ներկայացուցչի, պայտ-

\*) Կառավարութեան իրահանգով Պարսկաստանում գործը լրացմելուց յետոյ, Իշխանը պիտի անցներ եւ իրաք ու Հնդկաստան փոխառութեան եւ «Ռոկո. Ֆուդ»ի համագանկութեան համար։

մանով որ պետական գանձարանից օժանդակութիւն չստանայ։ № 6747, նոյեմբեր 27. Արտաքին գործոց նախարար Ա. Վարշեան» :<sup>\*)</sup>

Այս կարգագրութիւնը արւած էր Հայաստանի խորհրդայնացումից առաջ. խորհրդայնացումը հիմնովին փոխում էր կացութիւնը։ Իշխանը որոշեց մնալ իր պաշտօնում եւ շարունակել դիւնագիտական գործունէութիւնը, ինչպէս արին եւ միւս ներկայացուցիչներն ու Փարիզի պատվիրակութիւնը։

Նա անհետեւանք թողեց և զեկուեմբերի վերջերը Երեւանից ըստացւած Հայաստանի Յեղկոմի նախագահ Ա. Կասեանի հետեւեալ հեռագրական հրահանդը. «Յեղափոխական Կոմիտէի որոշման համաձայն գաշնակցական կառավարութեան կողմից նշանակւած բոլոր ներկայացուցիչները կորցնում են իրենց լիազօրութիւնը եւ գործերը պէտք յանձնեն նոր ներկայացուցիչների»։ Այս հեռագրից յետոյ չ. չ. դեսպանութիւնը իր գիրքը ձեւակերպեց հետեւեալ որոշումով. «Ճեռնպահ մնալ ստեղծւած դրութեան հանդէպ եւ սպասել դէպքերի զարգացման, ընդունելով, որ սովետական բեժիմի մուտքը Հայաստանում արդիւնք է ստեղծւած տնտեսական եւ քաղաքական նոր պայմանների։ Մինչեւ այդ, սկսւած փոխառութեան եւ ոսկու ֆոնդի գործը շարունակել նախկին եռանդով եւ աշխատել վերջացնել մինչեւ վետարարի վերջը. մինչ այդ՝ դրութիւնը կը պարզուի եւ կորոշւի մեր գիրքը»։

Այս որոշումը, 1921 թ. յուն. 4-ին, Իշխանը ծածկագիր հեռագրով հաղորդեց Թաւրիդի գործակալ Մուշ. Տէր Զաքարեանին՝ պատւիրելով նախկին ձեւով շարունակել աշխատանքները։

Այս որոշման հետեւանքով, Իշխանը վերսկսեց իր ընդհատած ճանապարհորդութիւնը եւ մեկնեց դէպի Նոր-Ջուղա, ուր հասաւ շաբաթ օր, յուն. 14-ին։

Նոր-Ջուղան տօնական կերպարանք էր առել։ Վաղ առաւօտից

\*) Այս որոշումը կառավարութիւնը տվել էր ոչ միայն մի շարք ներկայացուցութիւնների, այլև Փարիզի պատվիրակութեան համար։ Պատճառը նախ գըրամական էր. քէ պատվիրակութիւնները եւ քէ ներկայացուցութիւնները իրենց շոայլ ծախսերով շատ ծանր էին նատում Հայաստանի վտիս գանձարանի վրա։ Բայց կար եւ բաղական պատճառ՝ լուրջ դժգոհութիւններ Փարիզի պատվիրակութեան եւ որոշ ներկայացուցիչների գործունէութեան դէմ։ Ենթադրում էր կառավարութեան հերարքմամբ կար եւ այն պարագան, որ Սեւրի դաշնագրի ստորագրութեամբ, նա իր պաշտօնը լրացրել էր եւ պիտի է փոխարինելու դեսպանով. կառավարութիւնը նրան արդէն կանչել էր Երեւան։

սկսած ժողովուրդը եռ ու զեռի մէջ էր։ Աղղային մարմիններ, ականաւոր անձինք կառքերով եւ ինքնաշարժերով շտապում էին դէպի վերին կայարանը։ Ամբողջ ճանապարհը բոհուած էր հոծ բազմութեամբ։ Նահանդապետը ներկայացուցիչի հետ ուղարկել էր իր շըքեղ փակ կառքը 50 ձիւորներով, ինչպէս նաեւ մի քանի «եղաքներ»։<sup>\*)</sup> Սպահանից Զուղա տանող ամբողջ ճանապարհի վրա կանդնեցւած էին պահակ ոստիկաններ՝ հսկելու համար կարգապահութեան վրա։

Ժամը 2-ին հասաւ Իշխանը եւ ընդունեց խանդավառ ցոյցերով։ Մի ժամ Բաղադա այգում հիւրասիրւելուց եւ հանդստանալուց յետոյ, նա, շրջապատւած կառավարական ներկայացուցիչներով ու պահակախումբով, աղղային մարմիններով ու ոգեւորւած բազմութեամբ, շարժւեց դէպի Սր. Ամենափրկիչ վանքը, որ շքեղ զարդարւած էր պարսկական եւ հայկական դրօշակներով, դորգերով ու կանաչով։ Վանքի գրան վրա խոշոր տառերով դրւած էր. «Բարի գալուստ անդրանիկ ներկայացուցչին»։


Երբ թափորը մօտեցաւ վանքին, զանդերը սկսան մեղմօրէն հընչել։ Թեմակալ առաջնորդ Սահակ Եպ. Արքատեանը, հեղեւորականութեան գլուխն անցած, հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տւեց Հայաստանի դեսպանին։ Երկու բարձրաստիճան անձնաւորութիւններ կողք կողքի, շրջապատւած անհաշիւ բազմութեամբ, բուռն ծափերի եւ «կեցցէ»-ների տարափի տակ, անցան վանքի բակը, ուր կարգով շարւած էին աղղային դպրոցի սանուհիներն ու հայ արիները եւ օդը թնդացնում էին աղղային երգով -

Մեր Հայրենիք, ազատ, անկախ...

Երգ ու «կեցցէ»-ներ, զանդերի դողանջ, բորբոքւած բազմութեան խանդավառ ծափեր ու բացականչութիւններ... Անմռուանալի վայրկեաններ։

Դեսպանը առաջնորդւեց տաճարը, ուր տեղի ունեցաւ հանդիսաւոր մաղթանը «վասն Հանրապետութեան Հայաստանի»։ Մաղթանքից յետոյ, վանքի նախագաւթում Իշխանը մի քանի խօսքով շնորհակալութիւն յայտնց կառավարութեան եւ հայ հասարակութեան, խրախուսանքի խօսք ուղղեց արիներին եւ «ուռա»-ներով ու «կեցցէ»-ներով առաջնորդւեց Առաջնորդարանի ընդարձակ դահլիճը, ուր թեմի կողմից առաջնորդ Սահակ Եպ. Արքատեանը, իսկ նոր-Զուղայի հասարակութեան կողմից Յար. Յորդանամնեանը բարի դա-

<sup>\*)</sup> Զարդարւած չիեր։



ԻՇԽԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՆՈՐ ԶՈՒԳԱ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

լուստի խօսք ուղղեցին Հայաստանի անդրանիկ գեսպանին : Իշխանը պատասխանեց զգացւած մի ճառով, որով ջատագովեց՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ նրա ծնունդ տւող հերոսներին :

Նոր-Ջուղայում իշխանը մնաց 17 օր : Այդ ամբողջ ժամանակը անցաւ այցելութիւններով ու փոխայցելութիւններով, հանդէսներով ի պատիւ գեսպանի կամ փոխառութեան ե«Ռակու Ֆոնդ»-ի հանդանակութեան համար : Նոր-Ջուղայի բնակչութեան համար տօնական օրեր էին դրանք, որոնց յիշատակը երբեք չի ջնջւի նրանց մտքից :

Յունաւար 17-ին (հին տոմարով 4-ին) տեղի ունեցաւ Ամանօրի հանդէսը, որ յետաձգւած էր ի պատիւ Հայաստանի ներկայացուցչի : Երկու փառահեղ դէմքեր՝ Առաջնորդն ու իշխանը գրաւել էին պատւառը աթոռներ : Հասարակութիւնը ապրեց անմահ յուղումի ու ողեւորութեան ժամեր :

Յուն. 21-ին, Ազգային Կենտրոնական Դպրոցի ընդարձակ սըրահում ի պատիւ Հայաստանի գեսպանի տեղի ունեցաւ գրական երեկոյթ ուր եւ բացւեց Անկախութեան Փոխառութիւնը : Ջուղայի հասարակութեան մէջ առաջ էր եկել մի մտայնութիւն, թէ քանի որ Հայաստանը դարձել է խորհրդային, փոխառութիւնն այլեւս աւելորդ է : Իր ճառում դիմաւորապէս այդ մտայնութեան վրա ծանրացաւ իշխանը եւ համոզեցուցիչ փաստերով ցոյց տւեց փոխառութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը :

Նոյն մտայնութեան դէմ բուռն կերպով արտայայտեց եւ պ. Արամ Երեմեանը, որ հայ ժողովրդի երկաթէ կամքի եւ հայ քաջարի բանակի գովքը անելով՝ յորդոր կարդաց ոյժ տալ փոխառութեան, որ աւելի հաստատուն հիմքերի վրա պիտի դնէ մեր պետութիւնը : Խօսքը ուղղելով Հայաստանի անկախութեան սպաննացող ուժերին՝ բոլշեվիկներին ու թուրքերին, նա բացականչեց . «Այսօր օրն է մեր հերոսութեան, մեր պատմութեան . այսօր է, որ ցոյց պէտք է տանք մեր նամարդ դաշիճներին մեր բազուկները, մեր երկաթէ կամքը, մեր մուրճերն ու հարևածները» :\*)

Երեք քառորդ ժամ տերող ընդմիջոցումի ժամանակ բացւեց փոխառութեան արձանագրութիւնը, որ տեղ 5000 դոլար\*\*) Ապահանդէսը շարունակեցաւ նոյն թափով : Երդ, արտասանութիւն, ճառ : Վերջին խօսքը ասաց առաջնորդ Սահակ Եպ. Արքատեանը :

\*) «Այգ», 1921 թ. № 5, ուր զետեղւած է հանդէսի նկարագրութիւնը իւսպագրւած նառերը :

\*\*) Փոխառութիւնը շարութակւեց եւ դուրսը :

Յունւ. 23-ին, ցերեկը, ի պատիւ Իշխանի հայ արիների մարդական հանդէս տեղի ունեցաւ կենտրոնական Դպրոցում։ Խոկ երեկոյեան, Առաջնորդարանում Նոր-Զուղայի հայութեան կողմից տըրւեց հանդիսաւոր հացկերոյթ, 90 հոգու մասնակցութեամբ եւ Յար. Յորդանանեանի սեղանալետութեամբ։

Ի պատիւ Իշխանի թէյասեղան տրւեց ազգային երկսեռ դպրոցների մանկավարժական խորհրդի, ինչպէս եւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կողմից։

Յունւ. 28-ին Կարմիր Խաչի Միութիւնը ի պատիւ Իշխանի ներկայացրեց «Անոյշ» օպերան։

Իշխանը ամբողջ ժամանակ չըջապատւած էր ընդհանուր սիրով ու գուրգուրանքով։ Զուղայի հայութիւնը մեծ ջերմութեամբ ընդունեց ու պահեց իր մէջ Հայաստանի գեսապանին. նոյնպիսի խանդավառութեամբ ու ցոյցերով էլ ճանապարհ գրեց։ Իշխանը մեկնեց՝ խոստանալով յաջորդ տարի օգոստոսին վերադառնալ եւ Այլատեան Արքեպահի հետ մեկնել Հնդկաստան նոյն առաքելութեամբ։

## XII

### ԳԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ.

Թէհրանում Իշխանին յուսահատական լուրեր էին սպասում։ Հայաստանից մոայլ տեղեկութիւններ էին հասնում և բոլշեւիկեան վայրագութիւններ, բանտարկութիւն ու գնդակահարութիւն, սով եւ յարածուն դժողոհութիւն ժողովրդի մէջ։ Պարսկահայութիւնը ենթարկւած բարոյալքման պղասոր ջրի մէջ ձուկ որսալու սովոր տարրերը սկսել էին գլուխ բարձրացնել. մինչեւ այդ դեղին գոյնով ծածկւածները կարմրում էին։ Անկայուն էր կացութիւնը եւ Պարսկաստանի կեանքում։ իրար յաջորդող կառավարութիւնները չէին կարողանում հաւասարակշուն պետութեան ներքին եւ արտաքին վիճակը։

Թէհրանում Իշխանը գտաւ ընդհանուր յուսալքում. փոխառութիւնը եւ «Ոսկու Ֆոնդ»-ի հանդանակութիւնը կանգ էին առել. կառավարութեան հետ սկսւած բանակցութիւնները ընդհատւել էին. այլ եւս խօսք չէր կարող լինել փոստ - հեռագրական կամ առեւտրի գաշնագրի մասին։ Դադարել էր եւ Թաւրիզի գործակալութեան՝ պ. Մ. Տէր-Զաքարեանի գործունէութիւնը։ Նրա բնակարանի վրա տնկւած երկար փայտի վրա երբեք չծածանեց հայկական եռագոյնը։ Ինքն էլ վախի մէջ էր, թէ շուտով ստիպւած պիտի լինի միւս հիւպատոսների հետ հեռանալ Թաւրիզից, որ գտնւում էր բոլշեւիկների



ԳԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՄԻՋ, ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՄԻՋ

սպառնալիքի տակ: Ատրապատականի առաջնորդաբանն էր միայն, Ներսէս Արքեպ. Մելիք Թանգեանը, որ լուր ու մտախոհ, բայց ան-նըկուն կամքով, շարունակում էր իր պատասխանատու աշխատան-քը եւ օրը օրին տեղեկացնում իշխանին ստացւող նորութիւնների մասին:

Մի օր էլ լուր հասաւ, թէ Հայաստանի ժողովուրդը ապստամ-րել է, թէ Խորհրդային իշխանութիւնը տապալւած է, թէ Երեւա-նում նորից վերահաստատւած է ազգային իշխանութիւնը:

Զարմանալի զուգագիտութեամբ, ճիշտ նոյն միջոցին պատմա-կան մեծ յեղաշրջում տեղի ունեցաւ եւ Պարսկաստանում. փետր. 22-ին, մի հզօր կամքի տէր գնդապետի վերջնագրով - որ յետոյ պիտի դառնար Պարսկաստանի վերանորոգիչ - Շահ Կաջարին ար-տակարդ լիազօրութիւններ տալով վարչապետ նշանակեց Սէյխը Զի-աէդղին Թարաթա Բային, և այդ օրւանից իրանը բոնեց վերածնու-թեան ճանապարհը:

Վարչապետ Սէյխը Զիաէդղին, փոխայցելութեան դալով Հա-յաստանի գեսպան իշխանին, ջերմ իննդակցութիւն արտայայտեց Հայաստանի ազատութեան առթիւ եւ պատրաստակամութիւն յայտ-նեց աջակցելու հայ ժողովրդին բոլշեկիների դէմ մզած պայքա-րում:

Հայաստանի գեսպանութեան եւ պարսիկ կառավարութեան մի-ջեւ վերականգնեցին պաշտօնական յարաբերութիւնները: Պարսիկ կառավարութիւնը ամէն կերպ ընդ առաջ էր գնում իշխանի դիմում-ներին եւ միշտ համակրական վերաբերում ցոյց տալիս Հայաստա-նին ու հայ ժողովուրդին:

Հայաստանից ստացւող լուրերը, սակայն, երկար ժամանակ ա-նորոշ էին: Միակ աղբիւրը՝ եւրոպական հեռագրական գործակա-լութիւններն ու պարսիկ կառավարութիւնը այնքան էլ շատ բան չգիտէին Հայաստանի ներքին վիճակի մասին: Կացութիւնը վերջ-նականապէս պարզեց միայն մարտ 13-ին, երբ ստացւեց Հայաս-տանի նոր կառավարութեան նախագահ Ս. Վրացեանի ընդարձակ հեռագիրը Զեչերինին եւ «բոլորին», բոլորին, բոլորին»: Այդ հե-ռագիրը ցրեց բոլոր կասկածներն ու տատանումները եւ վճռակա-նապէս հաստատեց, որ Հայաստանը նորից անկախ է:

Նորից բարձրացաւ պարսկահայ ժողովրդի տրամադրութիւնը: Խանդավառութիւնը մեծ էր ամէն տեղ: Հայ ժողովուրդը, կարծես, նոր կեանք, նոր հոգի ստացաւ: Թէ պատմական ինչ խոչոր դէպք էր Հայաստանի փետրւարեան ապստամբութիւնը, կարելի է դատել

Նրա գործած հղոր տպաւորութիւնից պարսկահայ ժողովրդի տրամադրութեան վրա:

Աւա՛ղ, սակայն, նոր ազատութիւնը երկար չտեւց: Երբ ես շաղկինի գաղթականութեան հետ, ամբողջ 26 օր ճանապարհորդելով յետոյ, մայիս 21-ին հասայ Թաւրիդ, կաթւածահարի պէս, մեծ վշտով ու դատնութեամբ գտայ այնտեղ Հայաստանից եկած տարադիրներին՝ նախարարներ, խորհրդարանի անդամներ, պաշտօնեաներ, դինուրներ: Պարզ էր՝ հայ ժողովուրդը չէր կարողացել դիմանալ արտաքին թշնամի ուժերի գրունին եւ տեղի էր տւել... Նրա վերջապահ մասերը դեռ պայքարում էին Լեռնահայաստանում, բայց սրանց պարտութիւնն էլ օրերի խնդիր էր...

Քիչ յետոյ, յունիսին, եկաւ նոր Հայաստանի հիւսատոս «ընկեր Երդնկեանը»: Անշուք եւ անփառունակ էր բարոյ մտաւ Թաւրիդ, բաց արաւ «հիւսատոսարանը» եւ Հայաստանի Հանրապետութեան հիւսատոսական գործակալ Մուշեղ Տէր-Զաքարեանից ստացաւ միայն մերկ մնացած դրօշակի փայտը, որի վրա պարզեց բոլշեւիկեան դրօշը:

Իսկ թեհրանում, դեռ բաւական երկար ազգային դրօշը ծածանում էր Հայաստանի գեսականատան գլխին: Իշխանը յուսահատ չէր: Ռուսաստանի ներքին խոռովութիւնները մի կողմից, Կովկասում տեղի ունեցող շարժումները, արտաքին աշխարհի թշնամական վերաբերումը բոլշեւիկներին, յոյն - տաճկական պատերազմը, դէպքերը Զանգեզուրում - այդ բոլորը նրա աչքին յուսատու երեւոյթներ էին: Նա հաւատում էր, թէ Հայաստանը նորից կը վերադրաւի եւ Հայկական Անկախութիւնը նորից կը վերականգնի: Այդպէս էր համոզւած պարսկահայ ժողովուրդը, որ սրտատրով լուրերի էր սպառում:

Իշխանի աշխատանքներն այդ օրերին կենտրոնացած էին գլխաւորապէս գաղթականների խնդրի վրա՝ Բասրայից սկսած մինչեւ Ատրպատական: Հոծ գաղթականութիւնը՝ զրկւած անդիմական նպաստից՝ անելանելի կացութեան մէջ էր: Ամէն կողմից օգնութեան սըրտակեղեք աղաղակներ էին հասնում: Իշխանը անվերջ բախում էր անդիմացիների, Ամերիկեան նպաստամտոյցի դռները, ինչպէս եւ հեռագրում էր Փարիզ, Պատուիրակութեան: Այդ դիմումները տւին որոշ արդիւնք, եւ գաղթականութեան վիճակը մասամբ մեղմացաւ:

1921 թ. ամառը, ըստ սովորութեան, գեսականատունը փոխարժեց ամառանոց, ուր Հայաստանի գրօշը շարունակում էր ծածանել գեսականատան վրա: Երբ աշնանը Իշխանը վերադրձաւ մայ-

րաքաղաք. այլեւս Սէյխը-Զիահէդդինին յաջորդել էր նոր վարչապետ Ղաւամ - Սալթանէն: Պարսիկ կառավարութիւնը շատ քաղաքավարի կերպով հասկացրեց, թէ դրօշակ պարզելն այլեւս անյարմար է, քանի որ Հայաստանը, դժբախտաբար, կորցրել է իր անկախութիւնը: Մի սարսափելի հարւած, որ իշխանին խոցեց մինչեւ հոգու խորը: Այդ օրը սուգի օր էր նրա համար: Եւ ոչ միայն նրա. ամբողջ պարսկահայութիւնը ողբում էր հայրենի անկախութեան կորուստը:


Այնուհետեւ համակ ցաւ ու տառապանք եղաւ իշխանի կեանքը: 1922 թ. Թեհրան եկաւ խորհրդային Հայաստանի «դիւանագիտական ներկայացուցիչ» Լեռոն Սարգսեանը, որ հէնց առաջին օրից կրքութշնամական դիրք բռնեց իշխանի հանգէպ: Իշխանը անտեսեց նրա պահանջները եւ ոչինչ չյանձնեց դեսպանատան գործերից: Սարգսեանը դիմեց պարսիկ արտաքին գործերի նախարարութեան եւ սրա միջնորդութեամբ մի քանի անկարեւոր թղթեր ստացաւ իշխանից:

Իշխանը շտապեց հաշւեյարդարի ենթարկել գեսպանութեան գործերը. «Ոսկու Ձոնդ»-ի եւ փոխառութեան գումարների մի մասը վերադրձեց ստանալ ուզող տէրերին, իսկ մնացածը ուղարկըւեց Հայաստան՝ սովետական նորունդ եւ դիւլացիներին լծկան բաժանելու համար: Հնարաւոր վախճանին հասցրեց նաեւ գաղթականների օգնութեան գործը: Ապա ընտանիքով մեկնեցաւ Եւրոպա:

Մեր սրբազն Հայրենիքի անկախութիւնը, Հանրապետութեան կառավարութիւնը, Հայաստանի անդրանիկ գեսպանը Պարսկաստանում մի - մի փայլող, չողջողուն աստղ էին հայ ժողովրդի դարերով տառապած կեանքի մոայլ երկնակամարի վրա: Այդ աստղերը երեւացին, բոցավառուեցին ու կարճատեւ փայլից յետոյ նորից անհետացան: Մենք համոզաւ ենք, սակայն, որ նրանք նորից պիտի երեւան աւելի տեւական եւ պայծառ լոյսով լուսաւորելու համար մեր հայրենի երկնակամարը: Ներկայ տողերը ազօտ արձագանքն են այն փայլուն ու խանդակառ, աւա՛ղ, այսօր այլեւս երազ դարձած օրերի, որով մի պահ ասլրեց ու ոգեւորւեց պարսկահայ ժողովուրդը:

Թաւրիդ.

(Վերը)



## ՀԱՅԱՍՏԱՆԻ

# ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ

8 օգոստոս, հինգշաբթի, երեկոյեան  
Նախագահ՝ Աւ. Սահակեան

Ներքին գործոց նախարար Արամ - Տալիս է համառօտ զեկուցում պարենաւորման եւ գաղթականական գործերի մասին։ Ապա պատասխանեց սոց-յեղափոխական Փրակցիայի հարցապնդումին չորս թուրք գիւղերի ցանքերը չորս անձնաւորութեանց տրւելու մասին։ Նախարարն ասաց, թէ այդ խնդիրը պարզելու համար կարեւոր է ի նկատի ունենալ այն ժամանակը, երբ տեղի ունեցաւ պայմանագրութիւնը։ Թուրքական այդ գիւղերի բերքը բրինձ է, որ աճում է բացառիկ պայմաններում։ Եթէ ուշացնէինք այդ մարդկանց հետ պայման կապել, բրինձի ամբողջ բերքը պիտի փչանար եւ մէր երկիրը պիտի զրկւէր նրանից։ Գիւղացիները՝ այդ պայմանը կնքելուց յետոյ միայն դիմել են, որ այդ բերքը իրենց տրւի։

Նախարարի բացատրութիւններից յետոյ, տեղի ունեցան բուռն եւ երկարատեւ վիճաբանութիւններ եւ ի վերջոյ Խորհուրդը ընդունեց հետեւալ բանաձեւը։

Լսելով հարցապնդումը և կառավարութեան բացատրութիւնները՝ Խորհուրդը անցնում է հերթական հարցերին։

Այնուհետեւ Փինանսների նախարարը առաջարկեց առ հաշիւ 5 միլիոն ռուբլի յատկացնել պարենաւորման (2 միլիոն), գաղթականների (1 միլիոն), զինուրական վերակազմութեան (1 միլիոն) եւ այլ անյետաձգելի կարիքների համար, մինչեւ որ կազմւի պետական եւ եւմուտքը։ Վիճարանութիւններից յետոյ, Խորհուրդը որոշեց կատարել նախարարի խնդիրը։

«Հորիզոն», 23 օգ., 7 սեպտ.

ՎԵՑԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ

10 օգոստոս, շաբաթ, երեկո ժամը 7-ին  
Նախագահ՝ Աւ. Սահակեան

Խորհուրդը նախ զբաղւում է սպայ Վարդան Առաքելեանի հետեւալ խնդրով - Յունիսի 6-ին Սարտարապատում տեղի ունեցող կոփեների ժամանակ, երբ յայտնի են դատանում Բաթումի դաշնագրի ծանր պայմանները, յուղած ժողովուրդը ցոյցի ժողով է կազմում Ազգային Խորհրդի առաջ եւ պորուչիկ Վարդան Առաքելեանը գրդընել է ժողովրդին իշխանութեան կարգադրութեան դէմ յորդորելով, շարունակել պատերազմը։ Ժողովը ցըւել է ոստիկանական ուժով, իսկ սպայ Առաքելեանը հետեւալ օր զինուրական դատարանի կողմից դատավարութեալ է Յ տարւայ բանտարկութեան եւ որոշ իրաւունքների զրկման։ Այժմ նա խնդրում է Հայաստանի Խորհրդին՝ ներել։

Գործի մասին զեկուցում է բերում արդարագատութեան նախարար Գ. Պետրոսեանը, առաջարկում է ներել Առաքելեանին, որովհետեւ նա նպատակ չէ ունեցլ տապալել կառավարութիւնը, այլ եր հայրենասիրական պարտքն է կատարել։

Վիճարանութիւններից յետոյ, Խորհուրդը 21 ձայնով որոշեց ներել սպայ Վարդան Առաքելեանին եւ վերականգնել նրա բոլոր իրաւունքները։

Ապա Խորհուրդը, ըստ աւագների խորհրդի առաջարկութեան, ընտրեց տեղական վարչութիւնների եւ ինքնավարութիւնների, գլուրցական, պարենաւորման, գաղթականական, բժշկա-առողջապահական, հողային եւ աշխատանքի յանձնաժողովները։ Բոլոր յանձնաժողովների մէջ ընտրեցին երեքական հոգի գաշնակցական եւ մէկական հոգի միւս Փրակցիայներից։

Նախագահը յայտարարում է, որ կառավարութեան կողմից երկու օրինադիմ է ներկայացւած Խորհրդին՝ մէկը պետական հսկողութեան, իսկ միւսը պետական ծառայողներին միանւագ նպաստ տալու մասին։ Օրինագծերը յանձնեւում է համապատասխան յանձնաժողովների նախանական քննութեան։

Ի վերջոյ, հաստատեց Խոր. ներքին կանոնագիրը, որին իրեւ հիմք ընդունել էր Անդրկով։ Այսիմ նակազը։ Առանձին - առանձին կարգացւեցին եւ քննութեան առնեցին միայն այն յօդւածները, որոնք փախւած էին յանձնաժողովում կամ ընդունւած էին ոչ միայնութեամբ։

«Հորիզոն», 23 օգ., 7 սեպտ.

## ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ

15 օգոստոս, հինգշաբթի, երեկոյեան

Նախ խօսք եղաւ կանոնաւոր արձանադրութիւններ պահելու մասին եւ միաձայնութեամբ որոշեց, որ արձանադրութիւնները կատարին անւանական, մանրամասն, նախադահութեան վաւերացումով՝ հնարաւորութիւն տալով իւրաքանչիւր պատգամաւորի, որ իր ասածը ստուգի կամ ուղղումներ մտցի:

Այսուհետեւ քննութեան առնեցին օրակարգի հետեւեալ երեք խոչերները. ա) Պետական վերհսկողութեան հարց, թ) Մանդատների ստուգում, գ) Պետական ծառայողներին նպաստ տալու խնդիր:

Սիր. Տիգրանեան. Յանձնախմբի կողմից զեկուցանում է պետական վերհսկողութեան մասին: Հարցը գրւած է ֆինանսների նախարար Խ. Կարճիկեանի կողմից: Տիգրանեանը առաջարկում է՝ քանի որ Երեւանում համապատասխան ձեռնհասութիւն ունեցող մէկը չկայ, թիվմիսի Պետական կոնտրոլի պալատից հրաւիրել մի մասնագէտ:

Պատգամաւորներից մէկը հակածառեց այս առաջարկին եւ պլնդեց, որ տեղական ուժերն էլ բաւական են:

Խորհրդարանը միաձայնութեամբ որոշեց, որ պետական հսկողութիւնը ենթակայ լինի Խորհրդին եւ կառավարութիւնից որեւէ կախում չունենայ: Ապա արտօնեց յանձնաժողովին, որ գրսից հրաւիրէ յատուկ մասնագէտ օրինագիծը մշակելու համար:

Սիր. Տէր-Մարտիրոսեան. Մանդատային յանձնաժողովի կողմից զեկուցանում է, որ բոլոր պատգամաւորների լիազորութիւնները հաստատւած են օրինաւոր վաւերաթղթերով՝ տրւած կուսակցութիւնների համապատասխան մարմինների կողմից: Թուրք եւ ուստի պատգամաւորները լիազորագրիր ունեն իրենց Ազգային Խորհրդիներից, իսկ եղիդի պատգամաւորը՝ եղիդի ազգապետից:

Առանց վիճաբանութեան հաստատում է Խորհրդի կազմը:

Պետական ծառայողներին նպաստ տալու խնդիրը առաջ բերեց տաք վիճաբանութիւններ: Ճառախօսներից շատերը գտնում էին, որ անհնարին է վճռել այսպիսի մի խնդիր. առանց ձեռքի տակ ունենալու մանրամասն տւեալներ այն մասին, թէ ո՞ւմ պէտք է համարել պետական ծառայող, ի՞նչ թիւ են ներկայացնում նրանք եւ ի՞նչ չափի է համելու նպաստի գումարը: Վճռեց օրինագիծը վերաբարձրնել կառավարութեան՝ մանրամասն վերամշակութեան համար:

«Հորիզոն», 8 սեպտ.

## ՈՒԹԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ

21 օգոստոս, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 8

Նախագահ Ա. Սահակեան. Կարդում է հրաժարւած եւ արձակուրդ ստացած պատգամաւորների ցուցակը, ապա առաջադրում է օրակարգի հետեւեալ հարցերը. —

ա) Բժշկա-առաջապահական յանձնաժողովի զեկուցումը քուրացի դէմ կուելու միջոցների մասին.

բ) Դիմաթափութեան խնդիր.

գ) Մահմեդական Փրակցիայի հարցապնդում:

Բժշկա-առողջապահական յանձնաժողովի կողմից թ. Յ. Տէր-Միքայէլեանը զեկուցանում է քուրացի դէմ կուելուն միջոցների մասին: Զեկուցաբերի կարծիքով անհրաժեշտ է ստեղծել մի արտակարգ յանձնաժողով իշխանութիւնից անկախ եւ յատուկ լիազօրութիւննրով, համաձարակի դէմ կուելու համար:

Ներքին գործոց նախարար Արամ Մանուկեան հակառակ է. արդյուն մըցում է նկատում զինուրական եւ քաղաքացիական իշխանութիւնների միջև առողջապահական գործում եւ ահա դրա վրա գալու - աւելանալու է մի նոր մարմին: Նա ցանկանում է, որ լիազօրութիւն տրվի ներքին գործոց նախարարութեան կից եղող բժշկա-առողջապահական մարմնին. միաժամանակ առաջարկում է միացընել զինուրական եւ քաղաքացիական առողջապահական մարմինները բիւղջէի խնայողութեան եւ այլ պատճառների համար:

Ամբ. Խաչատրեան. Առաջարկում է, որ գործը կազմակերպի ներքին գործոց նախարարութեան կից յանձնաժողովը կարող է ծըրագիր մշակել եւ յանձնել նախարարութեան ի գործադրութիւն:

Գ. Ենգիբարեան. Առաջարկում է արտակարգ լիազօրութիւն տալ ներքին գործոց նախարարութեան կից գտնուող բժշկա-առողջապահական մարմնին, Խորհրդի բժիշկներից էլ կազմել մի հսկող մարմին, ստեղծել նոյնպէս թաղային հողաբարձուներ:

Արշ. Մելիքեան. Քննադատում է քաղաքային լիքնայլարութիւնն ու կառավարութիւնը, որոնք ոչինչ չեն արել. թէ եւ քուրացի տարածման համար հող կար, բայց արգելիչ միջոցներ բոլորովին ձեռք չեն առնել: Ստեղծւելիք յանձնաժողովը պէտք է անկախ լինի նախարարութիւնից եւ գործունէութիւնը պէտք է տարածէ նաեւ գաւառներում:

Հ. Ազատեան. Համաձայն չէ յատուկ լիազօրութիւններով մարմին ստեղծելուն. գործը պէտք է տանի կառավարութիւնը ժողովը դիմումով օժանդակութեամբ:

Ստ. Մամիկոնեան.՝ Հիմնական դարմանը գտնում է զաղթականներին իրենց տեղերը վերաբարձնելուն մէջ եւ առաջարկում է, որ կառավարութիւնն աշխատի արագացնել տաճիկ կառավարութեան հետ այդ առթիւ ունեցած բանակցութիւնների ընթացքը։ Ապա գտնելով, որ ներքին գործոց նախարարը շատ ծանրաբեռնաւած է, առաջարկում է նոր մարդկանցից մի արտակարդ մարմին ստեղծել առ առաւելն երեք հոգուց բաղկացած, եթէ մի լիազօրի յանձնումը յարմար չէ։

Բժ. Գր. Տէր-Յակոբեան.՝ Անհրաժեշտ է գտնում յանձնախմբի կազմութիւնը եւ առաջարկում է, որ այդ յանձնախումբը ընտրի Խորհրդի յանձնաժողովից։

Բժ. Տէր-Միքայէլեան (զեկուցաբեր)։— Առաջարկում է, որ առաջարդ լիազօրութիւններով օժտւած յանձնաժողովը լինի երեք հոգուց։ Նրան պէտք է տալ դիկտատորական իրաւունքներ՝ պատժելու եւ ամէն կարգի կարգադրութիւններ անելու համար։ Վտանդը մէծ է եւ մտածելու ժամանակ չէ այլեւ։

Ներքին գործոց նախարար Արամը կարդում է օրինագծի յօդւածները եւ առաջարկում է մի կարդ փոփոխութիւններ մացնել։

Դ. Զուբեան.՝ Գտնելով, որ ցայժմ եղած մարմինները ոչինչ չեն արել, անհրաժեշտ է համարում, որ Խորհրդի բժշկա-առողջապահական մարմինը իր միջից ստեղծի մի նոր մարմին։

Սիր. Տէր-Մարտիրոսեան.՝ Առաջարկում է, որ ծախսելիք գումարները նախորոշւին մանրամասն գումարներով։

Ապա զանազան թերու գէմ կարծիքներից եւ քեշարկութեան անյաջող փորձերից յետոյ, հարցը թողնում է կառավարութեան, որպէսզի նա իր կողմից մի նոր օրինագծի բերի Խորհրդին։

«Հորիզոն», 31 օգ.

### ԻՆՍԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ

27 օգոստոս, Երեքշաբթի, Երեկոյեան

Նախադաշտ Աւ. Սահակեան

Օրակարդ - ա) Մասնաւոր զէնքերի գրաւման աղջայնացում։  
բ) Ֆինանսական յանձնաժողովի զեկեցումը պատգամաւորների օրապահիկի մասին. գ) Յանձնաժողովների զեկուցումները. դ) Հնթացիկ լսնդիրներ։

Սիր. Տիգրանեան (Դաշնակց.)։— Զեկուցանում է զինաթափութեան հարցի մասին։ Քանի որ օրինագծի մասին անցեալ նիստում

ընդհանուր գծերով արդէն խօսել է, անհրաժեշտ է կէտ առ կէտ կարդալ օրինագիծը եւ քեշարկել։

Հ. Ազատեան (Սոց.-Դեմ.)։— Առաջարկում է օրինագիծը նորէն ընդհանուր քննութեան ենթարկել, որովհետեւ ֆրակցիաների մէջ խնդրի մասին կայ սկզբունքային տարբեր վերաբերմունք։

Թ. Աւդալբէկեան (Սոց.-Դեմ.)։— Իր ճառը սկսում է հետեւեալ խօսքերով. «Սա երկրորդ օրն է Հայաստանի Հանրապետութեան մէջ, որ պատմական նշանակութիւն ունի։ Առաջինը կառավարութեան վատահութիւն տալու հարցն էր, իսկ երկրորդը ժողովրդին զինաթափի անելու խնդիրն է, որը հաւասարազօր է ժողովրդին վըստահութիւն տալու խնդրին։

Անցեալ նիստին ներքին գործերի նախարարը զինաթափման հարցը պատճառաբանում էր երկու հիմնական խնդիրներով. առաջինը՝ որ ոչ մի իշխանութիւն չի կարելի հաստատել մեր երկրում, որովհետեւ կառավարութեան կարգադրութիւնները չի կատարում ժողովուրդը, իսկ հարկադրանքի դէպքում նա զէնքով դիմադրում է, եւ երկրորդ՝ ժողովուրդը անզօր է որպէս մի զինտրական ոյժ։

Աւդալբէկեանը համաձայն չէ նախարարի այն կարծիքին, թէ ազգաբնակութեան զինւելլ մեծապէս նպաստում է երկրում անիշխանութեան տարածման։ Օրինակ է բերում մի շարք երկրներ, ի միջի այլոց եւ Պարսկաստանը, որտեղ չնայած որ ժողովուրդը զինւած է, այնուամենայնիւ օրինակելի կարգ է տիրում։ Օրինակ է բերում նաև կանոնաւոր զօրքից։ Պատգամաւորը հարցնում է, թէ՝ զօրքն էլ է զինւած, բայց ինչո՞ւ կարգապահ է։ Երկրում անիշխանութիւն լինելու պատճառները իշխանութեան ապարատի թուլութեան եւ նոյնիսկ բացակայութեան մէջ է։ Պատգամաւորը օրինակ է բերում նախկին ազգային խորհուրդների եւ գիւղական կոմիսարների ապիկար գործունէութիւնը՝ լի զեղծումներով ու խարէբայութեամբ։ Զնայած որ մեր երկրի սահմանները այսքան փոքր են, կառավարութեան կարգադրութիւնները դաւառ համելու համար ամիսներ է տեսում – ընդհանուր յարգանք չկայ սկաշտանեաների մէջ։

Ահա մի շարք պատճառներ, որոնք առիթ են եղել ժողովրդի անվատահութեան դէպի մեր կառավարութիւնը եւ որոնք բնազդօրէն հարկադրել են ազգաբնակութեան զինքի ուժով պաշտպանել իր քաղաքացիական եւ անհատական իրաւունքները։

Իր առաջարկը Աւդալբէկեանը հետեւեալ կերպով է ձեւակերպում. նախ պէտք է ուժեղ իշխանութիւն ստեղծել, օրինակ, գաւառական գործը օրինաւորել, ուժեղ միլիցիա կազմակերպել եւ այլն եւ այս բոլորից յետոյ միայն անցնել զինաթափման խնդրին։

իսկ մինչ այդ ժողովուրդը պէտք է զինւած մնայ:

Անցնելով երկրորդ կէտին, որ զինւած ժողովուրդը անզօր է որպէս զինւորական ոյժ, Աւգալրէկեանը հարցնում է, թէ՝ մենք ունի՞նք կանոնաւոր զօրք, որպէսպէս ժողովուրդի զինւածութիւնը չընդունենք: Եւ բերում է նոր-Բայալզէդի, Սուրմալուի եւ Սարտարապատի օրինակները, որտեղ, նրա կարծիքով, ժողովուրդը ուժեղ դիմադրութիւն է ցոյց տւել թշնամում:

Հուետորը շեշտում է մեր քաղաքական կացութեան անկայունութեան վրա եւ պնդում է, թէ չպէտք է արգելել, որ ժողովուրդը զինւած մնայ:

Ստ. Մալխասեան (Ժողովրդ.) - Զինւած ժողովուրդը մեր հասկացողութեամբ նշանակում է անիշխանութիւն: Այստեղ, որտեղ կառավարութիւնը թոյլ է, ժողովուրդն ինքնապաշտպանութեան բնազդով ասարւած՝ ստիպւած է լինում զինւել: Եւ ընդհակառակը, եթէ կառավարութիւնն ուժեղ է, ժողովուրդը զինաթափւում է: Անցնելով անիշխանութեան հարցին, Մալխասեանը նկատում է, որ ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում, յեղափոխութեան սկզբից մինչեւ այսօր, անիշխանութիւն է տիրում: Եթէ կառավարութիւնը ցանկանում է մեր երկրում ամուր իշխանութիւն ստեղծել, պէտք է ազատւի ամէն քայլափոխում հանդիպող բազմիշխանութիւնից: Երբ կառավարութեան առաջ կայ զինւած ժողովուրդ, մեր երկրում երբեք իշխանութիւն չի ստեղծւի: Բերում է մեր հարեւան հանրապետութիւնների օրինակը. Վրաստանում եւ Ասրբէջանում արդէն ժողովրդին զինաթափ են արել:

Ի վերջոյ, պատգամ. Մալխասեանը յայտնում է, որ Հայ Ժողովրդական կուսակցութիւնը սկզբունքով համաձայն է ժողովրդի զինաթափման, սակայն շեշտում է, որ գործնական քայլերի ժամանակ կը լինեն մի շարք խոչնպատճեր. նախ՝ զինաթափման ժամանակ իրենց զէնքերը կը յանձնի միայն խաղաղ ազգարնակութիւնը, իսկ ոճապործ տարրը ամէն կերպ կաշխատի թագցնել, որով եւ աւելի վնաս կը հասնի խաղաղ բնակիչներին. Երկրորդ՝ որ փոքր ազգերը զինաթափմանը յետին մտքով կը հասկանան: Այսպիսով, Ժողովրդական կուսակցութիւնը սկզբունքով համաձայնում է ժողովրդի զինաթափման խնդրին, եթէ կառավարութիւնը նախ կապազովէ ժողովրդի քաղաքացիական իրաւունքներն ու դոյքը, երկրորդ՝ առանց խարութեան բոլորի վերաբերեալ կը լինի զինաթափութիւնը եւ երրորդ, որ սահմանագլուխներում աստիճանաբար պէտք է գըրաւաւեն զէնքերը, ի նկատի ունենալով, որ այստեղ աւելի վտանգաւոր է:

Գ. Ենգիբարեան (Ժողովրդ.) - Առարկում է պատգ. Ա. Մելքոնին եւ Թ. Աւգալրէկեանին: Նա միանդամայն զարմանում է Մելքոնի այն յայտարարութեան վրա, թէ յեղափոխական ժողովուրդը չպէտք է զինաթափ անել: Հակառակ Մելքոնին, նա շեշտում է, որ երբեմն հասարակական երեւոյթները հիւանդագին են լինում. բերում է վկայութիւն մի քանի զիտնականների գրւածքներից (Միխայլովսկի եւայլն): Զարմանում է նոյնպէս, որ Մելքոնը սոցիալիստ լինելով հանդերձ՝ այս խնդրում կանգնած է մասնաւոր սեփականութեան պաշտպանութեան տեսակէտի վրա, այն էլ զէնքի հարցում: Անցնելով Աւգալրէկեանի հիմունքներին՝ Ենդիրաբեանը դտնում է շատ խախուտ: Եւ, ի վերջոյ, համաձայնում է Հ. Ժող. Կուսակցութեան տեսակէտներին:

Ներքին Գործերի Նախարար Արամ. Յայտնում է դիտողութիւններ ընդհանուր հիմունքների մասին: Նա նկատում է, որ օրինագըծի գէմ գլխաւոր առարկութիւն անողը սոց.-դեմ. Փրակցիան է, որը յենում է իր թւած փաստերի միայն երկսի վրա, չնայած որ ինքը բերել է մի շարք փաստեր: Եւ իր հակածառութիւններով սոց.-դեմ. Փրակցիան փոխանակ հերթելու իր առաջ բերած հիմունքները, ապացուցեց, որ աւելի եւս անհրաժեշտ է դիմել զինաթափութեան: Պատգ. Աւգալրէկեանի այն հարցին, թէ եթէ զինւած ժողովուրդը չարիք է, ապա ինչո՞ւ զինւած զօրքը չարիք չէ, նախարարը պատասխանում է, թէ՝ նախ զօրքը ենթարկւում է ուժեղ կարգապահութեան, երկրորդ՝ նա ծառայում է հանուրի, հասարակական նպատակներին, իսկ ժողովրդի մէջ այդ երկուսն էլ բացակայում է: Նախարարը նկատում է, թէ մենք երբեք չենք կարող հետեւել Պարսկաստանի օրինակին, որովհետեւ այստեղ ժողովուրդը կարգապահ է: Այն մեղադրանքին, թէ պաշտօնական թղթերն ամիսների ընթացքում են զաւառ համում, նախարարը պատասխանում է, թէ հազիւմիս է որ կառավարութիւնը գործի է անցել, ուրեմն, անհիմն է մեղադրել կառավարութեան նման երեւոյթների համար: Այն գիտողութեան առթիւ, թէ Բայազէդը, Սուրմալուն եւ Սարդարապատը ժողովուրդը ինքն է պաշտպանել, փաստերով ապացուցանում է, որ հակառակն է տեղի ունեցել: Ի վերջոյ, նախարարը դիտում է, որ սոց.-դեմ. Փրակցիան մի անդամ բնդ միշտ խաչ է դրել այս կառավարութեան վրա եւ գտնում է կառավարութիւնը անընդունակ, անդործունեայ: Եւ ասում է, եթէ դուք շահագրգուած էք այս երկրի կարգի ու ամուր իշխանութեան ստեղծելու մէջ, պարտաւոր էք աջակցել կառավարութեան: Խաղաղ, աւազակային հակումներ չունեցող ժողովրդի զինաթափ պատգի չարիք չէ, բայց բարիք էլ չէ,

որովհետեւ միեւնոյնն է՝ նա չի կարող պաշտպանուել աւազակներից : Օրինադիմը Խորհրդին ներկայացնելով՝ մենք տարւած ենք երկրում իշխանութիւն ստեղծելու, անարխիան ոչնչացնելու եւ աւազակների դէմ կուելու բուռն ցանկութեամբ : Ինչ վերաբերում է մանր ազգերին, երբ նրանք տեսնեն, որ զինաթափութիւնը կատարւում է անխլտիր ամենքի վերաբերմամբ, ոչինչ դէմ չեն ունենայ :

Հ. Ազատեան .— Ոչինչ չունի այն մասին, որ կառավարութիւնը կուի աւազակների դէմ, սակայն դրանից չի հետեւում, թէ պէտք է ժողովրդին զինաթափ անել : Պատգամաւորը դիտողութիւն է անում դաշնակցական հատւածի դէմ, որը տարիներ շարունակ յորդորել է ժողովրդին զինուել, իսկ այժմ համաձայնում է զինաթափ անել : Նըկատում է, որ արտաքին վտանգը դեռ չի վերացել, Հայաստանի ներսն էլ լի է աւազակներով, որոնք չեն պատժեւում : Միակ եւը այն է, որ ժողովուրդն ինքը պաշտպանէ իր քաղաքացիական իրաւունքները : Ապա քննադատում է կառավարութեան, որ չի զրադում ընկերային հարցերով, ինչպէս տեղական ինքնավարութիւնների, հողային, պարենաւորման եւ համաձարակի խնդիրները : Նրա կարծիքով անիշխանութեան վերջ տալ կարելի է ոչ թէ զէնքի ուժով, այլ ընկերային հարցերի լուծումով : Պատգ . Ենդիբարեանի այն նկատողութեան, թէ ընկերվարականները ձգտում են ամեն բանի համայնացման, Ազատեանը պատասխանում է, թէ ընկերվարականները ձգտում են միայն աշխատանքի եւ արդիւնաբերութեան միջոցների համայնացման եւ զէնքի պետականացման կողմնակից չեն :

Թ. Աւդալըկեան .— Նորից առարկում է ներքին գործոց նախարարին եւ աշխատում է ցոյց տալ ժողովրդի զինուրական ուժի արժեքը :

Ա. Մելիքեան (Բոլցելիկ) .— Հակածառում է պատգ . Ենդիբարեանին : Զէնքը չի յանցանք բերողը, ասում է նա, այլ ստեղծւած կացութիւնն ու տրամադրութիւնը : Ներքին գործոց նախարարի այն նկատողութիւնը, թէ սոց-գենմոկրատները խաչ են դրել կառավարութեան վրա, իրականութեան չի համապատասխանում : Մենք այն կարծիքի ենք, որ այսպիսի անկայուն պարմաններում հարկաւոր է աջակցել կառավարութեան : Ապացոյց, թէ կուղ այն, որ այս օրէնքի անցնելուց յետոյ մեր կուսակցութիւնը խոչընդուռ չի լինի նրան : Մելիքեանը զարմանք է յայտնում, թէ ինչո՞ւ Խորհրդի ամենախոչոր հատւածը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ թուրքերը դրած ինդը մասին չեն արտայատուում : Նա դիտում է, որ եթէ երբեւիցէ յեղափոխութիւնից յետոյ կեանքում առաջանում են բացասական երե-

ոյթներ, դրա պատճառը ոչ թէ յեղափոխութիւնն է, այլ ժողովրդի մութիւնութեանը՝ տականքները : Ինքը՝ Մելիքեանը կողմնակից չէ ժողովրդի զինաթափութեան, բայց պէտք է արդեւել ժողովրդին զէնքը լրել . զէնքը թող մնայ տանը ինքնապաշտպանութեան համար :

Ս. Թորոսեան (Դաշնակց.) .— Նկատում է, թէ Հայաստանում նկատող անիշխանութիւնը առաջացել է որոշ պատմական եւ հոգեբանական պատճառներից : Դաշնակցութեան հատւածը այն կարծիքի է, որ զէնքը դրաւելով անիշխանութիւնը հիմքից չի վերանայ, այլ կը վերանայ միայն մի մասը : Եթէ մեր երկրում ժողովրդական մի նոր յեղափոխութիւն առաջ գայ, կառավարութիւնը դիմադրութիւն ցոյց չի տայ, քանի որ իշխանութիւնը ինքն էլ ծնւած է յեղափոխութիւնից : Մեղադրել կառավարութեան հակայեղափոխութեան մէջ անհեթեթութիւնն է : Զարմանալի է սոց-գենմոկրատների յամառութիւնը . երբ Դաշնակցութիւնը զինում էր ժողովրդին, սոց-գենմոկրատները միշտ հակառակ էին . հիմա Դաշնակցութիւնը ցանկանում է երկրում իշխանութիւնը հաստատելու համար զինաթափի անել ժողովրդին, սոց-գենմոկրատները հակառակն են պնդում : Այն հանգամանքը, որ մեր կուսակցութիւնը 30 տարի զէնք է քարոզել, իսկ հիմա ցանկանում է զինաթափ անել, երբեք զարմանալի չէ, որովհետեւ զանազան ժամանակներում եւ զանազան քաղաքական պարմաններում տարբեր հրամայական պահանջներ են առաջ գալիս : Ներկայումս խօսքը պետութեան կազմակերպման եւ կանոնաւոր գորք ունենալու մասին է : Բնականարար, զինաթափման օրէնքը կեանքում պէտք է իրագործի դանդաղ եւ աստիճանարար : Անտեղի է այն մեղադրանքը, թէ կառավարութիւնը հողային խնդիրներով չի սրացուում . նախ՝ Հայաստանի ներկայ առհմաններում խոչոր կարածատիրական հողեր չկան . երկրորդ՝ մեր սահմանները գեռուոր չեն : Եթէ Հայաստանում ստեղծւի բնականոն կեանք, Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ պէտք է առաջին հերթին իրագործի հողերի համարկանացմանը :

Նախագահը առաջարկում է անցնել օրինադիմի կէտ առ կէտ քրն-նութեան : 15 ձայնով 7-ի դէմ անցնում է կառավարութեան առաջարկը :

«Զանգ», 31 Օգոստ .



## ՏԻԿ. ԵՂԻՍԱԲԵԹ ԶՈՐԵԱՆ

Ժընեւի հայ գաղութը նախաձեռներ է տօնելու Տիկին Եղիսաբէթ Զօրեանի հանրային՝ մանկավարժական դուռը ունեցած 40 տմեայ յորելեանը։ Սրտանց ողջունում ենք այդ նախաձեռնութիւնը։ Տիկ. Զօրեանի տօնը մեղ համար թանդ է երկու տեսակէտից։ նախ որովհետեւ յորելեարը ինքնին աչքի ընկնող դէմք է։ Երկրորդ՝ նակեանքի ընկերն է մեր Մեծ Ռւսուցիչ եւ Առաջնորդ Ռոստոմի։ Տօնել Տիկ. Զօրեանի յորելեանը մեղ համար նշանակում է ո՛չ միայն երախտագիտութեան տուրք տալ Տիկնոջ հայ ժողովրդին մատուցած ծառայութեանց համար, այլեւ յարդանք արտայայտել Մեծ Յեղափոխականի յիշատակին։

Տիկին Եղիսաբէթը ծնւել է Շուշում 1874 թ. մայիս 5-ին։ Հայր՝ Ղարաբաղի նշանաւոր Միրզա - Ղահրամանի մրդի իսահակ Մելիք - Շահնաղարեանը - Սահակ աղան՝ պաշտօնաթող վոխ - զնդապետ էր որ իր սկզբնական կրթութիւնը ստացել էր Տաթեւի վանքում։ Ազատամիտ եւ ազգասէր մի մարդ, որ նոյն ողով էլ դաստիարակեց իր տղաներին եւ աղջիկներին։

Մինչեւ 12 տարեկան հասակը Տիկ. Եղիսաբէթը սովորեց Շուշու ուսուական գպրոցում, որ Հիմնւած էր աղնւական եւ հարուստ ընտանիքների զաւակների համար։ Ազա տեղափոխեց Թիֆլիս եւ մտաւ երկրորդ դիմնագիան։ Թիֆլիսում ապրում էր մօրաքոյլների մօտ, որոնք ամուսնացած էին ուսւու բարձրաստիճան պաշտօնեաների հետ։ Ընդունակ եւ լաւ սովորող աշակերտուհի էր։ 1893 թ. Գիմնադիան աւարտեց առաջին կարգի մրցանակով՝ ոսկի մետալով։

Աշակերտութեան շրջանում Տիկ. Եղիսաբէթը գտնուում էր մեծ մասամբ ուսուական շրջաններում։ Նրա մի մօրաքոյլը ամուսնացած էր Կովկասի Ռւսումնական շրջանի տեսուչ Շէնդէրի հետ։ Նրա աղջականների մէջ կային զինւորականներ եւ պաշտօնեայներ։ Երբեմն, երբ հնարաւոր էր լինում, աղջականներից գաղտնի յաճախում էր եւ հայկական շրջանակներ։ Օր. Եղիսաբէթը լինում էր եւ Քրիստուափորի ու Սիմոն Զաւարեանի խմբի ժողովներում։ Քրիստուափորն այդ ժամանակ մաթեմատիկայի դասեր էր տալիս նրա մօրաքրոջ որդիներին։ Օր. Եղիսաբէթի երկու եղբայրները Պետրովսկայա Ակադեմիայից ուսանողական ընկերներ էին Զաւարեանի եւ Ռոստոմի հետ



Տիկին Եղիսաբեթ Զօրեան

եւ նոյնպէս մասնակցում էին խմբական հաւաքոյթներին։ 1892 թւրին, այդպիսի հաւաքոյթներից մէկում, 19 ամեայ Եղիսարէթը Զաւարեանի մօտ հանդիսում է Ռոստոմին։ Ընկերները նրան կոչում էին «Քոթոթ»։ Համեստ, լռակեաց, նիհար ու գժգոյն, պերճանքից զուրկ՝ երիտասարդ Ռոստոմը հաճելի տպաւորութիւն չդործեց գեռատի աղջկան վրա։

Մի տարի յետոյ, 1894-ին, օր. Եղիսարէթը արդէն Ժընեւում է։ Այստեղ էր եւ Ռոստոմը, որ զբաղւած էր «Դրօշակ»-ով։ Նրան օդնում էին ուսանողներ Սիմոն Շինանը, Գ. Խաժակը, Յովնան Դաւթեանը, երբ լինում էր Ժընեւում, եւ ուրիշներ։ Ռոստոմը ապրում էր մի համեստ սենեւակում, որ մի ժամանակ եւ խմբագրատուն եւ գրաշարանոց էր։ Դաշնակցութիւնը միջոց չունէր, շատ չնչին գործար էր յատկացնում իր պաշտօնաթերթին, իսկ ուրիշ հասոյթներ չկային։

Ժընեւում օր. Եղիսարէթը մտնում է համալսարանի բնագիտական բաժինը։ Եղբայրը հետր մնում է 4 ամիս, ապա յանձնելով իր ընկեր Ռոստոմի խնամքին՝ վերադառնում է հայրենիք։ Այստեղ օր. Եղիսարէթը աւելի մօտից է ճանաչում Ռոստոմին, ծանօթանում է նրա ապրելակերպին, գաղափարներին, գործին եւ գեռ մի տարի չանցած, 1894-ին տեղի է ունենում նրանց նշանագրութիւնը, ներկայութեամբ Գ. Խաժակի եւ Սիմոն Շինանի։ Օր. Եղիսարէթը՝ ձեռքը «Դրօշակ»-ի վրա դրած երդւում է, որ երբեք, ոչ մի բանով չի խանդարի Ռոստոմին հասարակական – յեղափոխական գործունեութեան մէջ։

Ժընեւի նշանագրութիւնը, սակայն, բուռն դժգոհութիւն առաջ բերեց Եղիսարէթի ծնողների եւ ազգականների մէջ։ Ինչպէս, Մելիք – Շահնազարեան աղնւական ընտանիքի դաւակը դառնայ կին մի աղքատ ու տկլոր յեղափոխականի, գիւղացիական ստոր ծագում ունեցող մէկի, որ նոյնիսկ ասրելու իրաւունքից զրկւած է Ռուսաստանում։ Հակառակութիւնը իիստ վճռական էր, բայց օր. Եղիսարէթն էլ Մելիք – Շահնազարեան տոհմից էր։ Նրա կամքն էլ կամք էր։ Բախումը դարձաւ անխուսափելի։ Նրան զրկեցին օժիտից՝ Խանքենդի գիւղից եւ մերժեցին ճանաչել նրանց ամուսնութիւնը։

Ժընեւում օր. Եղիսարէթը մասնակցում է հասարակական կեանքին, Ռոստոմի հետ շարում է «Դրօշակ»-ը, յօդւածներ է գրում, առհասարակ օդնում է նրան։ Միւս կողմից, եռանդով հետեւում էր համալսարանական աշխատանքներին։ Շնորհիւ իր բացառիկ ընդունակութիւնների՝ շուտով աչքի ընկաւ ուսանողների մէջ։ Նրա ուսուցիչը, յայտնի գիտնական Կարլ Ֆոկուր, մէկից աւելի անդամներ

յորդորում էր նրան ձեռք քաշել նշանածից եւ նւիրւել գիտութեան, նոյնիսկ գիտական պաշտօն էր առաջարկում նրան իտալիայում, բայց այդ յորդորները մնացին անհետեւանք: Օր. Եղիսարէթը երեք եւ կէս տարում աւարտեց համալսարանական դասընթացքը եւ քիչ յետոյ վերադարձաւ Թիֆլիս, իր մօրաքոյրների մօտ: 1898 թ. սեպտ. 27-ին տեղի ունեցաւ նրա եւ Ռուսումի հարսանիքը: Պատկը կատարւեց Քամոյնց եկեղեցում, պալատի դիմաց: Խաչեղբայրներ էին նրա մօրաքոյր երկու որդիները՝ հեծելազօրի սպաներ: Սրանց ինչպէս եւ բարձրաստիճան անձանց ներկայութիւնը հարսանիքին տալիս էր առանձին բնոյթ. ոչ ոք չէր կարող ենթադրել, որ սա հարսանիքն է մի քաղաքական յանցաւորի, որին ոստիկանութիւնը փնտրում էր ամէն տեղ:

Եկեղեցուց հարսնելորները գնացին Յ. Քաջաղնունենց տունը, ուր տեղի ունեցաւ հարսանեկան հանդէսը: Ներկայ էին հարսի աղդականները, բարեկամները. ներկայ էր եւ դաշնակցական երիտասարդութիւնը՝ Քր. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Ս. Շինեան եւ ուրիշներ: Հարսանիքը անցաւ շատ ուրախ եւ ստացաւ մի տեսակ դաղակիարական հաւաքոյթի բնոյթ: Նոյն դիշերն իսկ, ոստիկանութեան հետապնդումների պատճառով, փեսան թողեց Թիֆլիսն ու հեռացաւ արտասահման, իսկ հարսը տեղափոխեց Բագու, ուր ապրում էր մասնաւոր դասերով եւ նաւթարուրդերի յատակագծերի գծագրութեամբ:

Միայն 1899 թիւ ամառը նորապսակ զոյթը գտաւ իրար: Տիկին Եղիսարէթը մեկնեց արտասահման: Ռուսումը նրան դիմաւորեց Ռուշուկ քաղաքում: Ապա հաստատեցին Ֆիլիպէում, ուր Տիկ. Եղիսարէթը հիմնեց մի մասնաւոր դպրոց, որիսաւորապէս գաղթական երեխանների համար: Դպրոցը նիւթական օժանդակութիւն էր ստանում Բագուից եւ դրւած էր մանկավարժական օրինակելի հիմքերի վրա: Դպրոցում դասաւանդում էր եւ Ռուսումը, իսկ յետոյ՝ նաեւ Կար. Պիոնեանը: Տիկ. Եղիսարէթին օդնում էին նրա 5 հասակաւոր աշակերտուհիները,\*) որոնց հետ նա պարապում էր առանձին՝ պատրաստելով դպրոցական ասպարէզի համար: Բնականաբար, դպրոցի հոգին ինքը Տիկ. Եղիսարէթն էր, որ պարապում էր ժամերից դուրս, երեկոները, դրազում էր նաեւ հասարակական դործունէութեամբ՝ դասախոսութիւններով, ծնողական ժողովներով եւայլն:

Դպրոցը հետզհետէ դարձացաւ, շրջապատեց հանրային համա-

\*) Տիկ. Սարենիկ Տէր-Դաւթեան, Տիկ. Պերճուիի Բարսեղեան եւ ուրիշներ:

կըրանքով եւ դարձաւ օրինակելի կրթական մի հաստատութիւն: Բայց կեանքի եւ աշխատանքի պայմանները շատ ծանր էին, աղորուստի միջոցները սահմանափակ: Ռուսումը զբաղւած էր կուսակցական գործերով: Յաճախ ճանապարհորդում էր: Դպրոցի եւ ընտանիքի ամբողջ հոգսը ընկած էր Տիկ. Եղիսարէթի ուսերին, որ երկորդ զաւակի ծննդաբերութեան վրա ծանր հիւանդացաւ և երեք տարւայ անդուլ աշխատանքից յետոյ, ստիպւած եղաւ թողնել սիրած գործն ու հեռանալ Կովկաս: Դպրոցը շարունակեց Կ. Պիոնեանը Տիկ. Եղիսարէթի աշակերտուհիների հետ միասին:

Ինչպէս հայ կեանքում ամէն գործ, Ֆիլիպէթ վարժարանն էլ, բնականաբար, ունէր հակառակորդներ: Մանաւանդ, խիստ թշնամաբար էին վերաբերում հնչակեանները, որոնք դպրոցի յաջողութիւնը նկատում էին իրենց մրցակից կուսակցութեան յաջողութեան նըշան: Երբ Տիկ. Եղիսարէթը հեռացաւ, հնչակեանները լուր տարածեցին, թէ նա մեռել է ճանապարհին, եւ Ֆիլիպէում այդ առջիւնոյնիսկ հոգեհանդիստ տեղի ունեցաւ:

Կովկասում այս անգամ տեղի ունեցաւ հաշտութիւն Տիկ. Եղիսարէթի եւ ծնողների միջնեւ: Վերջիններիս աշակցութեամբ նա անցաւ Զւեցերիա, ուր հիմնովին ասպարինած վերադարձաւ Թիֆլիս եւ ամբողջապէս նւիրւեց հասարակական - կրթական գործունէութեան: Միաժամանակ իր աշխատանքով պահում էր եւ Ռուսումի ընտանիքը:

Հակառակ որ շատ հրապուրիչ առաջարկներ էին անում ռուսական դպրոցներից, Թիֆլիսում Տիկ. Եղիսարէթը ուզեց հէնց սկզբուց պաշտօն ստանալ հայկական վարժարամններում: Այս վերջինները, սակայն, Դաշնակցութեան հակառակորդ հոգաբարձութիւններ ունէին, որոնք ամէն կերպ խոչընդուռ հանդիսացան, որ յայտնի դաշնակցականի կինը մտնի հայկական դպրոց: Այդ պատճառաւ նա ստիպւած եղաւ զասեր առնել «Վարժուհիների Ընկերութեան Ռուս Դպրոցում»: Եւ միայն 1905 թ., երբ Յովնանեան Դպրոցի հոգաբարձութիւնը փոխւեց, Տիկ. Եղիսարէթը հրաւիրւեց այնտեղ որպէս դասատու: Յետոյ, երբ Յովնանեանում նորից հոգաբարձուկան փոփոխութիւն տեղի ունեցաւ, անցաւ Գայլիանեան վարժարանը: Երկու դպրոցում էլ նա աւանդում էր բնական գիտութիւններ եւ շատ սիրւած էր աշակերտուհիների կողմից:

Դպրոցից դուրս Տիկ. Եղիսարէթը լայն մասնակցութիւն ունէր հասարակական կեանքում. Դասախոսում էր Զուրավլովի Տան Ժողովը վերական համալսարանում, գլխաւորապէս, բնական գիտութիւն-

ներից, առողջապահութիւնից եւ ապրանքագիտութիւնից, դասեր էր տալիս Բարեգործական Ընկերութեան արհեստանոց – դպրոցում, աշխատում էր կանանց շրջանում: Ընտրւեց Ներսիսեան Դպրոցի հոգաբարձական կազմի անդամ եւ գործօն մասնակցութիւն ունեցաւ դպրոցի ծրագրի մշակութեան մէջ:

Այս կենդանի եւ հերկեւ աշխատանքը տեւեց մինչեւ 1914 թ. ամառը, երբ Տիկին Զօրեանը մեկնեց Ժընեվ մի քիչ հանդըստանալու եւ համալսարանում գոկտորի քննութիւն տալու համար: Բայց վրա հասաւ պատերազմը. նա բոլորովին կտրւեց կովկասից եւ մնաց առանց նիւթական միջոցի: Եւ միայն չնորհիւ աշակցութեան Հ. Յ. Դաշնակցութեան, որ ստանձնեց նրա աղջկայ օր. Թագուշի կրթութեան ծախսը, կարողացաւ անցկացնել պատերազմի արհաւրախից տարիները եւ հետեւել համալսարանի աշխատանքներին եւ կրթութիւն տալ զաւակին: Վերջինս աւարտեց Գեղարվեստից Վարժարանը եւ այսօր չնորհալի նկարչութիւն է, իսկ ինքը լրացրեց համալսարանական աշխատանքները և ներկայացնելով “Recherches histologiques sur les genres Hyalinia et Zonites” ուսումնասիրութիւնը իրեւ աւարտական շարադրութիւն՝ 1920 թ. ստացաւ բնական գիտութեանց գոկտորի տիտղոս:

Հետզհետէ վրա հասած գերախոսութիւնները եւ Ռոստոմի մահը պատճառ գարձան, որ Տիկ. Զօրեանը այլեւս կովկաս չվերադառնայ: 1923 թ. նա պաշտօնի կոչւեց Քրաֆտ – Բոնարի անդուլ ջանքերի չնորհիւ ստեղծւած Հայկական Որրանոցում եւ 11 տարի շարունակ զբաղւեց որբերի դաստիարակութեան գործով: Բայց 1934 թւին Քրաֆտ – Բոնարի Որրանոց – Դպրոցը փակւեց, եւ Տիկ. Եղիսաբէթը նորից զրկւեց իր սիրած գործից, այս անդամ նիւթական եւ բարոյական անհամեմատ աւելի ծանր պայմաններում: Մակայն, որքան եւ դառն լինի վիճակը, նա գոհունակութեամբ կարող է նայել իր անցած ճանապարհին: Նա իր շացառիկ կարողութիւնը, մրտաւոր հարուստ պաշարը, իր ամբողջ կեանքն նւիրեց հայ ժողովրդին: Նրա ձեռքից անցան բազմաթիւ աշակերտներ եւ աշակերտուհիներ: Նա ինչ որ ունէր զոհաբերեց հայ դպրոցին ու հայ հասարակութեան: Եւ հպարտութեամբ կարող է ասել. «Ես կատարեցի իմ պարտքն ու ուխտը»: Այժմ հերթը հասարակութեանն է: Ժընեւի գաղութը նրան տալիս է հնարաւորութիւն ասելու. «Ես էլ կատարեցի իմ պարտքը»:

Ս. ՎՐԱՑԵԱՆ



## ՀԻՄՆ ԹՈՒԼՊԵՐ

ՓԻԼՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՌՈՍՏՈՄԻՆ

1914 թ. Օգոստ. վերջերին Ռոստոմը կարնից մեկնեց Պոլիս: Նրան փոխարինելու համար Պոլսից գալու էին ուրիշ մարդիկ, իսկ մինչեւ այդ, նրա տեղը բռնելու էր Մարալ – Փիլոսը՝ համախորհուրդ Կարնոյ Կենտր. Կոմիտէի հետ: Սակայն, բաղաքական դեպքը դասաւորեցին այնպէս, որ դրսից ոչ ոք չկարողացաւ գալ, եւ իբրև Բիլրօի ներկայացուցիչ Կարնուլմ մինչեւ վերջ մնաց Փիլոսը: Նրա հետ էր եւ կինը՝ Տիկ. Վարսենիկը, եւ մայրը. Այս երկու նամակները գրւած են Փիլոսի ձեռքով, ծածկագիր, եւ շատ քանի գարծեք վաւերագիր են այն ժամանակայ Հայաստանի կացութեան պատկերացման տեսակետից. Փիլոսի նկարագրած դրաւթիւնը աւելի կամ պակաս չափով նոյնն էր եւ ուրիշ վայրերում: Նամակները առնեած են Հ. Յ. Կենտր. Դիւանից: ԽՄԲ.

ՄԻՐԵՎ ՌՈՍՏՈՄ,

1 ՅՈՒՆԻՉ, 1915, ԿԱՐԵՒ

... (Մկրտի մասը կրում է անձնական – ընտանեկան բնոյթ): Կուսակցական կեանք, ի հարկէ, չկայ. Բարթող, Գասպար\* եւայլնակցէս են յետ քաշւել, որ մերժում են մի ժողովի անդամ մասնակցել: Վանիկը\*\* լաւ որ մնաց այստեղ. մնացել ենք երիտասարդներս, թէեւ անելու էլ բան չկայ: Նամակ գրեցինք Վահանին էլ, Վարդպէսին\*\*\* էլ, բայց չեկան ու չեկան մինչդեռ նրանց մէկն ու մէկի ներկայութիւնը մեծապէս կարեւոր էր այստեղ: Տրամադրութիւնները գէպի հայերը չափազանց վատ էին մի ժամանակ. վերջերս պէտքէ ասել, որ բաւականին փոխւել է գէպի լաւը: Պատերազմը սկսւելուն պէս սկսւեցաւ նաեւ չէթայական գործունէութիւնը, որը արտայայտեցաւ բացառապէս հայերուն դէմ: Բասէնը ամբողջապէս քարոշանդ եղաւ չէթաներու ձեռքով, նոյնը նաեւ կարնոյ դաշտը. 50-60 եւ գեւ աւելի ձիաւորներով կը լեցւէին հայ գիւնեւի գաղութը:

\* Կարնոյ Կենտր. Կոմիտէի անդամներ, \*\* Միհրան Թերլէմէզեան, \*\*\* Վահան Փափազեան, Վ. Սերենկիւլեան:

դերը պահանջելով զէնք, դրամ : Զինաթափութիւնը մի ճարպիկ մի-  
ջոց էր եւ պէտք է ասել, որ յաջողւեցաւ : Կարնոյ գաշտում սովանե-  
ցին նաեւ Օձնի գիւղի Տ . Արխատակէս քահանան (գաշնակցական) :  
Բարբարոսութիւններ շատ եղան : Եղան գիւղեր, որ դրամ ու զէնք  
առնելու համար գիւղերով կանանց ու երեխաններին լեցրին գետը  
այսպիսով փրկանք եւ խոստովանում կորպելու համար, ու յաջող-  
ւեցան . այսքանը գեռ բաւական չէ . դրաւեցին հայերի ունեցած ցո-  
րենն ու գարին, խոտն ու գարմանը (յարդը), իսկ այժմ էլ հայ  
գիւղերը գատարկել են տալիս հիւանդանոց գարճնելու պատճառով :  
Այս խժդութիւնների մի շատ թոյլ մասն էլ զործադրւեցաւ նաեւ  
թիւրք գիւղերի վրա, բայց այս՝ շատ աննշան մի շափով : Տրամա-  
դրութիւններու այս վատթար շրջանին էր, որ բանակի մէջ ծառա-  
յող հայերին զինաթափեցին եւ շատ շատերին էլ կոտորեցին անձայն  
անշուկ, աղաղակող եւ վրդովեցուցիչ փաստեր կան այս տեսակէ-  
տէն : Բասենի մօտ 60 հայ զինուրներ մի անդամից մի ձորի մէջ ըս-  
պանեցին եւ այսպէս շատ տեղեր : Անձայն ու անշուկ մի կոտորած  
էր այս, որ բաւական ժամանակ տեւեց եւ այժմ մեղմացած է կամ  
աւելի ճիշտը վերջացած, բարեբաղդաբար : Այս շրջանին էր, որ  
մենք ժողով գումարեցինք եւ որոշեցինք կուսակալին դիմել.\*.) դի-  
մեցինք . ինքը դեռ նոր էր եկած, մեզմէ առաջ ինքը խօսեց այն բո-  
լոր բաները ինչ մենք պիտի խօսէինք եւ պատւի խոստում տեսց  
դադարեցնել այդ բոլորը եւ հեռացնել պատասխանատունները . իր  
ասելով առնւազն 6 հոգու մահւան պիտի դատապարտէին դաշտում  
կատարւած խժդութիւնների համար : Մինչ այժմ ոչ ոք չդատա-  
պարտւեց, ի հարկէ, բայց արդար լինելու համար պիտի ասեմ, որ  
այնուհետեւ իսկապէս որ չէթայական գործունէութիւնը մեծ չա-  
փով մեղմացաւ : Այստեղից հեռացւեցան Հիմին ու Շաքիրը \*\*.) եր-  
կու այն սրիկանները, որոնք պատասխանատուններն էին այդ տիսուր  
գէպերուն : Ի միջի այլոց ասեմ, որ Հիմին մեր լսածով Բայազէ-  
դում սպանել է տեղ մեր ընկեր Թորոսին :\*\*\*.) Մեր ստացած տեղե-  
կութիւնը պէտք է ասել, որ բաւական վստահելի է :

Այսպէս, սիրելիս, այս վիճակը տեւեց բաւական երկար, բացի  
այն, նոյն այն մարդիկ ծրագրել էին իրը թէ մեզնից աչքի ընկող-  
ներին սպանել տալ մէկիկ-մէկիկ . այս տեղեկութիւնները մեզ հա-  
զորդել են տեղացի վաճառական թիւրքերը, որոնք հակառակ են  
նման քայլերին, շատ հասկանալի պատճառով . պէտք է ասել, որ

\*) Թահսին թէյ : \*\*) Հիլմի թէյ, Խրբիհատի Կարնոյ Արքայացուցիչը, Բէհա-  
էդիմին Շաքիր : \*\*\*.) Գալուստ Ալոյիան :

շատ վատ շրջան էր այդ . մենք հնարաւորութիւն չունէինք սերտ  
յարաբերութիւն պահելու կուսակալի հետ կամ ուրիշների : Մեր յա-  
րաբերութիւնը եղաւ մի անդամ . կուսակալլ քաղաքավար էր եւ  
խնդրեց միշտ գիւղենք իրեն, բայց իրեն հետ տեսակցելէ 2 օր ետքը,  
յանկարծ, Գոլորդուի կողմից փնտրւեցանք ես եւ Վահան . Երբ հե-  
տաքրքրւեցանք մեզ վնարելու պատճառով, զանազան պատասխան-  
ներէ գերջ, վերջապէս մեր բժիշկը մեզ յայտնեց թէ «որովհետեւ  
դաշնակցականներ էք, կուզեն ձեզ հսկողութեան տակ առնել իմա-  
նալու համար քաղաքականութիւնով կը զբաղինք թէ ոչ» : Այս բա-  
նը ինձ թւում է պատասխանն է կամ անմիջական արդիւնքը մեր  
կուսակալի հետ ունեցած տեսակցութեան : Այս էր պատճառը, որ  
բաղմիցս գրեցինք Վահանին, որ անցնի Կարին, բայց նա տեղից էլ  
շշարժւեց ու մնաց Մուշ, մինչդեռ յարաբերութիւն պահելլ  
շատ պէտք էր, պէտք է եւ այժմ : Բննւած բասենցինների մօտ բռնւած  
են նաեւ կուսակցական թղթեր, օրագրեր, որոնց մէջ կան Մարտա-  
կան գործունէութիւն, Զինական Փոնդ եւայլն նման բաներ : Պա-  
տերազմական ատեանը հիմնւելով սրանց վրա մեզնից պահանջեց  
ծրագրիր-կանոնագիրը . տիփնք, բայց ի՞նչ պիտի հասկանան . մէկը  
պէտք է որ անհրաժեշտ լուսաբանութիւնները տայ . կանչել էին  
Մարտիրոսին ու Ղազարին, գնացին ու այնպիսի բացարութիւնները  
տիփն, որ աւելի պիտի կասկած տան մեր լուսաբանութիւնները : Ես  
սուածակեցի, որ մէկը ընկերանայ ինձ՝ երթալ անհրաժեշտ լուսա-  
բանութիւնները տալու, դժբախտաբար, չեկան . ես էլ իմ լեզւի տը-  
կարութեան պատճառով խոհեմութիւն համարեցի մենակ չգնալ, եւ  
այդպէս կը մնայ աւելորդ կասկածների մէջ, մինչդեռ Վահանի  
ներկայութիւնը կրնար փրկել մեզ այդ կասկածներից :

Դասնանք բանտարկեալներին . Պետրոսին աքսորեցին կեսարիա :  
Բասենցինների գիշ մասը մնում է բանտը, մեծ մասը հանեցին ար-  
դէն : Կուսակցական խնդիրների մէջ մոռացայ գրել նաեւ դրամի  
մասին . քո մեկնելուց յետոյ որքան փորձեցինք գոնէ մի 200 ոսկի  
ստանալ եւ ճամբել Մուշ, չյաջողւեցաւ . քեզնից յետոյ Խաչիկն\*)  
էլ մեկնեց պատերազմի դաշտը ու կը մնայ գեռ : Ստացայ 85 ոսկի  
եւ ինձ մօտ եղածից էլ 15 վրան զնելով տւի Ս.-ին : Ինձ մօտ եղա-  
ծից 30 ոսկի էլ տւել եմ կ . կ -ին ի հաշիւ բանտարկեալների . չգի-  
տեմ պէտք էր տալ թէ չէ . բայց հաւաքաբար որոշել եւ տւել ենք .  
բանտում այնպիսի ընկերներ կային, որոնք չէին ստանում ուրիշ  
տեղերից եւ բացարձակապէս զուրկ էին միջոցներից . այդ 30 ոս-  
տեղերից

\*) Խաչիկ Փաստթմանեամ :

կու մէջ է նաեւ կ. Կ.-ի վերցրած 10 ոսկին, որ տւին Ստեփանեանին:

Պատերազմի լուրերից շատ բան չեմ հաղորդում, որովհետեւ գիտեմ որ այսպէս էլ կիմանաս արդէն: Այսքանը ասեմ, որ առանց կոխի էլ 0 ամ. բանակը սարսափելի արագութեամբ հւածւում է, քայլայլում. հիւանդութիւններ, տիֆ, տիֆուս, դիզենտիրի եւայլն եւայլն սոսկալի կերպով տարածւել են. երեւակայիր, որ միայն քաղաքում 4,500 մահ կայ ամէն օր չհաշւած դեռ բանակի մէջ (պատերազմի դաշտում) եղած մահերը: Մօտ մի ամիս առաջ, երբ այստեղ կուսակալի նախագահութեան տակ, բժշկական մի ժողով տեղի ունեցաւ, ուր կուսակալը յայտարարեց, որ մինչեւ այժմ բանակի կորուստը, մէջը հաշւելով գերի, սպանւած, փախատական, հիւանդ, թիւը կը համի 140,000-ի. այս մի ամսւայ մէջ զոհերը անհամեմատ աւելի շատցան քան առաջ էր. ախար, ուտեստ չկայ, ունունդ չկայ, հագուստ չկայ, խնամք չկայ: Վերջին կուի ժամանակ (0 լիթի շրջանում) սարսափելի կերպով ջարդեցաւ մեր բանակը: Շշուկ կայ, որ պատերազմի դաշտում զօրքը ըմբոստացել է եւ վիրաւորել պատերազմական նախարար ինվերը, գերման հրամանատարըն եւ իր եաւեր. որքան ճիշտ է, չդիտեմ: Եաւերի վիրաւոր ըլլալը հաստատ է:

Եթէ կարելի է, գրի՛ր, խնդրում եմ. հինգ նամակից աւելի է, որ գրում եմ Պոլիս եւ ոչ մի պատասխան չենք ստանում: Վանը նոյնպէս լքել է մեզ: Այսպէս պէտք է լինէր...:

Զերմ համբոյրնեով՝ Սահակիրդ:

Յ. Գ.- ԶԵ՞ս մտածում մեզ էլ քեզ մօտ տանել: Հեռագիրդ ու բաց նամակդ ստացել ենք:

21 Յունար, 1915 թ. Կարին

Սիրելի Ռուսում,

Ուրախ լուր չունիմ հաղորդելիք, ամէն ինչ տխուր է, ամէն ինչ սպաւոր. Վարսէնը անցուց, բարեխախտաբար, այժմ կաղդուրում է. այս մի խոշոր բախտաւորութիւն էր: Արաքսին մեռաւ, Սահակը մեռաւ, Տիկին Փաստրմանեանը մեռաւ, Զնդին անյոյս է եւ գուցէ ապրում է վերջին ժամերը, նոյն վիճակի մէջ է եւ Մարուքի եղբայրը. սրանց տնէն այս շաբաթ 3 մեռել միանգամից դուրս եկաւ: Ամէն տեղ սուզ է. տարափոխիկ հիւանդութիւնները բոյն դրին նաեւ քաղաքների մէջ եւ զոհեր է որ տանում են. օրական տասնեակներով մարդիկ են մեռնում քաղաքացիներից միայն,

իսկ զօրքերի մէջ հաշիւ չկայ: Փախչողը կազատւի գուցէ, բայց ո՞ւր փախչել: Այսպէս է այժմ կրպումը, մի խոշոր հիւանդանոց, ուր հիւանդների մեծագոյն տոկոսը մեռնում է...

Փախստական զինւորներ բոնելու նպատակով սկսեցին խուզարկել հայ աները. խուզարկեցին եւ մեր տունը ու տարան քո, իմ գըլխարկները (3 հատ) եւ իմ անձնական միջոցներով շինել տւած զինւորական հագուստները: Մեզ ամբաստանում են որպէս կասկածելի օտարականներ պահողներ, խնդիրը յանձնած է պատերազմական ատեանին. տեսնենք ի՞նչ գուրս պիտի գայ...

Վերջերս, վերջապէս նամակ ստացայ Վանէն. բաւական կարեւոր գէպքեր են եղել: Կարձկանի մէջ փախստական զինւորներ հետազո՞ղելու տաեն մի քանի անգամ կարեւոր ընդհարումներ են տեղի ունեցել փախստականների եւ կառավ. զօրքերի միջեւ. կառավարութիւնը ուղել է նոր ուժերով վերջացնել հայ «չէթաներին». կուի մէջ չէթաները մնացել են ապահով, իսկ կառավարութիւնը քանդել է անմեղ գիւղերը. նոր չէթաներ օգնութեան կը հասնին, կուիւր կը սաստկանայ, չէթաները կը կտրեն հեռագրաթելերը եւ օգը կը հանեն կամուրջները: Վերջապէս, կուի վայրը կը փութան եւ մեպուսներ Միւնեպ եւ Վոամ եւ կը հանդարտեցնեն յուզւած մտքերը. այժմ խաղաղ է: Կառավարութիւնը վերջերս դիմել է մերոնց եւ առաջարկել, որ Վոամն ու Արամը անցնին Սարմաստ յետ պահելու հայ խմբերը թիւրք զօրքերի գէմ կուելուց. մերոնք ցոյց կոտան Բաշկալէի հայ կոտորածը, ինչպէս նաեւ նման շարժումները եւ կառաջարկեն ապահովել հայերի կեանքը: Կառավարութիւնը կարգարացնէ Բաշկալէի կոտորածը եւ այսպիսով կը խզւի յարաբերութիւնները: Որքան կարողացայ ստուգել, կառավարութեան նպատակըն է եղել հեռացնել Դաշնակցական զեկավարները: Կը կարծենք թէ Դաշնակցութեան դէմ կամաց-կամաց պիտի սկսին նոր հալածանքը: Մուշ Խուրէնից պահանջել են անցագիր. թւում է թէ այս էլ նոր սկիզբ է Տարոնի խուզութիւններուն: Նոր տարւայ օրը քեզ գրել եմ աւելի ընդարձակ մի նամակ, յայտնել եմ նաեւ մեր վիլայէթում կատարւած դէպքերը եւ չէթայական դործունէութիւնը, ինչպէս նաեւ Պայազիտ Թուրոսի սպանութիւնը Զիլմի փաշայի ձեռքով. այդ ինդիրների մասին աւելորդ եմ համարում նորից կրկնութիւններ անել:

Մի քանի տեղեկութիւններ նաեւ պատերազմի մասին, բայց իսկապէս պատերազմ չէ այս, այլ կատարեալ կոտորած. կոտորում է թշնամին, կոտորում է ցուրտը, անօթութիւնը, մերկութիւնը, հիւանդութիւնները եւայլն եւ դիակները թէ Կարնոյ դաշտում, թէ Բաւանդութիւնները անել:

սէնում, Նարմանում մնում են անթաղ. թափթած իրար կողք կողքի, շարան-շարան. դիակներ մարդկանց, դիակներ կենդանիների... Այսպէս է պատերազմի դաշտում... Այն տարածայնութիւնները թէ մերոնք գրաւել են Օլթին ու Սարըղամիշը, անպատճառ սուս է. ճիշտ է, մերոնք գնացին յիշեալ տեղերը, բայց դա լոկ ուազմական մի խաղ էր եւ այնպիսի մի ջարդ կերան, որ սոսկալի էր. խուճապը հասաւ մինչեւ Կարին, կառավարութիւնը սկսեց ուժ տալ ու գօրացընել ամրոցները. կարծում էին, որ թշնամին նոյն թափով գալու է, բայց սխալեցին. թշնամին հասաւ իր նախկին դիրքերը եւ մնաց երբեք չփորձելով առաջ գալ: Թշնամու յետ կանգնելը նորից քաջալերեց մերոնց. նրանք սկսեցին հաւաքել ջարդած բանակի անյոյս բեկորները, հաւաքել 45-50 տարեկանները իրը թէ նոր բանակ կաղմելու եւ նորից սկսելու կոփւը. այժմ այդ ջանքերի մէջ են ահա. ինչպէս երեւում է անյոյս են նաեւ գերման սպաները: Մրանք վերչերս դիմել են իտալական եւ ամերիկեան կառավարութիւններին, որ իրենց տրամադրելի անեն մի նաւ վերադառնալու համար Գերմանիա, բայց կարծեմ մերժել են: Լքումը թէ ժողովրդի, թէ զօրքի եւ թէ մասնաւորապէս սպաների մէջ այն աստիճանի է հասած, որ մեծ հաճոյքով կընդունին թշնամուն, եթէ դայ, բայց թշնամին չի դալիս եւ կարծում եմ չի էլ դայ դարունքն առաջ:

Պոլիսը լուսում է. մի հատիկ նամակ անդամ չենք ստացել. չես գրում եւ գու, կտրել ենք ամբողջ աշխարհից եւ սեղմել մեր շրջանակի մէջ, ուր ամէն կողմ սուտ, ամէն կողմ լաց ու կոծ է:

Վերը մոռացայ ասել, որ Խաչիկն էլ հիւանդ է, հիւանդ է նաեւ Մազմանեան Լեւոնի կինը՝ Աղելը, բայց մի՞թէ կարելի է թւել բուլորը: Զնդին անդադար յիշում է քեզ. վերջին օրերս չի էլ խօսում. երէկ իր մօտն էի, յայտնեցի քեզ նամակ գրելուս մտադրութիւնը, խեղճը լարեց իր բոլոր ուժերը եւ կցկտուր բառերով ասաց հետեւեալը. «Թող Ամերիկան դրամ հասցնէ անրայման ֆընեւի մէջ գնելու Դաշն. տունը եւ թող անունը գրեն «Մեր տունը». մի ընկերով վերջին ցանկութիւնն է գուցէ որ աւելորդ չհամարեցի քեզ դրել. առհասարակ քեզ շատ է յիշում...

Դէ՛, մնամ բարեւ, ո՞վ դիտէ գուցէ մենք էլ հիւանդացանք կամ մի բան եղանք, գուցէ էլ չկարողացայ գրել. ախր գրելու սի՞րտ է դիմանում: Մնաս բարեւ, քեզ համբուրում եմ կարօտով, շատ-շատ կարօտով, համբուրում ենք բոլորս, Վարսէնը, մայրս: Եթէ հնարաւորութիւն ունես աղաչում եմ դրիր երկար-երկար:

## Քո՞ ՄԱՐԱԼ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

1919 թ. մարտին, Թիֆլիսում, տօնեց Յովհաննէս Թումանեանի ծննդեան յիսնամեակը: Այդ առթիւ շնորհաւորական հեռագիր էր տւել Հայաստանի Կառավարութիւնը, որին Յ. Թումանեանը պատասխանեց հետեւալ հեռագրով.

Մարտ 8, Երեւան

Հայաստանի կառավարութեան Նախագահի փոխանորդ Ա. Խատիսեանին,

Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուղեցին ինձ մինչեւ արտասունք:

Ես բոլոր գգացմունքները ես բացատրում եմ ոչ թէ իմ գրական գործերի արժէքով, այլ մեր ազգային ոգու անպարտելի հզօրութեամբ, որին չեն կարող ընկնել ոչ սով, ոչ հիւանդութիւն, ոչ հալածանք, ոչ տառապանք: Միշտ մնում է կենդանի եւ թեւաւորւած մեծութեան ու գեղեցկութեան տենչերով:

Ես անգամ էլ, առասպելական ֆէնիքսի նման, պիտի յառնի իր օջախների մոխիրներից նոր կեանքով ու աւելի տաղանդաւոր բանաստեղծների վարիթ երգերով: Եւ եթէ բանաստեղծի ազօթք էք ուղում ինձանից, ապա ես միայն մի աղօթք ունեմ նրա համար, որ նա, հայ ժողովուրդը կենդանի մնայ Փիզիքապէս, մնացածը ձեռք կը բերի ինքը - ինքը, որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրաւանդակին, երկնքից էնքան մօտիկ, իր խոհուն ճակատը դէմ տած աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դէպի իր մեծ եւ լուսաւոր ապագան:

Իմ հոգին լիքն է նրա ոգու հզօրութեան չնչով եւ նրա մեծ պագայի անսասան հաւատով:

Եւ թող էդ մեծ ողին ու էդ անսասան հաւատը զօրավիգ լինեն նրա կառավարութեանը, որ կարողանայ ժողովրդին հանել էս ծանըր ճգնաժամից եւ տանել յաղթանակներից ամենամեծն ու ամենագեղեցիկը - եղբայրական սիրով տիրել հարեւան ժողովուրդների սրտերին՝ Հայաստանի երջանկութեան համար:

ՅՈՎՃԱՆՆԻՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

## ԱՆՑԵԱԼՔ

ՆԻԿ. ՄԱՐ

Դեկտ. 20-ի գիշերը, լենինգրադում (Պետերբուրգ), երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանեց մեր ժամանակների ամենախոշոր գիտնականներից մէկը՝ Ակադ. Նիկ. Մարը։ Հանգուցեալի գերը առանձնասիշու մեծ է Կովկասի եւ Հայաստանի մշակոյթի ուսումնասիրութեան եւ գնահատութեան գործում։ «Վէմ»-ի յաջորդ համարում մենք կը տանք առանձին ուսումնասիրութիւն նրա կեանքի եւ գործի մասին։

ԲԱՀԱԹՈՒՐ ԲԱՀԱԹՐԵԱՆ

Դեկտ. 1-ին երեւանում մեռել է հայ գիտութեան նւիրւած լաւագոյն մտաւորականներից մէկը՝ Բահաթրեան։ Հանգուցեալը ծնւել էր 1872 թ. Ղարաբաղում, ուսել Շուշու ոչալական դպրոցում, ու Գէորգեան Ճեմարանում։ Բարձրագոյն կրթութիւնը ստացել էր Ժլնեւի համալսարանի բնագիտական եւ մաթեմատիկական ճիւղում։ Ակադ. աւարտել էր Գանդի ճարտարագիտական դըպրոցը եւ իրեւ ճարտարագէտ - քիմիկոս մեռ մասնաւոր կեանքի ասպարէզ։ Զգալով, սակայն, որ իր կոչումը գիտութիւնն է ու դպրոցը՝ անցել էր մանկավարժական գործունէութեան՝ նւիրւելով մաթեմատիկայի դասաւանդութեան հայկական դպրոցներում։

1914-17 թ. երեք ուսումնական տարի, Բահաթրեանը մաթեմատիկայի դասաւու էր Գէորգեան Ճեմարանում, յետոյ՝ ուսուցիչ երեւանի դպրոցներում եւ ի վերջոյ, դասախոս Համալսարանում եւ Պոլիտեխնիկ ինստիտուտում։ Միեւնոյն ժամանակ զբաղւում էր եւ հասարակական գործունէութեամբ։ 1918 թ. Հայաստանի ներքին գործոց նախարարի պարենաւորման ներկայացուցիչ էր Վաղարշապահանում։ 1921 թ., փետրարեան ապստամբութեան օրերին, կոմենդանտ կոտայքի գիւղերից մէկում։ Անդամ էր Հ. Յաշնակցութեան նրա համոզւած գործիչներից մէկը։

Բահաթրեանի աշխատանքի մնայուն մասը, սակայն, նրա գիտական լուրջ ուսումնասիրութիւնն է Անանիա Շիրակեցիի մասին։ Այդ գործի վրա Բահաթրեանը աշխատեց երկար տարիներ եւ մեծ ջանասիրութիւն եւ հմտութիւն ցոյց տվեց։

Բահաթրեանը համեստ, սակաւախօս, մաքուր սրտի տէր, ուղղամիտ անձ էր՝ լաւ մարդ ու լաւ ընկեր։ Հայ մշակոյթը նրա մասով զրկւեց իր արժէքաւոր մշակներից մէկից։

ՎԱՂ. ՏԵՐ - ԽԱԶԱՏՐԵԱՆ

Դեկտ. 4-ին, Համադանում, թոքատապին զոհ դնաց մեր քաղաքական տարագրութեան աչքի ընկնող անդամներից մէկը էջմիածնի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ Վաղարշակ Տէր-Խաչատրեանը։ Վաղարշակը ծնւել էր 1881 թ. ապր. 5-ին էջմիածնի շրջանի Սաջլու գիւղում։ Ուսումը ստացել էր Գէորգեան Ճեմարանում, որի դասարանական մասը աւարտելով 1903 թ. անցել էր Բագու, իբրեւ ուսուցիչ Նաւթարդիւնարերողների Խորհրդի դպրոցներում։ 1905 թ. երբ վերաբացւում են Հայոց ծխական դպրոցները, Վաղարշակը վերադառնում է Հայաստան եւ յաջորդարար պաշտօնավարում Աշտարակի, Օշականի, Վաղարշապատի, Նախիջեւանի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի եւ Մեծ Ղարաբիլիսայի հայկական դպրոցներում, որպէս դասատու կամ աւագ-ուսուցիչ։

Իր պաշտօնավարութեան ընթացքում, ամէն տեղ, Վաղարշակը յայտնաբերում է պարտաճանաչ ու բարեխիղճ վերաբերում գէպի իր ստանձնած պարտականութիւնները։ Միեւնոյն ժամանակ գործոն մասնակցութիւն էր ունենում տեղական հասարակական կեանքին։ Դեռ դպրոցական նստարաններից նա մտել էր Դաշնակցութեան շարքերը եւ ամէն տեղ ուր լինում էր, իր շուրջը համախմբում էր երիտասարդութիւնը, ստեղծում եռուն դաղավարական կեանք։

Երբ 1914 թ. պայմեն համաշխարհային սպատերազմը, Վաղարշակը աւագ-ուսուցիչ էր Մեծ-Ղարաբիլիսայի դպրոցում։ Նրա նախաձեռնութեամբ այսուղի կազմւեց Ազգ. Բիւրօի տեղական մասնաճիւղը, եւ ինքը բնարւեց նախագահ։ 1915 թ. նա նախագահ է ընտանի շրջանի «Եղբայրական Օդնութեան» Կոմիտէի։ Նրա տրըւում նոյն շրջանի Հայաստան Օդնութեան կամաց զանքերուով Ղարաբիլիսայում բացւում է Եղբայրական Օդնութեան կոմիտէի որբանոցը, որ կարեւոր գեր կատարեց որբանամութեան գործում։ 1917 թ. կազմում է Լոռու Գունդը, եւ Վաղարշակը նըրդում։ Կոմինդանու կամաւորական շարժումը եւ գաղթական-շանակւում է Կոմինդանու։ Կամաւորական շարժումը եւ գաղթական-ների ու որբերի խնամատարութիւնը կլանում են Վաղարշակին ամբողջապէս։

Ղարաբիլիսայի հոչակաւոր ճակատամարտից յետոյ, Վաղարշակը անցնում է Երեւան եւ Արամի կողմից նշանակւում պարենաւորման նախարարութեան ներկայացուցիչ Ապարանի եւ Շիրակի շըր-

ջաններում, ուր նոյնպէս երեւան է բերում վարչական-կազմակերպական կարողութիւններ :

1919 թ. հրաւիրում է Վաղարշապատի Ամերիկեան Կոմիտէի որբանոցների ընդհանուր կառավարիչ եւ միաժամանակ նշանակում է խնամատարութեան նախարարութեան ներկայացուցիչ : Զբաղւում է գաղթականների տեղաւորման եւ հոգատարութեան, ինչպէս եւ գաւառական ինքնավարութեան գործերով : 1920 թ. հայ-թիւրքակամ պատերազմի օրերին, Սուլմալուի ճակատի հրամանատար Դրույի ներկայացուցիչն էր Ապարանի շրջանում :

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Վաղարշակին էլ վեճակեց ճաշակել բոլցեւիկեան Զէկայի հալածանքները . շատերի հետ նա էլ բանտարկեց եւ մահւանից աղատուց փետրարեան ապստամբութեան չնորհիւ, որից յետոյ ընտրեց էջմիածնի Գաւառի Փրկութեան Կոմիտէի նախագահ : Այդ պաշտօնում նա երեւան բերեց բացառիկ ոյժ, գործելու կարողութիւն ու կամք : Հակաբոլչեւիկեան պայքարի այդ հերոսական օրերին էջմիածնի շրջանը շատ բանով պարտական էր Վաղարշակին :

1921 թ. ապրիլ 2-ին, բոլորի հետ միասին, Վաղարշակին էլ նահանջեց դէպի Լեռնահայաստան, այնտեղից՝ Պարսկաստան : Տարագըրութեան 13 տարիներին էլ նա չկորցրեց հոգու արիութիւնը եւ շարունակեց աշխատել, կրթական եւ կուսակցական ասպարէզում : 1922 թ. նա արդէն ուսուցիչ է Ռաշտի հայկական դպրոցում, ուր մնում է մինչեւ 1926 թ. : Այստեղից տեղափոխուում է Նոր-Զուղայի դպրոցը, մինչեւ 1931 թ., ապա մինչեւ մահ պաշտօնավարում է Համադանի Հայկակեան Դպրոցում :

Թէ Ռաշտում, թէ Նոր-Զուղայում եւ թէ Համադանում Վաղարշակը ո՛չ միայն բարեխիղմ ու հմուտ դաստու էր կամ դպրոցի վարիչ, այլեւ եռանդուն ու սիրւած հասարակական գործիչ : Նա առանձնապէս ջերմ համակրանք էր վայելում երիտասարդական լայն շրջաններում : Նրա շքեղ ու համաժողովրդական յուղարկաւորութիւնը ապացոյց է այդ յարդանքի :

Տարիներ առաջ Վաղարշակը գրի էր առել իր յուշերը, որոնց մէջ կան շատ հետաքրքրական էջեր : Մենք յոյս ունենք «Վէմ»-ում տալ հատուածներ այդ յուշերից, որոնց ամբողջութիւնը, դժբախտաբար, դեռ կարելի չէ հատարակութեան տալ :

ԵՐԻԱՆԴ ՕՏԵԱՆ \*

Ծնած է 19 Սեպտեմբեր 1869ին, Պոլսոյ Ենիդիւղ արւարձանը :

Գեղեցիկ մանուկ մըն էր եւ ուշիմ : Դպրոց չի յաճախեր, մասնաւոր դասեր կառնէ տան մէջ : 1878ին կը ճամբորդէ Ֆրանսա եւ իտալիա, Գրիգոր Օտեանի հետ, որ իր հօրեղբայրն էր : Յետոյ պահ մը կը հաստատի Ճուրճովայի մէջ (Խումանիա), ուր դրկւած էր հայրը իբրեւ օսմ. Հիւպատոս : Քանի մը տարի վերջը կը վերադառնայ Պոլս եւ կը մտնէ Պէրաքրեան վարժարան, ուր կը հրատակակէ ճեռագիր թերթ մը, Վառարան : Ռ. Պէրպէրեան կը խափանէ Օտեանի թերթը, բայց նոր մը կը հանէ ան, նոր անունով մը դարձեալ, Անիաշտ : Կը շարունակէ նաև մասնաւոր դասեր առնել Գրիգոր Մարգարեանէ, Տիւպիւայէ եւ Տիւփրէ :

1888ին կը ճամբորդէ Անտիոք, Գէորգ Ասլանի հետ, որ մօրեղ-րայրն էր : Վերադարձին, 1893ին, կը մտնէ Հանրային Պարտուց Վարչութեան մէջ : Այդ շրջանին կսկսի աշխատակցիւ Մասիսին, Մանգումէի էֆենարին, Արեւելքին : 1894ին կը մտնէ Հայքնիի խմբադրութեան մէջ, ուր կաշաստի մինչեւ 1896 Օդոստոս 24, երբ, Պանքայի Դէպիին պատճառով, կը հեռանայ Պոլսէն : 6-7 ամիս կը մնայ Աթէնք, ուր կաշխատակցի Միուրիսն թերթին : Յետոյ կը մեկնի Եղիպատոս : 1897-1898 կաշխատի Պօղոս Նուպարի ագարակին մէջ իբրեւ հաշւակալ : 1899ին կանցնի Փարիզ : Կաշխատակցի Գուիտոն Լուսինեանի Փրանս - Հայերէն բառդիրքին խմբագրութեան, յետոյ միջնորդ՝ Հնարժէք առարկաներու, պահ մըն ալ պաշտօնեայ՝ արշաւի ձիերու հայթայթիչի մը մօս : Կը մեկնի Վիէննա, աշխատակցելու Եռուանէսքուի բառարանին, յետոյ Լոնտոն՝ գործակցելու նոր կեանէին, ապա դարձեալ Փարիզ՝ խմբագրելու Ազատ Խօսքը : 1902ին Եղիպատոս է նորէն, քանի մը տարի պաշտօնեայ՝ ձուլիչի մը մօս : 1904ին՝ Հնդկաստան, իբրեւ աղամանդի վաճառական : 1905-ին՝ Եղիպատոս, իբրեւ Ճուլարանի պաշտօնեայ : Մինչեւ 1908, այս տեղ կը հրատարակէ Ազատ Բեմ, Ազատ Խօսք, Արեւ, Կրակ, Օքենք :

Օսմ. Սահմանադրութենէն յետոյ Պոլս է : Կաշխատակցի Արեւ-

\*) Դեկտեմբերին լոյս տեսաւ Ե. Օտեանի երկերի մէկ հատորը նախատակ Գըրագէտների Բարեկամմների հրատարակութեամբ (№ 9) : Հատորը ամբողջապէս նիրած է Փանչունիմ : Այդպէս էլ կոչում է «Ընկեր Փանչունի» : Այդ առքիւ օգտակար ենք համարում հատորից արտափել Ե. Օտեանի գուտ փաստական տեղեկութիւններ պարունակող կենսագրութիւնը : ԽՄԲ.

Digitized by

A.R.A.R.®

ւելքի, Ազատամարտի, Հայրենիքի, Բիւզանդիոնի, Շանրի, միաժամանակ կը հրասարակէ շատ մը երգիծաթերթեր:

1915ին՝ կաքորի եւ կը հասնի Տէր-Զօր, ուր աւելածու է պահմը, յետոյ թարգման՝ թուրք սպայի մը մօտ, ապա՝ գերման սպայի մը մօտ: Այստեղ կիսլամացնեն զինք եւ ուսուցիչ կը նշանակեն Համայի: Ժամանակ մը վրջ կը բանտարկեն:

Զինադադարին՝ Պոլիս է: 1919-1922 կաշխատակցի ժամանակի, վերջին լուրի, ձակատամարտի: Քէմալական արշաւի առջեւ, 1922 Սեպտեմբերին կը թողու Պոլիսը եւ կանցնի Պուրքէջ: Կաշխատակցի նաւասարդին: 1924ին կը մեկնի Սուրբիա, հիւանդ մօրեղբօրը մօտ: Այստեղ կաշխատակցի նոր Փիւնիկին ու Հայ Կեանիքին: Յետոյ կանցնի Եգիպտոս, ուր կաշխատակցի Արեւին, Հայկ. Սինէմային, եւ ուր կը մեռնի 3 Հոկտեմբեր 1926ին:

Բեղուն գրող մըն էր: Ահա իր աշխատութիւնները...

Ա. ՎԵՐԵՐ - Սալիհա Հանըմ, 3 հասոր (1912), Թաղականին Կինկը (1921), Միջնորդ Տէր Պապան (1920), Դատաստանական Խորհուրդին առջեւ (1921), Մատնիչը (1920), Առաքելութիւն մը ի Ծապրլվար (1913), Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ (1914), Միֆէի սիրարկածը (1920), Ընտանիք, Պատիւ Բարոյական (Արեւելք), Ես դրսեցի չեմ առներ (Ժամանակ), Թիւ 17 Խափիկն (Վերջին Լուր), Կանանչ Խովանոցով կինը (Վերջին Լուր), Կաւէ հերոսներ (Վերջին Լուր), Տարիքա (Վերջին Լուր), Ընկեր Փանջունի տարագրութեան մէջ (Նաւասարդ), Հայ Կուլտուրականները (Շաւիդ), Հայ Տիասրորան (Արեւ), Ապտիւ Համիտ եւ Շերլոֆ Հոլմս, Պատերազմ եւ Խաղաղութիւն (Շանթ):

Բ. ՎԻՊԱԿՆԵՐ - Վաշխառուն (Հայրենիք), Գործ եփող մը (Հայրենիք), Ազգային բարերար (Շիրակ), Ուկեմու (Շիրակ), Գործի մարդիկ (Անահիտ), Մուլէտ (Անահիտ), Բարի դահիճը (Անահիտ), Մօսա Քլեսիմ (Անահիտ), Համբարձում աղա (Բանբեր), Բրոբականսիսը (Նոր Կեանք), Վանառականի մը նարմակները (Մանանա), Ճուղուպրիսը եւ Ընկ. (Կառավինստ), Վարպետ Պողիկարպոս (Վերջին Լուր), Յեղափոխութեան Մակաբոյծները (1920), Ազգ. Երևանիխոնները (Մանանա),

Գ. ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐ - Զարշրլը Արքին աղա, Միքայէլ Կիւրճեանի աշխատակցութեամբ, (1906), Զալալլը (1909), Սահմանադրութեան 69րդ յօնածը (1927), Վարդան Մամիկոննեան:

Դ. ԹԵՐԹԵՐ - Մեծ մասը ինք հիմնած եւ խմբադրած է, մէկ մասն ալ ընկերութիւն:

Ազատ Բեմ, շարաթաթերթ, Աղեքսանդրիա, 1903-1907, Ազատ

Խօս, Փարիզ, 1901-1902, Աղեքսանդրիա 1906-1907, Թերքիկ, օրաթերթ, Աղեքսանդրիա 1906, լոյս տեսած է միայն 28 թիւ, Օրէնի, շարաթաթերթ, Աղեքսանդրիա, 1905, լոյս տեսած է միայն 13 թիւ, Կրակ, շարաթաթերթ, Աղեքսանդրիա 1906, լոյս տեսած է միայն 3 թիւ, Սեւ Կատու, շարաթաթերթ, 7 թիւ միայն, 1912-13, Պոլիս, Մանանա, 1913-1914, Պոլիս, Արեւ, 1908, Գահիրէ, Կատափնատ, շարաթաթերթ, 1919, Պոլիս, Իգնատ Աղա, շարաթաթերթ, 8 թիւ միայն, 1919, Պոլիս, Շաւիդ - Իգնատ Աղա, շարաթաթերթ, 1920-1922, Պոլիս:

Ե. ՈՒՍՈՒԻՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ - Նահապետ Ռուսինեան (Մասիս), Ծերենց (Մասիս), Ֆիզիկա Պողոս Պատւելի (Մասիս), Գրիգոր Օսեան (Մասիս), Ս. Ժողովները (Հայրենիք), Խշանաց Կղզիները (Արեւելք), Հին Խնդիրները (Հայրենիք), Փարսիները (Ազատ Բեմ), Ժողովող (Շիրակ), Պողոս Նուպար (1913), Հայկական Խնդիր (1914):

Զ. ՑԻՇԱՏԱԿՆԵՐ - Տասմերկու տարի Պոլսէն դուրս (Ժամանակ), Արիւնու Ցիշատակներ (Նոր Կեանք), Անիծեալ Տարիներ (Ժամանակ), Մանկութեան Ցիշատակներ (Իգնատ Աղա), Գրական Ցիշատակներ (Ոստան):

Է. ՏՄՐԵՑՑՑՆԵՐ - Ումանց Տարեցոյցը, Աղեքսանդրիա 1909, Ապուշներու Տարեցոյցը, Պոլիս (1912), Երգիծական Տարեցոյց, Պոլիս, (1921-1922):

Ը. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ - Արգասաւրութիւն, Զոլա, (1910), Յարութիւն, Թուստոյ, Աննա Քարենինա, Թուստոյ, (1911), Նիք Քարբը, շարք, Նար Փինքերուն, շարք, Մեռեպներու Տունը, Տաստայէլսքի (Հայրենիք), Անժ Փիրու, Աղեքս. Տիւմա (Հայրենիք), Տավիտ, Փու Պուրժէ (Արեւելք), Յովհաննէս Զմշկիկ, Կիւսթալ Շլումպէրժէ, (1914), Խշանան ու Աղբատը, (Արեւ), Սուտին Խշանանութիւնը (Արեւ), Յակոբայ Զրիորը, (Արեւ):

Թ. ՔՐՈՒԿԻԿՆԵՐ - Անթիւ են իր քրոնիկները, զորս կարտադրէր շարթէ շարաթ կամ օրը օրին, զանազան խորագիրներու տակ, «Առտան տոմսակ», «Աւուր պատշաճի», «Իրիկւան տոմսակ», «Վեռնատունէն», եւ այլն: Այդ քրոնիկները ցանցնած է Հայրենիքի, Արեւելքի, Ազատամարտի, Ժամանակի, Վերջին լուրի, Շաւիդի, նոր Արշալոյսի, նոր Փիւնիկի, Հայ Կեանիքի, Արեւի, Շանրի, և այլուր:

Ժ. ՕՏԵԱՆ ՕՏՍՐ ԼԵԶԻՈՎ - Օտեանի կարգ մը գործերը թարգմանած են Քրանսերէնի, յունարէնի, թիւրքերէնի, ոռոսերէնի եւ պուլկարերէնի:


Օտեան չունէր մշակումի ճաշակը, այնպէս որ գրած է առանց

յատակադիր, առանց ձեւելու, յաճախ առանց ներշնչումի՝ եթէ կարելի է գործածել այս դասական բառը: Ահա թէ ինչո՛ւ, Օտեանի տաղանդը չափելու համար, անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ իր ամբողջական գործը եւ յետոյ տաշել, անընդհատ տաշել՝ գտնելու համար կորիզը, ուր պահած է անզուղական տաղանդ մը:

Սկեպտիկ դառն աւելը քիչ մը շատ կուտած էր իր ճաշակը, այնպէս որ պէտք չէ զարմանալ՝ երբ այս վաւերական եւ օժտւած երգիծաբանը կը ստորագրէ քիչ մը շատ անհամ տոմսերու տակ: Օտեան չուղեց երեւնալ կոճկւած, տաշւած, ջնարկւած,- իր վարդապետութեամբ՝ կեանքը յաճախ երկար մանրամասնութիւններու բեռ մը կը նետէ վրան ու կը ծածկէ աստւածային հուրը: Այդպէս են եւ իր ստեղծագործութիւնները,- արւեստի անմահ բարախումը գտնելու համար իր գործերուն մէջ՝ դուք ստիպւած էք փորել այն դէզը, որ գոյացեր է էջ լեցնելու ցանկութեամբ: Իր տիպագրութիւնն ալ կը մատնէ այդ թէքնիքը: Որքան ալ անմահ ըլլան, իր հերոսները քիչ մը շատ կապւած են իրենց ժամանակին՝ մանրամասնութիւններու բեռովիր, զոր կառնեն օրւան կեանքէն:

Իբրեւ մարդ, եթէ հաւատաւոր մը չեղաւ,- հեգնական անտարբերութիւն մը, եթէ ոչ արհամարհանք, ցոյց կուտար դաղակիարներու եւ իտէալներու պայքարին,- Օտեան միշտ պարկեշտ մնաց նկարագրով: Ոչ իր տաղանդը ծախու դրաւ, ոչ ալ պարծենցաւ իր տաղանդով: Համեստ էր հոգիով: Համեստ ապրեցաւ եւ կեանքով, մինչ կրնար բարեկեցիկ կեանք մը ունենալ, չնորհիւ իր ընտանիքին ընկերային դիրքին ու յարաբերութիւններուն:

Ն. Գ. Բ.



## ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, Հայաստանը այժմ բաժնւած է 27 վարչական միավորների, որոնց մի մասի անունը վերջերս փոխւած է: Այսպէս, նախկին Ղարաբիլիսան այժմ դարձել է Վիրովական, նախկին Աղբարան՝ Ամասիա, Քէշիշէնթը՝ Միկոյեան, Փաշալուն՝ Ազիզքէլով, Ղուրդուլիմ՝ Հոկտեմբերեան եւայլն: Այսպիսով, առ 1935 թ. վերջը, Հայաստանի 27 վարչական միավորները կրում են հետեւեալ անունները, - Ամարիս, Սունկանաւան, Ալահազերդի, Իջեւան, Շամշադին, Լենինական, Կիրովական, Դիլիջան, Արթիկ, Ազարան, Ախոս, Թալին, Աշտարակ, Կոտայք, Նորբայագէտ, Հոկտեմբերեան, Վաղարշապատ, Ղամարլու, Վէդի, Մարտունի, Բասարգէսար, Միկոյեան, Ազիզքէլով, Միսիան, Գորիս, Ղափան, Մեղրի:

Նոյն ձեւով փոփոխութեան ենթարկւած են բազմաքիւ ուրիշ վայրերի անունները: Այստեղ առաջ ենք բերու ցանկը այն վայրերի, որոնք վերջերս վերանայեած են Հայ. Գործ. Կոմիտէի կողմէց: Առաջ դնում ենք իրն անունը, յետոյ՝ նորը:

### ԱՊԱՐԱՆԻ ՇՐՋԱՆ.

Բաշապարան - Արարեկեան (Յայտնի չէկիստ Արարեկեանի անունը):  
Եղիշուչակ - Ռուչակ.  
Փաշագիւղ - Մարմարիկ.  
Սուլոյ Ֆոնտան - Ֆոնտան.  
Ն. Միլսայլովկա - Միսխանան.

Աղբաբեջի ՇՐՋԱՆ.

Շրջանը վերանայեած է Ամասիայի: Շրջանի կենտրոնը՝ Ամասիա: Թուրքի Ղըզըլքիլիսա - Կարմրաւան. Ղարանամազ - Ենիեղել. Ալիխան - Գետիկ. Սուլրանապատ - Շուրապատ. Ղարաբիլիսա Յ-րդ - Զորաշէն.

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ.

Օհանավանք - Օհանաւան. Ղըզըլքամուր - Ռսկեվազ. Ղարդաւանք - Փաքրաւան.

ԱԼԱՀՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՆ.

Խաչի Դուռ - Նաղկաշատ. Որմակ - Ակմեր.

ԱԽՏԱՑՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՆ.

Քաւրանապարա - Արարեկեան (Յայտնի չէկիստ Արարեկեանի անունը): Եղիշուչակ - Սեւան. Փաշագիւղ - Մարմարիկ. Սուլոյ Ֆոնտան - Ֆոնտան. Ն. Միլսայլովկա - Միսխանան.

ԱՐԹԻԿԻ ՇՐՋԱՆ.

Զըրքիլի - Զրափի. Խաչի կատարան - Փարոս. Բողագիւղան - Զորակապ. Բողդողան - Մարտակապ. Մոլլագէնքա - Մարալիկ. Մեծ Արևովալի - Մանքազ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԻԱՆԻԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ՔԱՐՏԵԶ



ԲԱՍԱՐԳԵԶՄՐԻ ՇՐՋԱՆ.

Աղբիլիսա - Ազգա. Սատանաշ - Գիւթէ. Զարգիբի - Զառքէնդ. Ղըրխորութաղ - Ակունք. Կարակոյիս - Ազգը.

ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ջիբուլյու - Մովսեսիդ. Պողոսիլիսա - Շեմախեան (Բոլշեվիկ Եղիշէ). Եղիշէ Շեմախեանի անունով):

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆ.

Հաջի Նազար - Կամօ (Բոլշեվիկ Կամօի անունով): Մեծ Քեփանակ - Մուսայելեան (Բոլշեվիկ Մուսայելեանի անունով): Ղարաբիլիսարուրի - Ախուրի. Ալեքսանդրովկա - Ղարիբջանեան (Բոլշեվիկ Բ. Ղարիբջանեանի անունով):

ԳԱՐԱՐԾԱՂԱՆԻ ՇՐՋԱՆ.

Շրջարն յանախ կոչում է Խ Վաղպատ' և աղարշապատի կրթատած ձեզ:

Հաջի Ղարա - Այգեշատ. Խաչափարախ - Զահմար. Վ. Թուրքմանլու - Ապագայ. Ն. Թուրքմանլու - Լուսագեղ. Քէորփալու - Արշալոյս. Հաջիլար - Մրգաստան. Շորլու Գէմուրչի - Գէմուրչի. Շորլու Մէհմանդար - Մէհմանդար.

ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆ.

Բաշգառնի - Գառնի. Ղըզղալս - Աստրաբերդ. Դաւախարաք - Աւագ. Գէոյիլիսա - Կապուտան. Քեարփչլու - Գեղադիք. Ճարդում - Ճարդան.

ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻ ՇՐՋԱՆ.

Շրջանի անունը փոխած է Կիրովական: Ղարաբիլիսա - Կիրովական. Նիկիտիս - Ֆիլիտսով (Բոլշեվիկ Վ. Ֆիլիտսովի անունով): Խաչի Գիւղ - Գերէդ. Ղամշկուտ - Եղեգնուտ.

ՍՏԵՓԱՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ստեփանակեր նախկին Զալալ Օզիկն է: Ղըզղիլիսա - Կրզրէաչ. Վորոնցովկա - Կալինիս. Զուշաքէնդ - Կրզրէափակ. Կոտուրբուլաղ - Կարճաղիւր.

ՔԷՇԻՇՔԻՆԴԻ ՇՐՋԱՆ.

Շրջանը վերածված է Միկոյեան: Քէշիշքէնդ - Միկոյեան. Հասանքէնդ - Շատին. Ղոյրուր - Գետափ.

ՓԱՇԱԼՈՒԻ ՇՐՋԱՆ.

Շրջանի նոր անունն է Աղբյուկով (Բոլշեվիկ Մաշտի Ազգորեկովի անունով):

Փաշալու - Ազգորեկով. Սուլթանարէկ - Բարձրութիւնի Իրդուսն - Գիւլիստան.

ԽՁԻԱՆԻ ՇՐՋԱՆ.

Քրեւեան - Ենիքաւան (Բոլշեվիկ Ենիք Մկրտումեանի անունով): Խաւարձոր - Լուսաձոր. Կունէն - Գետաշէն.

ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆ.

Մաղարջուղ - Շենիկ. Սխաչի - Շղարշի. Ղուլգարփիշ - Ռոկեբաս. Փիրմալաք - Արեգ. Օգի Ղըշազ - Զվատան. Զորա - Սորիկ. Սշմուլ - Աւրուն. Դուչքնդ - Բառժ:

ԳՈՒՐԴՈՒՂՈՒԼՈՒ ՇՐՋԱՆ.

Շրջանի նոր անունն է Հոկտեմբերեան. Սարդարաբադ - Հոկտեմբեր. Ղուրդուղուլու - Արմափր. Հաջի Բայրամ - Բախչալար. Քեարիմարխ - Սովետական. Մոլլարադալ - Բաղալ. Մոլլարայազէտ - Բամբակաշատ.

ՆՈՐ ԲԱՅԱԶԻՏԻ ՇՐՋԱՆ.

Քէռսամահմէդ - Բատիկեան (Բոլշեվիկ Բատիկ Բատիկեանի անունով):

ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ղարաբիլիսա - Սիսաւան. Ալիլու - Սալվարդ.

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ.

Քէղաղանան - Մովինար. Ալիլըրի - Աստղաձոր.

Զորախաչ - Զոլաքար.  
Աւդաղապու - Վաղաշէն.

ՂԱՄԱՐԼՈՒԻՆ ՇՐՋԱՆ.

Դալուլար - Դալուր.  
Գովդակու - Մարտիկեան (Բոլշևիկ  
Սէրգօ Մարտիկեանի անունով):  
Դոնդովիան - Զամդիլար.  
Սէյիդէնդ - Շուրաֆէնդ.  
Ասորի Դոփն - Վերին Դոփն.

Հայ Դոփն - Ներքին Դոփն.  
Խմանշալու - Միջեան (Բոլշևիկ Լիպ.  
Միջեանի անունով):

ՎԵՐՈՒԻ ՇՐՋԱՆ.

Քէշիշէրան - Զովաշէն.  
Մոլլասահմէդ - Օրլախ.  
Քէշիշդալ - Դաշէնդ.  
Դաւալու - Արարատ.

### ՀԵՐԿ ՈՒ ՑԱՆ

Գուրզէն Միիթարեանը - մէկ ամէնէն նուրբ երիտասարդ գրադասներից մէկը - տարեմուտի առթիւ, «Յուսաքեր»-ում (31 գեկտ.), փորձում է զնահասութեան ենթարկել անցած գրական տարւայ «Հերկ ու Ցանը» եւ ապագայի որով հեռանկարներ ցոյց տալ:

Գ. Միիթարեանի գիտողութիւններն ու գատողութիւնները մտածել են տալիս, եւ դրանց մէջ է նրանց արժէքը: Այստեղ առաջ ենք բերում նրա յօդւածի հիմնական մասը՝ յապաւելով միայն այն, որ չօշագիւած հարցերի անհրաժեշտ տարրը չէ, կամ չեղում է բուն ինդիքից:

Անցաւ տարի մըն ալ եւ հայ երկնակամարին տակ, մըին ու մռայլ, գրականուրիւն մը մշակւեցաւ:

Հիմերուն կողմէ, եւ նորերէն ալ:

... Քանի մը գիրքեր երատարակւեան. վէպ, պատմածք, մէկ երկու հատոր քերբած եւ շատ մը յօդւած՝ հանդէսներուն ու օրաքերերուն մէջ:

Յայտնուրիւն՝ նոր գործի կամ նոր դէմքի՝ չկայ: Հերիեւ կեամբ մը, օրուան շարժումին հետ բալելու նիգով. եւ գործեր ու յօդւածներ՝ որոնք հազիւ ուղարկութիւն գրանցեցին. լայնածի՞ր ուշադրութիւն, նորուրեան մը, ինքնատը-

պուրեան մը, խորուրեան մը բերած ցնցումովը:

Լոեց պատկերապաշտ Զարեանը. ընդհատեց գիւղաչունչ Համաստեղը, ցրւցաւ Փարիզի անհանդարու խումբը, որ համելի էր իր աղմաւկովն ու գծած ամբարտաւան շարժումներովն իսկ. պատեշին վրա մնաց նորէն լայնաշունչ Օշականը, իր Մնացորդաց-ովը, որ սակայն մնաց առանձին, տարօրինակ նակատագրով. ումանք չկարդացին. շատեր չիսակցան, յոգնեցան ուրիշներ, եւ ումանք ալ վախցան ու վար քաշեցին իրենց ձայնը. անոնցմէ այս վերջինները՝ որոնք երկու տասնեակ էջնոց գրքի մը կը սպասեն, բաւեղէն պսակներ հիւսելու եւ գատարկահունչ պերճախօսուրիւն մը ցուցադրելու համար:

Այս բոլորը՝ նիգ միայն, հայ գրականուրիւնը կենդանի պահելու. հայ մտի կամքեղը՝ անմար, ինչպէս կայ նոյն նիգը, հայ կեամբ ողջ եւ հայ դէմքը հարազատ պահելու համար:

Դրական գործ, անշուշտ, այս իմէնքն ալ:

Կա՞յ ուրեմն աշխատանքը եւ հաւատքը՝ հայ մտի ստեղծագործուրեան հանդէպ:

Այս աշխատանքը կը կատարի վաներին սկսած մինչեւ Հայաստան, ուր

ին արժէքներու պրատումը, պատմական ու լեզուաբնական խուզարկութիւնները մերածէք յիշտակարաններու ծնունդ կաւան, ևակառակ կապարէ այն մքնուրութին, որ կը ծանրանայ հոն հայ մտին վրա:

Ամենէն բախտուոր կալածք ասիկա, պատմագիտական ու բանասիրական այս դաշտը, Երկրէն ներս քէ դուրս, եւ միշտ հիմներու կրդմէ:

Եւ այս հին կաղնիներուն կողքին՝ նորերը, հազարէկ, որոնք հաւատք ունին ու աշխատելու եռանի:

Թայց, ինչ որ ըստին՝ անհատական, մեկուսի նիգեր են, ապրելու եւ ապրեցնելու սահմանած մինչեւ մեր օրերու կենդանի նահատակները. ասոնք է որ անոնք նշանած, մեր մեծ նահատակներէն սկսած մինչեւ մեր օրերու կենդանի նահատակները. ասոնք է որ անոնք նշանած, մեր օրերու կենդանի նահատակները. ապակին արւետի նշարակին տակ ու հերձաւուին, անխուրէն, գամանորէն կողմէն վրայի մէջ:

Մեր պահմչը՝ այս չէ սակայն, չի բաւեր միայն ապրիլը, որովհետեւ ապրիլը, միջոց է, նոյն ու փարքամ կեանքի մը համար, ստեղծագործական բարձրագոյն վարագոյն վայելիներու եւ կառուցումներու: Գ. Միիթարեանը դրան պատասխանում է այսպէս-:

Արդ՝ ի՞նչ է հարկաւոր, որպէսզի ի՞նքնապատանութեան սահմաններից դուրս գանք՝ ձեռնարկելու համար «ըստեղծագործական բարձրագոյն վայելիքներու եւ կառուցումներու»: Գ. Միիթարեանը դրան պատասխանում է այսպէս-:

Նայօ, պէտք է աւելինայ, ամի՞ գրականուրիւն ներն ու կշնոր. կաւելնա՞յ, - այս, երէ գիտակցուրիւնը գայ լըրջուրենէն անոնց, որ կը մշակն գիրքը, երէ գայ ասուածաշունչ այն պաշտամունքն որ ընտրեալները միայն կրնան ունենալ. եւ ինչպէս կրօնէք, նըմանապէս հայ միտքը ունենայ, դառնայ տամար, ուր երկիւրով ու երկիւրածուրեան մտնեն մարդիկ. ուրկէ դուրս նետուին անբարիշտներն ու անբարմները. եւ, վերջապէս, ուրկէ պորքկան մտածումի ու զգացումներու յորդ շատրւանները:

Տենդ, տենչամբ, մոլեգնուրիւն ու ժաշուրիւն միայն, - ընդունելով որ սրտած է տաղանդը, իբրեւ հիմք - երէ

կուզենի հեռապատկերը դարձմել իրականուրիւն:

Այն ատեն, հարկ պիտի ըլլայ անշուշտ, բրերել ենթը. ինչ որ կայ մինչեւ մեր օրերը. քօրւել փոշին մեր նախորդներու գործերէն. ատեն ու սկիմի պըդիմէն կայ մշակոյքի գանձարանին վրա, դարաւո՞ր կնիքով:

Ժամանակն է այլեւս, որ մէկ կողմ դրիմ բոլոր նկատումները եւ մինչեւ իսկ խրահարութիւնները. կշիռի, վերագնահատութեան ենթարկին բոլոր հիմները, ողջ կամ մեռած, մեր մեծ նահատակներէն սկսած մինչեւ մեր օրերու կենդանի նահատակները. ատեն է որ անոնք նշանած, մեր օրերու կենդանի նահատակները. ապակին արւետի նշարակին տակ ու հերձաւուին, անխուրէն, գամանորէն կողմէն վրայի մէջ:

Մեր հին, երկիլի գրականուրիւնը - վէպ, ժերբած, ժննադասուրիւն, - ամէն ինչ որ կիյնայ այդ կալածին մէջ, պէտք է որ քօրվի: Հարկ է որ կիվին գրական գէմէֆերը բոլորին, ու անոնց անիւնները, այսինքն՝ անկորչելին, նըրւիրական մնացորդը, առնիմին սափարելու մէջ ու դրիմ պաշտամունքի տարարին մէջ:

Անշուշտ, վերագնահատման այս նամքուն, հարկ պիտի ըլլայ նաեւ ժխուել եւ ուրանալ. սրազան ուրացում, որ ստեղծագործական պէտք է այն ապահովութիւնը պահպահուելու համար:

Մեր ժամանակակից գրականուրիւնը, այսինքն՝ գրական սերունդը, պէտք է գիտնայ վերջապէս քէ ի՞նչ կը կշռեն, այսուամ արժէքն ու կողմէն վրայի միտքը ունենայ, դառնայ տամար, ուր երկիւրով ու երկիւրածուրեան մտնեն մարդիկ. ուրկէ դուրս նետուին անբարիշտներն ու անբարմներն ուր յորդ շատրւանները:

Այս կերպով միայն անցեալը կը դադրի բեռ ըլլայ ու կը դառնայ հարսուրիւն: Հինք կը դադրի փառուրիւն ու

բորբս ըլլալէ ու կը վերածի նորին համար լուսնդէն պատանդանի:

Մեծութիւնները կը ծնին, չմոռնանք ասիկա, գրական առողջ աւանդութիւններէ. ծագումի ու գերդաստանի շուրք, արիւնն ու ազնականութիւնը միայն ընկերակցութեան յատուկ չեն. իմացական կեանքը, ազգերու մշակայքն ալ ունին իրենց ժառանգականութիւնը: Առանց ֆրանսական դասականութեան - չերքալու համար շատ հետուն - ու առանց անոր մշտանորոգ պրատումին ու զուրմին, ֆրանս. արդի գրականութիւնը պիտի դառնար տխեղծ ու անրիւն. ընկեցիկ, պաթա՛ իրենց իսկ բառով, աւելի դժբախու ու անտէր մտիք դաշտերուն մէջ շան կեանքն ներս:

Ժխուում, անկասկած, բայց զգոյշ ու զգաստ. պայծառ հորիզոններուն լոյսին տակ, ... ժխուումը պէ՛տ է ըլլայ, առանց նամարտակութեան. խորունկ եւ զգայութեանց ու մասձումներու խոռվի արդիւնք. կեղծիքին, անհարազափն ու անտաղանդին հաստատումով: Ազւոր է ժխուումը, ուրացումը մինչեւ իսկ, երէ մենք կեցած ըլլանք մարմարին վըրա, այլապէս կը դառնանք ծիծաղելի, երբ գաճէ պատուանդանները վիլն ու ապառաժները մնան իրենց տեղը անսաւան, իսկ մենք քաւալինք պատրանքներու աշտարակին վար...:

Այս ժխուումն պիտի ծնին նորը, վաղանը, կը հաւատանք. անո՞վ պիտի հասնենք ստեղծագործ վիտուտուիքին, վիտուուիք որ մեզ պիտի տանի այն յորդ երակին որ հայունն է:

Ուրախալի է, որ մեր գրականութիւնը, մասնաւորաբար վերջին տասնամետակին, իրեն խուզարկութեան դաշտ ընտրած է հայ կեանքը, հայ հայրենիքը, հայ հոգին: Համաստեղէն մինչեւ նարդունքին ու Սասունի, հայ երկիրն է որ իր էջեր կը բանայ, իր յուշերը կը պատմէ. Շահնուրը ու Զարդարեանը, որոնք ժամանակակից կեանքը կուտան, հայ կեանքն է որ կը խուզարկն նորէն:

Բայց, չի բաւեր այս ամէնքը. չենք գոհանար եղածով, որ յառաջարան է դեռ, մը նոլորտ, անաւարտ նկար. մենք կուզենք որ հայը իր ցեղային բոլանդակ փառքովը ցույա մեր գրականութիւնն ներս. դարերու մէջէն. արիւնու իր պատմումանով այլ առաժեալի իր հաւատքովը: Պատմի աշխարհին այն իրացքը՝ որով հազարամետակները ապրող հայը, ոչ միայն կը պահէ յամաօրէն իր գոյութիւնը, որ խորհուրդ գարած է ալ, այլև հալածանքին ու արիւնին մէջէն սիրու ու կամք ունի դեռ ստեղծագործելու: Գծագրու հայ հոգին, որ կայ դարէ դար եւ ինքնինքը կը փնտու: Իր ինքնուրոյնութիւնը՝ բաղաքական, կրօնական, լեզուական ու իմացական: Այս իրաշէք կուզենք որ նառագայքէ հայ գրականութեան էջերէն:

Այս ոսկի զիծը զգացւած է ու ցուցադրած, նիշդ խսն տարի առաջ, խումբ մը արծէնով գրողներու կողմէ: (Վարուժան, Քիւֆէնեան, Ահարոն, Զարեան, Բարսեղեան) ՄԵՀՆԱՆԻ Ա. Քիւին մէջ (1914 Յունիպար 1) ուր ըսած են իրենց «Հանգանակ»ին մէջ եւ պանծացուցած ցեղային զծին հրաշագործոյնքը:

«Կը հաւատանք. Հայ Հոգին՝ Լոյսն է, Ոյժն է, Կեանքն է, անդրեական չքեղութեանը մէջ ԱՐԻԱԿԱՆ ցեղին որուն կը պատկանինք»:

Քասան տարի ետք, նոյն նշանարանն ունինք մենք, բայց աւելի յստակ ու հարկադրական երանգով: Ինչ որ ընդհանրած են անոնք յայտնատնտութեամբ իրեւ գրական բոիչ, կուզենք որ մեզ համար, այսօր, պատգամ դառնայ, արիւն ու ոսկոր առած. կուզենք որ անոնց բուլքի վրա բանածեած տեսութիւնը փառց իջնէ ու խոռնի մեր կեանքին, մեր ժամերուն ու զործին, զամգրածներու քրտինքին հոտք վրան:

Գրական նոր սերունդը պէտք է գրօշակ դարձնէ եւ ուխտեալներու մոլեգնութեամբ իրականացման ճգուի այն:

ինչ որ խսն տարի առաջ ուրիշ մերունդ մը պատգամած է ու մասամբ կիրարկած:

Հայ ցեղը՝ իր դարերու կեանքին մէջ ու դէպի ապագան իր վազքովը. հայ խանուածքը՝ դէպի գաղափարականութիւնն իներս. դարերու մէջէն. արիւնու իր պատմումանով այլ առաժեալի իր հաւատքովը: Պատմի աշխարհին այն իրացքը՝ որով հազարամետակները ապրող հայը, ոչ միայն կը պահէ յամաօրէն իր գոյութիւնը, որ խորհուրդ գարած է ալ, այլև հալածանքին ու արիւնին մէջէն սիրու ու կամք ունի դեռ ստեղծագործելու: Գծագրու հայ հոգին, որ կայ դարէ դար եւ ինքնինքը կը փնտու: Իր ինքնուրոյնութիւնը՝ բաղաքական, կրօնական, լեզուական ու իմացական: Այս իրաշէք կուզենք որ նառագայքէ հայ գրականութեան էջերէն:

Ցեղապահութիւն, բայց առանց այլամերժութեան. հեռու՝ նեղ ազգայնամոլուրենէն, այլանդակ ու ջլատիչը հարդու առջեւ, ընդունակ, ընդգրկելու մարդկան, ինգին, խանուելու ընդհանուր մտածումներու ալիքին, պահելով միշտ իր ինքնուրոյնութիւնը:

Ճարկ է որ հայ արևստագէտը, - զիրինը, գոյնինը կամ ճայնինը - իր ցեղային երակին հասնելու ատեն, բաւական, Զարեան, Բարսեղեան) ՄԵՀՆԱՆԻ Ա. Քիւին մէջ (1914 Յունիպար 1) ուր ըսած են իրենց «Հանգանակ»ին մէջ եւ պանծացուցած ցեղային զծին հրաշագործոյնքը:

Մինչեւ չծնի այս բորբ հաւատէր, այս խորունկ մոլեստութիւնը գրականութեան հանդէկ հայ գրողներուն մէջ, կարելի չէ ունէ յայս ունենալ ո՛ւել մեծաշուրջ ստեղծագործութեան մասին:

Գալիք տարին՝ այս մոլեստութիւնը միշտ ապահովութեան կարութիւնը գրականութեան մասին:

Ինչու հաւատէ չունենալ սակայն, յեղափոխութեան ու յեղափոխականներու գործին՝ արևստի ու գրականութեամբ կարութիւնը կը սպասէ դրեակի վենաբարտապիտին կը սպասէ դրեակի վենաբարտապիտին վրա:

Գահիրէ. Գ. ՄԻՒԹԱՐԵԱՆ

### Ո՞վ է «ԽՏՐԱԴԻՄԱՅ»-ի ՀԵՂԻՆԱԿԸ

«Վէմ»-ի Բ. Քիւ մեր յօդածում պատասխանելով այն հարցին, թէ ո՞վ է հատապէտիմայ»ն այն ձեւով, ինչպէս որ նա հասել է մեզ, երեք ձեռնով

դացւած, բռնւած երազ մը յաւերժացւելու համար:

Ունինք տարբերը, - ոգի, պերճ լեզու, հարուստ պատմութիւն ու փարքարաշան: Պիտի ունենանք կամքին ու հաւատէրը՝ որ տանին մեզ այս ուղիով: Բայց նախ, պիտի ունենանք այս դէմքերը, որոնք ուխտուածներու պէս կը ապահովամարտը, ժամանակի մէջէն, յանուն ապահովութեան եւ հայրենիքի ինքնուրոյն պէս կը ապահովամարտը: Այս դէմքերը, որոնք ուխտուածներու պէս կը ապահովամարտը, ժամանակի մէջէն, յանուն ապահովութեան եւ հայրենիքի ինքնուրոյն պէս կը ապահովամարտը:

Այդ ուխտուածները, - ինչպէս մեր աննամա ֆէտայիները, ինչպէս մեր հին ու առաքելատիպ կրօնաւորները ըրած են իրենց կալածին մէջ, - մեր ցեղազունչ երազը, գրականութեան կալածէն ներս, անկորնչելի բանդակներու վերածելով հարցած կարգութիւնն ապահուածին հոգին, խանուելու ընդհանուր համար մտածումներու ալիքին, պահելով միշտ իր ինքնուրոյնութիւնը:

Մինչեւ չծնի այս բորբ հաւատէր, այս խորունկ մոլեստութիւնը գրականութեան հանդէկ հայ գրողներուն մէջ, կարելի չէ ունէ յայս ունենալ ո՛ւել մեծաշուրջ ստեղծագործութեան մասին:

Գալիք տարին՝ այս մոլեստութիւնը միշտ ապահովութեան կարութիւնը գրականութեան մասին:

Ինչու հաւատէ չունենալ սակայն, յեղափոխութեան ու յեղափոխականներու գործին՝ արևստի ու գրականութեամբ կարութիւնը կը սպասէ դրեակի վենաբարտապիտին կը սպասէ դրեակի վենաբարտապիտին վրա:

Գահիրէ.

կամ երեք խմբագրութեամբ է անցել – յօրինել է Մատաղ Բանաստեղծը՝ ուղղութեամբ ու սրբագրութիւններ է արել Օհանասփիւնան միաբանութիւնը (ընկերութիւնը) եւ վերջապէս հիմնական բարեփոխութիւնների է ենթարկել ու հրատարակութեամ տւել դպիր\*) «Մարտիրոս Մկրտչեամ»: Բայս ենդինակի անձնաւորութիւնը մեռվ էր անյայտ, որովհետեւ ո՛չ գրածքում, ոչ էլ նրան կցած ընդարձակ բացարութեան մէջ («Հասարակախօսութիւն») յիշտած չէ նրա խսկական անունը:

Ի հարկէ, Մատաղ Բանաստեղծը եւ վերջին խմբագիր Մարտիրոս Մկրտչեամը կարող են երկու բոլորավիմ տարբեր անձնաւորութիւններ եղած լինել – ինչպէս որ ենթարկել էինք մեր վերոյիշեալ յօդածում: Սակայն մեր ձեռք բերած նոր տեղեկութիւնները բայլ են տալիս նաև ենթարկելու, որ նրանք բերեւ մէկ եւ միեւնոյն անձնաւորութիւնն են:

Այդ դէպքում այդ մէկ անձնաւորութիւնը ինքը դպիր Մ. Մկրտչեանն է, որ հանդէս է եկել երկու տարբեր դէմով եւ երկու տարբեր անուններով՝ Մատաղ Բանաստեղծ եւ Մ. Մկրտչեան:

Ուզում ենք ասել, որ Մատաղ Բանաստեղծ կոչուածն էլ նոյն ինքն Մ. Մըկրտչեամը կարող է լինել, որը զանազան նկատումներով սկզբում յարմար է համարել իր անձը բազցնել «Մատաղ Բանաստեղծ» վարագոյրի ներքոյ:

Նկատումներից առաջինը համեստութիւնը կարող էր լինել: Երիտասարդ մարդ – դպիր Մարտիրոսը «Խորադիմայ»-ի տպագրութեան տարին (1821 թ.) բոլորովիմ երիտասարդ էր – հանդէս

\*) Դպիր բառը մենք վերցրել էինք միայն գիտմականի, գրագէտի մտքով: Սակայն «Ծնեմարան» բերքից տեղեկանում ենք, որ Մարտիրոս Մկրտչեամը նոր առաջարկութեամբ անցաւած էր անունը:

գալով մէկ շատ պատասխանատու գրաւածքով, բնական է որ, համեստութիւնից դրդած, չկամենար իր անունը դըրոշմել նրա նակատին:

Միւս պատճառը վախը կարող էր լինել: Թէպէտ դեռ երիտասարդ, բայց արդէն բաւական մեծ անուն ու հեղինակութիւն ունէր նա, որպէս գիտնական: Դրա հետ միասին՝ երեք իր «Ծնեմարան» բերքը տակաւին չէր սկսել, բայց արդէն պատրաստութիւններ էր տեսնում հրատարակութեան ձեռնարկելու: Հետեւարար, այս նոր երկով նա կարող էր իր փայլուն անունը վտանգի տակ դնել: Երեք այդ երկը անյառող դուրս գար – ապա կարող էր իր հեղինակութիւնը կորցնել: Եւ ուրին այդ փառագութիւնից գերծ մեալու լաւագոյն միջոցն էր՝ կեղծ անունով հրապարակ գալ, որպէսզի գրածքը տապալւելու դէպքում իր անունը անվար մնար:

Բայց կար մէկ աւելի կարեւոր հանգամանք եւս: Այդ այն է, որ «Խորադիմայ»-ն բոլորովիմ նորութիւն էր իր միջավայրում, մանաւանդ նիւթ ու տիպիք էլ առնած տեղական կենանից ու բացասականորդն ներկայացւած: Ուրին, որոշ մարդիկ, գուցէ եւ ամբողջ նմիկահյութիւնը, կարող էին վիրաւորած զգալ իրենց ու քննաման հեղինակին: Ուստի եւ բնական է, որ վերջինս, հնարաւոր բոլոր դգոհութիւններն ու զայրոյթը իրենից հեռացնելու եւ տարբեր հունով ուղղելու համար, բարւոք նկատէր մէկ անձանօր հասցէ՝ Մատաղ Բանաստեղծին հասցէն ցոյց տալ:

«Հասարակախօսութիւն»-ից մէկ փոքրիկ բաղադր միայն բաւական է մեր ասածն ապացուցելու: «Որովհետեւ նոր մին անձանօր բամի հեղինակայ դառցել (Մատաղ Բանաստեղծը. իր.) և խրարայ ելէ (իմացել է) որ իր ժամանակակիցը լիարեկայ խոժոռվին (զայրանա), վասնորյ ոչ անունայ յիշէլ եւ ոչ արպէլայ տվէլ»:

բայց շուտով մեր մատաղ Բանաստեղծը բողարկում է:

1821 թ-ի վերջերին դպիր Մարտիրոսը խմբագրում եւ հրատարակում էր «Ծնեմարան» բերքը, որի մասին բերեւս մէկ ուրիշ անձամ առիր ունենանք ընդունակ խօսելու: Այսուղ այսքանը միայն ասենի, որ «Ծնեմարան»-ի մէջ բաւական ցուցմունքներ ենք գտնում, որոնք վկայում են, թէ յիրավի, Դպիր Մարտիրոս Մկրտչեանը պիտի եղած մինի «Խորադիմայ»-ի խսկական հեղինակը, նոյն ինքը Մատաղ Բանաստեղծը: Այդ ցուցմունքները կամ փաստերը երկու տասկակ են – առաջինիմ կամ գոյնի միան մէկ բգրակցութիւն եւ կամ գոնի ծանօթութեամբ կը երբ-էլ:

Երկու տարի յետոյ՝ ինքը Դպիր Մարտիրոսն էլ, իր իսկ բերանով յայտարարում է, որ այս, «Խորադիմայ»-ի ի՞ր ստեղծագործութիւնն է, ինքն է նրա հեղինակը: Այժմ նա արդէն կարող էր այդ յայտարարութիւնն անել, որպիսի համարութիւնը խոստավորութիւնն եւ ոչ համարում:

Այսպէս բգրակից Մելիսոսը «Ծնեմարան»-ի խմբագրին ուղղած իր նամակում գրում է. «Քոյ յօրինեալ «Խորադիմայ» Դպիրութեան Դիրքն, մանաւանդ Հայելին 1) իմա միայնականան այլ իմն մարդ փոխարկեց. նախ քանզ էտուր կարդալն եւ կարծում իմա պէս իսկու յիշութեամբ կարդալ իմ անունով յայտարարել, որ իրեն է պատկանում: Այսպայց, որ կար ժամանակի ընթացքում երեք անգամ խաղացում է Կալկարայում, հասարակութեան ամենաաշխի ընկնող դէմքերի մասնակցութեամբ:

«Ծնեմարան»-ի 1823 թ. Յունարքի վերջի համարում (էջ 1071) Դպիր Մարտիրոսը գնում է հետեւեալ ծանուցումը. «Տիուրամ ծանուցանին որ կարադիւմ երրորդ մասն եւ կտրամիայ աշխարհս ինչ խրաբյ: Ճշմարգայ աշխարհս ինչ խրաբյ: 1) «Հայելին» «Խորադիմայ»-ին կցւած 2) Մելիսոս «Խորադիմայ»-ի գլխաւոր հերթակ:

1) «Հայելին» «Խորադիմայ»-ին կցւած 2) Մելիսոս «Խորադիմայ»-ի գլխաւոր հերթակ:

Երրորդ մասի կողմանէ ոչինչ փոյք չունեմ, բանզի այժմ յարկաւոր չի, ամենեցում խակացը իմ գործի (ուգաւ նեղեկցին նպատակները) կորատէլ են երբցի:

է ասել՝ «Խորադիմայ»-ի արժանաւորութիւնն. նատագովուրեան կրկին յարկաւորութիւն չունիմ. քայց վասն խորադիմայի սորչութեան համար շատ ափսամ. ի՞նչ պիտի առել (անել), յուսովամ կրկին յօրինել եւ տպագրել բատ պատեհութեան եւ հանգամանաց ժամանակի, եթէ տէր կամեսցի» (Ընդգծումներն մերն են. իր.):

Ի՞նչ ենք տեսնում այս պերճախօս փաստարդից - առաջին՝ այն, որ Դըպիր Մարտիրոս Մկրտչեանը իր խորադաւով վկայում է, թէ ինքն է «Խորադիմայ»-ի հեղինակը, ինքն է յօրինել եւ իր իսկ գործն է նա:

Երկրորդ՝ որ նա յօրինած եւ տպագրած է եղել նաև «Խորադիմայ»-ի Գ. մասը - առաջինը՝ բուն գրածն է, երկրորդը՝ նրա «Հասարակախոսութիւնըն», կրկին բացատրելու, հասկացնելու համար իր գործի, այսինքն՝ «Խըտրադիմայ Դժբաղութեան»-ի «արժանաւորութիւնն»:

Երրորդ՝ որ նա յօրինած ու տպագրած - պատրաստած է եղել նաև մի երկրորդ բատերգութիւն՝ «Խորադիմայ սորչութիւն» անունով: Դժբախտարար, պահեստում անիրաւ մկներն ու ցեցը մեր Դպիրի այդ նոր հեղինակութիւնները կտրատում, փչացնում են եւ նա բատիպատճեն է լինում այրել իր տարիների աշխատութեան արդիւնքը: «Խորադիմայ»-ի Գ. Մասի համար նա այնքան էլ չի ցաւում, որովհետեւ նրա կարիքն այլեւս չկայ. ամենին արդին գիտեն ու հասկացել են «Խորադիմայ Դժբաղութեան»-ի արժանաւորութիւնը: Շատ ցաւում է «Խորադիմայ սորչութեան»-ի համար, որպինիտեւ նա նոր աշխատութիւն էր եւ դեռ եւս հասարակութեան սեփականութիւն չդարձած: Սակայն, յոյս ունի կրկին յօրինել ու տպագրութեան յանձնել - եթէ պայմանները մերն:

Այսպէս, ուրեմն, եթէ մեր բերած վկայութիւնները տառացիօրէն հասկա-

նանք, այլեւս կասկած չի մնայ, որ «Խորադիմայ»-ի խորակն հեղինակը կամ մեզ ծանօթ Մատաղ Բանաստեղծը ինքը Դպիր Մարտիրոս Մկրտչեանն է, «Շտեմարան» քերքի խմբագիր-հրատարակիչը եւ Օհանասիւլեան ընկերութեան հիմնադիրներից ու ամենաեռանդուն անդամներից մէկը:

Մեզ բաւում է՝ իսկապէս սխալւած էլ չենք լինի, եթէ Դպիր Մարտիրոսին ընդունենք որպէս խորակն հեղինակը մեզ գրադեմոն բատերգութեան եւ նրան նոյնացնեն Մատաղ Բանաստեղծի հետ:

Քայց չմոռանանք վակագծերի մէջ խոկյն նաև աւելացնել, որ վերոյիշեալ երկու փաստերը - բղբակից Մելիտոսի վկայութիւնը եւ իր՝ Դպիրի յայտարարութիւնը - կարելի է քերեւս այլ կերպ էլ ըմբռնել: Այսինքն՝ որ «Խորադիմայ»-ի խորակն հեղինակը նիշու որ մեզ անծանօթ Մատաղ Բանաստեղծն է, եւ նա ու Դպիր Մարտիրոսը բոլորովին տարբեր անձնաւորութիւններ են: «Սակայն Դպիրը իրեն համարում է գրածքի փաստական տէրը եւ նրա հեղինակը, որովհետեւ ինքը ահազին մասնակցութիւն է ունեցել նրա խմբագրութեան եւ հրատարակութեան գործում:

Թերեւս նայն հիմունքներով էլ ժամանակի հասարակաց կարծիքն եւս նըրան է համարել այդ երկի հեղինակը, որի մէկ արձագանքն է բղբակից Մելիտոսի նամակը:

Հետագայում գուցէ նոր նիւթեր, նոր փաստարդեր էլ գտնելին, որոնք եւ նոր լոյս սփուն այս մուրք հարցի վրա: Սակայն այսօրայ մեր ունեցած տեղեկութիւններով պէտք է ընդունել, որ յիրաւի, «Խորադիմայ»-ի խորական հեղինակը Դպիր Մարտիրոս Մկրտչեանն է, որը ինչ-ինչ պատճառներով նպատակայրմար է գտել իր անձը թագժնել Մատաղ Բանաստեղծի անւան տակ:

Զաւարա - Սպահան.

8. ԻՐԱՋԵԿ.

## ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՆԻԿԻ ՀԱՅԱՍՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇԻՖԱԳՈ ԺԱՂԱՔՈՒՄ ապրող ԱՍՏԻԼ ՏԵՎԼԻՆԵԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ նւիրել է իր 40,000 գրքից բաղկացած հարուստ գրադարանը, որ արդէն ստացւել է երեսնում: Գրադարանը կազմել է 25 տարւայ ընթացքում եւ, ի միջի այլոց, բովանդակում է նոյն հաւաքածուներ արեւմբուհայ գրականութիւնից, ինչպէս նաև հագուստ իրատակութիւններ: Հայաստանի Հանր. Գրադարանում յատուկ սենեակ է յատկացած ՏԵՎԼԻՆԵԱՆԻ նւիրած գրքերի համար:

ՈՒ. ԱՆՈՒՓԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ

Մեզ հազորդում են, որ Հայաստանի Պետիրատը որոշել է հրատարակել հանգուցեալ բանաստեղծ Անոփինեանի երկերի ժողովածուն, որի կազմութիւնն ու Խմբագրութիւնը յանձնեած է բանաստեղծ Սիմ. Բարիեանին: Արդէն հաւաքած են Անոփինեանի տապած եւ անտիպ բանաստեղծութիւնները եւ յանձնեած արտագրութեան: Բնագրի համեմատութիւնից յետոյ, պիտի կազմի հատորը, որին կցւելու է եւ բանաստեղծի կենսագրութիւնը:

ԽԱՉ. ԱԲՈՎԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄՈՍԿԻԱՅՈՒՄ, «Նշանաւոր Մարդկանց կեանքը» մատենաշարում, լոյս է տեսել Վ. Վահանեանի ոռուերէն ընդարձակ աշխատութիւնը «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ» վերնագրով: Հատորը բաղկացած է 320 էջից եւ պատկերագրով: Ցաւելած առաջ նայելու հերեւած «Հայկական Օրագրութիւն» կամ յաջող եւ տեւական կը լինի «Եղիմջ»-ը, ցոյց կը տայ ապագան: Պէտք է նկատել, սակայն, որ երգիծարքի գոյութեան եւ զարգացման երկու հիմնական պայմանն էլ պակասում

քիւն» հանդեսի մասին փաստարդեր՝ հանած կազմի համալսարանի դիւնանց: Գրքին կցւած են հարուստ ծանօթութիւններ եւ մատենագրական ցանկ Արովեանի մասին:

ԵՐԳԻԾԱԹԵՐԹ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Հակառակ «գրական պրոդուկցիա»-ի հանական զգալի վերելքի, Հայաստանում մինչեւ այժմս էլ չեն կարողանում ստեղծել իիշ շատ լուրջ երգիծարքեր: Մի ժամանակ Երեւանում հրատարակում էր «Զուռնա» երգիծարքերը, նըրան յաջորդեց, «Կարմիր Մոծուկ»-ը: Սրա մահից յետոյ, Թիֆլիսում ծննդառան առաջարկում էր բարձրացնել առաջարկութիւնը, բայց այդինք գործութիւնը չկատարվեց: Այս բոլոր ձեռնարկները եւ բնագրի հանդիպութիւնները են, որ Հայաստանի Պետիրատը որոշել է հրատարակել հանգուցեալ բանաստեղծ Անոփինեանի երկերի ժողովածուն, անարին և խեցիներ, սակայն, այդ էլ չկայ. Խորհրդանում էր ամբողջ տարածութեան վրա մէկ հատիկ հայերէն երգիծարքը:

Այժմ Երեւանում ուզում են լրացնել այդ պակասը. որոշակ այս լուրջ է յուն. 1-ից իրատարակել «Եղիմջ» անունով մի երգիծարքերը, որին պիտի աշխատացնեն հներից լեռ-կամսար, Փալմանուր Մկօ, Դ. Գէմիրեանին, Ստ. Զօրեան եւ ուրիշներ, մի շարք երիտասարդ երգիծարաններ, ինչպէս Եղիմջի, այլիւ Արուտչան եւ կամայական պայմաններից չունի:

Այժմ Երեւանում ուզում են լրացնել այդ պակասը. որոշակ այս լուրջ է յուն. 1-ից իրատարակել «Եղիմջ» անունով մի երգիծարքերը, որին պիտի աշխատացնեն հներից լեռ-կամսար, Փալմանուր Մկօ, Դ. Գէմիրեանին, Ստ. Զօրեան եւ ուրիշներ, մի շարք երիտասարդ երգիծարաններ, ինչպէս Եղիմջի, այլիւ Արուտչան եւ կամայական պայմաններից չունի:

են երեւանում - ազատ միջավայր, այսիմն խօսի ազատութիւն, եւ հանդուրժող ոգի իշխանաւորմերի մէջ:

Երեւ «Կոռկողի»-ը Մասկուայում, կամ «Նեանդի»-ն Թիֆլիսում որոշ յաջողութիւն ունեն, գլխաւոր պատմառը այն է, որ ուսու ու վրացի բոլշևիկները մտքով աւելի բարձր են ու աւելի լայնարտ, քան երեւանցիները:

#### ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԼԻԹ

Հայպետհարած ձեռնարկել է «Սասունցի Դալիթ» երկիսոր մեծ ժողովածութիւն երատարակութեան: Ժողովածութիւն մէջ մտնելու է ժողովրդական վեպի մօս 60 տարբերակ (վարիանտ): Առաջին հատորը բաղկանալու է մօս 1000 էջից եւ ընդգրկելու է 40 տարբերակ, որոնցից շատերը գրի են առնեած վերջին տարիները եւ լոյս են տեսնելու առաջին անգամ: Բոլոր տարբերակներին կցւած են յառաջարաններ եւ ծանօթութիւններ: Ժողովածուն խմբագրերել եւ տպագրութեան պատրաստել է պրոֆ. Ման. Աքեղեանը: Արտաքին ձեւառումն ու պատկերազարդումը կատարել է նկարիչ Յակ. Կազոյեանը:

#### «ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒ

Յունարքին լրանում է Վահ. Տէրեանի ծննդեան յիսնամեակը եւ մահաւան 15 ամեակը: Այդ առքին երեւանում պատրաստում է մի ժողովածու, որ նոր նիւթեր է բոլիանդակելու բանաստեղծի կեամբի եւ ստեղծագրածութեան մասին: ի միջի այլոց, պատրաստած են «էջեր Վ. Տէրեանի յեղափոխական գործունեութիւնից»՝ Մոսկայի գիւտանկան վաերագրերի կիման վրա: Ժողովածութիւն մէջ մտնելու են Ն. Մասի մէկ յօդւածը՝ «Իմ ուսանող Վահան Տէրեանի մասին», պրոֆ. Ի. Օքելու յիշողութիւնները, Վ. Վահանեանի գրի առած տեղեկութեանը և այլունքները:

շրջման օրերին Պետրոգրատում եւ Մոսկայաւմ, Ա. Շահիջանեան - Տէրեանի գրութիւնը՝ «Տէրեանի վերջին ուղեւորութիւնը», բանաստեղծի աւագ եղբայր Զաւախեցու յուշերը եւայլն: Բովանդակութիւնից դատելով՝ ժողովածուն պէտք է լինի հետաքրքական, նոր տւեալներով հարուստ վագանիո բանաստեղծի կեամբի եւ ստեղծագրածութեան լուսարանութեան համար:

#### ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖՈԽՆԴ

Մելքոնեան ֆոխնդի 1935 թ. երատարակութիւնների համար նախատեսած է 125,000 ուրեմնի: Արդէն տպագրութեան է յանձնած 10 հատոր գիրք, որոնց թերում՝ Յակոբեանի «Ուղեգրութեան» 2րդ հատորը, Ե. Շահաղիղի «Խաչ. Արովեանի Դիւանը», Յ. Մանանդեանի «Հայաստանի հին նարտարապետները», Խ. Մամելէանի «Հին Հայաստանի Կուլտուրան», Յ-րդ հատոր, պրոֆ. Զավալիշշիլու «Նիւթեր Հայաստանի Սոցիալական Պատմութեան վերաբերեալ», պրոֆ. Յ. Օքելու «Հայաստանի Արևտակ պատմութիւնը», Դ. Սիմոնեանի «Միքնալանդեան» եւայլն: Տպագրւած պատրաստ են եւ շուտով լոյս կը տեսնեն պրոֆ. Մելքոնէթ Բէկի «Վրաց աղբիւրները հայերի եւ Հայաստանի մասին», Գ. Լեւոնեանի «Հայաստանի Պարքերական մամուլն սկզբից մինչև այժմ», հանգուցեալ Այս. Մելքոնեանի «Հայաստանի երաժշտութեան պատմութիւնը», Աշխ. Քալանթարի «Վաղարշապատի պեղումները», Հր. Աճառեանի «Արմատական բառարանի յաւելածը» եւայլն:

#### ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բուերէշում կազմւած է երատարակչական անհնում մի ընկերութիւն - «Մասիս» - 500,000 լէյ դրամագլուխով: Ընկերութեան նպատակն է երատարակել հայերէն լեզով գրքեր կամ օտար լեզուներով հայերի մասին աշխատու-


թիւններ: Ընկերութեան կանոնագրի 7րդ յօդւածը տրամադրում է. «Հրատարակել հայ տղոց եւ պատանիներու համար հայերէն դասագրքեր, գրական գրածեր եւ հանդէսներ. տարածել հայ հասարակութեան խաւերուն մէջ արեւմբտեան մշակոյքը, ինչպէս նաև ծանօթացըների օտարներուն հայ մշակոյքը: Հաստատել յասուկ մրցանակ՝ ընկերութեան շահին մէկ մասովը, բազալիրելու համար արժէքաւոր գրական գարծեքը»:

Ընկերութիւնը առաջին հերթին ձեռնարկել է մանկական գրականութեան հրատարակութեան՝ հիմք դնելով «Մասիս» մանկական մատենաշարին, որից տարեկան պէտք է լոյս տեսնէ 24 գրքերոյնկ՝ իւրաքանչիւրը 32 էջից բաղկացած: Արդէն լոյս են տեսնել երեք գրքերոյնիւրը: Հրատարակութիւնը արտաքինով գեղեցիկ է - ընտիր բուլը, մասնուր տիպ, խոշոր տալեր, պատկերագրդ: Կողքի վրա Միծ ու Փոքր Մասիսների եւ Արաքսի նկարը: Գինը շատ

մատչելի: Մատենաշարը պէտք է իր մէջ ամփոփէ հայ եւ օտար մանկական գրականութեան լաւագոյն մասը: 24 գրքոյնի տարեկան բաժնեգինն է 2 դոլար կամ 30 ֆր. ֆրանկ: Բաժանորդագրւել կարելի է եւ «Վէմ»-ի միջոցով:

«ՍԵՒԱՆ» ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բուստոնում կազմւած է «Սեւան» անունով երատարակչական մի ընկերութիւն, որ երատարակելու է ժողովրդական համբամատչելի գրքեր հայ եւ օտար լեզուներով: Արդէն տպագրութեան է յանձնած մօս մի տարի տապաշարին շատ առաջանակ գրուստ է յարական մատենաշարին: Արդէն լոյս են տեսնել երեք գրքերոյնիւրը: Հայաստանի հայերէն պառագրութիւնը կամ ընդգրկել է ընտիր բուլը, մասնուր տիպ, խոշոր տալեր, պատկերագրդ: Կողքի վրա Միծ ու Փոքր Մասիսների եւ Արաքսի նկարը: Գինը շատ



## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱՐՄԻՆ ՍԵՒԱՆ «ՄԱՍԻՆ» ՏԱՐԵԳԻՐՔ

Բ. Տարի, 1935, Սովիա.

Պարսամեան եղբայրների «Կեանիք եւ Արեւատ»-ի կողքին Արմէն Սեւանի «Մասին» տարեգիրքն էլ, կարծես, սահմանած է ապրելու: Առաջինը գերազանցապէս ուշադրութիւն է դարձնում արտադիմ գեղեցկութեան վրա, «Մասին»-ը, պահելով համեդքա արտաքին վայելչութիւնը, զլխաւոր տեղը տալիս է բռվանդակութեան: Այս տարի էլ Արմէն Սեւանի տարեգիրքը օժտւած է բազմակողմանի եւ հետաքրքական բաժնեներով - գրականութիւն եւ գեղարեւու, գիտութիւն, դիւան հին ու նոր թղթերի, բուլղարական երէկն ու այսօրը, անհետացող դէմքեր եւայլն: Գրական քաժնը քաղացած է մի քանի մասերից - արձակ ու չափածոյ հայկական նիւրեր, էջեր բուլգար գրականութիւնից, արձագանք չայսատանից, եւ մշակոյթը արտսասահմանում, զրախոսական, երգիծական եւայլն: Այս բաժնը, որ բընում է հասորի գրեթէ կէսը, կազմած է խնամքով ու նաշակով: Արմէն Սեւանը վարպիտ է գրական - գեղարւեսական կտորների բնտրութեան մէջ: Բաժնի ամենէն սիրուն կտորը, ի հարկէ, Արարկի Մաշկերտ գիւղի «Օրօր»-ն է, որ Արմէն Սեւանը առել է իր հանգուցեալ մօրից: Որքան եւ նեղ լինին «վէմ»-ի էջերը, մենին անպատճառ ուզում ենք առաջ քերել այդ գոհարը: Արժէ, որ մեր հմուտ երաժշտագէտներից մէկը ճայթագրէ, որ տարածի իբրիւ օրօրոցի երգ:

Զագուկս օր օր կանչիմ օրերուդ,  
Թեւիկս դէմ դմեմ գալած չարերուդ,  
Չարերուդ, չարերուդ քու վաս օրերուդ.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, իմ նոան հասրկ,  
Իմ նոան հասրիկ, խնառորի մորթիկ,  
Խնառորի մորթիկ, նարնջի կտիկ,  
Նարնջի կտիկ որ նոր է մորթեր,  
Որ նոր է մորթեր՝ պտուդ չէ տւեր.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, իմ հոգուն հոգեկ,  
Իմ հոգուն հոգեկ՝ իմ նորունկ էգեկ  
Իմ նորունկ էգեկ, որ նոր է ժմներ.  
Որ նոր է ժմներ, խաղող չէ տւեր.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, օրդդ շատանայ,  
Օրիկը շատանայ՝ տարեկդ երկընայ.  
Տարեկդ երբայ հարիր տարւայ մօտենայ:

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, իմ գարնան գառնուկ,  
Իմ գարնան գառնուկ՝ աշնան պըրաւուկ:

Օր օր, օր օր:

Արդրուկս պաղաներու կիւլն ես դուն,  
Պղտըտիկ շափախին պիւլախիլն ես դուն.

Օր օր, օր օր:

Գրական բաժնից յետոյ ամենից շատ  
տեղ զրաւողը «Բուլգարահայը երէկ եւ  
այսօր» բաժինն է: Յ. Քիւրտեանը փոր-  
ձում է ներկայացնել բուլգարահայ մը-  
շակոյթի յիշատակարանները, եւ ի մի-  
ջի այլոց, ցաւ է յայտնում, որ ֆիլիպէ  
ապաստած էտիբնեցիները չեն ծախած  
իրեն իբրեւ մօտի մեռագիրները: Մենք  
կարող ենք, ընդհակառակը, շնորհառ-  
ուել, որ կտիբնեցի հայրենակիցները չեն  
յօժարած հայ մշակոյթի յիշատակա-

րանեները շուկայ հանել եւ մի քանի դո-  
լարի փոխարէն Ամերիկա նամրել: Հայ  
մշակոյթի յիշատակարանների տեղը Ա-  
մերիկան չէ, այլ Հայաստանի քանզա-  
րանը, կամ արտասահմանի հայ մատե-  
նադարանները:

Այս բաժնի արժէքաւոր նիւրերից են  
եւ դերասան Վ. Շահինեանի բռուցիկ  
տեսուրինը բուլգարահայ քատրոնի  
մասին, Ե. Գասավեանի «Վէլիխօ-Թռնո-  
վօ»-ն՝ տեղի հայ զարութիւն եւ եկեղեցու  
պատմութիւնը, Ե. Յակոբեանի «Բուլ-  
գարահայ առեւտրական դասակարգը»,  
դժբախտաբար, նայնպէս բռուցիկ  
մի ակնարկ, եւ մի շարք տեղեկատու  
ու վիճակաբական նիւրեր: Այս վեր-  
ջիններից յիշենի բուլգարահայ վարժա-  
րանների 1933-34 թ. հետեւեալ քառական  
պատկերը:

1933-4 թ. Բուլգարիայի 13 հայ հա-  
մայնքներում կար 15 հայ դպրոց, 91  
ուսուցիչներով (62 հայ եւ 29 օտար)  
եւ 2355 երկսու աշակերտներով: Ամե-  
նից մեծ դպրոցը Փլովդիվի Վ. Վալվա-  
ռան վարժարանն է՝ 19 ուսուցչով (16  
հայ, 3 օտար) եւ 627 աշակերտով (337  
մանչ, 290 աղջիկ), ապա՝ Վալվառի Մի-  
սաման վարժարանը՝ 8 ուսուցիչ (6  
հայ, 2 օտար), 288 աշակերտ (151 մանչ,  
137 աղջիկ), Ռուսոնուքի Ս. Մերոպեան  
վարժարանը՝ 7 ուսուցիչ (4 հայ, 3 օ-  
տար), 248 աշակերտ (143 մանչ, 105  
աղջիկ), Բուլղազի Հայկակեան վար-  
ժարանը՝ 6 ուսուցիչ (3 հայ, 3 օտար),  
237 աշակերտ (123 աղջիկ, 114 մանչ),  
Սոֆիայի Արամեան վարժարանը՝ 4 ու-  
սուցիչ (միայն հայ) եւ 208 աշակերտ  
(107 մանչ, 101 աղջիկ), եւայլն:

Շատ հետաքրքական կը լինէր, երէ  
տարեգիրքը չսահմանափակւէր միայն  
մէկ աղիւսակով, այլ աւելի հանգամա-  
նութիւն պատկերացներով բուլգարահայ կը-  
րապահ գործը: 2355 աշակերտով բուլգա-  
րահայ դպրոցական հասակի երեխաների  
ամբողջական թիւք չէ: Կայ ի՞նչ դրու-  
թեան մէջ են միւսները՝ մօտում են ան-  
ուսուցւմ, թէ՞ օտար դպրոցներում են

սովորում: Երէ վերջինս է, ի՞նչ է նը-  
րանց վիճակը ազգային տեսակետից:

Հետաքրքական են եւ Գրուքեան հա-  
շչ մասին առաջ բերւած տեղեկութիւն-  
ները: 1933-34 թ. Բուլգարիայում ե-  
ղել են 14 մասնակիւդ 1,016 անդամնե-  
րով եւ 242,435 լէվ ընդհանուր մուգով:  
Երէ այս բարեր բաղդատենի, օրինակ,  
երկու անգամ աւելի մեծ հայութիւն  
ունեցող նրանայի Հ. Կ. Խաչի հետ,  
Բուլգարահայ Գր. Խաչի կատարած աշ-  
խատանիքի արժէքը է՛լ աւելի կը բար-  
ձրաբանա:

Վերջապէս, մի քանի խօսք էլ «Գիւա-  
ն»-ի «իին ու նոր թղթեր»-ի մասին:  
Այսուեղ, առաջ է բերւած ներսէս Պատ-  
վարժապետանութիւնի առաջնորդներին, հո-  
գեւուրականներին եւ ազգային մարմին-  
ներին ուղղուած (1880 թ. յուն. 18) կոն-  
դակը Վանի, Ալազկերտի եւ Բայազէդի  
շրջանների ավելաներին օգնութեան նը-  
րասան հանգանակելու մասին: Կոնդա-  
կում ասած է, թէ Պալսում կազմած  
է կենտրոնական մասնաժողով, իսկ բա-  
ղրամ եւ գաւառներում՝ տնական  
նիւրեր, որոնք պիտի դիմեն «Ազգին  
Գրուքեան»: Այս ձեռնարկը, որի հո-  
գին էր իրիմեանը, ժամանակին մեծ  
դիր կատարեց սովորաց ժողովրդի փր-  
կութեան գործում:

Միւս վաւերագրերն են «Օգնութեան  
Կոչը» 1887 թ. Զէյրումի մեծ հրդեհի  
առքիւ, Հ. Ն. Ակիմեանի մի քանի նա-  
մակները էցիմանենից եւ Վիկտորիայից, եւ  
մի վաւերագրի Բուլգարահայութեան  
Բալկանեան պատերազմին մասնակցնու-  
թեան վերաբերութիւն: Խօսքը Անդրանիկի  
կամաւորական խմբի մասին է:

Ինչպէս ասացինք, տարեգիրքը բովան-  
դակում է բազմակողմանի եւ հետաքրք-  
րական կտիբնեցիներից: Աւելացրէվ վրան եւ  
բազմաբարիւ ու մահուր տպաւած պատ-  
վարական կտիբնեցիներ: Արմէն Սեւանը աշխատան է տալ հանգուցեալ թէկոդիկի տարեգիրքը փոխարինող մի հատոր - դժւար գործ,  
որ սակայն որոշ չափով յաջողութեան է:  
Երէ հասարակութիւնը բաշակարէ - եւ

պէտք է որ քաջակերէ ու տայ նիւր-  
քական հնարաւորութիւններ, «Մա-  
սկս»-ն, անշուշտ, կը լինի Թէռոհինե

ԵՐ. ՕՏԵԱՆ՝ «ԸՆԿԵՐ ՓԱՆՉՈՒ  
ԽՈՎԻ»՝ «Հահատակ» գրառական թ. 11, էջ 12:

«Նահատակ Գրագիտ. Բարեկամներ»ի լոյս ընծայած վերջին հատորը (№ 9) յատկացւած է ամբողջապէս «Ընկեր Փանջունի»-ին: Առնաւծ է ինչ որ Օտեամբ գրել է այս հշանաւոր «Յեղափոխական»-ի մասին՝ «Առաքելութիւն մը ի Մապլվար», «Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ» եւ ընկ. Փանջունիի «աշխարհահայեացքը» բնորոշող «գրախօսութիւններ օրւայ հարցերուն շուրջ»: Դուրս է մնացել միայն «Ընկեր Փանջունի տարագրութեան մէջ» ամսաւարտ հատածը, որ անարժէք է թէ գրական եւ թէ Փանջունիի տիպի լրացման տեսակտից: Հատորի վերջում դրւած է «Պահպանողականը», «պղուսական տիպար մը», իսկ սկիզբը՝ Օտեամի ամփոփ կենսագրականն ու հեղինակութիւնների ցանկը: Գիրքը հրատարակւած է «Ն.Գ.Բարեկամներ»-ի Մատենաշարին յատուկ թախոնդրութեամբ եւ արտաքին վայելու համբաւ:

Անշուշտ, խմբագիրները ծանր խնդրի առջև են կանգնած եղել Ե-Օտեանի հաստոք կազմելիս. ի՞նչ ընտրել, ո՞րը առնել Օտեանի անհաջիւ գործերից: Ե-Օտեանը օրը օրին գրոյ մարդ էր. արտադրութ էր արագ եւ առատ, անկարգ, յանձիւ առանց ծրագրի եւ նախօրով կազմած բռվանդակութեան: Գրութ էր ինչ որ գրութեան վայրկեանին զալիս էր գրչին: Շատ անգամ՝ ոչ որպէս ներշընչում, այլ իրեւ պարտականութիւն, նաև «հացի համար»: Այստեղից՝ նրա գարմանալի անփուրութիւնը, չասելու համար աւելին, դէպի իր գրիչն ու գրութիւնները: Ե. Օտեանի երկերում, ազիւն ուսկին եւ անվետ խոր անհականիորն խառնած են իրար:

Հատորի խմբագիրները ընդհանուր առմամբ նիշտ են լուծել խնդիրը։ Ե-

կանուք-եան մէջ մնայուն դարձած խօսք  
է:

ինչպէս ասացինք, «Առաջելուրին մը ի Ծաղկաբր»-ի մէջ ե. Օտեանը գործուեի ընդհանուր երեւոյքների եւ տիպերի հետ եւ ոչ որոշ անձերի կամ հիմնարկութիւնների, այդ պատճառով նրա տւած տիպերն ու գաղափարները շատ աւելի ընդարձակ են, քան Օտեանի ինկատի ունեցած միջակայքն ու ժամանակը: Փորձեցէ Օտեանի ակնոցով դիտել, օրինակ, այսօրւայ բոլշեվիկեան միջավայրն ու գաղափարները. դուք կը տեսնէք, որ փանջունիութեան ամեննեն հարազատ պատկերը բոլշեվիզմն է: Ընկեր Փանջունին՝ դա նոյն ինքն հայ բոլշեվիկն է, Ծաղկաբրում պատճաճ դէպֆերը այսօր ամէն օր գրեթէ բառացի կերպով կրկնում են Հայաստանում:

«Կեցը՝ ազատ սէրը,  
«Կեզզէ՝ ազատ միութիւնը,

«Անկցի ամուսնական ստրկութիւնը,  
«Անկցին ընտանեկան շղթաները,  
«Ակացին գիտակից շաբեկոն»—

Ընկեր Փանոսիմի Մապկվարում յօրի-  
նած բռուցիկի այս տողերը հա ամէն  
օր կարդում ենք «Խորիրդ». Հայաստա-  
նից հ էխորդ:

Կամ Քիչ յետոյ, ընկ. Փանջութիվի կազմակերպած քաղաքացիական ամուսնութիւնը Վահում տառացի պատկերը չ- այսօրայ Հայաստանի «Զագս»-եան ինսենյոր ամուսնութիւնների:

Հաւանակամ է, այս է պատճեալը, որ  
Երեւանում մինչեւ այժմ «Առաքելա-  
րին մը ի Ծաղկվար» արգելած պը-  
տուզ է եւ չի մտել ե. Օտեամի գրձե-  
ռի հուսարակւելիք հաստինի մէ»:

Անհամեմատ աւելի բռյլ են ընկ. Փաս-  
ջութիւնի յաջորդ մասերը, որոնք գե-  
ղարեսատական ստեղծագործութիւն լի-  
նելուց աւելի պարզ լրագրական պար-  
սաւագրեր են: Ե. Օտեանը այստեղ  
դրւս է եկել անաշառ արևեստագէտի  
գերից եւ դարձել է պայքարաց կողմ.  
փոխանակ զբաղվելու ընդհանուր երե-  
ւոյքներով ու տիպերով, նա զբաղւում

Է քանձացեալ կազմակերպութիւններով եւ անձեռով։ Եւ գրադաւմ է որպէս հակառակորդ, մանր - մաւեր անարժան հաշիւներ մաքրող։ Միանալով հակադաշնակցական նեղմիտ ու կուազան ամբոխին՝ նա կուսակցական առօրեայ կը-ուի է վարում։ «Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ», բայց, մանաւանդ, «իմ աշխարհինայեացները» շատ հեռու են գեղարւեստական կատարելութիւնից եւ աւելի շուտ պատկերացնում են Ե. Օտեանի բաղաքական ու բաղաքացիական նկարազգի քերութիւնները։ Օտեան այդուեղ Դաշնակցութեան վզին է բարդում բոլոր այն անհիմն եւ ակնյայտնի կերպով չարակամութիւնից քննող ամբաստանութիւնները, որոնցով ժամանակի «շէրիաք-նի» մամուլը աշխատում էր սեւազնելի Դաշնակցութիւնը։ Աղթամար

վանիք, Սահասարենան վարժարանի տեղափոխութիւն, Եփրեմի Փոնտ, Պատրիարքարան, Խորհրդարանական ընտրութիւններ, Քարեգործական, Վասպուրականում պատահող գէպքեր - Ժամանակին պոլսահայ մամուլը ահազին աղմուկ բարձրացրեց այս Խնդիրների շուրջ՝ հազար ու մէկ մեղք վերագրելով Դաշնակցութեան: Այդ Խնդիրները կազմում են Ընկ. Փանջունիի երկրորդ եւ երրորդ մասի բռլանդակուրթիւնը: Ե. Օտեանն այդունք կրքոտ եւ միակողմանի հրապարակագիր է եւ ոչ գեղարւեստագիտ: Այդ պատմառով, մինչ «Առաքելուրթիւն» մը ի Ծաղկվար» սահմանած է մնալու անմեռն, այս մասը գրաւած օրն իսկ արդէն անարժէք էր հայոց գրականուրեան համար՝ քեւել, անկասկած, մէջը պատահում են եւ գեղարւեստական բարձր շնորհով օժուած էնեն:

Ինչպէս ոռւսական առածն է ասում,  
«Երգից բառ կարելի չէ դուրս ճգել»:  
«Նահ. Գրագ. Բարեկամներք»ը լաւ են  
արել, որ Ընկ. Փախչութին տևել են ամ-  
բողջուրեամբ, առանց երանից մասեր  
դուրս ճգելու: Դրանով նրամբ ցոյց են  
տևել գրական լայնախոհուրեան և ի-  
րենց պաշտօնի գիտակցուրեան օրինակ:

Ե. Օտեանի ժամանակի դեպքերը այսօր այլուս պատմութիւն են. քէն Ընկ. Փանջունիի վերջին մասերը այդ պատմութեան խեղարիւրումն են, մի տեսակ ծուռ հայելին, բայց մենք ի վիճակի ենք նիշտը սխալից զատելու, որումք ցորենից ջոկելու: Այն ինչ որ նշարիտ է ու մընայուն՝ կապրի յաւտեան Ե. Օտեանի գործում. սուտն ու սխալը կը մեռնեն ժամանակի ընթացքում:

Պատմում են, որ «Ալաբելութիւն մը ի Նապլվար»-ի լոյս տևսնելուց յետոյ, Սիմոն Զաւարեանը հանդիպելով Ե. Օտ-

### ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊ. ԶՈՀՐԱՊԵՏՈՒՄ՝ «Հայոց Եկեղեցու պատմութիւնը» (ոռումանիքին).

Ռումանիայի հայ ազգաբնակութեան այն մասը, որ դեռ պահել է ազգային կրօնը, բաժանուամ է երկու հաստածի. իին բնակիչները, որոնք կորցրել են մայրենի լեզուն և մինչեւ վերջերս խօսուած իին քիւրքերէն, իսկ այժմ սկսում են խօսել ռումաներէն, եւ նարեքը, որոնք գլխաւորապէս գաղըած են Թիւրքիայից՝ հալածանեների եւ կոտրածների հետեւանքով: Այս վերջինները պահել են հայերէն լեզուն և իրենց զաւակներին, գէք նախնական շրջանում, տալս են ազգային կրթութիւն:

Յուսիկ Արքեպ.-ի ներկայ գիրքը պատրաստած է գլխաւորապէս առաջին կարգի հայերի համար, որպէսզի նրանք համակալի լեզով ծանօթանա իրենց ժողովրդի եւ ազգային եկեղեցու անցեալին: Բնականարար, հեղինակի նըպատակն է զարքեցնել այդ մարդկանց մարած կամ մարող ազգային զիտակցութիւնը եւ աւելի ամուր կապերով կապել ազգային հաւաքականութեան հետ:

8. Զ.

Խամին՝ բարեկամօրէն ծեծել է ուսը եւ ասել.

— Պ. Օտեան, երէ ես դրամ ունենայի, Փանջունիէդ իմաց հազար օրինակ կը տպէի եւ կը տարածէի մեր բոլոր ընկերների մէջ...

Մեծազոյն գովիստը, որ Ե. Օտեանը կարող էր լսել իր գործի համար:

Ս. Զաւարեանի բաղանքը, համեստ սահմաններում, իրագործել են ահա նահ. Գրագ. Բարեկամները: Հասարակութեան կը մնայ կարդալ ու տարածել:

Ս. Վ.

## ՄԱԼԻԱՍ

## Զ Ա Ր Թ Օ Ն Ք

Հայ Յեղափոխութեան վէպը: Հինգ ընդարձակ հատորներ: Գեղարւեստական վառ գոյներով ներկայացւած է Հայ Յեղափոխական շարժումը մինչեւ Օսմանեան լիահմանագութիւն:

Ամէն հայ գրասէր, ամէն հայ գրադարան պէտք է ունենայ Մալիասի այս գործը, որ Թափֆիի վէպէրի չափ հետաքրքրական է եւ նոյնքան գաստիարակէջ:

Հինգ հատորը միասին՝ 50 ֆր.: Կարելի է վճարել երկու նւագով: Ստանալ «Վէմ»-ի միջոցով:

## Մ Ա Ս Ի Ւ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԲՈՒԺԲԵՇԻ ՄԵՋ

500,000 լէյ գրամագլխով հիմնած «Մասիս» Հրատ. Ընկերութիւնը նպատակ է դրել հայ մանուկների եւ պատանիների համար հրատարակել հայերէն ընտիր գրքոյներ հայ եւ օտար առաջնակարգ հեղինակներից: Արդէն լոյս տեսած է 4 գրքոյն՝ մաքուր տըպագրութեամբ, լաւ թղթի վրա, պատերազմարդ:

«ՄԱՍԻՍ» Գրադարանը տարեկան պիտի հրատարակէ 24 գըրքոյն, իւրաքանչիւրը 32 էջ, կամ տարեկան 788 էջոց մի սուտար հատոր:

Զաւակներ ունեցող ամէն հայ ընտանիք պէտք է սուանայ «Մասիս» Գրադարանը, որի տարեկան բաժնեգինն է 24 գրքի համար՝ 30 ֆրանկ կամ երկու տոլար, բացարձակապէս կանխիկ:

Բաժանորդագրեւել կարելի է «Վէմ»-ի միջոցով:

## Ս Ի Ո Ն

## ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 ամգի. շինի կամ 1.50 դլ.  
Հասցէ:

Patriarcat Arménien, Jérusalem  
(Palestine)

## Բ Ա Զ Մ Ա Վ Ե Պ

## ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 3.50 դոլար  
Հասցէ:

“Pazmaveb”, St. Lazar, Venise  
(Italie)

## Մ Ա Ս Ի Ւ

Տարեգիրք ... Խմբ. Արմէն Սեւան  
1935 թ. Բ. Տարի  
288 էջ, բազմակողմանի բովանդակութեամբ, պատկերազարդ, մաքուր տիպ:  
գին 100 լէվ կամ 30 ֆր. ֆր.  
Դիմել՝ Վելլէց, 21, Սոֆիա  
Կարելի է սուանալ «Վէմ»-ի միջոցով:

## Հ Ա Ց Ր Ե Ն Ի Ւ

## ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 „
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ Խի	ՕՐԱԹԵՐԹ
ՄԻԱՍԻՆ	
Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 „
Հասցէ:	

13-15 Shawmut st.  
BOSTON MASS (U.S.A.)

## Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

## ՕՐԱԹԵՐԹ

Եզիպոս, տարեկան,	150 եգ. դհ.
„ վեցամսեայ,	80 „
Արտասահման, տարեկան,	40 շինի
„ վեցամսեայ	20 „
Հասցէ:	

“Houssaper”, B. P. 868  
Le CAIRE (EGYPTE)

## Ն Ո Ր Ո Ր

## ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան, տարեկան,	420 տր.
„ վեցամսեայ	210 „
Եւրոպա, տարեկան,	135 ֆր.
„ վեցամսեայ	80 „
Ամերիկա, տարեկան,	8.00 դոլար
„ վեցամսեայ,	4.50 „
Հասցէ:	

“NorOr”, 20-A, Rue Vouli,  
ATHÈNES (GRÈCE)

## Ա Ր Ա Զ

## ԵՌՈՐԵԱՑ ԹԵՐԹ

Տարեկան	500 լէյ
Հասցէ:	
“ARAZ” Str. Campul Mosilor, № 2. Bucarest, (Roumanie)	

## 1935

## ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Տարեգիրք (Ն. Տարի)  
Խմբ. Մ. Եւ Մ. Պարսամեան  
Պատկերազարդ-Գեղարվեստական գործ  
Գին 20 ֆրանք  
Դիմել:

M. Barsamian

30, Rue Drouot - Paris (9e)

## Հ Ա Ց Ր Ե Ն Ի Ւ

## ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	6 դոլար
Վեցամսեայ	3 „
Եռամսեայ	2 „
Հասցէ:	

Hairenik Press, 13-15 Shawmut st.  
BOSTON-MASS (U.S.A.)

## Ա Լ Ի Ւ

## ԵՐԿՈՐԵԱՑ ԹԵՐԹ

Տարեկան	85 դիալ
Վեց ամիսը՝	45 դիալ
Արտասահման	
Տարեկան՝	170 ֆր. ֆր.
Հասցէ:	

“ALIK”, Impr. Moderne  
Khiabane Posthané, Teheran  
(Iran)

## Մ Ե Ղ Ո Ւ

## ԵՐԳԻՃԱԿԱՆ ՇՐԱԲ-ԱՐԵՐ

Ներփին՝ տարեկան	100 լէվ
„ վեցամսեայ	50 լէվ
Ամերիկա Տարեկան	2 դոլար
Արտասահման Տարեկան	30 ֆրանք
Հաստե:	

K. Kaladjian  
B. P. 444, Sofia, (Bulgarie).

## Հ Ո Ր Զ Ո Ն

## ՕՐԱԹԵՐԹ

Ներփին՝ տարեկան	300 տր.
Արտասահման՝ տարեկան	150 ֆր.
Հասցէ:	

Rue Mitropoleos, 14.  
Salonique, (Grece)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—\*—

ԴՐՈ. — Մի հատւած յուշերից	1
ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ. — Դորպատի համալսարանը	15
ԱՐԵԱԼՈՅ ԱՍՏԻԱԾԱՏԵԱՆ. — Արամը	23
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԿԻՐԵԱՆ. — Թիֆլիսի բարբառի վնասարարները	36
ՍՏԵՓԱՆ. ՔՈՉԱՐԵԱՆ. — Լետն՝ Աքարէկեան իրքեւ բանաստեղծ եւ մտածող	45
ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ՏԱՂԵՐԸ	60
ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ. — Շիխելբուրգի հայ կալանաւորը	67
ԱՊՄՍՈՆ. — Հայաստանի անդր. դեսպանը Պարսկաստանում	73
Ս. ՎՐԱՅԵԱՆ. — Տիկին Եղիսարէք Զօրեան	96
Հին ԹՈՒՂԹԵՐ. — Փիլոսի նամակները Ռոստովին: — Յովի.	
Թումանեանի նամակը Հայաստ. կառավարութեան	101
ԱՆՑԵԱԼՔ. — Նիկ. Մառ. — Բահարուր Բահարբեան. — Վաղ.	
Տէր-Խաչատրեան. — Եր. Օտեան	108
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Հայաստանի բնակավայրերի նոր անունները. — Հերկ ու Ցան, Գ. Մխիթարեան. — Ո՞վ է «Խորադիմայի» հեղինակը, Յ. Իրազեկ	115
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ. —	125
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ. — Ա. Սեւան, «Մասիս» Տարեգիրք, Ս. Ե. Օտեան, «Ընկեր Փանջունի», Ա. Վ. — Յուսիկ արքեպ.	
Զոհրաբեան, «Հայոց Եկեղեցու պատմութ.», Յ. Զ. 128	
ՅԱԼԻԿԻԱԾ. — Վ. Եպ. Մանկունի, Գերգ Դ. իր ժամանակը 113-128	

### ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Խոտալիա՝  
տարեկան 70 ֆրանֆ  
Ֆրանսա եւ մնացեալ Երկիրները, տարեկան 60 ֆրանֆ  
Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան Սիրիա, եւ  
Պարսկաստան. . . . 50 ֆրանֆ  
Հասցէ. նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն  
տեսակ առաքումների համար. —

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

« Զ. — Զեռնագրեսցէ յեպիսկոպոսութիւն, զորս Եկեղեցականք եւ ժողովրդականք իւրաքանչիւր վիճակի միակամ հաճութեամբ եւ վկայութեամբ ընտրեալ մատուցանիցն, իսկ զորս վասն վի- « ճակաց Տաճկաստանի, յետ ընդունելոյ վկայագրութեան ի Պատ- « րիարքանէն Կ. Պոլսոյ, նոյնպէս եւ զորս մատուցանիցէ ի Մի- « արանութենէ Արբոյ Երուսաղէմի, վկայական գրով Պատրիարքէ « նոյնոյ Աթոռոյ՝ ձեռնադրեսցէ Եպիսկոպոս:

« Է. — Բացարձակապէս իշխան է օրհնել զսրբալոյս Միւոնն, « եւ առաքել ընդ ամենայն Եկեղեցիս Հայոց:

« Ը. — Արբաղան Կաթողիկոսն ունի իշխանութիւն պաշտպանե- « լոյ եւ պահպանելոյ զիրաւունս Աղքային Կալւածոց Եղելոց ի « Տաճկաստան եւ յամենայն տեղիս՝ ուր եւ գտանիցին, որպիսիք « համարեալ են վանորայք, Եկեղեցիք եւ գերեզմանատունք եւ այլն « հանգերձ նոցին ստացուածովքն առանց միջամուխ գոլոյ վերակա- « ցութեան նոցին, եւ առանց փոխադրելոյ իրեք ի նոցունց ըստ « հաճոյս:

« Թ. — Ի բաղմաց ժամանակաց առ աստանդական թափառելոյ Աղգի մերում ի զանազան տեղիս եւ յիշխանութիւնս, չեղեւ գու- « մարումն Աղքային Ընդհանուր Ժողովոյ, վասն որոյ Արբաղան Կա- « թուղիկոսն ըստ Զորբորդ յօդուածոյ ծանուցեալ կարողութեան իւ- « լոյ, յետ ոչ բաղում ժամանակաց զումարեսցէ Ընդհանուր Աղ- « դային Ժողով ի վիճակաւոր Եպիսկոպոսաց, ի վարդապետաց, ի « վանահարց, յուսումնական կղերց եւ յիշխանաւորաց ամենայն « վիճակաց Թուսաստանի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի եւ այ- « լոց տեղեաց, որպէս զի ի նմին ժողովի ի քննին առեալ զարդի « վիճակ եւ զհանդամանս Եկեղեցեաց Աղքիս, զիսափանեալսն վե- « րածիցեն (Ճեցեն) յիւր տեղի, զպակասեալս լցուսցեն, եւ զթիւր- « եալմն ուղղեսցեն, ըստ Առաքելական եւ Հայրապետական կանո- « նաց եւ կարգաց Եկեղեցւոյ, եւ Հրատարակել ըստ ամենայն նոցա, « որպէս զի որք զանցանիցեն զնոփօք, զորս Ժողովն հաստատեաց եւ « Հրատարակեաց, անկցին ընդ պատժովք դատապարտութեան: « Նոյնպէս եւ բաղմաց զործոց Աղքայնոց ցրուելոց ընդ զանազան « կողմանս, յորոց են՝ որ առ նուազութեան խղճի, եւ են՝ որ առ « անդիտութեան կամ ի պատրելոյ՝ ի չարօրինակ անցեալ իցեն ընդ « օրէնս եւ ընդ կանոնս, եւ զԱզգն թողեալ ընդ պարտեօք օրինա- « զանցութեան, եւ յանցաւոր եւ պակասաւոր, հոգ տարցէ Ժողովն « ի քաւութիւն անցելոցն եւ ի հանդարտութիւն խղճի բովանդակ Աղգին:

« Ժ. — Արբաղան Կաթողիկոսն հաստատեսցէ ի միումն ի ժօտա-

« ւոր մենաստանաց Սրբոյ Մայր Աթոռոյ էջմիածնի բարձրագոյն  
« ուսումնարան վասն ժառանգաւորութեան Եկեղեցւոյ, զի ի զար-  
« թելոյն ի նմա յարիցեն բանիրուն Եկեղեցականք:

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆՔ ՊԱՏՐԻԱՐՔԱՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ  
ԵԽ Կ. ՊՈԼԱՍՈՅ

« Ա. — Բնդհանրական կաթուղիկոս Սրբոյ էջմիածնի, ծանիցէ  
« զՊատրիարքն Երուսաղէմի Ծայրագոյն Արքեպիսկոպոս եւ Պատ-  
« րիարք եւ նախապատիւ՝ դահերէց Աթոռոյ Սրբոյ Յակոբեանց ա-  
« ռաքելոցն, ընդ գերագոյն հոգեւոր իշխանութեամբ Մայր Աթոռոյ  
« Սրբոյ էջմիածնի:

« Բ. — Բնդհանրական կաթուղիկոսն Սրբոյ էջմիածնի ծանիցէ  
« զՊատրիարքն Կ. Պօլսոյ՝ Ծայրագոյն Արքեպիսկոպոս եւ Պատ-  
« րիարք Ամենայն Հայոց բնակելոց ի Տաճկաստան, ընդ գերագոյն  
« իշխանութեամբ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի, եւ ունել իշխա-  
« նութիւն կարգելոյ եւ յետո կոչելոյ զԱռաջնորդս վիճակաց եղելոց  
« ի Տաճկաստանի խորհրդակցութեամբ Հոգեւոր Ժողովոյն ընդ  
« իւրեւ եղելոյ:

« Գ. — Կաթուղիկոսունք Սսոյ եւ Աղթամարայ ի նստել յԱթոռն  
« Հայրապետութեան իւրեանց, նոյնակս եւ Պատրիարքունք Սրբոյ  
« Երուսաղէմի եւ Կ. Պօլսոյ, յընտրել իւրեանց յուխտէ Եկեղեցւոյ  
« եւ ի ժողովրդենէ, եւ ի նստել յԱթոռ, յատուկ զրով յորում ստո-  
« րագրեալ իցէ եւ ուխտ Եկեղեցւոյն, մատուցեն զհաւատիս մե-  
« ծարանաց առ Մայր Աթոռն Սրբոյ էջմիածնի: Զորեքին Աթոռքս  
« այսոքիկ խորհրդով Հոգեւոր Ժողովոյ իւրեանց՝ զամենայն իրո-  
« ղութիւնս որ վերաբերեն ի հեղեւորս՝ կարեն անօրինել եւ կար-  
« դաղրել իւրաքանչիւր յիւրեանց վիճակի. իսկ ի բոնի եւ ի դէսո  
« դժուարին խնդրոց փութացեն խորհուրդ հարցանել ի Սուրբ Սի-  
« նոդէ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի:

« Դ. — Իւրաքանչիւր վիճակաւոր եպիսկոպոսունք Հայոց բնակե-  
« լոց ի Տաճկաստանի՝ վասն ամենայն Հոգեւորական եւ քաղաքա-  
« կան ինդրոց, պարտին դիմել ի կեղրոն իւրեանց ի Պատրիարքա-  
« կան Աթոռ Հայոց ի Կոստանդնուպոլիս, ունելով իւրաւուն յոր-  
« ժամ Հարկաւորիցէ բողոքել եւ առ Մայր Աթոռ. Սրբոյ էջմիածնի:  
« Սակայն Սուրբ Աթոռն, յորժամ բողոք ինչ հասցէ առ ինքն ի վի-  
« ճակէ իմիքէ, զպատճէն բողոքոյն արձանագրեալ յիւրում դիւանի,  
« կանիւալ վասն նմին իրաց ինդրեսցէ եւ ընկալցի զծանօթութիւն

« ի Պատրիարքարանէ Կ. Պօլսոյ, եւ ասլա մատիցէ տալ զարժանին  
« վնիու:

« Ե. — Ամենայն գանդատք, որ լինիցին ի հոգեւորական մասին  
« զկաթուղիկոսաց Սսոյ եւ Աղթամարայ եւ զՊատրիարքէ Սրբոյ Ե-  
« րուսաղէմի, կամ զմիոյ ումեքէ յԱռաջնորդաց Տաճկաստանի,  
« առաջարկեսցեն նախ Հոգեւոր Ժողովոյն Կ. Պօլսոյ, ուր եւ տար-  
« ցի վոյլթ ամենայն ինամով վճարել զիրսն Բայց Եթէ ինդիրն ոչ  
« լուծանիցէ ի ժողովի անդ, իրաւունս ունիցին որք զրողոքն հա-  
« րեն՝ այսուհետեւ բողոքել եւ առ Սր. Սինօդն Մայր Աթոռոյ Սրբ-  
« ոյ էջմիածնի, որոյ արձանագրեալ յիւրումն դիւանի զպատճէն  
« ամբաստանութեանն, ինդրեսցէ ծանօթութիւն ի Պատրիարքա-  
« րանէ Կ. Պօլսոյ վասն նմին իրաց, եւ ընկալեալ օրինաւոր կերպիւ  
« վնիցէ ի դործ զպատշաճն եւ զարժանաւորն:

« Զ. — Սրբազն Պատրիարքն Սրբոյ Երուսաղէմի, յառանձին  
« Կ ի պատշաճաւոր ուրեք արտաքոյ քան զմեծահռչակ վասն Սրբոց  
« Յակոբեանց, հաստատեսցէ բարձրագոյն ուսումնարան վասն ժա-  
« ռանդաւորութեան Եկեղեցւոյ:

« Զայսոսիկ ամենայն ապաքէն ի դիր առեալ միաբանութեամբ,  
« եւ մատուցեալ Սրբոյ Սինօդի Արարատեան Մայր Աթոռոյ մերոյ  
« Սրբոյ էջմիածնի, կամիք՝ զի պատճէն այսր թղթոյ նոյնութեամբ  
« յերկուս այլ եւս օրինակս գրեալ եւ վաւերացեալ, մինն որ առ ի  
« մէջ մատուցեալ բնագիրս է, սպահեսցի ի դիւանի անդ Սրբոյ Ա-  
« թոռոյն, իսկ մնացեալ երկոցուն պատճէնից այսր սահմանագրու-  
« թեանս զվաւերացուցեալս ի Սրբոյ Աթոռոյն, զմինն առաքել ի  
« Կոստանդնուպոլիս՝ զի պահեսցի անկորուստ ի դիւանի Պատրիար-  
« քարանին, եւ զմիւսն ի Սր. Երուսաղէմ յԱթոռ Սրբոց Յակոբեանց՝  
« զի պահեսցի, եւ իւրաքանչիւր Պատրիարքունք անմուսաց յուշի  
« ունիցին, Եթէ ընդ որովք պարտեօք իցեն ի դիտել զիրաւունս սըր-  
« բազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, եւ ի կատարել զամենայն  
« դործ հոգեւոր իշխանութան յանձն եղելոյ ինքեանց, եւ ըստ այնմ  
« միտ դիցեն վարել:

« Անստերիւր պահպանութիւն գրից ելոց ի սմա կարեւոր ճանա-  
« չի ի պահպանութիւն արտօնութեանց սրբազն Հայրապետի Հայ-  
« կան Աղթիս՝ ի հոգեւոր տեսչութիւն նորին, եւ ի դործադրու-  
« թիւնէ եւ ի պահպանութենէ սահմանելեացս ծանիցի գերագոյն հո-  
« գողութիւն նորա ի վերայ Աղգին, որովք եւ Աղգն ծանիցէ զնա  
« Գերագոյն Հայրապետ Հայաստանեացս Եկեղեցւոյ, եւ արժանա-  
« ւոր յաջորդ Սրբոյ Առաքելոյն, թաղէսոսի եւ Բարթուղիմէսոսի,  
« եւ Սրբոյ նորին մերոյ Գրիգորի Լուսաւորչին: իսկ Եթէ ոք կամ

« առ շահասիրութեան, կամ անձնդիւրի, կամ առ ակնածութեան  
 « իշխանութեան իրիք անհոգացեալ ի միում իմիք յայսցանէ բերցի  
 « ի նուազեցուցանել զսա ի Սրբոց Հարց անտի մերոց ստացեալ եւ  
 « պահեալ արտօնութիւնս եւ անկախութիւնս, եւ պատճառ դոցի  
 « իւրով անհոգութեամբ վատթարելոյ Աղջիս, զայնակիսին ոչ ըն-  
 « դունէ եւ ոչ ճանաչէ Աղջն իրեւ արժանաւոր յաջորդ Լուսաւոր-  
 « չեան Աթոռոյ ընդհանուր Հայրապետութեան Աղջիս: Սակայն եւ  
 « ոչ այսու ցրտանայ ինչ եւ հեռանայ ի գրկաց Սր. Աթոռացն, դոր  
 « միշտ Մայր իւր ճանաչէ, այլ համարէ զայն առ ժամն իբր Աթոռ  
 « թափուր առանց արժանաւոր գահակալի, եւ խնդրէ յաղօթո իւր  
 « յԱստծոյ՝ շնորհել Եկեղեցւոյ իւրում, դոր ապրեցոյց արեամբ իւ-  
 « րով եւ պայծառացոյց առաքելական ջանիւք Սրբոյ Հօրն մերոյ  
 « Գրիգորի Լուսաւորչին ժառանդ արժանի նմին՝ ի Տեսչութեան եւ  
 « ի մատակարարութեան հոգեւոր պիտոյից Աղջիս:

Յամի Փրկչին 1859 Մայիս 8<sup>o</sup> ի Կոստանդնուպոլիս:

Պ. Կ.

Յակոբ Եպիսկոպոս

Սրբոյ Երուսաղէմի փոխանորդ  
 իսահակ վարդապետ,

Պողոս Պետրոսեան վարդապետ  
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Յովհաննէս վրդ.

անդամ Ժողովոյ Կ. Պողոս:

Տ. Յովհաննէս

Մայր Եկեղեցւոյ, անդամ Հոգեւոր  
 Ժողովոյ

Արիստակէս քչնյ.

անդամ Հոգեւոր Ժողովոյ

Անդամ Աղջային Գերապոյն Ժողովոյ

Կնիք աղջային

Ստորագրութեան Հոգեւոր Ժողովոյս մերոյ եւ կնքոյ Ժողովոյ  
 Աղջիս ստորագրութեանն վկայելով, զայն Աղջային խնդիր եւ առա-

Սարգիս Եպս.

անդամ Հոգեւոր Ժողովոյ

Յօհաննէս վրդապ. Սեթեան  
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Պատրիարքական փոխանորդ  
 Յարութիւն վարդապետ.

Անդրէաս վրդապ. Պողոսեան  
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

յԻւսի. Սր. Խաչ եկ.

Յօհաննէս աւագ քչնյ Փափաղ-  
 եան տնդ. Հոգեւոր Ժողովոյ

Երեմիայ քչնյ

անդամ Հոգեւոր Ժողովոյ

Անդամ Աղջային Գերապոյն Ժողովոյ

Կնիք աղջային

Զարկութիւն ստորագրութեամբ եւ կնքով մերով վաւերացուցանեմք

1859 Մայիս 11 ի Կոստանդնուպոլիս

ի Պատրիարքարանն Ամենայն Հայոց.

Պատրիարք Կոստանդնուպոլիս

Գէորգ Արքեպիսկոպոս

Կնիք Պատրիարքին

« (Կոկական յայտարարութեան թուղթն յանձնեալ եղեւ առ ձե-  
 « նեռալ մայեօր Մելիքեան: 1859 Մայիս 15ին հանդերձ նամակաւ  
 « Պատրիարքին առ Զօրապետն):

« Բաց ի յայտարարութիւնէս յայսմանէ վերոգրելոյ, յիշեալ  
 « զօրապետին մատուցաւ՝ առանց ստորագրութեան փոքր ցուցակ  
 « մի ծանուցագիր, օրինակ զայս:»

« Աղթամարայ Կաթողիկոսն հանդերձեալ է երթալ յուխտ ի  
 « Սր. էջմիածին եւ Վեհափառ Սրբազն Կաթողիկոսին Ամենայն  
 « Հայոց՝ մատուցանել զայտակութեան իւրոյ եւ սիրոյ եւ միա-  
 « բանութեան մեծարանս եւ շնորհաւորել զուրբ կոչումն նորա ի  
 « գահ Հայրապետական: Վասն որոյ առ այս խնդրի, զի ի գալ նո-  
 « րին՝ Սրբազն Հայրապետն եւ Սինօղն Մայր Աթոռոյն ցուցցեն  
 « առ նա զիւրեանց պատուամիրութիւն, եւ մի' խստութեամբ բանից  
 « եւ առաջարկութեանց վարեսցեն, այլ չափաւորեալ վայելչու-  
 « թեամբ կարգադրելով զպատշաճ իրողութիւնս, երկուց Աթոռոցն  
 « իրաւասութիւնք բացարեսցին դաշնագրութեամբ ընդ միմեանս:  
 « եւ յորժամ Սրբազն Հայրապետն ընդ գերազոյն իշխանութեան  
 « իւրոյ հաստատել բարեհաճեսցի կաթողիկոսական պատուով (այ-  
 « սինքն՝ թէ պատուեալ միայն կաթողիկոս անուամբ), անուանես-  
 « ցէ զնա Տեղապահ իւրումն ընդհանրական կաթողիկոսական իշ-  
 « խանութեան ի վերայ վիճակիս Աղթամարայ եւ սրբոց վանացն,  
 « միշտ լստ կարելոյն չափաւոր կերպիւ կախումն ունելով յիւրմէ,  
 « փոքր ընդպարձակութեամբ յիրս գործառնութեանց իւրոց:»

Ահա հոչակաւոր ծրագիր այն զորմէ տարաձայնէին նպատակա-  
 ւոր հակառակորդք իրր առաջարկութեան առ ի միանալ ընդ ոռու-  
 ական եկեղեցւոյ կամ մտանել ի պաշտպանութեան նոյն եկեղեցւոյ:

Արդարեւ տարապարտ միանդամայն տգիտական էին համար-  
 մունք եւ ակնկալութիւն տացեալք հանդէպ հասարակ զօրապետի  
 միում հայագույն, որպիսին էր յայնժամ Միքայէլ Լոռու-Մելիք-  
 եան: Նոյնպէս քննադատելի էին առաջարկութիւնքն ուղղեալ առ

գաւառական կրօնական ժողովն ոռւսահայոց, թէեւ կրէ նա զպիտակ անուն Սինօդ վաւերացեալ ոռւսահաստատ կանոնագրութեամբ 1836ի:

Ապիկար թելադրութիւնք եւ անփորձ մտադրութիւնք Տ.Տ. Մատթէոս Կաթուղիկոսի՝ առանց երեւելոյ ի միջի, պարզին զուգիտութիւնն միջազգային իրաւանց՝ մանաւանդ ուղղութեան ոռւսական կառավարութեան՝ առաջարկելով կաղմէլ զընդհ. ժողով եւ կեղեցական (յօդ. 4) եւ կարգել յանէամտ Սինօդի զեկեղեցականս ի Հայոց Տաճկաստանեայց, Ռուսաստանեայց, Պարսկաստանեայց եւ զաղթականութեանց (յօդ. բ.), միանգամայն ի փոխանորդ Կաթողիկոսական դոմն ոռւսահայ եկեղեցականաց հանդերձ սարօքն (յօդ. գ.) եւ մոռնալ զիոխանորդն իւր յանձին Պատրիարքին կ. Պօլոյ, որպէս ճանաչէ մեծ Եպարքոսն Օսմանցւոց յամսն՝ 1868-69 յատուկ գրութեամբն, որպէս տեսցի յիւրում տեղւոջ ի պատմութեան փախանորդութեան Սարգիս Հպսի Զոլոլեան:

Ի գլուխ Արտօնութեանց ուշադրաւ են առաջարկեալքն վասն Սոոյ եւ Աղթամարայ, եւ գովելի ըստ ամենայնի:

Յաւիտենական են յանդերդն եկեղեց. Ընդհ. Ժողովոյ եւ առաջարկն Ազգ. Եկեղ. բարեկարգութեան, զորս գեղգեղեն մինչեւ ցայժմ առանց գիտակցութեան:

#### ԳԼՈՒԽ 1.

ՅԱՂԱԳՍ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Օր աւուր զօրանային ազգեցութիւնք ոմանց Երիտասարդաց, եւ ջանային հաստատել զՄահմանագրութիւն ազգային եւ զսահմանագրական վարչութիւն ընդ դէմ ամիրայից իրը յասպահովութիւն աղգային զարգացման եւ յառաջադիմութեան:

Միացեալ էին ընդ նոսա ոմանք յամիրայից յառաջադիմասիրաց՝ Յովհաննէս Պէյ Տատեան, Պետրոս աղայ Խօրասանճեան, զարդացեալ որդիք ոմանց գլխաւորաց ազգայնոց՝ Նիկոլ. Պալեան, Գրիգոր Օտեան եւ այլն, եկեղեցականք սակաւաթիւք, եւ մեծամասնութիւն համակիր լրադրաց եւ հանդիսից Հայոց արծարծէին բացէ ի բաց եւ համակիր լրադրաց զայս եւ վառէին, պատրիարքին զժողովուրդ:

Ս. Պատրիարք Գէորգ Արքեպս. Խրախուսէր զնոսա, եւ հաստատութիւն արձանագրութեան վիճարանութեան ժողովոյ նախարան եւ կարապետ լեալ՝ ողեւորեալ էր յառաջադիմականս: Ապաքէն օրէնք եւ կանոնք հաստատունք ապահովէն զբարւոք դեկավարութիւն ան-

ձընիւր Ազգի, պետութեան եւ եկեղեցւոյ, բացակայութիւն որոյ խանգարեն եւ կործանեն զազգ, զպետութիւն, զեկեղեցի, զընկերութիւն, զընտանիս եւ զտունս, սպառեալ եւ զգոյութիւնս նոցա:

Զուրկ էին Հայք յայսպիսեաց հաստատուն և ընդարձակ օրինաց եւ կանոնաց կարեւորաց ըստ վարչականին:

Էին արդարեւ կանոնք եկեղեցականք եւ հաւաքածոյք Մխիթար Գօշի, որք ոչ օգնէին եւ ոչ կարէին ուղղել զվարչութիւն ազգային, մանաւանդ թէ կարի անձուկք եւ սահմանափակ էին, մինչ կանոնք ազգայինք թէեւ իցեն թէրիք եւ համառօտք, արդիւնաւորեն յաւէտ եւ հանապազ զհամերաշուութիւն, զբարեկարգութիւն եւ ըգիտակցութիւն ընդհանուր առանց կամայականութեանց եւ քմահաճոյից ըստ ամենայնի եւ յամենայնի:

Մխիթար Գօշ ամփոփեալ է ըկանոնս կարեւորս ըստ ազգային կառավարութեան զոյդ ընդ եկեղեցականին, յորոց չափեմք զուղղութիւնս որպէս ժամանակակիցուց Գօշի, այնպէս նախնեաց մերոց սկսեալ ի վերջին կանոնադիր արքայէ Հայոց ի Լեւոնէ (?) , խառն ընդօտարականաց: Իցի՞ւ թէ բարեփոխեալ զկանոնադ՝ ըստ յարմարութեան ժամանակաց՝ յօրինէին զկանոնագրութիւն ընդհանուր, եկեղեցական եւ ազգային, յորպիսի ջանս թէրացեալ է Հայրապետութիւն Սմենայն Հայոց, եւ յականէ յանուանէ՝ առթիւ հաստատութեան կանոնագրութեան 1836 ամի որ ի պէտո Ս. էջմիածնի եւ կառավարութեան եկեղեցւոյ Հայոց որ ի Ռուսիա: Կամեցաւ լրացուցանել Գէորգ զոյն զայս թէրութիւն ի Հայրապետութեան իւրում ընդ վերացնութեան Պալաժէնիոյ, այլ յարոյց ոռու պետութիւն զմեծամեծ գժուարութիւնս մինչեւ արդել լինել:

Արժան է յայտնել եւ զայս, զի կանոնագրութիւն 1836ի, թէպէտ թէրի յոյժ եւ հակասական, միանգամայն հակառակ զարաւորաւութեանց մերոց, ազգայնոց եւ եկեղեցականաց ըստ նուիրականացն ինդրոց անդամ, այլ զի կրէր զհաստատութիւն պետական, ուստի ըստ մասնեայ ապահովէր զկառավարութիւն եկեղեցական եւ ազգային ընդ յարաբերութեանց պետութեան, ընդ որ ստրացեալ է զարգիս ոռու պետութիւն: Պակասէր կանոնագրութիւն այսպիսի Հայոց Թիւրքիոյ, զոր ջանացին հաստատել անձինք բանիմացք եւ երիտասարդք ոմանք միացեալ ընդ Ս. Պատրիարքի:

Սակայն պակասէին համերաշուութիւնք եւ գիտակցութիւնք, եւ քառեալ կուսակցութիւնք հետեւէին արդիւնաւորել զանձիւր ծրագիրս իւրեանց սահմանագրականս, զորս եւ ներկայացուցեալ էին Ս. Պատրիարքի:

Մրագիրք այնոքիկ էին անյարմարք ազգային վլիճակի շայոց եւ կարօտութեանց, հետեւեալ սկզբանց եւ դրից անզղիական եւ ամերիկան սահմանադրութեանց, մինչ պակասէր ի շայս գոյութիւն քաղաքական եւ բացարձակ:

Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք ջանայր համոզել զամիրայս եւ զազդեցիկ անձինս միանալ ի հաստատութիւն սահմանադրութեան, միանդամայն յորդորել զահմանադրականս որոշել զմի ծրագիր եւ զկանոնադրութիւն՝ յարմարեալ պիտոյից եւ կարօտութեանց աղդային վլիճակի, յորում պահպանել զկարեւորս մասունս իրաւանց եւ արտօնութեանց պատրիարքական իշխանութեան՝ հաշտեցուցեալ ընդ տրամադրութեանց հրովարտակաց տուելոց պատրիարքաց:

Մեծամասնութիւն զօրաւոր ամիրայից եւ կուսակիցք իւրեանց ընդ բազմաթիւ եկեղեցականաց բարձրաստիճանաց, յամառէին ի հակառակութիւնս իւրանց: Կուսակցութիւնք նիկողոս Պալեան եւ Գրիգոր Օտեանի, Սերոբէի Վիչչնեան (Սերվչչն) եւ Ստեփանի Արտլանեան բժշկապետաց, եւ երկուց ուրոյն կուսակցուց Միջագեղջ եւ Խասդեղջ՝ պնդէին յընդունելութիւն եւ ի հաստատութիւն անձնիւր ծրագրաց:

Իսկ Տ. Գէորգ Արքեպս. բաղիսէր յաւէտ հակառակութեանց, տեսանէր միանդամայն զմեքենայութիւն ընդ դէմ իւր ի զօրաւոր ամիրայիցն, որոց պարագլուխք էին կարապետ Պալեան, եւ Պօղոս Տատեան ամիրայք:

Էին եւ այլ խնդիրք եւ պատճառք, զորոց համառօտեցաք:

Այսպէս ապա ծանրանայր վիճակ իշխանութեան Ս. Պատրիարքի, մինչեւ ծանրանալ հակառակորդաց յուղել զինդիր հրաժարականի:

### ԳԼՈՒԽ Ա.Ա.

ՑԱՂԱԳՍ ՀՐԱԺԱՐԵԼՈՅ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. Ի ՊԱՏՐԻԱՐՔ-  
ՔՈՒԹԵՆԵ

Ցետ վերագարձի Օգոստ. Սուլթան Մէճիտ Կայսեր Թուրքիոյ ի ճանապարհորդելոյ յԵղիսլոսոս, զոր գիմաւորեաց եւ ողջունեաց Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք մեծաւ հանդիսիւ եկեղեցականաւ կացեալ ի ծովեղըն յԵնի-Գարու ի 23ն Յուլիսի 1859ի, ճեռնարկեն հակառակորդ ամիրայք ի նոր զաւադրութիւն ընդ դէմ Գէորգայ եւ հաստատութիւն Ազգային Սահմանադրութեան առաւել իմն առարկութեամբ եւ փութաջանութեամբ:

Սրտմտեալ կանգնեալ էին Ամիրայք Արքունի ճարտարապետ կարապետ Պալեան, արքունական վառողապետ Պօղոս եւ Յովհաննէս Տատեան, արք զօրաւորք եւ ազգեցիկք ըստ բազում մասանց, եւ հանդիսացեալ ի պարագլուխ հակառակորդաց՝ միացուցեալ ընդ իւրեանս զմեծամասնութիւն բարձրաստիճան եկեղեցականաց ընդ Տ. Յակոբոս Արքեպս. Երբեմն պատրիարքի: Ոչ պակասէին նոցա ամբաստանութիւնք զԳէորգայ առ ի գրդուել զկուսակցութիւնս իւրեանց եւ զէզոքս անդամ՝ բաց ի Սահմանադրականաց եւ ի գաւառացուց:

Բաւական էին նոցա խնդիրք Ազգային Հիւանդանոցի, Գերեզմանատան Յերայի, արգելման անձահ Տեղեկագրոց (քաֆրիր), արձանագրութեանց վիճաբանութեանց ժողովոց, մանաւանդ խմբագրութեան եւ հաստատութեան Ազգ. Սահմանադրութեան, այլ սակայն առարկեալ եւ պատրուակեալ նոցա զինդիր Սահմանադրութեան՝ որ ջամանակ էր զքմահաճոյ գործողութեան ամիրայից եւ անձանց նշանաւորաց, յաճախ արդիւնաւորելոց ի վնաս Ազգի եւ Եկեղեցոյ, յաւելին ամբաստանել զԳէորգայ եւ զայսոսիկ, թէ ունի զիառասիրութիւն ծայրայեղ, թէ խայտառակէ զեկեղեցականս ի ժամու եւ ի տարաժամու՝ ի դէպս թէ յանդէպս յանդիմանեալ, թէ մերժեաց զկարեւոր խնդիր առաջարկութեան որ առ Տ. Մատթէոս Կաթողիկոս ասդ ի կ. Պօլիս, թէ ինքնին եւ միապետաբար վարէ զիշխանութիւն պատրիարքական եւ զդործս ազգայինս, թէ ունի զիրուստ վարս եւ զրաբս, թէ արգելու ժողովականաց ծխել ի ժողովի, թէ խանդարէ զեկեղեցիս եւ միջամտէ երգեցողութեանց գպրաց, և թէ անարդանօք վարի ընդ ազգային պաշտօնեայս, ընդ ժողովականս եւ ընդ խնդրասուս, եւ յարմարէին զայլս բանս եւ զզրպարտութիւնս այսպիսիս: Արդար էին բանք վերաբերեալք խատութեան, նախանձախնդրութեան, կարգապահութեան եւ օրինապահութեան Տ. Գէորգայ Արքեպս. լուս ամենայնի եւ յամենայնի՝ ապացուցեալ յամենայն պաշտօնավարութիւնս սորա:

Իսկ սահմանադրականք Երկպառակեալ էին, եւ մինչ ջանային բառնալ զազդեցութիւնս ամիրայականս եւ հաստատել զազդային վարչութիւն սահմանադրական, երկպառակութիւնք նոցա գժուարացուցանէին զանս Ս. Պատրիարք, մանաւանդ նպաստէին խարդաւանութեանց հակառակորդաց հակառակ կամաց եւ նպատակաց իւրեանց:

Ապա յետ բազում ջանից եւ խորհրդակցութեանց որոշեն հակառակորդք ի մասնաւոր ժողովակի ի Մեծ-Նոր-Խանն ի կ. Պօլիս պահանջել զհրաժարական Գէորգայ ի Պատրիարքութեանք, զոր բանի-

բերանոյ պատգամաւորութեան առաջարկեն առ Գէորդ Արքեպսու-ի ի դիմաց զօրաւոր Ամիրայից եւ ժողովականաց ի 13ն Նոյեմբերի (1859) : Իսկ ամիրայք բարեմիտք եւ ազատականք՝ որպիսիք էին Պետրոս Խօսասանձեան, Գէորդ Փափազեան, Աշնունեանք, միացեալ ընդ մեծամասնութեան ժողովրդեան եւ սահմանադրականաց ջանան սիրաշահել զի՞որդ, զի մի՛ հրաժարեսցի, միանդամայն մտանել ի միջնորդութեան եւ լրաւախոհութեամբ կարգադրել զհաշտութիւն ամիրայից եւ հակառակորդաց ի 17ն ամսոյն (Նոյեմ.):

Փոխադրեն հակառակորդք առժամս զժողովատեղի իւրեանց ի Մեծ-Նոր-Խանէ ի Պէշիկթաշ, ի տունս Պալեանց եւ Յովհաննէ՛ Տատեան, եւ ի 14ն Մարտի 1860 թուականի ուլստեն հրաժարեցուցանել եւ հանել զի՞որդ ի Պատրիարքութենէ :

Յայնմիկ ժողովակին էին ամիրայք կարապետ Պալեան, Պօղոս եւ Յովհաննէս Տատեան, Պարոնայք Յակոբ Մուլահեաճեան, Եազուակեան, Աւետիս Պարտիզաննեան, Յովհաննէս Սուրէն-եան եւ այլք ոմանք:

Իսկ ի 17ն Մարտի ժողովեալ ի նորոյ ի Մեծ-Նոր-Խանի, ընտրեն ի միջոյ իւրեանց զպատուիրակս առ ի երթալ առ Գէորդ Արք-եպս. եւ պահանջել զհրաժարականս :

Պատուիրակին էին. Եազուակ Եազուակեան, Աւետիս Պարտիզաննեան, Կիւմիչճի (ուկիւրիչ) Գասպար, Յակոբ Մուլահեաճեան, Թովհաճան Կեսարացի, Մինաս Թօգաթլեան եւ Յովհաննէս Սուրէն-եան, որք եկին ի Պատրիարքարան ի յաջորդ առուր (ի 18ն Մարտի) եւ առաջարկեցին Ս. Պատրիարքի տալ զհրաժարական, որոց խոստացաւ Գէորդ Արքեպս. առաքել զհրաժարակիր իւր առ Բ. Դուռն ըստ սովորութեան :

Եւ ահա ի սմին աւուր յետ նոցա, եւ ի յաջորդ աւուրս փութացին առ Գէորդ Արքեպս. Պատրիարք գալ վեշտասան պատգամաւորք անձինք պատուաւորք եւ ի դիմաց Հայոց Խասդեղ, ի Միջազեղջէ, յիւսկիտարէ, ի Սամաթիոյ եւ յայլոց գլխաւոր թաղին ոմանց եւ յարուարձանաց, ընդ որս բազումք ի խմբագրաց լրագրոց, եւ ինդրեսցին ի սմանէ մերժել զալորէն առաջարկութիւն հակառակորդաց եւ չսալ երբեք զհրաժարական ի պատրիարքութենէ, սպառնացեալ յուղել զիսովութիւն մեծ եւ զշարժումն աղդային ընդ դէմ հակառակորդաց: Պնդէին ընդ թախանձանս իւրեանց, որոց պատասխանէ Գէորդ եւ յորդորէ ի խաղաղութիւն եւ թողուլ կամաց իւրոց եւ տնօրէնութեան առ ի դորժել զարժանս, եւ սիրաշահեալ ուղւոյ զնէ զնոսա, խոստացեալ շարունակել զպաշտուան:

Իսկ ի գաղտնի եւ լոելեայն զրեալ զհրաժարական իւր ի սմին

իսկ աւուր՝ առաքեաց որում հարկ էր, զրալ ընդ նմին եւ զառան-ձին նամակ առ Մեծ Եպարքոս Ռիւշտի-Մէհմէտ փաշայ բարեկամ իւր՝ թախանձեաց փութացուցանել զնդունելութիւն հրաժարականի իւրոյ եւ զաղատութիւն ի պատրիարքութենէ, զոր եւ առաքեաց ի յաջորդ աւուր:

Սահմանադրականք եւ ժողովուրդ, խուներամ բազմութեան Հայոց գաւառացւոց շարունակէին գալ առ Տ. Գէորդ Արքեպս. եւ թախանձին չհրաժարել, որ եւ միամտեցուցանէր զնոսա: Եւ ի միւս-մէ կողմանէ հետեւէր ազատութեան իւրում:

ՅՅ1 Մարտի առաքեաց զրժշկապետ Սերոբէ Վիշէնեան (Սեր-վիշն) ի գաղտնի ի միջնորդ առ Սատրապամ Ռիւշտի-Մէհմէտ փա-շայ եւ առ նախարար արտաքին գործոց (Խարիճիյէ) Ֆուատ փա-շայ առ ի հաճեցուցանել զնոսա, որպէսզի ընկացեն զհրաժարական իւր, զոր մերժէին եւ վերադարձուցանէին առարկեալ զհրաման կայսերական:

Մինչեւ ցտասներուրդ օր Ապրիլի կրկնեաց եւ երեքրկնեաց առա-քել զրժշկապետ Սերոբէ ի միջնորդել առ նախարարսդ երկուս, ո-րոց էր բժշկապետ անձնական, որպէս եւ առ հոչակաւորն Առի փա-շայի: Այլ ի նանիր: Գուցէ ոչ կատարէր եւ Սերոբէ զմիջնորդու-թիւն իւր ըստ արժանույն՝ ի գաղտնի լեալ ի կողմն սահմանադրա-կանաց եւ ի շարս անկեղծ բարեկամաց Գէորդայ:

Ի 14ն ամսոյն (Ապրիլի) ինքնին դիմեաց առ Մեծ-Եպարքոս եւ առ Խարիճիյէ, որք շարունակէին մերժել զհրաժարական սորա, իսկ առ զնդէր ինսլրել առ ի ազատել զանձն ի պիտակ պաշտօնէ Պատ-րիարքութեան, յաւելեալ միանդամայն, զի ոչ շարունակեսցէ յետ այսօրիկ զպաշտօնդ զայդ:

Հազիւ ուրեմն յաջողեալ ստանալ զպատասխանի առանձին նա-մակի իւրոյ ի Ֆուատ-փաշայէ, որ թողոյր ազատ կամաց սորա, ի յաջորդ աւուր՝ իմա՝ ի 20ն Ապրիլի ինքնին երթալ Գէորդ Արքեպսու-ի առ Սադրապամ ձեռամբ իւրով յանձնեաց նմա զհրաժարաթուղթն, թէպէտ քաղաքավարութեամբ իմն շարունակէր եւ ջանայր Ռիւշտի-Մէհմէտ փաշայ սիրաշահել զսա եւ մերժել զթուղթն: Հազիւ ու-րեմն հաճեցաւ ընդ թախանձանս սորա, եւ պատուիրեաց տանել եւ տալ զհրաժարաթուղթն առ նախարար Արտաքին գործոց, ընդ ո-րում էին յայնժամ յարաբերութիւնք պատրիարքաց, որպէս և արար իսկ 21ն Ապրիլի, և յետ յանձնելոյ զհրաժարականն մատոյց Ֆու-ատ փաշայի զնորհակալութիւն, եւ եկն ուղղակի ի տուն քեռ իւրոյ ի Կէտիկ-Փաշայ՝ վերադարձեալ ի Բ. Դրանէ: Փոխադրեաց անդ ի Պատրիարքարանէ զգոյս իւր զամենայն եւ բնակեցաւ անդ

մինչեւ յտեղակովել զբնակութիւն իւր ի Ռումելի-Հիսար ի Կոստոփի:

Ի վերադառնալ սորա ի տուն ի Բ. Դրանէ, գրեաց անմիջապէս առժամեայ Պատրիարքական փոխանորդի (Ալքըսան վրդպտ. Ունձեան) զպատուէր զարս :

« Ծնորհունակ սիրելի ! »

« Գրովս ծանուցանեմ քեզ զկամաւոր հրաժարումն ի պատրիարք  
« քական պաշտամանէս եւ գնալն մեր ի տուն հաճութեամբ Բ. Դը-  
« բան, նախապատիւ եւ մեծարու համարեալ զօդուտն Աղջիս քան  
« զանձինս, զանց զամենեքումք արարեալ, զի մի՛ ցաւալի երկապ-  
« ռակութիւնք եւ վէճք ընդունայք զաեզի ունեցին յաւուրս մեր, որ  
« պէս երբեմն պատահեալ են ի դժբաղդութիւն եւ ի դառն հետե-  
« ւանս Աղջիս. արդ յանձնելով զօրհնեալ լուութիւն համազգայնոց  
« ի խնամք եւ յամենազօր պաշտպանութիւն Բարձրելոյն Աստծոյ,  
« աղօթս եւ պաղպատանս վերառաքեմք, զի նոյն ինքն Սրտագէտն  
« ամենայնի՛ որ առաւել գիտէ զպէտս Եկեղեցւոյ, քան զոր խնդ-  
« րեմք եւ խմանամք, բարեխօսութեամբ Սրբազն Առաքելոյն իւրոց  
« Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի եւ երիցս երանեալ Զօրն Մերոյ Սր-  
« րոյն Գրիգորի Լուսաւորչի, չնորհեացէ ի տեղի մեր զայլ ոք հո-  
« վիւ արժանաւոր ի պատրիարքական բարձրագոյն պաշտօն, հո-  
« վուել զեկեղեցին Քրիստոսի ըստ իւրոց ամենասուրբ կամացն: Եւ  
« քեզ սիրելոյդ հայրաբար պատուիրեմք. մինչեւ ցգալ հրամանա-  
« գըրի ի կողմանէ Մեծազօր Տէրութեան սակս ընտրութեան նորոգ  
« Պատրիարքի եւ զհաստատութիւն Աղդային Կառավարութեան՝ ա-  
« մենայն աջալընութեամբ եւ ամենայն փութով յայտ անկշանու-  
« թեան փոքր միջոցի պատահեալ գործոց հոգ տարցես ըստ քում  
« կարողութեան. եւ զամենեսեան ոք գործոց աղաղաւ եկեցին ի  
« Պատրիարքարանն, շահեսցես եւ միխթարեսցես՝ որքան ձեռնհաս  
« իցես, զգուշացեալ յամենայն պարագայից եւ ի՛ կասկածելի միջո-  
« ցաց խոռվութեան եւ երկպատակութեան՝ զհետ լինելով սիրոյ,  
« խաղաղութեան եւ անդրութեան Աղջիս:

« Տէր ինքն զօրավիղն լիցի քեզ ի գործ քո : Եւ ես եմ եւ եղէց  
« աղօթող զկեանս վասն բարեբաղդ ամենաողորմած թագաւորին  
« մերոյ եւ համայն բարեխորհուրդ նախարարաց, եւս առաւել հա-  
« մազդայնոց երջանկութեան, անդորրութեան : Եւ յառաջդիմու-  
« թեան :

«Л'Р 1199»

1860 *U. S. P. H. I.* 21.

Ամիսս իրը տասն եւ ինն վարեաց զիշխանութիւն պատրիարքութեան կ. Պօլուլ:

ԳԼՈՒԽ ԼԲ.

ՅԱՂԱԳՍ ՄԵԿՈՒՄԱՆԱԼՈՅ ԳԵՐՈՎ ԱՐՔԵՊՈՍ ՀԻ ԵՒ ՍԱԿԱ

ՀՆՏՐՈՒԹԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԵՊՈ. ԴԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՀ ՎԱՍՆ ԱՅԼՈՅ ԱՆՑԻՑ ԻՆՉ

Տարածեալ համբաւոյ հրաժարման Տ. Գէորգ Արքեպստ.-ի պատրիարքութենէ եւ տեղափոխելոյ զբնակութիւն իւր Պատրիարքարանէ ի Կէտիկ-Փաշայ, սկսան շարունակել եւ յաճախել անձինք նշանաւորք եւ Սահմանադրականք, պաղատանօք իմն թախանձել զԳէորգ Արքեպստ., զի մի՛ հրաժարեսցի, այլ սա չլսելոյ զայդ զինդիր նոցա, սիրաշահէլ զնոսա, մանաւանդ ջանայր աւուրբ յառաջ աղատել զանձն յերթեւեկութեանց եւ ի թախանձանաց ժողովրդեան՝ մեկուսացեալ անկեան ուրեք՝ ի Վոսիորի՛ հեռի ի բաղմամարդ թաղից եւ յարուարդանաց հայրաբնակաց :

Ի 28ն Ապրիլ ամսոյ ընկալաւ Տ. Գէորգ Արքեպս. զպաշտօնաթուղթ Բ. Դրան, որում ապասեալ մնայր, որ հաղորդէր, զի Վէհ. Սուլթան հաճիցաւ յակամայս ընդունել զհրաժարական, եւ սահմանել զերկու հազարական դահեկանս յամասական ոռոճիկ:

Յետ այսորիկ վարձեաց զտուն ի Ռումելի-Հիսար եւ փոխադրեալ անդր զբնակութիւն իւր, մեկուսացաւ իսպառ յազգային դործոս եւ ի ձանձրայի լարաբերութեանց եւ ի թախանձանաց :

Իսկ Սահմանադրականք, հակառակ յորդորանաց սորա եւ խրա-  
տուց՝ ջանալին յուղել զինդիբրս նորս, յորս յաւելուին նաեւ ջա-  
նալ խափանել զընտրութիւն նորոյ պատրիարքի, վասն որոյ, յշն  
Մայիսի համախմբեալ ի խուռն բազմութեան ի պատրիարքարան՝  
յորում աւուր կազմեալ էր ժողով ընդհանուր առ ի ընտրել զնոր  
պատրիարք, աղաղակին թէ գոհ եմք մեք ի պատրիարքէ մերմէ  
եւ ոչ կամլմք զայլ ոք ի պատրիարք ի տեղի նորա։ Սաստկանան  
բանակուրեք, մինչեւ հնարս խնդրել ժողովականաց եւ կազմել զժո-  
ղով զունիակ, պատրեալ զժողովուրդ, եթէ ունին խորհրդակցել ա-  
ռանձին ըստ պատրիարքական խնդրոյ, եւ թէ միացեալ էին ընդու-  
նել եւ հաստատել զՍահմանադրութիւն աղջային։ Եւ այսպէս ա-  
ռանձին ի գաղտնի կատարեն զընտրութիւն նորոյ պատրիարքի, յա-  
նուն Սարդիս Եպս. ի կտիրնէցոյ, զոր առաքեալ էր Գէորգ Արք-

եսու . ի տեղի իւր ի գէոլ վիճակին Պրուսայու՝ յետ գալստեան իւրոյ Պրուսայէ :

Առիթ պատեհ առեալ զայս ընտրութիւն, կարեւոր համարեմք յաւելուլ, զի սոյն այս Տ. Սարդիս ծնեալ յիշիրնէ ի 1805 թ. էր եղագորդի (որդի Յարութիւն անուն եղար) հոչակաւոր Պօղոս Արքեպիսկոպոսի Անդրիանուպոլսեցւոյ երբեմն Պատրիարք, միանդամայն պատրիարքական գործակատարի ի Սուրբ Երուսաղէմ առթիւ պարտուցն Ս. Յակոբեանց վանուց, ձեռնասուն աշակերտ Մեսրոպ Եպո.-ի\*) Առաջնորդի իտիրնէի : Կարդեալ սորա ընտրութեամբ եւ խնդրանոք վիճակայնոց յԱռաջնորդ իտիրնէի, հրաժարեցաւ անտի ի 1851-2 թուականի : Գնաց ի Ս. Էջմիածին առ ի ձեռնադրել եպիսկոպոս, այլ քանդի վախճանեալ էր Յովհաննէս Կաթուղիկոս Կարբեցի (1840-1), ոչ կամեցաւ սպասել մնալ մինչեւ յընտրութիւն եւ ցօծումն նորոյ Կաթուղիկոսի, եւ դիմեաց գնաց ի Սիս, ուր եւ էառ զեպիսկոպոսութիւն :

Յորժամ մեկնէր նորընտիր Տ. Մատթէոս Կաթուղիկոս աստի ի Կ. Պօլսոյ առ ի երթալ ի Մայր Աթոռ Արքու Արքատեան, ուղեկցեցաւ նմա Սարդիս եւ այսպէս ընկալաւ զվաւերացումն եպիսկոպոսութեան իւրոյ ի Ս. Էջմիածնէ :

Յետ հրաժարելոյ Տ. Սարդիսի Եսու.-ի ի վիճակին Անդրիանուպույոյ, կարդեցաւ յառժամանակեայ պատրիարքական փոխանորդ ի Գում-Գարու : Յամի Տեառն 1857 առաքեցաւ յայցելու հովիւ գաղթական Հայոց Ռւլա-Պուղդանի (Բումանիոյ) եւ Հունդարիոյ ի Յակոբոս Պատրիարք - Արքեպո.-ի, եւ վերադարձաւ ի 1859 ամի, յաւուրս պատրիարքութեան Գէորգայ, յորմէ ապա կարդեցաւ յԱռաջնորդական Դէտ վիճակին Պրուսայու :

Արդ՝ Սարդիս Եսու . եկեար ի Պրուսայէ ի 12ն Մայիսի, գնաց ի Բ. Դուռն ի 14ն ամսոյն, եւ ստանձնեալ սկսաւ վարել զսաշտօն պատրիարքութեան :

Մինչ կարդս պաշաճից պահանջէր ի Գէորգայ կանխել ի չնորհաւորութիւն պատրիարքութեան Սարդիսի, ցորչափ շրջէր ի չնորհաւորութիւնս նորահաստատ եղարքոսի Գրադրուր (Կիպրոսցի) Մէջմմէտ փաշայի բարեկամին իւրոյ, եւ այլոց փաշայից եւ չէյլիւլիսամի (Դէնակետ) ի 16ն Մայիսի, նորընտիր պատրիարք Տ. Սարդիս Արքեպու . փութայ իսոհեմութեամբ իմն կանխել գալ ի տեսութիւն Տ. Գէորգայ նախորդի իւրոյ ի Ռումելի-Հիսար ի 23ն ամսոյ,

\*) Աշակերտի Աստուածաբան կոչեալ Յովհաննէս Եպո.-ի . որ եւ էր աշակերտ նոչակաւոր անուն Զաքարեայ Արքեպու . պատրիարք Կաղջուանցույ:

որ եւ յետ երկուց աւուրց վճարեաց նմա զիոխաղարձ տեսութիւն եւ գայցելութիւն զնորհաւորական ի Պատրիարքարանի ի Գում-Գարու :

Խնդիրն սահմանադրութեան սպառնայր շարժել զերկպառակութիւն ազգային եւ զինձիս ծանրակշիռու, որոյ վասն Տ. Գէորգ Արքեպու . ջանայր մնալ մեկուսի, ոչ երթալ ի Պատրիարքարան, եւ լուռ եւ եթ սպասել ելից իրացն չէզոքութեամբ :


Հակառակորդք տեսեալ դվարժումն նոր որ ընդդէմ իւրեանց, ջան կալուն սիրաշահել զԳէորգ Արքեպու . եւ միացուցանել ընդ կուսակցութեան իւրեանց, վասն որոյ ի 18ն Յուլիսի ամիրայքն ճարտարապետ Կարապետ Պալեան, եւ վառողապետք Պօղոս եւ Յովհաննէս Տատեան ճեպեցին գալ առ Տ. Գէորգ Արքեպու . ի Ռումելի-Հիսար, եւ պարզեալ մեղայիւ զյանցապարտութիւնս իւրեանց, խնդրեցին եւ ընկալան զպահպանիչ, իսկ Տ. Գէորգ յետ ասելոյ զպահպանիչն իրատեաց եւ սիրաշահեալ ուղւոյ ետ զնոսա :

Ոչ կամէր եւ ոչ հեռանայր սա ի չէզոք դրից իւրոյ, եւ թողոյր տեսանել զելս իրացն :

Յաւուրս յայսոսիկ Օգոստ . Սուլթան Մէճիտ Կայար յաւել շընորհել սմա զշքանշան յերկրորդ կարդի Մէնիստիյէի ի 25ն Յուլիսի, զոր ոչ ումեք ի քրիստոնէից հպատակաց եւ ի պատրիարքաց տուեալ էր՝ բաց ի հինդերորդ, ի չորրորդ եւ յերրորդ աստիճանացն : Փաշայր ոմանք եւ եթ ընկալեալ էին տակաւին եւ կրէին ի կուրծս դշքանշանս առաջին եւ երկրորդ կարդաց Մէճիտիյէի : Եւ սոյն այս առիթ յաւել զնոր փորձս բարձր դրից, դիւնագիտութեան, ճարտարութեան եւ ազգեցութեան սորա (Գէորգայ) : Բնկալաւ զշքանը շանն զայն ի ձեռանէ Առլի փաշայի հոչակաւոր նախարարէ Արտաքին Գործոց ի ծովեղերեայ ապարանս որ ի Պէտք ըստ յատուկ հրաւիրանացն ի 11ն Օգոստոսի : Եւ ի յաջորդ աւուր շրջեցաւ սա ի Պահրիյէի, ոչ մոռացեալ զմտերիմ բարեկամս իւր զֆուատ եւ վճարել զնորհակալութիւն առ Մէճ-Եպարքոս, առ նարինիյէ, առ չէյլիւլիսամի, եւ առ նախարարսն Հարպիյէի, Տախիլիյէի եւ Պահրիյէի, ոչ մոռացեալ զմտերիմ բարեկամս իւր զֆուատ եւ զրիւշտի փաշայս :

Սակաւ ինչ առեալ հանգիստ եւ ոգի ի յուղմանց եւ ի ծանրատաղտուկ զրադմանց պաշտօնի պատրիարքութեան յետ հրաժարմանք, ջան կալու ուսանել զգաղղիարէն լեզու, որում հետեւէր եռանգեամբ, եւ ոկտաւ ի 1ն Սեպտեմբերի : Գողցես ուսեալ զհամաշխարհային լեզու գաղղիական՝ կարեր ուղեւորել յերոսկայ, զոր եւ ոիրէր յոյժ : իսկ Սարդիս Արքեպու . Պատրիարք, խորհրդականք եւ





---

Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17<sup>e</sup>)